



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՄԸ  
ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՏԻՍԵԱՆ

# ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ



ՄԱՏԵՆԱՇԱՐ  
Հ. Յ. Դ. ԶԱՌԱՐԵԱՆ  
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ


ԹԻԻ 6

ՊԵՏՐՈՒԹ

1991



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱԿԷ ՄԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ



## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Այ. Խատիսեանի «Քաղաքապետի մը յիշատակները» խորագրեալ յուշագրութիւնը, որ հրատարակուած է «Հայրենիք» ամսագրին մէջ<sup>1</sup>, կ'ընդգրկէ հեղինակի կեանքին ու գործունէութեան շուրջ քան տարիները — քսաներորդ դարու սկիզբէն մինչեւ Հայաստանի անկախութիւնը: Ասիկա հայ ժողովուրդի պատմութեան ամէնէն բախտորոշ, ծանրակշիռ ու վտանգաւոր ժամանակաշրջաններէն մէկն է անտարակոյս:

Խատիսեան կը հաստատէ, որ յուշագրութիւնը կը վերջանայ ճիշդ այնտեղ, ուր կը սկսի իր «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը» աշխատասիրութիւնը, որ դարձեալ լոյս տեսած է «Հայրենիք» ամսագրին մէջ: Կարելի է ըսել, հետեւաբար թէ «Քաղաքապետի մը յիշատակները» քաղաքին հատորն է Խատիսեանի յուշագրութեան, որուն երկրորդ մասն է «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը»:

1. «Հայրենիք» ամսագիր, ժ. Տարի — թի. 7(115), Մայիս 1932, էջ 86-93. թի. 8(116), Յունիս 1932, էջ 124-134. թի. 9(117), Յուլիս 1932, էջ 91-104. թի. 10(118), Օգոստոս 1932, էջ 97-106. թի. 11(119), Սեպտեմբեր 1932, էջ 111-125. թի. 12(120), Հոկտեմբեր 1932, էջ 155-162. ժ.Ա. տարի — թի. 1(121), Նոյեմբեր 1932, էջ 133-142. թի. 2(122), Դեկտեմբեր 1932, էջ 127-142. թի. 3(123), Յունուար 1933, էջ 128-134. թի. 4(124), Փետրուար 1933, էջ 122-126. թի. 5(125), Մարտ 1933, էջ 143-147:

նու թիւն՝ թուրքերը իրենք իսկ Բագուի մէջ ի վիճակի չէին վարելու՝ զուտ թրքական քաղաքականութիւն:

Ամէնքը պիտեն, թէ որքան կարեւորութիւն ունի քաղաքացւոյիս պաշտօնը և որովհետեւ ո՛չ Հայերը և ոչ այլ թուրքերը իրենց ձայներով չէին կարող իրենց քաղաքացւոյիս ունենայ, Բագուի քաղաքացւոյիս ներք կ'ընտրուէին ուսաներ, հիւսիսէն եկած մարդիկ և Բագուին միանդամայն օտար (օրինակ՝ քաղաքացւոյիս Իրեցկին, Ռաւսկին, Բիշը, Նովիկովը և ուրիշներ):

Իրերու այսպիսի կացութեան համար, թուրքերը կը մեղադրէին ուս կառավարութիւնը և քրիստոնեաներն ընդհանրապէս: Պանծակի մէջ նոյնպէս զգայի էր Հայ-թաթարական պայքարը՝ այնուհետ Հայերն ու թուրքերը կողք կողքի կ'ապրէին երկու տարբեր թաղամասերու մէջ:

Հայ-թրքական յարաբերութիւններու բարդացումը և Հայ-մրացական անհամաձայնութիւնները կովկասի մէջ բնականաբար ստեղծեցին մրաց-թաթարական ճակատ՝ ընդզէմ՝ Հայերու:

Կովկասի մէջ Հայերու տնտեսական վերելքը չէր սահմանափակուեր միայն անուստրով և գործարանային արտադրութեամբ: Հայկական գրամադրութիւն մտաք կը գործէր նաև պիլատոնտեսութեան մէջ և իրեն կ'ենթարկէր գանազան ճիւղեր, ինչպէս՝ բամբակապարծութիւն, գինեկործութիւն և այլն:

Այս յաջողութիւնները, ի հարկէ, պետք է վերապրել Հայ ժողովրդի մշակոյթին, անոր աշխատասիրութեան և տոկոսնութեան: Մանթաշեանները, Միլոյանները, Աֆրիկեանները, Օգանեկովները, Արամեան-

ները, Սէյանեանները, Չիլինգարեանները յայտնի էին ամբողջ կովկասին: Անոնք գրաւած էին Թիֆլիսի լայապոյն տունները՝ իրենց գործերը տարածելով ամբողջ կովկասի մէջ: Բնիկ Հայաստանցիներ՝ անոնք կը լքէին Հայրենի քաղաքները, ինչպէս Ալեքսանդրապոլ, Կարս, Ապուլիս, Նրեւան և կու գային Հաստատուելու՝ մշակոյթով բարձր և կրթմանով առողջ Թիֆլիսի մէջ:

Այս հանգամանքը շատերուն կարծել կու տար, որ Թիֆլիսը ոչ թէ Վրաստանի մայրաքաղաքն է, այլ կովկասի այսինքն՝ քաղաք մը, որ Հաստատուելու կը պատկանի բոլոր կովկասցիներուն: Այս բանը չէին հանդուրժէր վրացիները, որոնք կը պնդէին, որ Թիֆլիսը իրենց պատմական մայրաքաղաքն է և միւս եկուորները գանազան անկիւններէն եկեր ու հարուստի իրաւունքով խլեր են իրենց հողերն ու կայուածները:

Վրացիները իրենց գիրքերուն և թերթերուն մէջ միշտ կը գրէին, որ Հայերը կարող են օգտուիլ Թիֆլիսի բոլոր բարիքներէն, բայց իրենք գիրենք պետք չէ զգան որպէս այս երկրի տէրերը: Հայերն այ կը շարունակէին օգտուիլ իրենց իրաւունքներէն:

Ուշագրաւ էր առանձնապէս մրացական մէկ թերթի (աջակողմեան) յօդուածը իմ քաղաքացւոյիս ընտրուելու առթիւ: Յօդուածի խորագիրն էր՝ «Չարիքներու փոքրագոյնը»: Ըստ յօդուածի, շարիք է ամէն մէկ ոչ-մրացի քաղաքացւոյիս սակայն, պրն. Պատիսեանը այդ շարիքներէն փոքրագոյնն է, չնորհի իր վերաբերմունքի՝ զէպի մրաց ժողովուրդը: Այսպէս կը մտածէր աջակողմեան մամուլը, իսկ

Տր» երկր: Այս վերջինը արժանացած է երկու տպագրութեան. առաջինը Աթէնք. 1933. իսկ երկրորդը՝ Պէյրութ. 1968:

Իր անդույլ եւ յարատեւ աշխատանքներուն շնորհիւ, Խատիսեան եղաւ փորձառու դիւանագէտ-ֆազաֆագետ մը. բա՛ն մը, որուն կարիքը այնքան կը զգացուէր մեր իրականութեան մէջ՝ մանաւանդ նկատի ունենալով Անգրկովկասի խառնակ եւ միշտ պայթուցիկ կացութիւնը:

Խատիսեանի յուշագրութիւնը կը պահէ իր այժմէականութիւնը մէկէ աւելի մակարդակներու վրայ: Անիկա մեզի կը փոխանցէ գործնապաշտ քելադրանքներ ու փորձառութիւններ, յատկապէս դիւանագիտական աշխարհին ու ղեկավարման վերաբերեալ:

Այս երկր, որ պատմագրութեան համար հուս ու համով նիւթ պարփակող աշխատասիրութիւն մըն է, իբրեւ ազբիւր կը ծառայէ մեր ժողովուրդը յուզող հարցերուն մօտէն ծանօթանալու եւ անոնց ներքին ծալքերուն քափանցելու:

«Քաղաքապետի Տր յիշատակները» հատորը հարուստ է վաւերագրական - վիճակագրական տուեալներով, որոնք սերտօրէն կապուած են մեր անկախութեան եւ պետականութեան կերտումին հետ: Յուշագրութիւնը յստակօրէն կը ներկայացնէ կովկասեան ժողովուրդներու այս դարու առաջին ֆառորդի հոգեվիճակները, մտայնութիւններն ու մօտեցումները, ազգամիջեան բախումներու շարժառիթ-պատճառները, պատասխանատու ղէմները, բնդհանուր մթնոլորտն ու

տրամադրութիւնները, ինչպէս նաեւ ֆազաֆական իրերու դրութիւնն ու հոսանքներու փոխադարձ յարաբերութիւնները: Ասոր առընթեր, յուշագրութիւնը կը ծառայէ աւելի մօտէն ծանօթանալ Խատիսեանի անհատականութեան, մտածելակերպին, աշխատելու եղանակին ու գործունէութեան:

Քսաներորդ դարու առաջին ֆանամեակի չափանիշով, Խատիսեան կը նկատուէր Օրուան Մարդը: Մեր մէջ դիւանագէտի եւ ֆազաֆագէտի բացառիկ ղէմներէն մէկն է, որ խորապէս ազդած եւ իր ինքնատիպ դրոշմը դրած է այդ ժամանակներու ղէպներու ընթացքին վրայ: Անցեալի ուսումնասիրութեան մեր աշխատանքին մէջ, շատ կարեւոր է գիտնալ Սէյմի եւ Թուրքիոյ հետ առընչուող բախտորոշ խորհրդածոզովներու պատուիրակութեանց մաս կազմած ներկայացուցիչներու անհատական տեսակէտներն ու զազափարները, որովհետեւ մասնակցողի հանգամանքը (կամ ականատեսի առաւելութիւնը) կը լուսարանէ եւ կը յստակացնէ բազմաթիւ մութ ու շփոթ մնացած հարցեր. ինչ որ կարելի պիտի չըլլայ գտնել վաւերաթուղթերու, դաշնագրերու կամ ատենագրութեանց մէջ:

Ահա այս նկատառումներով կը հրատարակենք Այ. Խատիսեանի «Քաղաքապետի Տր յիշատակները»-ը, որ ուզողակի կամ անուզողակի կերպով — կը կարծենք — պիտի գինէ ու գօտեպնդէ հայութիւնը բնդհանրապէս եւ հայ ուսանողութիւնն ու երիտասարդութիւնը մասնաւորաբար՝ մեր գերագոյն նկատակներու իրագործման նախնուն վրայ:

# ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՏԻՍԵԱՆ

(1874-1945)

## 1. ԿԵԱՆՔԸ

Ալեքսանդր (կամ Աղեքսանդր) Խատիսեան ծնած է 17 Փետրուար 1874ին՝ Թիֆլիս, վրաստան: Ընտանեկան յարկի մթնոլորտը, այնտեղ տիրող հայրենասիրական ջերմ տրամադրութիւնները, ինչպէս նաեւ Խատիսեան ընտանիքի անդամներուն ընտրած ասպարէզներն ու վարած պաշտօնները նպաստաւոր պայմաններ ստեղծած էին ուսումնատեւեցութեան եւ ընդհանուր զարգացման: Ահա՛ այս հարազատ միջավայրի ազդեցութեան տակ կը զարգանայ մտաւորական եւ հասարակական գործունէութեան սէրը պատանի Ալեքսանդրի մէջ: *«Մեր ընտանիքի անդամները, ինչպէս Տօրս, այնպէս այ մօրս կողմէն (ծնեալ Ղամբարեան) ամբողջ կովկասի մէջ վարել են պատասխանատու պաշտօններ՝ որպէս դատախազներ, պետա-*

---

1. Գարրիկ Լազեան Ալեքսանդր Խատիսեանի ծննդեան թուականը վրիպումով ժը վերագրած է անոր երէց եղբոր՝ Կոտանդինին, տե՛ս Գ. Լազեան, «Ի՛նչեք հայ ազատագրական շարժումէն» Գափրէ, տպարան «Յուսարեք», 1949, էջ 303:

կան կայուածներու կառավարիչներ, պետական  
դրամատան վարիչներ և այլն»<sup>2</sup>:

Հայրը, Յովհաննէս, որ պետական բարձր  
պաշտօնեայ էր, նանչցուած էր իր յառաջադէմ  
զաղափարներով: Մայրը, Մարիամ, ստորագրած  
է երկու-երեք վէպ՝ Մարինեան ծածկանունով:  
Կոստանդինը, որ Ալեքսանդրի երէց եղբայրն էր  
(միւս եղբայրներն են Գէորգ եւ Լեւոն), կը յատ-  
կանշուէր իր ինքնատուութեամբ եւ նախածեռնու-  
թեան զօրաւոր ոգիով: Կոստանդինը հիմնադիր-  
ներէն մէկն էր Հայ Յեղափոխականների Դաշնակ-  
ցութեան: Քիչ ժամանակ ետք սակայն, կը ֆաշուի  
ֆաղափական - յեղափոխական - հասարակական  
կեանքէն եւ կը ձեռնարկէ մշակութային գործու-  
նէութեան: Բագուի մէջ իր ասպարէզը կը դարձնէ  
կուրտուրական - մշակութային - միութիւնը,  
որուն ամէնէն աշխատունակ տարրերէն մէկը  
կ'ըլլայ:

Թիֆլիսի միջնակարգ վարժարանը աւարտելէ  
ետք, Ալեքսանդր հատիսեան բժշկութեան ճիւղին  
կը հետեւի Մոսկուայի եւ Խարկովի համալսա-  
րաններուն մէջ: Ուսանողութեան շրջանին, Խա-  
տիսեանի մօտ կը յայտնաբերուին խառնուածքի  
եւ նկարագիրի առանձնայատկութիւններ: Մոս-  
կուայի հայ ուսանողութեան մէջ անմիջապէս կը  
դառնայ ուղազրու դէմք մը: Իր մասնակցութիւնը

կը բերէ գրեթէ ամէն ձեռնարկի կամ աշխատանքի:  
Աւելի'ն. յաճախ կը տեսնուի առաջին կարգի վրայ՝  
իբրեւ նախածեռնող եւ մղիչ տարր: Այդպէս է, որ  
ան կ'ըլլայ Մոսկուայի հարիւրէ աւելի հայ հա-  
մալսարանականներուն մօտ կշիռ եւ հեղինակու-  
թիւն ունեցող անհատականութիւն մը: Իր եռան-  
դուն եւ ստեղծագործ ոգիին շնորհիւ «Ինքնազար-  
գացման խմբեր, Հայ գրքեր-հրատարակութիւն եւ  
ուրիշ նման հանրային-մշակութային ձեռնարկներ  
[...]

մէկ կամ միւս ձևով կապուած էին իր անուան  
հետ»<sup>3</sup>: Եւ այն ընթացքը կը շարունակէ Խարկովի մէջ  
եւ կը դառնայ հայ ուսանողութեան վստահելի ու  
ամուր սիւնը:

Երեք տարի Մոսկուայի եւ երկու տարի Խար-  
կովի համալսարաններուն մէջ ուսանելէ ետք, այլ  
մանաւանդ իր մասնագիտութիւնը կատարելա-  
գործելու նպատակով, Խատիսեան 1897ին կը մեկ-  
նի Պերլին եւ Փարիզ: Պերլինի մէջ կը հետեւի  
փրոֆ. Վիրխովի եւ փրոֆ. Քլէմփերըրի դասըն-  
թացներուն: Եւրոպայի նշեալ ֆաղափներուն մէջ  
համալսարանական կրթութիւնը ամբողջացնելէ  
ետք՝ 1900ին կը վերադառնայ իր ծննդավայրը՝  
Թիֆլիս:

Շատ կարն ժամանակի համար կը զբաղի  
բժշկութեամբ. հազիւ տարի մը: Ապա, կը լքէ այդ  
ասպարէզը եւ կը նուիրուի ազգային-հասարա-  
կական կեանքին: «Այն ատեն ևս 22 տարեկան էի, և

2. Ար. Սատիսեան, «Քաղաքապետի մը յիշատակները».  
«Հայրենիք» ամսագիր, Ժ. Տարի, Թի. 7(115), Մայիս 1932, էջ 86:

3. Լ. Ն., «Հանրային մարդ», «Յուսաբեր», ԼԱ. Տարի, 7  
Ապրիլ 1945:



ներէ, որոնք պաշտօն ունէին ընդատաջ գնայու եւ  
բաւարարելու գիւղի անմիջական պահանջները:  
Անոնց գործունէութիւնը ենթակայ չէր հասարակա-  
կան որեւէ հակակշիռի եւ ժողովուրդը իրաւունք  
չունէր միջամտելու անոնց աշխատանքներուն: Բացի  
անկէ, որ այդ սիւսեմը գոտի բերուող արտադրանք-  
ներէն ունէր, կար ուրիշ բացասական կողմ մը եւս.  
ժողովուրդը գրկուած էր ինքնագործունէութենէ,  
գրկուած էր հասարակական, քաղաքական գործու-  
նէութենէ: Չէ՞ որ Ռուսաստանի մէջ ուս գիւղացին,  
ընտրելով իր խորհրդատուները, կը հետեւէր անոնց  
աշխատանքներուն, կը քննադատէր անոնց գործու-  
նէութիւնը, կը հակէր բիզնէսին, մէկ խօսքով՝ ժողո-  
վուրդը կը մասնակցէր գաւառի մշակութային վերել-  
քին:

Ճիշդ է. Կովկասի մէջ իւրաքանչիւր գիւղ կ'ընտ-  
րէր իր տանուտէրը, սակայն վերջինիս իրաւասու-  
թիւնները կը սահմանափակուէին իշխանութեան  
անհրաժեշտ՝ ոստիկանական որոշ աշխատանքներով:  
Տանուտէրը կ'օգնէր իշխանութեան հաւաքել տուր-  
քերը: Անհրաժեշտ պարագային, ան կը հայթայթէր  
բանուորական եւ ձիու ուժեր ու կը մասնակցէր ոս-  
տիկանական որոշ աշխատանքներուն:

Տանուտէրը, այսպիսով, կը դառնար իշխանու-  
թեան գործակալը՝ իրաւունք չունենալով մտածելու  
գիւղի ուրիշ շահերու մասին: ժողովուրդը կ'ընտրէր  
իր տանուտէրը, բայց կ'արհամարհէր գայն: Տանու-  
տէրը, բայց իր պաշտօնի, պարտաւոր էր ներկայ գրու-  
նել իր խուզարկութիւններու ընթացքին:

Երբ սոսկալի երկրաշարժի հետեւանքով՝ Ախալ-

քալաքի գաւառի մէջ առաջ էր եկած բժաւոր տիֆի  
մեծ համաճարակ եւ ես կը պահուէի Սամսար գիւղը՝  
համաճարակի զեմ պայթարելու համար, ձմեռն սառ-  
նամանիք գիշերով գիւղ կը մտնէ ժանտարմ սպայ մը՝  
չըջապատուած կրկններով: Տանուտէրի աջակցու-  
թեամբ ան կը փնտնէ այն գիւղացիները, որոնք կը  
մեղադրուէին որպէս գրգռիչներ, վաշխատու աւ-  
տապետներուն տուրքեր չտալու քարոզչութեան հա-  
մար: Այդ խեղճ գիւղացիները ի վիճակի չէին վճարե-  
լու. իսկ իրենց ապրուստին եւ անասունները պահե-  
լու համար՝ անոնք ինձմէլ նպաստ կը ստանային:

Հայ գիւղը պարտուած էր թանձր խաւարի մէջ:  
Քաղաքակրթական ոչ մէկ նշոյլ կարելի էր նկատել  
հոն: Տանեակ գիւղեր միայն մէկ բժիշկ ունէին:  
Դպրոցներ չկային: Չկար ոչ մէկ կապ քաղաքին հետ,  
բացի ապրանքներու փոխանակութենէ: Իր միակ  
դաստիարակութիւնը գիւղացին կը ստանար յեղա-  
փոխական գործիչներէ. հայերը՝ Հ. Յ. Դաշնակցու-  
թենէն, վրացիները՝ սոցիալ-դեմոկրատներէն:  
Թուրք ժողովուրդը ենթակայ էր հոգեւորականու-  
թեան, աւտապետներուն, բեկերուն եւ խաներուն:

Գիւղացիութեան տնտեսական վիճակը, շնորհիւ  
ընդհանուր հողապրկութեան, որ աւելի կը պայտուարէր  
հայկական շրջաններու մէջ, շափապանց ծանր էր:  
Գիւղ գնայր եւ գիւղով հետաքրքրուողը կը համար-  
ւէին քարոզչութեան միջոց՝ գիւղացիները զրգոելու  
համար. իսկ իւրաքանչիւր այդպիսի փորձ՝ խիստ կը  
հետապնդուէր իշխանութեան կողմէ:

Այս բոլորը հասարակական գործիչներուն առիթ  
կու տային լրջօրէն մտածելու գաւառական ինքնա-

*իմ միակ ձգտումն էր նետուիլ Հասարակական ապարէզ»<sup>4</sup>:*

1902ին, առաջին անգամ ըլլալով իբրեւ խորհրդական կ'ընտրուի Թիֆլիսի ֆազաֆային կոորդինատիւն, որուն մաս կը կազմէին կովկասեան ազգերու գրեթէ բոլոր ներկայացուցիչները: Այդ պաշտօնին վրայ կը մնայ մինչեւ 1906: Նոյն տարին իր թեկնածութիւնը կը ղնէ Թիֆլիսի ֆազաֆայութիւի օգնականի պաշտօնին եւ կ'ընտրուի: Թէեւ պաշտօնապէս ֆազաֆայութի օգնական, բայց գործնականին մէջ հատիսեան կը ստանձնէ ֆազաֆայութի պատասխանատուութիւններ եւ կը կատարէ ֆազաֆայութի պարտաւորութիւններ: այս երեւոյթին տուն տունոգ պատնաոր հետեւեալն էր:

1900ական թուականներու առաջին տասնամեակի Թիֆլիսի ֆազաֆայետն էր վրացի իշխան Վ. Ն. Չերքեզովը, որ հիւանդ էր. իսկ անոր առողջական վատ վիճակը պատճառ կ'ըլլար, որ յանախ շաբաթներ եւ երբեմն ամիսներ բացակայէր ֆազաֆայետարանէն: Այդպէս է, որ գործերուն մեծ մասը կը բռնար անոր օգնականին՝ Ալ. հատիսեանին վրայ:

Չերքեզովի մահէն ետք, հատիսեան 1909-1910ին կ'ընտրուի Թիֆլիսի ֆազաֆայետ: Ըստ վահան Նաւասարդեանի, հատիսեան իր ընտրութիւնը կը պարտի աւելի հայ ֆազաֆայութեան ֆուէին, քան հայ աշխատաւորութեան:

Թիֆլիսի ֆազաֆայետութեան շրջանին, 1914ի պատերազմի սկիզբը, հայ կամաւորական շարժումի գլխաւոր դերակատարներէն մէկը կ'ըլլայ՝ Մեսրոպ եպս Մագիստրոսի եւ Սամսոն Յարութիւնեանի հետ<sup>5</sup>: Այս առընչութեամբ, 1914 Սեպտեմբերին, հատիսեան կը նշանակուի Հայ կամաւորական խումբերու կարգադրիչ Մարմինի խորհրդական: Այս մարմինը կը մնայ Թիֆլիս մինչեւ 1915ի գարունը. անկէ ետք՝ կը փոխադրուի Թիֆլիս:

Ա. Աշխարհամարտի պայթումէն անմիջապէս ետք, խունապային մթնոլորտ կը տիրէ մերոզ Անդրկովկասի մէջ: հատիսեան կը ծրագրէ դուրս գալ այս թոհուրոհէն: Այդպէս է, որ կը ձեռնարկէ կովկասեան Քաղաքների Միութեան ստեղծման, որուն նախագահի պաշտօնը կը վարէ՝ 1914-17: Այս Միութեան շնորհիւ, որ կը բազկանար կովկասի 44 ֆազաֆայետներու ներկայացուցիչներէն, կովկասը կը ստանայ ֆազաֆայական կարեւոր կշիռ եւ մաս կը կազմէ Համառուսական Քաղաքների Միութեան, որ նկատառելի եւ բաւական շօշափելի դեր կը կատարէ պատերազմի օրերուն եռեւեփոզ յեղափոխական շարժումին ի նպաստ:

Իբրեւ նախագահը կովկասեան Քաղաքների Միութեան, 1916ին կը մասնակցի Համակովկասեան Համագումարին, որ կը նպատակադրէր Գաւառային ինքնավարութեան՝ զեմավոյի գործունէութեան ընդլայնումի նախագիծ մշակել: Մաս-

4. Ալ. հատիսեան, «Հայրենիք» ամսագիր, անդ., էջ 86:

5. Հազեան, անդ., էջ 305:

նակցած է նաեւ 1915, 1916 եւ 1917 թուականներուն՝ Համայն Ռուսիոյ Քաղաքներու եւ Գաւառային Ինքնավարութիւններու (գեմսվօ) համագումարներուն:

1917ին կը պայթի Փետրուարեան Յեղափոխութիւնը, որուն իբրեւ հետեւանք հատիսեան ինքզինք այլեւս ի վիճակի չի գգար Թիֆլիսի քաղաքացիութի պաշտօնին վրայ մնալու: Վրացիները, որոնք քիւով յարաբերաբար աւելի քիչ էին քան հայերը, տէր կը կանգնին իրենց մայրաքաղաքին եւ Թիֆլիսի քաղաքացիութի աթոռին վրայ կը նստեցնեն իրենց մէկ ազգակիցը: Յեղափոխութիւնը պատճառ կ'ըլլար նաեւ, որ Անդրկովկասը փաստօրէն բաժնուի Ռուսաստանէն:

1917ին հատիսեան կը հեռանայ քաղաքացիութի պաշտօնէն եւ նոյն տարին կը մտնէ Հ.Յ.Դաշնակցութեան շարքերը: Թիֆլիսի քաղաքացիութի ընտրութեան մէջ իր պարտութենէն անմիջապէս ետք կը շտապէ Ալեքսանդրապոլ՝ ընդառաջելով հետեւեալ հրաւեր-հեռագիրին. «Դուք՝ ինչպէս առասպելներու չերօտը, ոտք կորելով չայրենի չողի վրայ, անմիջապէս պիտի գգաք ձեզ հօր եւ պիտի սկսիք նոր դարաշրջան մը մեր Ժողովուրդի պատմութեան մէջ»<sup>6</sup>:

1917 Սեպտեմբերին հատիսեան կը փոխադրուի Ալեքսանդրապոլ եւ կ'ընտրուի տեղւոյն

6. «Մեծ կորուստի մը առջեւ» (Խմբ.), «Յուսաբեր», ԼԱ. Տարի, 7 Ապրիլ 1945:

քաղաքացիութի: Այս պաշտօնը կը վարէ հազիւ տարի մը, մինչեւ 1918: Կը հաւատար, որ հայ ժողովուրդին լաւագոյնս ծառայելու համար անհրաժեշտ էր որ մասնակցէր Համառուսական Սահմանադիր Ժողովին՝ իբրեւ թեկնածու Շիրակի հայութեան: Հ.Յ.Դաշնակցութիւնը չընդառաջեց իր փափաքին եւ չգրաւ հատիսեանի թեկնածութիւնը:

1917 Հոկտեմբերի սկիզբը կը մասնակցի Մոսկուայի մէջ տեղի ունեցող քաղաքներու համագումարին: 22 Հոկտեմբերին կ'անցնի Փեքերուպուրկ եւ ականատես կ'ըլլայ Պոլշեիկեան Յեղափոխութեան: 31 Հոկտեմբերին կը վերադառնայ Թիֆլիս:

1918ի առաջին կիսուն, Անդրկովկասի անջատումէն ետք, կ'անդամակցի Սէյմի՝ Անդրկովկասեան Հանրապետութեան՝ եւ Հ.Յ.Դաշնակցութեան կողմէ կը նշանակուի ելեւտական մախարար: Այս պաշտօնին վրայ կը մնայ Սէյմի երկու դահլիճներուն մէջ, նախ՝ Կեկելկորիի, ապա՝ Զիսնկելիի վարչապետութեան օրերուն:

1918-20 հատիսեան կը մասնակցի զանազան պատուիրակութիւններու՝ պարզ խորհրդարանի կամ մախագահի հանգամանքներով:

1918 Փետրուար-Մարտ ամիսներուն, Տրապիզոնի մէջ Անդրկովկասի եւ Հայաստանի Հանրապետութեան կողմէ հաշտութեան բանակցութիւններ կը վարէ Թուրքիոյ հետ: Իրեն հետ հաշտարար պատուիրակութեան անդամ կը նշանակուի Յովհաննէս Քաչազնունի, իսկ Ռուսէն Տէր Մի-

նասեանն, ու Լէոն կը մասնակցին իբրեւ խորհրդրդականներ:

4 Յունիս 1918ին, Պաթումի մէջ, հատիսեան՝ Պապաջանեանին, Յովհաննէս Քաջազունիին եւ Միմոն Վրացեանին հետ կը ստորագրէ դաշնագիր մը, որով Թուրքիա կը նանչնայ Հայաստանի Հանրապետութիւնը:

14 Յունիսին, Պաթումի մէջ, Ա. Ահարոնեանի եւ Պապաջանեանի ընկերակցութեամբ կ'երթայ Պոլիս՝ մասնակցելու կեդրոնական Եւրոպայի եւ Անդրկովկասի պետութիւններու խորհրդաժողովի մը, որ, սակայն, կը ձգձգուի մինչեւ ընդհանուր գինադադարը:

Վերջապէս, 2 Դեկտեմբեր 1920ին, հայկական պատուիրակութեան իբրեւ նախագահ կը ստորագրէ Ալեքսանդրապոլի դաշինքը, որ պետականօրէն վաւերական ոչ մէկ նշանակութիւն եւ արժէք կը ներկայացնէ, որովհետեւ ստորագրութեան ատեն Լ.Յ.Դաշնակցութիւնը Երեւանի մէջ արդէն իսկ իշխանութիւնը յանձնած էր խորհրդային ներկայացուցիչին:

1919 Մարտէն մինչեւ 1920 Մայիս, հատիսեան կը վարէ Հայաստանի Հանրապետութեան վարչապետի պաշտօնը: Արամի մահէն ետք (1919 Յունուար), կը ստանձնէ ներքին գործոց նախարարութիւնը: Իսկ Յովհաննէս Քաջազունիի Մ. Նահանգներ մեկնումէն ետք՝ կը ստանձնէ վարչապետի տեղապահութիւնը: Յովհ. Քաջազունիի դահլիճին մէջ հատիսեան կը մասնակցի իբրեւ արտաքին գործոց նախարար: 1919ին, Յովհ. Քա-

ջազունիի կը յաջորդէ իբրեւ երկրորդ վարչապետը Հայաստանի Հանրապետութեան: Մինչեւ 1919ի Ապրիլը միեւնոյն ատեն կը վարէ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնը:

1920ի ամառը Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմէ կ'ուղարկուի արտասահման՝ կազմակերպելու համար Հայաստանի առաջին ներքին փոխառութիւնը, ինչպէս նաեւ «Ոսկու Ֆոնտ»ի առաջացումը: Կը մեկնի Պաթում, Պոլիս, Փարիզ, Լոնտոն, Պելճիքա, Մանչեսթըր, Հռոմ, Եգիպտոս, Աքէն, Իզմիր, Պուլկարիա, Ռումանիա եւ Եուկոսլաւիա: Այս երկար ճամբորդութեան ընթացքին կը ծանօթանայ գաղութներու վիճակին եւ առիքը կ'ունենայ մօտէն շփուելու անոնց հետ, ինչպէս նաեւ բացատրելու իր գործուղման հրամայական նշանակութիւնը՝ նորաստեղծ հանրապետութեան համար:

Հայաստանի խորհրդայնացումէն ետք, Ալ. հատիսեան 6 Դեկտեմբեր 1920ին կ'անցնի Թիֆլիս, վրաստան: Կարճ ժամանակ ետք, 10 Փետրուար 1921ին, Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան նախագահ՝ Ա. Ահարոնեանէն կը ստանայ Փարիզ մեկնելու հեռագիր: Կ'ընդունի առաջարկը: Ահարոնեանին ընկերակցութեամբ կը մասնակցի Լոնտոնի եւ ապա՝ Լօզանի խորհրդաժողովներուն, որոնց կը մասնակցին նաեւ Պօղոս Նուպար փաշան եւ Նորատուրկեանը: հատիսեանի մասնակցութիւնը նախ կ'ունենայ փոխ-նախագահի հանգամանք: Ա. Ահարոնեանի հիւանդութենէն ետք (1934), Հայաստանի Հանրա-

պետութեան պատուիրակութեան աշխատանքը կը կեդրոնանայ Այ. Խատիսեանի ուսերուն վրայ՝ իր-րեւ նախագահ, ներկայացնելով եւ պաշտպանելով հայկական շահերը պետութիւններու եւ ազգերու մօտ:

Փարիզի գերման գրաւման հետեւանձով, Փրանսական կառավարութեան հետ կ'անցնի Պորտո: Զինադադարի կնքումէն ետք, կը վերադառնայ Վիշի, ապա՝ Փարիզ:

Խատիսեան պատկառելի գործունէութիւն մը կը բողու իր ետին, երբ կը կնքէ իր մահկանացուն Ֆրանսայի մէջ: Թաղումը կը կատարուի 7 Մարտ 1945ին, Փէր լաշէզի գերեզմանատան մէջ, վիշտ պատճառելով իր ընկերներուն եւ գործակիցներուն: Յուզարկաւորութիւնը՝ յարգամքի վերջին տուրքը՝ տեղի կ'ունենայ ազգային շուքով: Եկեղեցիին մէջ դամբանականներ կը խօսին՝ ընկ-չբանդ Սամուէլեան՝ Լ.Յ. Դաշնակցութեան կողմէ, Արշակ Զօպանեան՝ Գաղթականներու Միութեան կողմէ, Անտրէ Ֆայէ՝ Ֆրանս-Հայկական Միութեան անունով, նախկին նախարար, Չիսնկելի՝ վրացիներու կողմէ, Պոտոսեան՝ Հայ Երիտ. Միութեան կողմէ, ինչպէս նաեւ Արսէն Բահանայ Սիմոնեան: Ուրիշներ հնարաւորութիւն չեն ունենար խօսք առնելու՝ ժամանակի նեղութեան պատճառով:

Թաղման ներկայ կ'ըլլան նաեւ Փրանսացի գօրավարներ՝ Պրեմոն, Շարտիներ եւ Շըվալիէ: Վրաստանի, Ատրպէճանի եւ Հիւսիսային Կովկասի նախկին նախարարներ եւ պետական անձնաւոր-

րութիւններ, ինչպէս նաեւ ազգային, մշակութային եւ երիտասարդական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Ներկայ եղան նաեւ ուրբանացիներ եւ դազստանցիներ՝ հրաժեշտ տալու իրենց պաշտօնակից եւ միեւնոյն առեւն պետական ախորական դէմքի մը, որ համակնուիրումով տրամադրուեցաւ իր ազգի արդար պահանջներու կենսագործման աշխատանքներուն:

## 2. ՔԱՂԱՔԱԳԵՏ-ԴԻԻԱՆԱԳԵՏԸ

«*Խատիսեան*» ստեղծուած էր Հասարակական-բարարական գործունէութեան համար»<sup>7</sup>: Այսպէս կը հաստատէ իր ժամանակակիցներէն՝ Ս. Վրացեանը երբ կը խօսի Խատիսեանի բնաւորութեան, խառնուածքին եւ նկարագրին մասին: Իրօք, Խատիսեանի քաղաքական գործունէութիւնն ու կեանքը կը վկայեն անոր քաղաքագէտի հմտութիւնն ու դիւանագէտի նկունութիւնը:

Խատիսեան ունէր դիւանագէտի հոտառութիւն: Իրատես էր. կ'ըմբռնէր դէպքերու եւ իրերու հոլովոյթին եղանակն ու թափը: Ստանձնած պատասխանատուութիւնները եւ պետական պաշտօնները կը ծառայեցնէր ժողովուրդին՝ անոր պահանջներուն ու կարիքներուն հասնելու նպատ-

7. «Յուշապատում Լ.Յ. Դաշնակցութեան 1890-1950», Կրտս. Լ.Յ. Դ. Բիւրոյի, Պոսթըն, 1950, էջ 537:

տակով: Առանձնապէս ուշագրաւ են ֆազաֆապետի եւ վարչապետի պաշտօնավարութեանց շրջաններուն իր արձանագրած բեզուն իրագործումները:

Թիֆլիսի ֆազաֆային հորհուրդի անգամ ընտրուելէն քանի մը տարի ետք, Կովկասի բազմացեղ մայրաքաղաքը՝ Թիֆլիսը կ'անցընէր տագնապալից շրջան մը, որ հետեւանք էր 1905-1906 ռուս-ճափոնական պատերազմին: Խատիսեան կը յաջողի հաւասարակշռել ազգային եւ կուսակցական տարամերժ կիրքերն ու մոլեռանդ ծայրայեղութիւնները:

1906ին, իբրեւ Թիֆլիսի նորընտիր ֆազաֆազուխի օգնական, Ալ. Խատիսեան յաջողութեամբ կ'աւարտէ իր առաջին փորձ ֆննութիւնը: Փաստօրէն, ֆազաֆապետի պաշտօն կը վարէ մանաւանդ որ ֆազաֆազուխը՝ Չերքեզով՝ հիւանդութեան պատճառով յանախ կը բացակայէր պաշտօնատունէն: Երիտասարդ Խատիսեան կը յայտնաբերէ աշխոյժ եւ բացառիկ կարողութիւն: Առաջին տարիներէն սկսեալ երեսն կը բերէ ֆազաֆազէտի շնորհներ եւ արժանիքներ, որոնք ամրապնդուած են աշխատունակութեան, նարտարութեան եւ նախանձախնդրութեան ոգիին վրայ:

Իբրեւ ֆազաֆապետ, Ալ. Խատիսեան լիովին կ'արդարացնէ այդ մակարդակի անձնատրութիւններէն ակնկալուող սպասումները եւ պատասխանատուութիւնները: Իր յաջողութեան եւ ժողովրդականութեան գազտնիքը բերես կը բա-

ցատրուի անով, որ ինք կը նուիրուի իր պաշտօնին եւ հոգուով ու մարմնով կը տրամադրուի իր ժողովուրդին: Անշուշտ, օրուան պայմանները եւ իրերու դասաւորումը, իրենց կարգին, ստեղծեցին առիթներ եւ կարելիութիւններ, որոնք նպաստեցին պետական գործիչի եւ տաղանդի դրսեւորման:

Թիֆլիսի ֆազաֆազուխի պաշտօնը առիթ կ'ըլլայ իրեն, որպէսզի մօտէն ծանօթանայ Կովկասի վարչական եւ ֆազաֆական ֆուրային, ուր Անդրկովկասի երեք ժողովուրդներու՝ հայերու, վրացիներու եւ ատրպէյճանցիներու տարակարծութիւնները եւ կենսական հարցերու նկատմամբ իրենց կեցումները կը բախէին իրարու: Իր «Քաղաքապետի մը յիշատակները» յօդուածաշարին մէջ, Ալ. Խատիսեան կու տայ վերլուծական—ֆննական իրադատուկ բացատրութիւններ՝ խարսխուած ֆազաֆազէտի մը իրատեսութեան եւ սառն դատողութեան վրայ:

Վերոյիշեալ յուշագրութիւնը կը հաստատուէ Խատիսեանի եւ Կովկասի փոխարքային՝ Վորոնցով—դաշկովին միջեւ մտերմութեան հասնող յարաբերութիւնները: Խատիսեանի անաչառութիւնը, դիրահազորդ բնուորութիւնը եւ մանաւանդ՝ բոլոր խաւերու յեզուն հասկնալու կարողութիւնը վստահութիւնն ներշնչեցին Կովկասի փոխարքային: Եւ որպէսզի պետական մարդու արժանիքը առարկայական կերպով գնահատենք, կը դիմենք Համօ Օհանջանեանին. «Ա. Խատիսեանի պետական մարդու յատկութիւնը պնաստեց եւ

այդ պիտի մարդու մօտիկու թիւնը պայտտին՝ կը թու-  
լացնէ ցարի ու ժն եւ Հեղինակութիւնը ժողովուրդի  
աչքին: Որպէս պատասխան, ցարը Հեռացուց նախա-  
բարը իր պաշտօնէն:

Յարը կը կորսնցնէր իր Հեղինակութիւնը ոչ  
միայն ժողովուրդի, այլեւ միապետականներու, իր  
մտերիմներու եւ անպամ իր բնտանիքի աչքին:

Կամաց-կամաց սկսան խօսիլ եւ ցարու հու գեր-  
մանական ծագումի մասին: Կը մեղադրէին գինք  
վերմանասիրութեան մէջ: Կ'ատէին ցարու հին իր  
ծանր բնուորութեան եւ Ռասպուտինի Հեռու նեցած  
մտերմութեան համար: Ռասպուտինը կը շարունա-  
կէր թղթի կտորներու վրայ անզրագէտ լեզուով դա-  
տական ամենակարեւոր խնդիրներու մասին ու այդ  
պահանջները անմիջապէս կը կատարուէին: Արնդ-  
րողները, որպէս հատուցում, Ռասպուտինի կ'առա-  
ջարկէին մեծ դրամ կամ իրենց քոյրը, կինը եւ աղջի-  
կը:

Երբեմն, մարդիկ հսկայական դրամներ կը ծախ-  
սէին՝ Ռասպուտինի մօտ ինչալու համար: Հասարա-  
կութիւնը գիտէր այս բոլորին մասին. գիտէր ոչ  
միայն Ռասպուտինի թշնամու մասին՝ բարձր դասին  
պատկանող կիներու հետ, այլեւ Ռասպուտինի գրեթէ  
ամէնօրեայ այցելութեանց մասին տիկին Վիրուրո-  
վայի մօտ, որ ցարու հու պատուայ տիկիններէն էր եւ  
իր ամէնէն մտերիմ բարեկամու հին: Հոն ցարու հին  
կը հանդիպէր ծերու կին:

Շատերը կը կարծէին, որ ցարու հին կը հաւատար  
անոր սուրբ ու ժին: Շատերն ալ կը կարծէին, թէ այդ

յարարերու թիւ ններուն մէջ մեծ դեր կը խաղար սերբ  
եւ կիրքը:

Ստտիկանութեան նախարար Չուհկովսկին շատ  
մանրամասն զեկոյց մը ներկայացուց ցարին՝ բազ-  
մաթիւ նկարներով, որոնք կ'ապացուցանէին Ռաս-  
պուտինի իսկական հու թիւնը: Բայց ցարն ու ցարու-  
հին չհաւատացին այդ նկարներուն՝ համարելով այդ  
ամէնը զրպարտութիւն սուրբ ծերու կին զէմ: Յարը  
կ'անտեսէր ժողովուրդի պայրոյթը, իսկ ժողովուրդը  
գնալով սկսաւ բռնել յեղափոխական ճամբան: Բո-  
ղոքները կը դառնային համարձակ. ոճր աւելի կրտ-  
րուկ եւ սուր: Պատասխանատու նախարարութեան  
պահանջը կը դառնար սպառնալի: Բայց պատերազմը  
կը կապէր քաղաքական գործիչներու ձեռքերը:

Մոսկուայէն եւ անցայ Պետերպուրգ: Այնտեղ ալ  
նոյն մտահոգութիւնը եւ նոյն դժգոհութիւնները:  
Ռուս յայտնի քաղաքական գործիչ Մակիակովը, որ  
սական «Բիրժենիյա Վեդումոստի» թերթին մէջ,  
լուսագոյն կերպով պատկերացուցած էր տիրող կա-  
ցութիւնը.

«Երեւակայեցէք արագ բնբացող մեքենայ  
մը. կը գրէր Մակիակովը - որ կը սլանայ անդունդի  
կողքէն եւ որու վարիչը հմուտ չէ իր մեքենային:  
Մէկ սխալ շարժում՝ մեքենան անդունդ պիտի գլու-  
րի: Երեւակայեցէք, որ այդ մեքենային մէջ նստած  
է հմուտ վարիչ մը, որ կը տեսնի, կը գգայ ամբողջ  
վտանգը, բայց գիտէ, որ ամենափոքրիկ պայքարն  
անգամ՝ մեքենան գրաւելու համար, գիրենգ դէպի  
անդունդ պիտի գլորէ: Ու հմուտ վարիչը կը հա-  
մակերպի կացութեան՝ ականատես մնալով վա-  
րիչի խելացնոր վագրին»:

կովկասի փոխարքան և ստիպուած էր մշտապէս նրա չեա խորհրդակցել ըստ պետական խնդիրներէ շուրջ, որ կը վերաբերէին կովկասին, նրա ազգարնակութեան և Քիֆիսի քաղաքին բնականաբար<sup>8</sup>:

Հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան ամէնէն փոքորկալից և ցակատագրական շրջանին՝ 1917—1920 տարիներուն, հատիսեան իր ֆաղափական փորձառութիւնն ու կշիռը ի սպաս դրաւ նորաստեղծ Հայաստանի հանրապետութեան և արիւնաբաւ հայ ազգին: Փաստօրէն, իր ֆաղափական յարաբերութիւնները, շրջապտոյտները, վարած պաշտօններն ու իրագործումները կ'արտահանեն ֆաղափական իրապաշտ ղեկավարի մը կնիքն ու դրոշմը:

հատիսեան հայաստանի հանրապետութեան պաշտօն կը վարէ 14 ամիս՝ մինչեւ 5 Մայիս 1920: հատիսեանի վարչապետութեան շրջանը յարաբերաբար աւելի խաղաղ է և հանդարտ: Աւելի՛ն. Հայաստան ներքնապէս կը կազմակերպուի և կը սկսի միջազգային կեանքի մէջ հետաքրքրութեան առարկայ դառնալ:

հատիսեանի ամէնէն յատկանշական դերակատարութիւնը՝ որով կը գատորոշուի իբրև դիւանագէտ, Հայաստանի դրացի երկիրներու հետ սահմանային վէճերու ընթացքին իր հեղինակաւոր առկայութիւնն է:

<sup>8</sup> Համօ Օհանջանեան, «Հայ պետական մարզը», «Յուսաբեր», ԱԱ. Տարի, 7 Ապրիլ 1945:

«Վարչական քաղաքական խնդիրներէն կատարւորութիւնը իրապարծեր է միայն չեախալները. կազմակերպեր է չեաքրական գործակալութիւն, [...] սահմաններ է չեապատասարաններ՝ Պաթում, Սոխում, Պարու՝ յանձնարարելով իր Փարիզի պատուիրակութեան կազմակերպել ներկայացուցչութիւններ և չեապատասարաններ Եւրոպայի մէջ: կազմակերպեր է տեղեկատու բաժին [...] իրազեկ պահելու համար իր ընտր ներկայացուցիչները հայկական գաղութներու և Հայաստանի կացութեան մասին: Ստեղծեց դիւանագիտական ներկայացուցչութիւն Պարսկաստանի մէջ, ուղարկուեցաւ այնտեղ ղեկաւոր [...] : Երեւանի մէջ կազմակերպուած է բնդունելութիւն շարք մը պատգամաորութիւններու, որոնք Հայաստան կու գային ծանօթանալու համար այնտեղի գրութեան և տնտեսական կապեր սկսելու»<sup>9</sup>:

Արտաքին ֆաղափականութիւնը յղի է անկրկնկալ և գահավէժ իրադարձութիւններով: Այդպիսի դժուարին և ծանր հարցերու բարոյութումը կը վստահուի հատիսեանին: Ծնորիւ իր ֆաղափական հետախուսութեան, հոտառութեան, ողջմտութեան և վճռականութեան՝ կը յաջողի ապահովել առաւելագոյն նպաստը և պայմանները՝ յօգուտ Հայաստանին և հայ ազգին:

<sup>9</sup> Այ. Մատիսեան, «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը», ք. տպագրութիւն, տպարան Համազգային, 1968, էջ 142:



2 Դեկտեմբեր 1920ին, Ալեքսանդրապոլի մէջ, ամբարտաւան եւ յոխորտացող Գարապեֆիբիին դէմ դիւանագէտի ամբողջ ճարտարութիւնը ի գործ դրաւ՝ ժամանակ շահելու եւ ստոյգ բնաջրնչումէ փրկելու հայ ազգի մնացորդացը. որուն բանակը արդէն իսկ ֆայֆայուած էր եւ տարտղըրւած:

Խատիսեանի ստանձնած ֆաղափական առաքելութեանց պարզ թուարկումն իսկ բաւարար է ցոյց տալու անոր ֆաղափագէտի եւ դիւանագէտի արժէքը: Դուագագոյն յոգնածութեան եւ նահանջի տրամադրութիւններ չնշմարուեցան իր պաշտօնավարութեան առեւ: Կարծէք ծնած էր պետական ականաւոր գործիչ դառնալու: Իր բնատուր տաղանդն ու փորձառու ֆաղափագէտի հասունութիւնը կ'երաշխաւորեն իր չափի զգացումը եւ բուպէի ֆաղափական գնահատումը. որոնք դժբախտաբար ընդհանրապէս կը պակսին հայ գործիչներու ֆաղափական մտածողութեան մէջ:

### 3. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՐ

Քաղաքական մարդը, անկասկած, կարելի չէ անջատել հանրային գործիչէն կամ հասարակական ծառայող-հեղինակութենէն: Քաղաքական ղեկավարը միեւնոյն առեւ ու զգակի կամ անուզողակի կերպով է՝ նաեւ հանրային գործիչ. բոտ տեղի եւ գործի տարողութեան: Ահա՛ թէ ինչու երբ անջատաբար կը ներկայացնենք Խատիսեան ֆա-

ղափագէտ-դիւանագէտն ու հանրային գործիչը, անիկա կը նպատակադրէ պարզապէս ցոյց տալ անոր տաղանդին եւ արժանիքներուն զանազան կողմերը:

Հանրութեան ծառայելու իր ցուցաբերած անսպառ պատրաստակամութեան պատճառով, Խատիսեան յաջողեցաւ անմիջապէս գրաւել ժողովրդային լայն խաւերու սիրտերը: Ասիկա՝ ոչ միայն հայ իրականութեան մէջ, այլեւ օտարներու մօտ:

Հանրային գործիչը տէր է գորաւոր երեսակայութեան: Աւելի՛ն. իբրեւ ստեղծագործ միտք, միշտ կը մշակէ նոր ծրագիրներ: Հանրային գործիչը՝ մնալուն կերպով ներկայ է հասարակական կեանքին մէջ: Երբեք չի մեկուսացներ ինքզինք, այլ՝ համոզումով ու լաւատեսութեամբ ամբողջականօրէն կ'ապրի իր ժողովուրդին տառապանքը:

Դեռ ուսանող, Խատիսեան կը սիրուի համալսարանական շրջանակին կողմէ: Այդպէս է, որ շրջանաւարտ ըլլալէ 20-25 տարի ետք, դասախօսները հայ ուսանողներուն կը հարցնէին Խատիսեանի մասին<sup>10</sup>:

Բժշկական իր ասպարէզը, որ ունեցաւ կարճատեւ կեանք, Խատիսեանին ապահովեց լայն ժողովրդականութիւն: Ամիսը երկու կամ երեք ան-

10. Համօ Օ՛սանջանեան, «Հայ պետական մարդը», «Յուսաբեր», ԱԽՍՍՐԻ, 7 Ապրիլ 1945:

զամ կու տար հրապարակային դասախօսութիւններ, որոնց ներկայ կ'ըլլար, այսպէս ըսուած. «ամբողջ Թիֆլիսը»:

Իբրեւ ֆազաֆայետի օգնական, Խատիսեանի հանրային կեանքին ամէնէն յատկանշական իրագործումը եղաւ Թիֆլիսի ժողովրդական համալսարանի հիմնումը՝ 1906ին. բա՛ն մը, որ իրագործընթացաւ անոր անդուլ հետապնդումներուն եւ հետեւողական ջանքերուն շնորհիւ:

Խատիսեան ունէր կազմակերպական շնորհք: Փաստօրէն, իր ֆազաֆայետութեան շրջանին, Խատիսեան ոչ միայն յաջողեցաւ բարձրացնել Թիֆլիս ֆազաֆի վարկը, այլեւ հասցուց գայն համայն Ռուսաստանի համբաււոր ֆազաֆ-կեդրոններու մակարդակին: Ահա՛ թէ ինչու, վրաստանի մայրաֆազաֆը ստացաւ պետական նշանակութիւն եւ հետաքրքրութիւն:

6 Փետրուար 1911ին, քիմիագէտ Ստեփանեանին հետ, Խատիսեանին կը վստահուի ֆազաֆային հանրային առողջապահական հարցի ներկայացումը՝ Փեթերսպուրկի հակաֆոլերային համագումարի աշխատանքներուն մէջ:

Հանրային գործունէութեան մէջ դարձեալ, 7 Յունիս 1911ին, Լիպարիտ Նազարեանցի հաստատումով, Խատիսեան վարչական կ'ընտրուի հայոց թատերական ընկերութեան ընդհանուր ժողովին: Այս ընկերութիւնը անկայուն վիճակ մը ունէր եւ չէր յաջողած ինքզինք կազմակերպել: Իր օրով, թատերական կեանքը կը վերաշխուժանայ, նիւթապէս հետզհետէ կ'ապահովուի եւ կ'օժտուի

նրբանշակ թատերասէրներու գոհացում տուող խաղացանկով:

Ա. Աշխարհամարտին, Թիֆլիսի ամբողջ բնակչութեան հետ խուճապի կը մատնուի նաեւ ռուսական գօրաբանակներու սպաներէն ոչ արհամարհելի թիւ մը: Այդ օրերուն, համայն Ռուսաստանի տարածքին վրայ Խատիսեան աչքի կը գարնէ իբրեւ հասարակական գործիչ:

Լիաժամ հանրային գործիչ էր: Անանձնական էին իր ծառայութիւնները: Փառքի համար չէր, որ կը տրամադրուէր հայ ժողովուրդի բարօրութեան եւ Հայաստանի Հանրապետութեան կազմակերպման աշխատանքներուն: Թէեւ ծանրաբեռնուած էր պետական մարդոց յատուկ հասկնալի պարտաւորութիւններով, բայց ժամանակ եւ կարելիութիւններ կը ստեղծէր՝ հանրութեան կարիքներուն հասնելու եւ գործնապէս օժանդակելու:

Հայաստանի Հանրապետութեան վարչապետութեան ընթացքին, Խատիսեան ծրագրեց Սրբւանը օժտել մնայուն քատրոնով: Կը խորհէր — եւ արդարացի՛օրէն — որ Թիֆլիսը դաշնակից բանակային բարձրաստիճան սպաներու ուշադրութեան առանցքը կը դառնար՝ շնորհիւ անոր մշակութային եւ արուեստի նոյն երեկոյքներուն:

Իբրեւ վարչապետ դարձեալ, մեծ եղած է Խատիսեանի նպաստը Հայաստանի Հանրապետութեան ներքին կազմակերպական աշխատանքներուն: Այս մասին ընդարձակ տեղեկութիւններ կան իր «Հայաստանի Հանրապետութեան ծագումնաբան պարպացումը» հատորին մէջ: Այստեղ պէտք է

շեշտել այն իրողութիւնը, ըստ որուն իր վարչապետութեան 14ամսեայ ժամանակաշրջանի ընթացքին, Հայաստանի շինարարութիւնը, պետական կառոյցն ու արդարադատութեան վարչական կառոյցները արագօրէն մտան իրենց բնական հունին մէջ՝ կազմակերպելով ներքին կեանքը: Աւելի՛ն. իր օրով, Հայաստան սկսաւ հետաքրքրութեան առարկայ դառնալ միջազգային կեանքին մէջ:

Խատիսեանի եղբայրները չէին գիտեր հայերէն լեզուի կանոնաւոր գործածութիւն: Պէտք է ըսել սակայն, թէ ընտանեկան մթնոլորտը անոր կրներշնչէ հայրենասիրական ոգի. հատիսեան կը մեծնայ այդ շունչով եւ ապրումով: Նոյն տոգորումով՝ ան կ'արտասանէ հայրենասիրական բազմաթիւ ճառեր հրապարակային հանդիպումներու եւ ժողովներու ընթացքին:

Քազմակողմանի զարգացման տէր անհատականութիւն մըն էր հատիսեան: Այլագան յոգւածներ գրած է Թիֆլիսի թերթերու եւ պարբերականներու մէջ: Հրատարակած է զրոյցներու շարք մը՝ տնտեսական, քաղաքական եւ մշակութային հարցերու մասին: Հայ գրականութենէն կատարած է քարզմանութիւններ՝ ռուսերէն լեզուով: Ունի պատմական երկու յուշագրական երկեր — «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու պարզացումը» եւ «Քաղաքապետի մը յիշատակները» — որոնք առաջին անգամ լոյս տեսած են «Հայրենիք» ամսագրին մէջ: Առաջինը երկու անգամ լոյս

ընծայուած է առանձին հատորով, իսկ երկրորդը՝ սոյն հրատարակութեամբ:

Իբրեւ հանրային գործիչ, հատիսեան ունէր հակառակորդներ եւ թշնամիներ: Մա՛նաւանդ անոր դէմ էին վրացի սոցիալ-դեմոկրատները, որոնք ամէն միջոցի կը դիմէին վարկաբեկելու համար զինք: Խատիսեան չէր կորսնցներ իր հանդարտութիւնը եւ անոնց սաղրանքներուն կը պատասխանէր հետեւեալ ձեւով. «Եթէ գործիչ մը [...] պարկեշտ տրամադրութիւններով ասպարէզ իջած է եւ վստահ է իր աշխատանքի օգտակարութեան, ան երբեք այդուկու չէ իր դէմ եղած յարձակումներէն. ասպաթէ ոչ՝ ասպարէզին վրայ պիտի մնային թույլամորթ համբակներ, եւ ամէն հանրային ձեռնարկ դատապարտուած պիտի ըլլար ձախողման»<sup>11</sup>:

#### 4.— ՄԱՐԳԸ

Իր ժամանակակիցներն ու գործակիցները կը վկայեն, թէ Խատիսեան անշահախնդիր, ծառայատէր եւ ազնուական նկարագրի տէր անհատականութիւն մըն էր: Իր անաչառ գործունէութեան շնորհիւ բարձր պահեց հատիսեաններու գերդաստանին վարկն ու հեղինակութիւնը:

Խատիսեան կոչոււմ ունէր իր ազգին միջոցով մարդկութեան ծառայելու: Իր առաւելագոյնը

11. Լ.Ն., «Հանրային մարդը», «Յուսաբեր», ԱՊ. Տարի, 7 Ապրիլ 1945:

տուաւ ան իբրեւ մարդ: Թիֆլիսի ֆազաֆայետու-  
թեան, Հայաստանի վարչապետութեան եւ ըՍ-  
փիւոֆի մէջ ունեցած գործունէութեան ընթացքին  
յաջողեցաւ կերտել հանրային մարդու հայ տիպա-  
րը:

Խատիսեան գործեց պատերազմական վիճա-  
կի մէջ. պէտք է ըսել սակայն, թէ շատ անելին  
կրնար տալ խաղաղ պայմաններու տակ: Իր տա-  
ղանդն ու կարողութիւնները ի սպաս դրաւ հայ  
ժողովուրդի ապահովութեան եւ բարօրութեան:  
Աւելի՛ն. երբեք չփափաքեցաւ հեռանալ ազգային  
կեանքէն: Փաստօրէն, ռուսական անսահման կա-  
րելիութիւններն ու փառասիրութիւնները յաջո-  
ղեցան ներգրաւել երիտասարդ Խատիսեանը, որ  
շատ դիրութեամբ ի վիճակի էր բարձրանալու,  
փայլելու եւ ինքզինք պարտադրելու:

Բազմակողմանի զարգացման տէր հասարա-  
կական գործիչ էր: Ըստ իր դասընկերներուն եւ  
գործակիցներուն, ամոր տեսակէտներն ու կար-  
ծիքները հիմնաւորուած եւ իւրայատուկ էին: Եւ-  
րոպական եւ ռուսական ֆազաֆակրթութիւնն ու  
կենցաղը պատշանեցուցած էր ազգային-մշակու-  
թային արժէքներուն: Բացառիկ ընդունակութիւն  
ցուցաբերած է յատկապէս օտարներու հետ յարա-  
բերութիւն մշակելու աշխատանքին մէջ: «Ա. Խա-  
տիսեան ինքը շատ mondain մարդ էր, որով նմանա-  
պէս տարբերում էր միւս բոլոր գործիչներէն»<sup>12</sup>:

12. Ս. Թորոսեան, «Ալեքսանդր Խատիսեանի շրջանը».  
«Հայրենիք» ամսագիր, Լ. Տարի, Թիւ 8, Օգոստոս 1952, էջ 46:

Խատիսեան «կարեւորութիւն էր տալիս ձեռքին. բա-  
ւական չէր, որ կատարուէր մի աշխատանք, կարեւոր  
էր նաեւ կատարման ձևը: Մանաւանդ օտարների  
հետ շփման միջոցին, ձեւը առանձին տեղ էր  
բռնում»<sup>13</sup>:

Խատիսեան առանձնայատուկ տեղ կը գրաւէ  
մեր նորագոյն պատմութեան մէջ: Իր բարոյական  
մեծութեամբ, համեստ նկարագիրով եւ ժողովրդ-  
դանուէր բնաւորութեամբ յարգանք պարտադրած  
է իր շրջապատին եւ բոլոր անոնց վրայ, որոնց  
հետ յարաբերութիւն մշակեց, գործեր վարեց կամ  
աշխատանքներ հետապնդեց: Իր հակառակորդ-  
ներն անգամ անվերապահ յարգանք ունէին իրեն  
հանդէպ:

Անդրկովկասի մէջ յեղափոխական կուսակ-  
ցութիւնները — հայ եւ օտար — աշխոյժ գործու-  
նէութիւն ունէին: Ընդդիմադիրները, ինչ պատ-  
կանելիութիւն ալ ունենային, կը վստահէին ֆա-  
զաֆայետ Խատիսեանին: Ան մինչեւ իսկ կը հան-  
դիսանար պետութեան եւ յեղափոխական շար-  
ժումներու միջեւ հազորդակցութեան եւ յարաբե-  
րութեան միջոցը:

Ցարական սահմանադրութեան համաձայն,  
իբրեւ ֆազաֆայետ՝ խատիսեան նախագահն էր  
բանտային կոմիտէին, որուն պարտականութիւնն  
էր հսկել բանտարկեալներու սնունդի ապահով-  
ման: Խատիսեանի ջանքերով եւ միջնորդու-

13. Նոյն, էջ 44

քեամբ՝ արտօնուեցաւ նոյնիսկ բանտերու կից կրպակներու հաստատումը: Բանտարկեալները, որոնց մեծամասնութիւնը կը կազմէին յեղափոխականները, կրնային հոգալ այլեւս իրենց անմիջական կարիքները:

Թիֆլիսի ֆազաֆապետութեան եւ ժողովրդային լայն խաւերու միջեւ հեռաւորութիւն գոյութիւն չունէր գրեթէ: Ասիկա շնորհիւ հատիսեանի վարած ներքին ֆազաֆականութեան, որ կը յատկանշուի անաչառութեամբ եւ ժողովրդասիրութեամբ: «[...] *Թիֆլիսի բողոքային վարչութիւնը իր կազմի կրթական ցենզով համարեալ՝ առաջինն էր ողջ Ռուսաստանի մէջ, որ կը ջանար ամէն կերպ թւթևեցնել աշխատանքի պայմանները, կրճատել բանտօրական ժամանակը, ստեղծել առողջապահական տանկի պայմաններ եւ կարգաւ որել երեխաներու աշխատանքի պայմանները*»<sup>14</sup>:

Խատիսեան ծանօթ էր իբրեւ հմայող հոեւոր, հմուտ եւ սրամիտ նառախօս: Կր սիրէր ելոյթ ունենալ հաւաքոյթներու, հրապարակային հանդիպումներու եւ խնդիրներու առեմ՝ ներկաներուն ուշադրութիւնը իր վրայ կեդրոնացնելու մեծ հարտարութեամբ: 1915ին, Մոսկուայի մէջ, Քաղաքներու Միութեան րնդհանուր համագումարի րնքացքին, հառով մը կը ներկայացնէ Անդրկովկասի իրավիճակն ու սպասումները: «Այդ ճատից

14. Այ. Խատիսեան, «Քաղաքապետի մը յիշատակները», «Հայրենիք» ամսագիր, Ժ. Տարի, Թի. 9(117), Յուլիս 1932, էջ 98:

յետոյ շատերը շնորհաւորում են նրա էյոյթը եւ անուանում նրան «Կովկասեան Ոսկերէրանը»<sup>15</sup>:

1920ին, Խատիսեան ի շարս այլ շրջաններու, այցելութիւն տուաւ նաեւ Թուսնուֆ (Պուլկարիա), ուր իջեանեցաւ Սարգիս Գոյյումնեանի (Մայքըլ Արլէնի հօր) բնակարանը: Խատիսեան հայրենասիրական բովանդակութեամբ հրապարակային հառ մը արտասանեց գաղութի Օտէոն սրահին մէջ: Կր պատմեն, քէ ներկաները ֆարացած վիճակի մէջ ունկնդրած են Խատիսեանի մէկուկէս ժամ տեսողութիւն ունեցող ճառը:

«*Պերճախօս Տեստոր, բազմազան Տեսաբարբու-թիւններ ու ծրագիրներ Տեսապնդող, արտասովոր կերպով աշխատունակ, ցոյց ու ժողովրդականութիւն սիրող, ազատախօս եւ լաւ իմաստով պատահապաշտ, կենդանի գործը վերացական տեսութիւններից գերադասող, հասարակական բոլոր խաւերի լեզուն հասկացող, հանրութեան ծառայելու պատրաստակամ, գիրբահաղորդ եւ ամէնքին ժատչելի, ազնիւ նկարագրի տէր*»<sup>16</sup> անհատականութիւն մըն էր Խատիսեան:

Հայաստանի խորհրդայնացումէն ետք, Խատիսեան նետուեցաւ Սփիւռքի ազգային կեանքի կազմակերպման: Այստեղ այ ինքզինք պարտադ-

15. Ս. Թորոսեան, «Ալեքսանդր Խատիսեանի շրջանը», «Հայրենիք» ամսագիր, Ժ. Տարի, Թի. 10, Հոկտեմբեր 1952, էջ 25:

16. «Յուշագատում Է. Բաշնակցութեան 1890-1950», Անդ., էջ 537:

րեց ան իբրեւ անխոնջ աշխատող եւ հետեւողական ներկայութիւն:

Բ. Աշխարհամարտին հատիսեան ունեցաւ դժբախտ ապրումներ: Յամառեցաւ քիկունք կանգնիլ Եւրոպայի զանազան գաղութներու մէջ վտանգուած հայութեան: Իր աշխատանքին վարձատրութիւնը, աւաճ, եղաւ դաժան եւ ապեւրատ: հատիսեանի ջանքերուն շնորհիւ փրկուած տարրերէն ոմանք դաւաճանեցին մարդկային տարրական առաքինութիւններուն եւ պատճառ եղան անոր բանտարկուելուն: «Այն մարդիկ, որոնց կեանքը նա փրկել էր բռնութեան ճիւղանքէն, ամարդօրէն բանտարկութեան եւ շարժարանքներէ մատնեցին նրան: Արդարութիւնը յարթանակեց, բայց բանտային տառապանքները վերջնակա՛նապէս խորտակեցին նրա արդէն իսկ տկարացած ասողջութիւնը»<sup>17</sup>:

հատիսեան ունեցաւ բեզուն գործունէութեամբ լիցուն կեանք մը: Մեռաւ համեստ պայմաններու տակ՝ այնպէս ինչպէս ինք էր՝ պատմութեան ժառանգելով խոնարհ տիպարի մը յիշատակը:

## 5. ԱԶԳԱՅԻՆ ԴԷՄՔՐ

Ազգային կեանքի մէջ հատիսեան ցուցաբերեց արտակարգ եռանդ եւ մեծ աշխատասիրութիւն.

17. Նոյն, էջ 539-540:

յատկապէս հայ կամաւորական խումբերու կազմաւորման առեւն: Անկէ ետք եւ մինչեւ իր մահը, գրեթէ ամէն տեղ բացայայտ դարձաւ անոր ամբողջական նուիրումը: Պէտք է նշել սակայն, թէ Ա. Աշխարհամարտէն առաջ ալ հատիսեան պայքարեցաւ հայութեան շահերու պաշտպանութեան ի խնդիր:

Կ'ուզենք անմիջապէս հաստատել, որ հատիսեան իր քաղաքացիական հանգամանքով կատարեց ազգային պարտականութիւն եւ ծառայութիւն: Իր պաշտօնը երբեք չծառայեցուց անհատական նեղ հաշիւներու եւ ֆաւստի ցանկութիւններու: Ընդհակառակն, հատիսեան ծառայեց իր հարազատ ազգին՝ քաղաքացիական պաշտօնին ընդմէջէն: Ահա՛ թէ ինչու մեծապէս յարգուեցաւ եւ սիրուեցաւ ժողովուրդին կողմէ:

հատիսեան ո՛չ միայն օգտակար եղած է հայ յեղափոխականներուն, այլեւ չէ զրացած իր օժանդակութիւնը տալու ռուս եւ վրացի յեղափոխականներու, փախստականներու եւ անիրաւուածներու: Այս առնչութեամբ, հատիսեան յաջողեցաւ հաւասարակշռուած գուգահեռ մը գծել քաղաքական եւ ազգային գործունէութեանց միջեւ:

Կամաւորական խումբերու կարգադրիչ Մարմինին մէջ հատիսեան ստանձնած էր եռեակ պարտականութիւն.— ընդհանուր քարտուղարութիւն, գործադարութիւն եւ Ազգային Բիրոյի կարգադրիչ Մարմինի ներկայացուցչութիւն:

1914ին, հատիսեանի նախաձեռնութեամբ կովկասի 44 քաղաքները միացան՝ հիմնելու հա-

մար Կովկասեան Քաղաքներու Միութիւնը: Ինք  
ընտրուեցաւ անոր նախագահն ու լիազօրը: Նո-  
րակազմ Միութիւնը տէր էր նիւթական լայն կա-  
րելիութիւններու: Միութիւնը շինել տուաւ 32  
հազար անկողիններով նոր հիւանդանոցներ:  
Կովկասեան Միութեան 19 հազար պաշտօնեանե-  
րու երկու-եքրորդը հայ էր: Միութեան գործիչ-  
ներուն մաս կը կազմէին. ի շարքս այլոց. Համօ  
Օհանջանեան, Յ. Քաջազնունի, տոֆր. Ա. Բաբալ-  
եան, Խ. Կարնիկեան, Ռ. Տէր Մինասեան, բոլորն ալ  
Հայաստանի Հանրապետութեան ապագայ նախա-  
րարներ<sup>18</sup>:

Իբրեւ լիազօր նախագահը Կովկասեան Քա-  
ղաքներու Միութեան, հատիսեան իր կարելին  
գործ դրաւ որպէսզի հայ դժբախտ գաղթականնե-  
րու խնամատարութիւնը առաւելագոյն չափով  
կատարուի:

Ա. Աշխարհամարտին, ռուսական բանակնե-  
րու անկանոն տեղափոխութիւններու հետեւան-  
ֆով անպատուապար կը մնան աղէտահար հայ գաղ-  
թականներ, որոնց շտապ օգնութեան եւ խնամա-  
տարութեան մէջ հատիսեան կ'ունենայ ուշագրաւ  
դերակատարութիւն:

Հայ կամաւորական գունդերու կազմութիւնը  
որոշ չափով խեղաթիւրուեցաւ ռուս պետական  
շրջանակներու մօտ: Այս վերջիններուն մէջ հա-

18. Գ. Լազիսեան, «Ինքնիշխան հայ ազատագրական շարժու-  
մէն», անգլ., էջ 307:

տիսեան՝ փառաբանութիւն մը յատուկ հիմնաւոր-  
ումներով՝ կը յաջողի փաստել, թէ սնանկ են-  
նամանօրինակ բոլոր վերագրումները հայ կամա-  
ւորական գունդերու նկատմամբ: Աւելի'ն. փո-  
խարքայ Վորոնցով-Գաշկովի հետ հատիսեանի  
ունեցած մտերմութիւնը մեծապէս կ'արագացնէր  
Ազգային Բիւրոյի եւ ռուս իշխանութեան միջեւ  
հրատապ հարցերու բարոյօք լուծումը:

հատիսեան բարեբար միջնորդ եղած է էջ-  
միածնայ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ  
Փեթերսպուրկի կեդրոնական իշխանութեան մի-  
ջեւ: Իր կապերուն եւ ծանօթութիւններուն շնոր-  
հիւ, խելացի միջամտութիւններ կատարած է՝  
պահելու եւ զօրացնելու համար երկկողմանի յա-  
րաբերութիւնները: Այս ծիրին մէջ, պէտք է ըսել,  
թէ Իզմիրլեան կաթողիկոսի վախճանումէն ետք,  
երկու թեկնածուներ մեծ հաւանականութիւն ու-  
նէին ընտրուելու: Առաջինը Պոլսոյ պատրիարք  
Մաղափա Օրմանեանն էր, իսկ երկրորդը՝ Գէորգ  
Եպս. Սուրէնեան: Փեթերսպուրկի կեդրոնական  
իշխանութիւնը կը ձգձգէր այս ընտրութիւնը:  
հատիսեանի միջնորդութեան շնորհիւ, ընտրու-  
թիւնը տեղի կ'ունենայ: հատիսեան պաշտպանեց  
թեկնածութիւնը Սուրէնեանի, որ կաթողիկոս ըն-  
տրուեցաւ դաշնակցականներու շնորհիւ:

հատիսեան Հայաստանի Հանրապետութեան  
մէջ կը տեսնէր հայ ժողովուրդի անկախութեան  
հիմնաքարը: Պետական մարդու իրատեսու-  
թեամբ՝ ամէնուրեք տարածեց անկախութեան

զազափարբ: Այլ խօսքով, հատիսեան ժողովրդա-  
կանացուց անկախութեան գազափարբ, որովհե-  
տե քաջ գիտէր. թէ հայութեան փրկութիւնն ու  
Հայաստանի բարգաւաճումը կ'երաշխատորուին  
միայն անկախութեամբ: Խատիսեանի հեղինակած  
*«Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զար-  
գացումը»* յուշագրական հատորին մէջ կան հա-  
րուստ վկայութիւններ, որոնք կը հաստատեն  
անոր ունեցած անկախութեան խոր հաւատքը:

Հայաստանի անկախութեան հռչակումէն  
ետք, 30 Մայիս 1918ին, Թուրքիա Պաքումի մէջ  
բանակցութեան նստաւ նորաստեղծ հանրապե-  
տութեան հետ: Վեհիպ փաշան զժամ էր Հայաս-  
տանի քարտէսը, գոր ներկայացուց հայկական  
պատուիրակութեան: Խատիսեան հետեւեալ տո-  
ղերով կը նկարագրէ իր զգացումներն ու յու-  
զումը՝ այդ բանակցութեանց ատեն. *«Երբ մենք  
նայեցանք քարտէսին վրայ [...] երկու սուր զգա-  
ցումներ համակեցին մեզ. առաջին՝ հպարտութիւն,  
որ մենք ալ դարաւ որ պայքարներէն ետք, վերջապէս,  
զէթ փոքր անկիւն մը ու նեցանք աշխարհի քարտէսին  
վրայ, եւ երկրորդ՝ դառնութեան, որ մեզի տրուած  
այդ անկիւնը հազիւ 9.000 քառ. քմ. կը պարունա-  
կէր, որ բացարձակապէս անբաւարար էր մեր ժողո-  
վուրդը իր մէջ առնելու համար:*

*«Իր կեանքը, յետոյ անցաւ այս երկու զգացում-  
ներով տողորուն, — հպարտութեան զգացումով, որ  
հայութիւնը պետութիւն ունէր. դառնութեան զգա-*

*ցումով, որ անիրաւութիւնը կը մնար զեռ»<sup>19</sup>:*

Իր ազգային գործունէութեամբ կ'ոգեկոչէր  
տարագիր հայ ժողովուրդի գաւակները եւ անոնց  
ապաւէն հայ քաջարի բանակի սխրագործութիւն-  
ները՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարա-  
ֆիլիսէի հերոսական կոիւներու բնթացքին:

Խատիսեանի մատուցած ազգային ծառայու-  
թիւնները անգնահատելի են եւ յատկապէ՛ս դաս-  
տիարակի՝ իրենց այժմէական ուժականութեան  
բովանդակութեամբ: Իր տիպարը ներշնչարան  
մըն է հայ ժողովուրդի հպարտութեան:

## 6. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ

Այլ խատիսեանի երէց եղբայրը, Կոստանդին,  
Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան հիմ-  
նադիրներուն մէջ կը գրաւէ կարեւոր տեղ՝ շնոր-  
հիւ իր նախաձեռնութեան ոգիին, կազմակերպա-  
կան բնղումակութեան եւ հայրենասիրութեան:  
Հակառակ ասոր, Կոստանդին երկար չմնաց նո-  
րաստեղծ կուսակցութեան շարքերը եւ քաշուե-  
ցաւ ասպարէզէն: Կոստանդին իր գործունէու-  
թեան գլխաւոր ասպարէզը դարձուց Բագուի մշա-  
կութային միութիւնը<sup>20</sup>:

19. «Մեծ կորուստի մը առջեւ» (Խմբ.), «Յուսաբեր», ԼԱ-  
Տարի, 7 Ապրիլ 1945:

20. Գ. Լազեան, «Դէմքեր հայ ազատագրական շարժու-  
մէն», անդ., էջ 303:



Այլ խատիսեան իր եզրօր հակառակ ընթացք ունեցաւ: 1905ին դիմեց Ն.Յ.Գաշնակցութեան շարքերը, սակայն Ռոստոմի, Ն. Օհանջանեանի եւ այլ պատասխանատու ընկերներու թելադրանքին անսայով՝ չանդամագրուեցաւ: Քաղաքապետի հանգամանք արգելք կ'ըլլար իր փափաքին իրականացման. մանաւա՛նդ որ, հայութեան պայմաններն ու պահանջները այդպէս կը ստիպէին: Խատիսեան «Նախընտրեց [...] մնալ կեանքի անձուկ պայմաններու մ, որովհետեւ սիրու մ էր իր ժողովուրդը, նրա տառապանքն ու նուիրական դատը»<sup>21</sup>: Տասներկու տարի ետք, 1917ին, երբ Խատիսեան Թիֆլիսի քաղաքապետ չէր այլեւս, համայն կովկասի դաշնակցական բացառիկ համագումարի ատեն, Խատիսեան վերստին դիմում կատարեց Գաշնակցութեան եւ անդամագրուեցաւ:

Մեծ եղաւ Խատիսեանի դերակատարութիւնը կովկասահայութեան բարօր զարգացման եւ Գաշնակցութեան դատավարութեան մէջ: 1900ական բուականներուն, Ռուսաստանի ցարական կառավարութիւնը հալածանքի եւ հետապնդումի քաղաքականութիւն մը կը վարէր յեղափոխականներու հանդէպ. կուսակցութիւններու գործունէութիւնը ունէր բացարձակ զաղտնի եւ ընդատակեայ բնոյթ: Հետեւաբար, կուսակցութիւններու անդամակցիլն ալ խիստ պայմաններու ենթակայ էր:

21. Վ. Նաւասարդեան, «Ալեքսանդր Խատիսեան», «Յուսարբեր», ԱԼ. Տարի. 7 Ապրիլ, 1945:

Յարական Ռուսաստանը որոշած էր լուծարքի ենթարկել Ն.Յ.Գաշնակցութիւնը: Այս կապակցութեամբ, ցարական զաղտնի ոստիկանութիւնը, ծանօթ Օխրանա անուցով, մշակած էր կեղծ փաստարուղիներ եւ վկայութիւններ, որպէսզի ձերբակալէ դաշնակցական գործիչները: 160 «մեղաւոր» դաշնակցականներ յանձնուեցան դաշնակցութեան դատավարութեան, որուն զլիսաւոր քննիչ նշանակուած էր տխրահռչակ Լիժինը: Այլ Խատիսեան պարտականութիւն կ'ունենայ պաշտպանելու Ն.Յ.Գաշնակցութեան որդեգրած օրուան քաղաքականութիւնը, որ ուղղուած էր Օսմանեան բռնակալութեան դէմ: Գաշնակցութեան յեղափոխական գործունէութիւնը չէր միտեր խանգարել ցարական Ռուսիոյ ներքին անդորրութիւնը կամ հարուածել անոր շահերը:

Դատավարութիւնը տեւեց երկար: Խատիսեան երկու փուլէս ժամ հարցաքննուելէ ետք՝ կը յայտնի իրեն վերապահուած առաքելութեան մէջ: Դատավարութիւնը կը բացայայտէ քննիչ Լիժինի նենգամիտ եւ խաբեքայ գործունէութիւնը:

Այլ Խատիսեանի մուտք դաշնակցութեան մէջ այնքան ալ լաւ ընդունելութիւն չգտաւ կուսակցական գանազան շրջանակներու կողմէ: Ընկերներէն ոմանք նոյնիսկ չֆաշուեցան իրենց դժգոհութիւնն ու վերապահութիւնը յայտնելու: Ասոր զլիսաւոր պատճառը այն էր, որ Խատիսեան Թիֆլիսի քաղաքապետ ընտրուած էր առաւելաբար հայ քաղցեհիւրութեան փութներուն շնորհիւ, երբ ինք տակաւին անձանօք կը մնար հայ աշխատաւորու-

քեան: Պարզուած երեւոյթր, անյարիբ էր դաշնակցութեան բարեբունն եւ ամաղոութիւններուն: Ասիկա ընդունելի յանցանք էր: «[...] *Պօսքը 1945 թուականի մասին չէ, երբ բառերը իրենց արժէքը կորցրած են արդէն, այլ 1917ի կովկասի մէջ: [...] Հակառակորդները մէջ կը նստէ տողերիս հեղինակը, որ Պատիսեանի մէջ գտնուած կը օգտապաշտ հանրային գործիչը, բայց անյարմար դաշնակցականը»<sup>22</sup>:*

Խատիսեան տոկաց իստապահանջ բնուած քեան: Փափաքեցաւ իր թեկնածութիւնը դնել համառուսական Սահմանադիր ժողովին՝ իբրեւ Շիրակի հայութեան պատգամաւոր: Դաշնակցութիւնը չընդառաջեց անոր փափաքին: Խատիսեանը դժգոհութեան կամ բողոքի ոչ մէկ արտայայտութիւն ցոյց տուաւ: Կարգապահութեամբ անսաց դաշնակցութեան կամքին եւ շարունակեց իրեն վստահուած գործը: Քաղաքապետ Խատիսեան դաշնակցութեան մէջ միաձուլուեցաւ անոր ամաղութիւններուն եւ ընկերական մթնոլորտին: Գերակայութեան բարդոյթ չունեցաւ երբեք:

Լազեան կը վկայէ, թէ Խատիսեան Փարիզի կուսակցութեան աշխատանքներուն ընթացքին շարունակեց մնալ իբրեւ ազնիւ, անձնուէր եւ համեստ նկարագրով մարդ մը: Դաշնակցութեան մէջ ան չունեցաւ դիրք գրաւելու մարմաջ: ազգային եւ շրջանային իմաստով՝ արդէն իսկ հասած էր բարձր դիրքի: Խատիսեան դաշնակցական եղաւ՝

<sup>22</sup> Վ. Նաւասարդեան, նոյն:

աւելի ծառայելու եւ աւելի իր նպաստը բերելու Հայաստանի եւ հայութեան:

Շնորհիւ իր առարկայական դատողութեան եւ քաղաքական փորձառութեան, Խատիսեան յաջողեցաւ հաւասարակշռութիւն մը, զձեռն պետական եւ կուսակցական հրամայական անհրաժեշտութիւններու միջեւ: Ինքզինք արժեւորեց մանաւանդ անով, որ թէ՛ իբրեւ պետական անձնաւորութիւն եւ թէ՛ իբրեւ պատասխանատու անհատ՝ մնաց սկզբունքի տէր անհատականութիւն մը: Ներդաշնակութիւնն ու մերումը հասցուց իրենց լրումին: Մէկ կողմէ՝ ապահովեց պետական շահերը առանց վնաս հասցնելու կուսակցութեան պահանջներուն, իսկ միւս կողմէ՝ գործադրեց կուսակցութեան հրահանգները՝ առանց շահագործելու պետութեան տարրական կարելիութիւնները:

Ահա այս իրողութեան մէջ պէտք է տեսնել հայ եւ օտար պետական եւ ժողովրդային խաւերու մէջ իր վայելած վարկին գազտնիքը:

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այ. Խատիսեան հետեւած է ժամանակագրական սփին: Իր յուշագրութեան մեծ համեմատութիւնը նուիրում է Անդրկովկասին, անոր բնկերային, տնտեսական կառոյցին, կովկասեան երեք ժողովուրդներու փոխ-յարաբերութիւններուն, Ռուսիոյ ցարական քաղաքականութեան՝ Անդրկովկասի մէջ, Թիֆլիսի եւ Փեթերսպուրկի միջեւ տեղի ունեցած կապերուն:

Հեղինակը՝ Այ. Խատիսեան, ի յայտ կը բերէ օրուան ղէպքերն ու հոգեբանութիւնները դիտելու եւ վերլուծելու իւրաքայտուկ մօտեցում մը: «Քաղաքակտի մը յիշատակները» ղէպքերու պարզ քուումէ աւելի քաղաքակտի կողմէ օրուան հարցերը բննարկումով ներկայացում ղէպքեր եւ ղէմքեր են: Այս վերջինները անպայմանօրէն չեն սահմանափակուիր հեղինակին սեփական կեանքով: Ժամանցի համար եղած գրութեանէ անդին կ'անցնին իր յիշատակները, թէեւ ինք գանձնէ կ'անուանէ պատմութիւն (պատմում՝ ամփի առումով, շատ հաւանաբար):

Երբ Այ. Խատիսեան մուտք կը գործէ քաղաքական ասպարէզ, Անդրկովկասը կը բլուրէր քաղաքականօրէն շատ հասունցած եւ զարգացած ժամանակաշրջան մը: 1905ի ռուս-նափոնական պատերազմէն մինչեւ 1917ի Պուշեւիկեան յեղա-

շրջումը, Անդրկովկասի երեք ժողովուրդները կ'ապրէին ազգային գիտակցութեան շեշտաւորեալ զարթոյնի եւ բիրայի կը դառնան ցարական «բաժնէ, որ տիրես»ի քաղաքականութեան, որուն բացայայտ ապացոյցն են հայ-թաթարական կռիւնները:

Իրերու հոլովոյթի թափը շատ արագ կ'ընթացայ: Երեք ժողովուրդներէն իւրաքանչիւրը կը տուայտի ինքնավարութեան եւ բողարկուող անկախութեան ձգտումներուն միջեւ: Այ. Խատիսեանի տուած ծանօթութիւններն ու վիճակագրական տուեալները եւ մանաւա՛նդ անհանդուրժող հոգեբանութեան տուն տուող պատճառ-պատճառակարգային քաղաքական մատնանշումները բաւարար չափով առարկայական են, երբ նկատի ունենանք, որ գիտականօրէն կը փորձէ նկարագրել կամ ներկայացնել ազգամիջեան առեւտրութիւնները, այլամերժութիւնը եւ բախումները:

Ուրեմն, Այ. Խատիսեան իր յիշատակները գրի առնելով՝ կը ջանայ ժամանակագրական յաջորդականութեամբ փոխանցել պատմական կշիռք եւ նշանակութիւն ունեցող «չաւկան անցուղարձեւոր» ինչպէս ինք պիտի րսէր:

Այ. Խատիսեան Թիֆլիս քաղաքի ազգաբնակչութեան մասին խօսելով՝ կ'ըսէ, թէ հայերը կը կազմէին գիւղացիութեան, քաղաքացիութեան, արհեստաւորութեան եւ մտաւորականութեան չորս դասակարգերը: Մինչ վրացիները՝ գիւղացիութեան, կալուածատիրութեան եւ մտաւորականութեան դասակարգերը: Հայերու մէջ ամէնէն ազդե-

ցիկ եւ հմայք ունեցող կուսակցութիւնը եղած է Լ.Յ.Գաշնակցութիւնը, իսկ վրացիներու մէջ՝ Սոցիալ-Դեմոկրատները, որոնք հետագային բաժնուեցան Մենշեւիկ (փոքրամասնական) եւ Պոլշեւիկ (մեծամասնական) թեւերու: 1917ի յեղաշրջումէն ետք վերջինը դարձաւ բանուորական մենատիրութեան միահեծան իշխանութիւնը:

Սոցիալ-դեմոկրատները կը պայքարէին քաղաքացիական պայքարի դէմ՝ եւ որովհետեւ Թիֆլիսի քաղաքացիական մեծագոյն մասը կը բաղկանար հայերէ, ուստի դասակարգային պայքարը անխոհեմաբար եւ տհասօրէն կը շփոթուի ազգային պայքարին հետ. որմէ հաւասարապէս կը տուժեն հայերն ու վրացիները:

Հայ-քրքական ընդհարումները, որոնք կը տեսնեն երկու տարի. ունէին կարգ մը ներքին դրդապատճառներ. վրացիները իրենց չէզոքութեամբ եւ լռութեամբ գործվիզ են թաթարներուն. իսկ ռուս իշխանութիւնը ուղղակիօրէն կը ֆաշայերէ թաթարներու նախայարձակ ախորժակները:

Լ.Յ.Գաշնակցութեան դատավարութիւնը Ալեքսանտրեան կը բացատրէ Ռուսիոյ օրուան քաղաքականութեան հետապնդած նպատակներու լոյսին տակ: Ռուսիոյ քաղաքականութիւնը կը գրգռէ հայերու քրքատեաց տրամադրութիւնը՝ ռուսօսմանեան պատերազմներու (1877, 1914-17) ընթացքին. իսկ կը հալածէր հայերը՝ խաղաղ օրերուն: Այս ձեւով, ցարական իշխանութիւնը կը փորձէր ճզմել Լ.Յ.Գաշնակցութիւնը:

Փոխարքայ Վորոնցով-Գաշկով հայերու ռուսասիրութիւնը կը բացատրէ անով. որ «ան [Հայ ժողովուրդը] կը սիրէ երեք բան՝ դպրոց, եկեղեցի եւ դրամ: Այսպիսի մէկ ժողովուրդ չի կարող չեղափոխական լինել, մանաւանդ որ երկրի աշխարհագրական դիրքը նպաստաւոր չէ այդ տեսակէտէն: [...] Ես կը սիրեմ Հայ ժողովուրդը, սրպէս այդպիսին: [...] Կը նայիմ Հայերու վրայ որպէս ռուս ազգեցութիւնը տարածող յաւազոյն տարրի մը, եւ ասոր մէջ է որ պէտք է փնտոել Հայերու ռուսասիրութեան աղբիւրը»:

Ռուսիոյ ներքին գործոց նախարար Բուլիզին կը կազմէ իր անուամբ հանրայայտ յանձնախումբ մը՝ ծանօթանալու համար ժողովրդային պահանջներուն եւ ձգտումներուն: Այս յանձնախումբի կազմութիւնը կը կանխէր Պետական Դումայի, այսինքն՝ ռուսական խորհրդարանի կազմութիւնը: Վերջինը ծնունդ կ'առնէ 17 Հոկտեմբեր 1905ին, երբ ցարը հրովարտակով մը կը շնորհէ Սահմանադրութիւնը:

1906ին, տեղի կ'ունենայ առաջին ընդհանուր ռուսահայկական համագումարը. կովկասահայ կեանքի մէջ աննախընթաց երեւոյթ մը: Թէեւ համագումարը թերի է իր ընտրական ձեւին մէջ, բայց ինչպէս ինք կ'ըսէ, հայ քաղաքական մտքի հոսանքները իրենց ներկայացուցիչներով ներկայ կ'ըլլան յիշեալ համագումարին:

Համագումարէն բխած հայկական պահանջ-

1. — Ժ. Տարի, թիւ 8(116) Յունիս 1932, էջ 126 ա. սիւնակ:

ներ կր խտանան երեք հարցերու մէջ. «ա. Հայերը փաստօրէն կ'ուզէին հաստատել սուս քաղաքացիներու ն հետ, բ. կ'ուզէին բարեկաւել գիւղացիներու վիճակը, եւ գ. ձեռք բերել հայ մշակոյթը զարգացնելու համար տանելի պայմաններ»<sup>2</sup>:

Ինչպէս կր տեսնուի վերոգրեալ երեք պահանջներէն, հայ քաղաքական միտքը իր ուշադրութիւնը կեդրոնացուցած է Թրքահայաստանի գաւառներուն վրայ եւ բնա՛ւ յիշատակութիւն չկայ ինքնավարութեան կամ անջատման մասին:

Մինչ վրացիները շատ յստակօրէն կր դնեն իրենց պահանջները. անոնք կր պահանջեն օրէնդրական խորհրդարան եւ վրաց ուղղափառ եկեղեցւոյ բաժանումը ռուս եկեղեցիէն:

Ռուսիոյ հայահալած քաղաքականութեան հիմնաւորումները Ալ. Խատիսեան կր տեսնէ հայերու ուժեղ եւ լաւ կազմակերպուած, ինչպէս նաեւ խորամանկ քաջալու յատկութիւններուն մէջ:

Կովկասի մէջ, 1905 թուականի յեղափոխութեան ընթացքին, հրապարակի վրայ են Հ.Յ.Դաշնակցութիւնը եւ վրաց սոցիալ դեմոկրատ մենչեիկեան կազմակերպութիւնը: Ասոնց կր հետեւի սոցիալ դեմոկրատ պոլշեիկները, սոցիալիստ յեղափոխականները, հնչակեաններն ու ազգայնական ֆեդերալիստները:

Քառական օգտակար մանրամասնութիւններ յիշուած են՝ յեղափոխական կուսակցութիւններու եւ անոնց ակներեւ դեկավար դէպքերու կամ գոր-

2.— Նոյն, էջ 132 ր. սիւնակ:

ծուենայ հեղինակներու մասին: Հայն տեղ կու տայ հետագային պոլշեիկ իշխանութիւն հիմնած սոցիալ-դեմոկրատներու գործունէութեան մասին:

Յեղափոխական կազմակերպութիւնները կր գործեն երկու ձեւերով, առաջինը՝ արհեստակցական միութիւններու միջոցը, իսկ երկրորդը՝ դասախօսութիւնները՝ ժողովրդական համալսարանի ֆոզին տակ:

Հայերու եւ վրացիներու ներքին բախումներու պատճառները եւ երկու դրացի ազգերու բացասական վերաբերմունքն ու անվստահութիւնը՝ մէկը միւսին, ունին օտարամուտ բնոյք: Օտար պետութիւններու գծած քաղաքականութեան հետեւնք բռնութիւնները եթէ վերնան, կր վերնայ նաեւ երկու ազգերու մէջէն բնամական յարաբերութիւնները:

Պետական Դումայի ընտրութիւններուն, Հ.Յ.Դաշնակցութիւնը կր գործակցի սոցիալ-դեմոկրատներուն հետ եւ իր ֆուէն կու տայ այս վերջինի թեկնածու Չիէիճէինին:

Ռուսիոյ մէջ քաղաքային եւ գաւառային ինքնավարութիւնները կր կատարեն խորհրդարանի դեր: Կովկասի հայկական շրջաններու ինքնավարութիւնները, յարաբերաբար միւս ոչ-հայկական ինքնավարութիւններուն, կր վայելեն աւելի մուազ իբրաւսութիւններ:

Թիֆլիսը կր նկատուի համայն Կովկասի կրթական կեդրոնը: Դոյութիւն ունի 20 քաղաքային դպրոցներ եւ 12 գիմնազիոններ՝ 6ր ազգականք եւ միւս 6ր մանչերու համար, ինչպէս նաեւ՝ կանանց

բարձրագոյն եւ մանկաբարձական դասընթաց-  
ներ:

Թիֆլիսի ֆազաֆային տնտեսութիւնը Մոսկր-  
ւայէն յետոյ կը նկատուի առաջինը: Այս հանգա-  
մանքին մէջ մեծ դեր ունին հայ ֆազաֆայետներ.  
հարտարապետներ, բժիշկներ եւ ֆազաֆային գոր-  
ծիչներ:

Գիւղական շրջանները բոլորովին անտես-  
ւած են. չկան դպրոցներ, չկայ ֆազաֆակրթու-  
թեան ոչ իսկ մէկ նշոյլ: Յեղափոխական կուսակ-  
ցութիւններ մնայուն կապ հաստատած են այդ  
շրջաններուն հետ. հայ գիւղացին իր դաստիարա-  
կութիւնը կը ստանայ Լ.Յ.Գաշնակցութենէն, վրա-  
ցին՝ սոցիալ-դեմոկրատէն, իսկ թուրքը՝ բէկերէն,  
աւատապետերէն եւ յատկապէս հոգեւորականնե-  
րէն:

Ազգաբնակչութիւնը խառն է: Այս դժուարու-  
թիւնը արգելք կը հանդիսանայ ինքնավարական  
հիմնարկներու հաստատման: Ասիկա կը հանդի-  
սանայ կովկասի ամէնէն դժուարին յուծելի հար-  
ցերէն մէկը: Երէ կովկասի ազգաբնակչութիւնը  
բաժնուի, ըստ գաւառներու, կը տեսնուի, որ 47  
գաւառներէն միայն 6ին մէջ հայերը մեծամաս-  
նութիւն կը կազմեն:

Շատ հիմնական հարց է, որ կը դրուի Ալ. հա-  
տիսեանի կողմէ: Ժողովուրդներու խառնարանը  
առիշտ կու տար ազգամիջեան լարուածութիւն-  
ներու, սահմանային վէճերու եւ տարակարծու-  
թիւններու. մինչեւ իսկ գիներայ բախումներու եւ  
կոռիւներու:

Բագուն՝ նախահորերու ֆազաբը, իր մեծա-  
հարուստ ընտանիքներու շարանով կովկասի մէջ  
կը գրաւէ նիւթապէս ամէնէն առաջնակարգ դիր-  
քը: Հաւանաբար հայկական քաղաքասի մէջ հա-  
մալսարանի մը հիմնադրութեան գծով, պատուի-  
րակութիւն մը՝ բաղկացած Ալ. հատիսեանէն,  
հայազգի իշխան Թումանովէն՝ ռուսական «Նա-  
վոյէ օրոգթէնի» թերթի խմբագիրէն եւ վրացի  
գօտուանէն՝ վրացական «Վերածնունդ» թերթի  
խմբագիրէն «հանգանակութեան համար» կը մեկ-  
նի Բագու, ուր կը գործէր նախարդինաբերող-  
ներու վարչութիւնը: Այս վերջինին մէջ կը գերիշ-  
խէին հայերը:

Բաթումը, Երեւանը, Քութայիսը կը մասնակ-  
ցին երկու հազար ռուբլիով կամ 10 հազար  
ռուբլիով, ըստ իրենց կարողութեան: Բագուի ֆա-  
զաֆային վարչութեան անդամ Հանի Զէյնալ Ար-  
դույ Թաղիեւ (թաքսար ծագումով) առանձինը կը  
նուիրէ 400,000 ռուբլի: Իսկ նախարդինաբերող-  
ներու վարչութիւնը՝ 400,000 ռուբլի:

Ալ. հատիսեանի յուշերէն ֆազելով՝ համա-  
լսարանի կառուցումը կը յետաձգուի Ա. Աշխար-  
համարտին պատճառաւ: Փետրուարեան Յեղա-  
փոխութենէն (1917) ետք, կը կազմուին կովկաս-  
եան հանրապետութիւնները: Թիֆլիսը կ'ունենայ  
երկու համալսարան եւ մէկ արհեստից վարժա-  
րան, Բագուն՝ մէկ համալսարան, իսկ Հայաստան՝  
մէկ համալսարան, Ալեքսանդրապոլի մէջ:

Ալ. հատիսեան շահեկան տեղեկութիւններ  
կու տայ տանկական մշակոյթի, ինչպէս նաեւ՝

նուսական եւ քրքական տիրապետութիւններու տարբերութիւններու մասին: տանկական մշակոյթ գոյութիւն չունենալով տանկահայ մտաւորականութիւնը կտրուած էր քրքական կեանքէն, մինչ «Արդար լինելու համար պէտք է բռնել, թէ ուսական բարձր մշակոյթը, լեզուն, ուսու կնոջ հմայքը կը տարածէին ուսական ազդեցութիւնը հայ բարձրիկ եւ մտաւորական գասերուն մէջ»<sup>3</sup>: Այս երեւոյթին մէջ տանկահայ մտաւորականները կը տեսնէին ապագայնացման վտանգ: Թաքարները սերտօրէն կապուած են քրքական մշակոյթին, հակառակ անոր, որ թաքար մտաւորականութիւնը իր ուսումն ու կրթութիւնը կը ստանար ուսական համալսարաններու մէջ: Թաքար ժողովուրդը՝ իր գորաւոր անդապահութեան եւ պահպանողականութեան հետեւանձով, կը գտնուէր խանութիւն եւ հոգեւորականներու ազդեցութեան տակ:

Կովկասահայ երիտասարդութիւնը կը կազմաւորուի ուսական մեծ ֆազաֆներու մէջ եւ կ'ազդուի ուսական գաղափարներէն: Հ.Յ.Դաշնակցութիւնը, իր հիմնադրութեան օրերուն մա՛նաւանդ ծրագրապէս շատ մօտ է ուս-սոցիալիստ յեղափոխականներու կուսակցութեան: Անկէ ետք, ծրագիրները կրեցին փոփոխութիւններ, ա-

3.— Այլ. Սատիսեան, «Քաղաքացեալի մը յիշատակները», «Հայրենիք» ամսագիր, Ժ. Տարի, Թիւ. 11(119), Սեպտեմբեր, 1932, գլուխ IX, էջ 118:

ւելի նիշոր բարեփոխումներ, որոնք «արդիւնք չեն տարակայական պայմաններու գարգացման եւ ժողովուրդի մշակութային վերելքին»<sup>4</sup>: Հետզհետէ, կեանքի փորձառութեան լոյսին տակ հայ ֆազական միտքը կը զարգանայ, կը բիւրեղանայ, սակայն շարունակ կը մնայ երկընտրանքներու մէջ, ինչպէս հեղինակը ի՛նքն պիտի ընդգծէր:

Թիֆլիսի մէջ քով քովի ապրող երեք ժողովուրդներն ալ ֆաշուած են իրենց ազգային պատեանին մէջ: հայը վրացական թերթ չի կարդար վրացին՝ հայերէն թերթ: Իսկ թաքարները կ'անտեսեն թէ՛ հայը եւ թէ՛ վրացին:

Թիֆլիսի մէջ, ուսականաւոր ֆազաֆազէտ-պատմաբան Միլիկովը հայկական հարցի մասին դասախօսական երեկոյթի մը ընթացքին դիտել կուտայ, թէ Ռուսիոյ Մերձաւոր Արեւելեան ֆազաֆականութիւնը կը մեկնի ուսական ընդհանուր շահերէն կամ պահանջներէն, որոնց լուսարձակին ներքեւ պէտք է տեսնել կամ գետեղել հայկական մասնակի պահանջները:

Այլ. հատիսեան անանձնապէս կը կեդրոնանայ հայ կամաւորական շարժման վրայ: կամաւորական խումբերու նախապատրաստական աշխատանքները, անոնց կազմակերպումն ու մարզումը լայն տեղ գրաւած են իր յիշատակներուն մէջ: լայնօրէն կ'անդրադառնայ կամաւորական շարժման ստեղծման ֆազաֆական եւ հոգեբանական ազդակներուն եւ պատճառներուն, ինչ-

4.— Նոյն, գլուխ X էջ 119:

պէս նաեւ՝ Լ.Յ.Դաշնակցութեան դերակատարութեան եւ ռուս պետութեան յարափոփոխութեան մասին: Հայ կամաւորական շարժումը դարձաւ մեր ֆազակական անկախութեան բանակի կորիզը. որուն շուրջ համախմբուեցան նորաստեղծ Հանրապետութեան ֆիչ թէ շատ զէնքի վարժ մարտիկները:

Ռուս ֆազակականութիւնը կը դրժէ իր խոստումները եւ կը պահանջէ հայկական վիլայէթները առանց հայու, որպէսզի ռուսացման իր ֆազակականութիւնը իրագործուելով՝ իրականացնէր արձագանքուելու եւ տաք ջուրեր հասնելու իր պատմական նպատակը:

Հայկական կոտորածներու մասին կու տայ վիճակագրական տուեալներ եւ թուրք գորավարներու մտածումները: Հայկական քարոզերու մասին արտայայտուելով՝ էնվէր փաշան Ալ. Խատիսեանին կ'ուղղէ հետեւեալ խօսքերը. «*Ձիս կ'անուանէին Հայ ժողովուրդի ջարդարար: Ես անարդար կը գտնեմ այդ սրակու մը: Երբ գործերու հրամանատարը յաղթականօրէն կը ջարդէ թշնամին եւ կ'ոչնչացնէ՝ միեւնոյն ժամանակ զոհարեւելով եւ իր գինու որները, գայն պատուով կ'ընդունեն՝ եւ յու շարձան կը կանգնեցնեն անոր համար: Բայց երբ առանց մի թուրք գինու որի կորուստի, ես ոչնչացուցի թրքու թեան թշնամի հայերը, գիս ջարդարար կ'անուանեն»<sup>5</sup>:*

5.— Ալ. Խատիսեան. «Ֆազակապետի մը յիշատակներ», «Հայրենիք» ամսագիր, Ժ. Տարի, Թի. 12(120), Հոկտեմբեր 1932, գլուխ XI, էջ 158:

Ալ. Խատիսեան կու տայ Արամի մտածումները ֆիւրտերուն մասին: Ըստ Արամին, ֆիւրտերը խարդախ են եւ ապերախտ: Իսկ ինք կ'ընդգծէ, թէ մեր դատը արդար բլլալով հանդերձ, ի վիճակի չենք լուծելու գայն, որովհետեւ երէկուան պէս տկար ենք:

Իր յիշատակներուն մէջ տեղ գտած են ցարի Կովկաս եւօրեայ այցելութիւնը եւ իր հանդիպումը անոր հետ: Նոյնպէս՝ գորավար Իդենիչի սիրագործութիւնները՝ ռուս-թրքական պատերազմի ընթացքին: Այս գորավարին կը պատկանի Թրքահայաստանը կողակներով բնակեցնելու գաղափարը:

Ա. Աշխարհամարտի ընթացքին եւ վերջը 300.000 գաղթական հայեր տեղաւորուեցան Կովկասի մէջ: Անոնք հետագային կազմեցին Հայաստանի ազգաբնակչութեան մէկ կարեւոր համեմատութիւնը:

Խառնաշփոք եւ անորոշ կացութեան տարուելով՝ Պոլսեիկները աննկատ կերպով ստորերկրեայ աշխատակիներ կը տանին, առ ի երեսոյթ՝ անոնք հրապարակէն ֆաշուած են: Սակայն, անոնք տեղագրին պատրաստութիւն կը տեսնեն:

Ալ. Խատիսեան մանրամասնութիւններ կու տայ նաեւ կիսագրագէտ Ռասպուտինի տիպարի մասին: Այս ծերունին կարեւոր դեր կ'ունենայ Ռուսոյ միապետութեան եւ գահին անկման մէջ:

Ալ. Խատիսեան կը բացատրէ, թէ ինչպէս ռուսական պատմութեան մէջ յեղափոխութիւնները



կապուած են պատերազմներու, երբ պետական յե-տադիմութեան թերութիւնները անակնկալօրէն կը դրսեւորուին:

Մոսկուայի մէջ 1916ին, Ալ. Խատիսեան քաղաքային եւ գաւառային գործիչներու համաժողովի սակաւ համագումարին արտասանած նշանաւոր նախնի մէջ կը զարգացնէ հետեւեալ կէտերը.

ա. Կովկաս-Ռուսաստան բարոյապէս եւ քաղաքականապէս իրարու կապուած են:

բ. Կովկասը հաւատարիմ է ռուսական բանակին:

գ. Կովկասի բոլոր ժողովուրդները հոգեկան ամուր կապերով կապուած են ռուս բարձր մտքին եւ մշակոյթին:

Դեկտեմբեր 1916 թուին, իշխան Լվովի բնակարանին մէջ տեղի կ'ունենայ զազունի ժողով մը. որուն կը մասնակցի նաեւ Ալ. Խատիսեան, այլոց կողմէն: Հաւաքին կ'որոշեն, որ ցարը գահընկէց բնեն եւ զինք փոխարինեն Կովկասի նոր փոխարքայ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաւիչով: Ժողովականներու մտադրութեան՝ փոխարքային փոխանցումը կը վիճակուի Ալ. Խատիսեանին: Այս վերջինը կը կատարէ իր ուսերուն դրուած պարտականութիւնը. փոխարքան սակայն կը մերժէ նման առաջարկ մը:

Ալ. Խատիսեան իր յիշատակներու վերջաւորութիւնը կը յատկացնէ 1916-1917 երկարոգ Ռուսաստանի քաղաքական իրադարձութիւններու, Պետական Դումայի գործունէութեան, Ռուսական տիկնի եւ Յարուհիի յարաբերութեան, 1917ի Փե-

տրրուարեան Յեղափոխութեան, ինչպէս նաեւ Կովկասի ժողովուրդներու ազգային զարթոնքին եւ յոյսերուն: Յոյսեր, որոնք ազգայնապէս աւելի ազաւ պայմաններու ձեռնտուութիւնը կը ներշնչէին:

1917ի Փետրուարեան Յեղափոխութիւնը Կովկասի երկիրները կը դնէ նոր կացութեան մը դիմաց. իւրաքանչիւր ազգ կը ջանար իր ձայնը լսելի դարձնել Սահմանադիր ժողովին մէջ: Տեղի կ'ունենան ընտրութիւններ: Առօրեայ քաղաքական երեւոյթները, ժողովները, հանդիպումներն ու հատերը ամէնուրեք խանդավառութիւն կը ստեղծեն: Անակնկալօրէն պոլշեւիկներու ղեկավարութեամբ կը պայթի 1917ի Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը: Ռուսաստան կ'անջատուի Կովկասէն. «Կովկասեան ժողովուրդները չէին, որ պատուեցան Ռուսաստանէն, այլ Ռուսաստանն էր, որ պատուեցաւ Կովկասէն: [...] Կովկասը փաստօրէն կտրուեցաւ հիւսիսէն»<sup>6</sup>:

1918 թուականին քէ՛ հայերը եւ քէ՛ վրացիները կ'ապրին աննախընթացօրէն հոգեբանական մեծ փոփոխութիւններ: Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կ'ընդունի Հայաստանի անկախութեան հռչակումը: Նոյնը՝ վրաց սոցիալ-դեմոկրատները, որոնք հակառակ էին վրաստանի ան-

6.- Ալ. Նասիսեան, «Քաղաքական մը յիշատակներ», «Հայրենիք» ամսագիր, գրութիւն XV11, ժԱ. Տարի, Քի. 5(125), Մարտ 1933, էջ 145:

կախութեան եւ կր ծաղրէին անկախութեան գա-  
զափարը:

Վերջապէս, հատիսեան կր հիմնաւորէ եւ կր  
բացատրէ, թէ ինչո՞ւ վրացիները հայերէն աւելի  
բախտաւոր դուրս եկան՝ 1917ի զահավէժ իրա-  
դարձութիւններէն եւ խառնակ կացութեանէն:

## ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՄՐ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

### ՆԱԽԱԲԱՆ\*

1897 բուականին, ես աւարտեցի ռուսական  
համալսարանը եւ ստացայ բժիշկի տիտղոսը, իսկ  
1900ին, վերջացնելով համալսարանական կրթու-  
թիւնս Պերլինի եւ Փարիզի մէջ, ուր զնացել էի կա-  
տարեւագործուելու համար, վերադարձայ Թիֆ-  
լիս, ուր 100 տարիէ աւելի բնակուել եմ իմ նախ-  
նիքները:

Թիֆլիսը իմ հայրենիքս էր: Մեր ընտանիքի  
անդամները, ինչպէս հօրս, այնպէս ալ մօրս կող-  
մէն (ծնեալ Ղամբարեան) ամբողջ կովկասի մէջ  
վարել եմ պատասխանատու պաշտօններ՝ որպէս  
դատախազներ, պետական կայուածքներու կա-  
ռավարիչներ, պետական դրամատան վարիչներ  
եւ այլն:

Այն ատեն, 22 տարեկան էի եւ միակ ձգտումս  
էր նետուել հասարակական ասպարէզ: Նոյն թը-  
ւին, ընտրուեցի Թիֆլիսի Քաղաքային հոր-  
հուրդի անդամ, մտայ հայ կրթական եւ բարեգոր-  
ծական վարչութիւններու մէջ եւ սկսեցի յօդուած-  
ներ գետեղել պարբերականներու մէջ:

---

(\*) Ենթախորագիրը աւելցուած է մեր կողմէ:

Շուտով մեկնեցի Ախալալաֆի գաւառը՝ պայքարելու բժաւոր տիֆի դէմ եւ առաջն առնելու այն բոլոր շարիֆներուն, որոնք հետեւանք էին սոսկալի երկրաշարժին: Այնտեղ մնացի մէկ տարի:

Չորս տարի ետք, Քաղաֆային վարչութեան անդամ էի: 1907ին, ընտրուեցի ֆաղաֆազլիսի փոխանորդ, իսկ 1910էն մինչեւ 1917, համարեա՛ տասր տարի շարունակ, վարեցի Թիֆլիսի ֆաղաֆազլուիսի պաշտօնը, որուն շնորհիւ մօտէն ծանօթացայ կովկասի վարչական եւ ֆաղաֆական բովանդակ կեանքին:

Կովկասի փոխարքայի հետ ունեցած իմ պաշտօնական եւ անձնական մտերմութիւնը առիթ կու տար ինձ տեսնելու եւ լսելու այնպիսի բաներ, որոնք ծածկուած էին շատ ականջներու եւ աչքերու համար:

Այս յիշատակներու սկստակն է պատմել այն շահեկան անցուդարձները, գորս տեսած եմ այդ շրջանին եւ որոնց երբեմն ալ մասնակից եմ եղած:

Պատմութիւնս պիտի ընեմ տարեգրական կարգով:

Գլուխ Ա.

## ԹԻՖԼԻՍԸ

*Հայ-վրացական յարաբերութիւններու վերաբերեալ շատ կարեւոր հարցեր ոչ միայն անցեալին մէջ, այլև այսօր հասկնալի կը դառնան, եթէ ուսումնասիրենք Թիֆլիսի իւրայատուկ պայմանները:*

*Թող չափազանցութիւն չըլլայ, եթէ ըսենք, որ ապագային այ, հայ-վրացական յարաբերութիւնները մեծ մասով պայմանաւորուած պիտի ըլլան Թիֆլիսի քաղաքական եւ տնտեսական կազմուածքով, որպէս մէկ կողմէն վրացական մայրաքաղաքի, միւս կողմէն՝ ամբողջ Կովկասի կեդրոնի:*

*Աւելի քան 125 տարի առաջ, Թիֆլիսը անկախ վրաստանի թագաւորանիստ մայրաքաղաքն էր. այնպէս որ, վրացիների աչքին Թիֆլիսը իրենցն է՝ պատմական բոլոր տունալիներով: 125 տարի առաջ, վրաստանը կորցնելով իր անկախութիւնը՝ միացաւ Ռուսիոյ եւ Թիֆլիսը դարձաւ սոսակական քաղաք, Փոխարքայի բնակատեղին. այնպէս որ, ուսանելու աչքին, վարչական տեսակէտէն, Թիֆլիսը սոսակական քաղաք էր՝ կեդրոնը ամբողջ Կովկասի:*

*Բայց եթէ ի նկատի առնենք այն հանգամանքը, որ Թիֆլիսի 15 հազար շէնքերէն 11 հազարը կը պատկանէին հայերուն. որ բոլոր մեծ հիմնարկութիւնները՝ թատրոն, գրադարան, գրամատուն, խանութ կը պատկանէին հայերուն. որ 300 հազար ազգաբնակչութենէն 120 հազարը հայեր էին, 80 հազարը՝ վրացիներ, 70 հազարը՝ ուսաներ եւ 30 հազարը՝ այ-*

յազգիներ, հասկնայի կը դառնայ որ որոշ չափով Քիֆլիսը հայկական քաղաք էր: Ահա այստե՛ղ պետք է փնտոնել հայ-վրացական փոխ յարաբերութիւններու կնճիոր:

Ռուսական օրէնքներու համաձայն, ընտրական իրաւունք կը տրուէր միայն վաճառականներուն եւ անշարժ կայք ունեցողներուն: Հայերը մեծապէս կ'օգտուէին այդ իրաւունքէն եւ Քիֆլիսի պաշտօնէնութեան քացարձակ մեծամասնութիւնը կը բաղկանար հայերէ: օրինակ՝ քաղաքագլուխը, վարչութեան անդամները, քաղաքային բժիշկները, ուսուցիչները: Քաղաքային պաշտօնէնութեան թիւը կը հասնէր 3,000ի:

1870էն 1916, այսինքն՝ 46 տարիներու ընթացքին՝ Քիֆլիսը ունեցել էր 11 քաղաքապետներ, որոնցմէ ինը հայեր էին (Մատինեան, Իզմիրեան, Եւանդուլեան, Խատիսեան, Էւայն) եւ միայն երկու քր՝ վրացիներ (Կիպիանի եւ Չերկեզով):

Այս հանգամանքը կը վերաւորէր վրացիներու ինքնասիրութիւնը, մանաւանդ որ Քիֆլիսը՝ ըլլալով ամբողջ Կովկասի կեղրոնը՝ կարեւոր ազդակ մըն էր թուրքիոյ եւ Գարսկաստանի յարաբերութիւններուն համար: Քիֆլիսի դերը մեծ էր ամբողջ Կովկասի առեւտուրի համար: Անոր զրամատունները, վարկային ընկերութիւնները, բարեգործական եւ կրթական հաստատութիւնները առաջնակարգ դեր կը կատարէին Կովկասի կեանքին մէջ: Քիֆլիս կը գտնուէին քաղաքական կուսակցութիւններու գլխաւոր կեղրոնները, որոնց մէջ նաեւ հայկական ամենէն ուժեղ կուսակցութեան՝ Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոն

եւ վրացական ամենամեծ կուսակցութեան՝ սոցիալ-դեմոկրատներու կեղրոնական կոմիտէն:

Պայքարի ազդեցութիւնները կը տարածուէին եւ յայն խաւերու մէջ: Քաղաքային ընտրութիւններու ընթացքին, պայքարը աւելի կ'ուժեղանար: Վրաց սոցիալ-դեմոկրատները կ'աշխատէին Հ. Յ. Դաշնակցութեան ձեռքէն խլել հայ գանգուածը, բայց չէին յաջողեր: Հայ գանգուածը միշտ հաւատարիմ կը մընար իր պաշտպան՝ Հ. Յ. Դաշնակցութեան: Պայքարը կը տարածուէր եւ գաւառներու մէջ, թէեւ, ի հարկէ աւելի փոքր չափերով:

Այլ էր պատկերը Կովկասի միւս քաղաքներուն մէջ, ինչպէս՝ Բագու, Գանձակ, Բաթում: Այստեղ պայքարի բնոյթը հայ-թաթարական էր:

Հայ-թաթարական յարաբերութիւններու ամենակնճոտ վայրը Բագուն էր, ուր ղեռ երկկուսան թուրք մշակները դարձել էին միլիոնատերներ, ինչպէս՝ Քաղիււր, Սիրբարաւելը եւ ուրիշներ: Հայ ունեւոր գասակարգն այ այստեղ իր ստացուածքը հասցուցած էր միլիոններու: Ահա այստեղէն առաջ կու գար պայքարը: Տեղական վարչութեան հրամանով, ինչպէս նաեւ Փէթերպուրգի ոստիկանութեան ու ժանտարմերիայի համաձայնութեամբ, թուրքերը յարձակեցան հայերուն վրայ:

Բագուի մէջ թուրքերը կ'աշխատէին իրենց ձեռքն առնել քաղաքային իշխանութիւնը. սակայն համաձայն ռուս ցարական օրէնքներու, քաղաքային խորհուրդներու մէջ ազգաբնակչութեան ոչ-քրիստոնեայ տարրը իրաւունք չունէր ձայներու կէսէն աւելին շահելու: Այնպէս որ՝ չունենալով մեծամաս-

ձախակողմեան ժամույր ու բիշ ուղղութեամբ կը տաներ իր պայքարը:

Պետք է ըսել, որ Թիֆլիսը, բացի իր քաղաքակրթական հանգամանքէն, ունէր մէկ ու բիշ առաւելութիւն. այն, որ կառկասի վարչական կեդրոնն էր, ուր համախմբուած էին երկրի ամենարարձր հիմնարկութիւնները՝ փոխարքայութիւնը, գործերի հրամանատարութիւնը, դատական և ոստիկանական բարձր իշխանութիւնները: Քաղաքագլուխը միջնորդ կը անոնց և ժողովուրդի միջև: Ուրիշ խօսքով՝ երբ ժողովուրդը կ'ուզէր իր բաղձանքները յայտնել իշխանութեան, ան պիտի դիմէր Քաղաքային Խորհուրդին, այսինքն՝ հայերու միջոցով:

Հայերը ունէին շորս դասակարգ՝ պիպացիութիւն, քաղքենի - բուրժուական դասը, արհեստաւորներ և մտաւորականութիւն: Իսկ վրացիները կը բաժնուէին երեք դասակարգերու՝ պիպացիութիւն, կայուածատիրական դաս և մտաւորականութիւն: Գլխաւորապէս մտաւորականութեան ազդեցութեան տակ, պիպացիութեան մէկ մասը և բանուորութեան պիպացիութեան մասը կազմէր էին Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութիւնը, որուն կ'անդամակցէր ուսական այժմեան գիկատար Ստալինը, իր իսկական Զուլաշվիլի ազգանունով:

Մինչև 1917, Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութիւնը մաս կը կազմէր ուսական Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութեան. բայց մեծ յեղափոխութենէն ետք անջատուեցաւ՝ կազմելով վրաց Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութիւնը: Միևնոյն ժամանակ

կորցնելով իր բանուորական միջազգային բնոյթը, դարձաւ զուտ վրացական և ազգայնական կուսակցութիւն:

Որպէս բանուորական կուսակցութիւն՝ իր պայքարը քաղքենի դասի դէմ էր: Եւ որովհետև քաղքենի դասին կը պատկանէին հայերը, դասակարգային պայքարն ալ կամաց-կամաց վերածուեցաւ ազգային պայքարի: Պայքարը կը տարուէր բոլոր ճակատներու վրայ՝ թերթերու, խմբագրատաններու, ստանձին հրատարակութիւններու մէջ:

Կար ուրիշ հանգամանք մը ևս. վրաց կայուածատիր դասակարգը կը սնանկանար և իր կայուածները կը ծախէր կամ զրաւ կը դնէր հայ հարուստ վաճառականներու մօտ: Սովորական երևոյթ մը՝ աւատակետական կարգեր ունեցող երկիրներու մէջ: Սակայն սնանկացողը վրացին էր, իսկ անոց քաղքենին՝ հայ: Այս երևոյթը աւելի կը զրգուէր կիրքերը:

Եւ չպիտեմ, թէ ի՞նչ սեփեմ պիտի հաստատուի բողջեւիկներէն յետոյ: Գիտեմ միայն, որ այս հարցը զուրկ չէ դեռ իր այժմէականութենէն: Այսօրուան խորհրդային իշխանութիւնը խեղդած է երկու դասակարգերն ալ և փաստօրէն թուլացուցած վէճը, սակայն ոչնչացուցած չէ զայն իսպառ:

Շատ փաստեր կրնամ բերել այս ուղղութեամբ: Օրինակ. իշխան Բարատովներու կայուածքը զրաւի փոխարէն ինկաւ հայ հարուստ Արամեանցի ձեռքը: Իշխան Բարատովները դիմեցին Փոխարքային, որ ստիպել Արամեանցը՝ վերադարձնելու իրենց կայուածքը:

Փոխարքան ինձ առաջարկեց խօսիլ Արամեանցի  
Հետ: Արամեանցը համաձայն էր վերադարձնել կալ-  
ւածքը՝ իր տուած փոխարժէք 600 հազար ռուբլին  
վերադարձնելու պայմանով: Բարատոմիները այդ-  
պիսի գումար անկարող էին գտնել, իսկ մուրհակ-  
ները արժէք չունէին: Տունը մնաց Արամեանցին:  
Շատ սովորական երևոյթ մը՝ բոլոր երկիրներու հա-  
մար. սակայն, Կովկասի մէջ այդ երևոյթները ուրիշ  
գունաւորուած կ'առնէին: Վրաց իշխանի պատմական  
կայուածքն էր, որ հայու սեփականութիւն կը դառ-  
նար:

Ուրիշ գէպք մը եւս:

Հայ մեծանուն հարուստ Ալեքսանդր Մանթաշ-  
եան գնեց Քիֆլիսի կեդրոնուած լաւագոյն շէնքերէն  
մէկը, որ կը պատկանէր ազնուականութեան առաջ-  
նորդ իշխան Մուխրանսկուն: Քիֆլիսի Ալյնուական-  
ներու զբաժանունը առաջարկեց Մանթաշեանին վե-  
րադարձնել այդ տունը՝ հարկաւ ստանալով փոխար-  
ժէքը. սակայն Մանթաշեան մերժեց: Նորէն սկսաւ  
պայքարը:

Երևոյթը պարզ էր: Վրաց ազնուական դասա-  
կարգը կը մեռնէր: Որպէս ազնուականներ, ոտս րա-  
նակին մէջ կը վարէին բարձր պաշտօններ. նոյնը եւ  
վարչական կազմին մէջ: Անոնք կ'ապրէին ճոխ  
կեանք մը, շէնք նեկեր իրենք գիրենք, կը սնանկա-  
նային եւ ձեռքէ կը թողէին հօրենական կարողու-  
թիւնները: Հայ բուրժուան, որ գիւղացի դասէն էր  
ելած, գիտէր ինչայել, կշտել իր ծախքերը եւ յայթայ-  
թուրս կու պար տնտեսական մարդին մէջ:

Ինձ կը մնար՝ որպէս քաղաքագլուխի՝ պարզել  
ոտս իշխանութեան եւ աշխատանքի գանդուածնե-  
րուն, որ եկածը սովորական երևոյթ մըն է, որ աւա-  
տապետական դասակարգը բնականօրէն իր տեղը  
պիտի գիջի քաղաքների դասին եւ սր հայ գիւղացիու-  
թիւնն ու մտաւորականութիւնը ոչ մէկ առընչու-  
թիւն ունին այդ երևոյթին հետ: Կարեւոր էր այս  
հանգամանքը որովհետեւ, ինչպէս բոլոր, ստեղծուե-  
ցաւ վրաց-թաթարական միութիւն՝ ընդդէմ հայե-  
րու:

Յարական ծանր սեփմը հուսատարապէս կը  
ճնշէր բոլոր քաղաքացիները, սակայն ան աւելի ծանր  
էր հայերու համար: Իշխան Գոյիցիներ կը կարծէր, որ  
պէտք է հայերը աւելի ճնշել, որովհետեւ անոնք աւելի  
կազմակերպուած եւ աւելի ուժեղ կ'երևային իր աշ-  
քին: Յատուկ օրէնքներ հրատարակուեցան հայերու  
համար: Փակուեցան հայկական դպրոցները, հայ  
բարեկործական հիմնարկութիւնները: Գրաւուեցան  
հայ եկեղեցական կայուածները: Ամէնուրեք բողոքի  
ձայներ յաւեցան:

Եւ ահա սկսան ահաբեկչական արտերը իշխա-  
նութեան դէմ: Քիֆլիսի քաղաքային վարչութիւնը  
1902ին ամբողջ կազմով գատի յանձնուեցաւ որպէս  
վեղծարար եւ անգամ ոտսական դատարանը ան-  
պարտ արձակեց վարչութեան ամբողջ կազմը: Իշխան  
Գոյիցին գաշտնով վիրաւորուեցաւ հայ յեղափոխու-  
կաններու կողմէ եւ մեկնեցաւ Ռուսաստան:

Սակայն, անոր ցանած սերմերը տունին որոշ ար-  
դիւնքներ: Կովկասի մէջ սկսան հայ-թրքական կո-

տորածները, որոնց նկարագրութիւնը պիտի ընեն, քանի որ պատմութիւնս պիտի տանիմ տարեգրական կարգով:

1905ին, որպէս Գոլիցինի փոխանորդ, Թիֆլիս եկաւ կոմս Վորոնցով-Դաշկովը, երկու ցարերու արքունիքի նախարարը, և այնուհետև կովկասի համար նոր շրջան մը սկսաւ:

Գլուխ Բ.

## ՀԱՅ-ԹՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

1905 թուի յեղափոխութիւնը ճնշելու մտիւր ստիպեց ուսկառավարութիւնը կտրուկ միջոցներու դիմել իշխանութեան հակառակորդ տարրերու դէմ: Վճռուեցաւ թուրացնել և՛ հայկական կազմակերպութիւնները: Փեթերպուրգէն ժանդարմերիայի վարչութեանէն այդ մասին յատուկ հրահանգ կը ըստացուած:

Առաջին քայլն առաւ Բագուն: Կ'ըսեն, որ նահանգապետ իշխան Նակաշինձէն (որ յետոյ սպաննուեցաւ հայ յեղափոխական Դ-ի\* ուսմբով) իր բով կը կանչէ Բագուի ազգեցիկ թուրքերը և կը խնդրէ անոնցմէ օգնել իշխանութեան և թագաորին՝ պայքարելու երկրին թշնամի հայերու դէմ: Թուրքերը հասկցած էին ակնարկը և յարձակած հայերու վրայ՝ սրի ու կրակի մատնելով հայերու կեանքը և ըստացուածքը:

Ինչպէս ընթերցողը տեսաւ նախորդ գլուխին մէջ մէջ, այդ պիտի ընդհարման համար գոյութիւն ունէր արդէն պատրաստի գետին: Մեր խնդրէն զուրս կը մնայ այսօր կանգ առնել այդ ընդհարումներու մարմանութիւններուն վրայ: Կոիւներու փաստա-

(\*) Դրաստամատ կամայեան — Դրո: Տեսնել ծանօթագրութիւններու բաժինը:

Խմբ.

կան նկարագրութիւնը գրուած է շատոնց: Կանգ պիտի առնեմ միայն շարք մը ներքին դրդապատճառներու վրայ եւ պիտի պատմեմ այն, ինչ որ տեսած ու յսած եմ պաշտօնիս բերումով:

Բագուի ՆրդեՆը շուտով տարածուեցաւ Անդրըկովկասի միւս մասերուն մէջ, ինչպէս՝ Շուշի, Գանձակ, Երեւան եւ մինչեւ անգամ Քիֆլիս: Բայց այս անգամ տեղական պայմանները եկան աւելի բարդացնելու կնճիոր եւ ՆրդեՆներու բոցի մէջ փորձել լուծելու ցաւսս ՚հին խնդիրներ՝ սպգապրական խստն բաժանուած կովկասի մէջ, տնտեսական մրրցակցութեան խնդիրները, ջուրի իրաւունքը, «եայլադի» իրաւունքը եւ այլն:

Պէտք է բնել, որ թուրքերը կ'ապրէին զաշտերու վրայ, իսկ չայերը բռնած էին յանային մասերը: Չայերը կը վախնային իջնել զաշտերը, իսկ թուրքերը չայերու աճն կը վախնային բարձրանալ սարերը «եայլադի», որով մեծապէս կը տուժէին տաքէն եւ իրենց անասունները կ'ոչնչանային:

Ընդհանուր առմամբ յարձակուող կողմը թուրքերն էին: Բայց երբեմն ալ չայերը, ի նկատի առնելով վտանգը, նախաձեռնութիւնը իրենց ձեռքը կ'առնէին:

Չայ-թրքական ընդհարումներու մասին կարելի է մեծ հատորներ գրել: Երկու տարի տեւող պարտիզանական (Տրոսակային) պատերազմ մըն էր, որ կը տարուէր երկու կողմերէն: Վրացիները չկարգ պիտի բռնած էին, իսկ ցարական իշխանութիւնը թուրքերու կողմն էր անցած: Թուրքերը կրցած էին կաշատել շարք մը պաշտօնեաներ: Մանր ստտիկանութեան մէջ

կ'աշխատէին մեծ թիւով թուրքեր: Ռուս կառավարութեան աչքին, թուրքերը յեղափոխական տարր մը չէին, գոր պէտք է ոչնչացնել: Ընդհակառակը, անոնք կը համարուէին օժանդակիչ ուժ մը կառավարութեան կողքին՝ յեղափոխութիւնը զսպելու համար:

Երկու տարրեր ուժեր պրպղած էին չայ ժողովուրդի պաշտպանութեամբ: Մէկը պիղաջիութիւնն էր, զեկավարութեամբ Չ. Յ. Դաշնակցութեան մարտիկներու, սրունք կուտի զաշտին մէջ զէմ պիմաց կանգնած էին Քչնամի բանակին, իսկ միւսը՝ Նոպետորականութիւնը եւ քաղաքային գործիչները, որոնք իշխանութեան միջամտութիւնը կ'ապահովէին չայերու պաշտպանութեան համար:

Բագմիցս անգամներ եղած եմ փոխարքայ Վորոնցով-Դաշկովի մօտ եւ ամէն անգամ ալ, ինձ բնորոնած է, մանրամասն յսած է իմ գեկուցումներն ու առաջարկները եւ համապատասխան կարգադրութիւններ բրած չայ ժողովուրդի պաշտպանութեան համար՝ պիղերու եւ քաղաքներու մէջ: Սակայն, զօրքի Նրամանատարները, նահանգապետներն ու ստտիկանապետները պարզ կերպով թուրքերու կողմ կ'անցնէին: Կ'ըլլային ղէպեր, երբ իշխանաւորները կը յայտարարէին, թէ իրենց ենթակաները չեն չպատակիր այլեւս իրենց:

Երկու ղէպը պիտի պատմեմ, երբ որոշ միջամտութեամբ անգամ մը կոտորած է խուսափեցաւ չայ ժողովուրդը, իսկ միւս անգամ եղած կոտորածը զգալիօրէն թույլացաւ: Առաջին ղէպը կը վերաբերի Քիֆլիսին, իսկ երկրորդը՝ Գանձակին: Առաջին ղէպի մասին ես կը պատմեմ համաձայն այն գրու-



**Քիչներու, զորս զբաժ կմ ղկպքին ատեն, Քարմ յի-  
չոդու թեամբ:**

«Հրդեհի առաջին կայծը փայլատակեց Քա-  
զուի մէջ, ուրկէ արագօրէն հրդեհը տարածուե-  
ցաւ Գանձակ. Շուշի, Երեւան եւ Նախիջեւան:  
Կ'այրուէին ամբողջ քաղաքներ: Հարիւրնե-  
րով կը մեռնէին մարդիկ...: Հրդեհուած էին ամ-  
բողջ նահանգներ. արիւնոտ կոշմարի մէջ կը զար-  
նուէին մարդիկ: Հագար ու մէկ պատճառներէ  
դրդուած, երէկուան խաղաղ դրացիները իրար  
դէմ պայքարի են ելած: Թիֆլիսն է միայն, որ բնդ-  
հանուր հրդեհի մէջ մնացեր է խաղաղ: Սակայն,  
այս կացութիւնը երկար չտեւեց: Լուրեր տարած-  
ւեցան, որ Բորչալուի շրջակայ թուրքերը պիտի  
յարձակին քաղաքի վրայ՝ օգնելու համար քաղաքի  
մէջ բնակուող փոքրաքիւ թուրքերուն: Կ'ըսէին,  
որ թալանի տենչը կը մղէ գիրենք քաղաք: Թիֆլիսը  
կը վախճար, իսկ իշխանութիւնը կը տատանէր:

«Ընդհանուր իրարանցումին մէջ, տեղի ունե-  
ցաւ յեղափոխական կուսակցութեանց մարմին-  
ներու խառն ժողով, որուն կը մասնակցէին վրա-  
ցական Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութիւնը (այն  
ժամանակ ռուսական կուսակցութեան հատուած  
մը միայն), Հ. Յ. Դաշնակցութիւնը, Էս-Էրներու  
կուսակցութիւնը եւ վրաց ֆեդերալիստները: Ժո-  
ղովը այն համոզման եկաւ, որ ազէտը ամէն ժամ  
կրնայ պատահիլ եւ ատոր առաջը առնելու միակ  
միջոցն է զինել վրացի բանուորները: Ժողովին  
հրաւիրուեցաւ ռուսականապետ Մարտինովը,  
որուն յանձնարարուեցաւ տեսակցիլ Փոխարքա-

յին հետ, զեկուցել անոր, որ վրացի բանուորները  
պատրաստ են իրենց վրայ առնել կարգի պաշտ-  
պանութիւնը՝ պայմանաւ որ պետական պահեստ-  
ներէն իրենց յանձնուին 600 հրացաններ:

«Մարտինովը մեկնեց: Միեւնոյն ժամանակ  
տեղի կ'ունենար Քաղաքային հորհրդի նիստը:  
Անդամները մտահոգուած էին նոյն խնդրով: Քա-  
ղաքի ծայրամասերէն կը հասնէին մտահոգիչ լու-  
րեր: Հայկական Հաւաքար եւ քրքական Մայդան  
քաղերու մէջ կը պտտին զինուած մարդիկ: Բաւա-  
կան է, որ մէկ հատ հրացան պարպուի:

«Խորհուրդը որոշեց յանձնախումբ մը ու-  
ղարկել Փոխարքայի մօտ եւ խնդրել անոր պաշտ-  
պանութիւնը քաղաքին սպառնացող վտանգին  
հանդէպ: Փոխարքան մեզ բնդունեց, խոստացաւ  
իւր աջակցութիւնը եւ խնդրեց, որ ես մնամ իւր  
մօտ: Փոխարքան պալատ կանչեց զօրքերու հրա-  
մանատարը եւ նահանգապետը: Վերջինս հաստա-  
տեց, որ կացութիւնը ծանր է, իսկ զօրքերու հրա-  
մանատարը յայտարարեց, որ ոչ մէկ վստահու-  
րիւն ունի իւր Ց հազար հոգիէ բաղկացած բանա-  
կին վրայ: Փոխարքան հրամայեց ամէն պարա-  
գայի պատրաստ պահել զօրքերը:

«Երեկոյեան ուշ, պալատ եկաւ ռուսականա-  
պետ Մարտինովը եւ զեկուցեց Փոխարքային յե-  
ղափոխական կուսակցութիւններու որոշումը:  
Առաւօտեան համար պալատ կանչուեցան զին-  
ւորական պահեստի պետը եւ իսիդոր Ռամիշվի-  
լին, հին սոցիալ-դեմոկրատ: Ծանր գիշեր անցու-

ցին ֆաղաֆացիք: Առաւօտեան բոլոր հրաւիրեալները պայտա կը գտնուէին:

«Ամէնէն առաջ բնդու նուեցանք ես եւ Ռամիշ-վիլին: Փոխարքայի խելացի դէմքը խաղաղ էր: Բարեւէն յետոյ ան դիմեց մեզ այսպէս. «*Ինձ յայտնեցին, որ սոցիալ-դեմոկրատ բանու որու թիւնը յանձն կ'առնէ իր վրայ վերցնել քաղաքի պաշտպանութիւնը: Երկու քիզ վրայ ալ ես կատարեալ վստահութիւն ունիմ: Թող պրն. Պատիսեանը ինձ ապահովեցնէ, թէ այդ միջոցը կրնայ օգտակար ըլլալ, իսկ պրն. Ռամիշվիլին թող ինձ վստահեցնէ, որ կառավարութեան կողմէ բաժնուած գէշքերը պիտի չօգտագործուին կառավարութեան դէմ*»: Ես վստահեցուցի Փոխարքային, որ այդ միջոցը լաւագոյնն է՝ չարիքին առաջը առնելու համար, իսկ պրն. Ռամիշվիլին բաւ, որ հրացանները իրենց նպատակին պիտի ծառայեն միմիայն, որ անոնք գործածուելու չեն կառավարութեան դէմ, չնայած որ պայքարը բնդդէմ իշխանութեան միշտ պիտի շարունակուի:

«Մենք երկուսն ալ ստորագրեցինք մեր յայտարարութիւններուն տակ: Փոխարքան ներս կանչեց զինուորական պահեստի պետը եւ կարգադրեց 600 հրացան յանձնել թիֆլիսի բանուորներուն, ի զարմանս զինուորական եւ ֆաղաֆացիական իշխանութեան:

«Մէկ ֆանի ժամ ետք, զինուած բանուորներու պահակները սողանց կ'ընէին ֆաղաֆի միջով՝ դէպի գլխաւոր ռազմագիտական կէտերը: Քաղաքի վտանգաւոր մասերը գրաւուեցան վրացի

բանուորներով: Տեղ-տեղ երեւցին եւ փոքրիկ զօրամասեր: Քաղաքը կը հանդարտէր: Քանի մը հրացանի պայթիւններ լսուեցան միայն, երեւի մութ ջրի մէջ ձուկ որսացողներ էին, որ կը կրակէին: Պատահական գնդակէ մը սպանուեցաւ վրացի բանուոր Ստուրսան եւ այս մէկ անմեղ գոհով վերջացան թիֆլիսի սարսափի օրերը: 600 հրացանէն պետական պահեստը մտան միայն հարիւր հրացան:

«Ժողովուրդի հոծ բազմութիւն մը, զանազան պատուիրակութիւններ, դրօշակներով դէպի գերեզմանատուն կ'առաջնորդէին Ստուրսայի մարմինը: Թարմ ծաղիկներով ծածկուած փոքրիկ հողակոյտի մը առջեւ, բոլոր լեզուներով ճառեր արտասանուեցան ժողովուրդներու եզբայրութեան եւ ազատութեան մասին: Ես խօսեցի թիֆլիս ֆաղաֆի անունէն»:

*Ձեռքերու բաժանու մը բանուորներու պատմութեան մէջ մտաւ: Ամբողջ Ռուսաստանը կը գրազկը այդ խնդրով:*

*Երկրորդ գէպը կը վերաբերի Գանձակին, ուր ես ստիպուած եղայ մեկնել:*

*Գանձակը նահանգային քաղաք մըն էր 60 չափար բնակչութեամբ, որուն կէտը Հայեր էին, իսկ մնացեալ կէտը՝ թուրքեր: Վերջինները կը բնակէին զաշտավայրի շրջանը, երկաթուղային եւ կայարանի շուրջ: Նահանգաժողովը, որ աւելի ուժ կու տար անոնց: Հայերը կը բնակէին լեռնային մասերուն մէջ:*

*Գանձակի Հայութիւնը զիմած էր ինձ՝ խնդրել Փոխարքայի աջակցութիւնը: Փոխարքան կարգազ-*

րեց, որ Նիժնեդորոսկի հուշակաւոր Հեծելազօր  
գունդը անմիջապէս մեկնի Գանձակ: Իսկ նոյն գի-  
շեր, խմբապետ Համազասպի (1921ին սպաննուած  
բոլշևիկներու կողմէ) և քաղաքային վարչութեան  
անդամ՝ Կոզդիանի ընկերակցութեամբ մեկնեցինք  
Գանձակ:

Ինձ հետ կը տանէր մեծ քանակութեամբ զրամ՝  
յանձնելու համար ինքնապաշտպանութեան կոմի-  
տէին (Կորիւն վարդապետին և ուրիշներուն): Առա-  
ւտեան հասանք Գանձակ: Կայտարանի մէջ կը լսու-  
ին հրացանի զարկեր: Քանի մը տուներ կ'այրելին:  
Մոխր բռնած էր երկիրքը: Նոյն պատկերը, 1905-6  
տարիներուն, պարսխտարար ամէն տեղ կը, որ կը  
բնակէին հայերն ու թուրքերը:

Մենք որոշեցինք իջևանի թրքական մասի մէկ  
հիւրանոցին մէջ՝ ապացուցանելու համար, որ ևս  
եկած եմ ոչ իբրև հայ, այլ որպէս պատգամաւոր  
Թիֆլիսէն, խաղաղասիրական միտումներով: Համա-  
պասպը կը ճամբորդէր զաղտնի: Փաթաթուած իր  
«հափունչիին» մէջ և զուրս չէր ելլեր գնացքէն:  
Կառք առնելով հասանք հիւրանոց: Թուրքերը շար կը  
նայէին մեր վրայ:

Մեր առաջին քայլը եղաւ իմացնել Գանձակի  
քաղաքագլուխին մեր գալու մասին: Շուտով հիւրա-  
նոց եկան Գանձակի ուս քաղաքագլուխ Կոչնովեց-  
կին և նահանգապետարանի մէկ պաշտօնեան: Ո-  
րոշուեցաւ հայերը և թուրքերը բազկացած ժողով մը  
հրաւիրել՝ հաշտութիւն կնքելու համար:

Գիշերը վատ անցուցինք: Երբեմն երբեմն կը  
լսուէին հրացանի համազարկեր: Լուսամուտէն կը

տեսնէինք, թէ ինչպէս տուները կ'այրելին: Ուստի կա-  
նութիւն չկար. նահանգապետը քաղաքին մէջ չէր:

Միւս օրը, զուրս ելանք քաղաք: Մեզ կը խնդրէին  
քայլել պատերու տակէն, որպէսզի գերմ մնայինք  
պատահական գնդակները: Քաղաքի գլխաւոր հրա-  
պարակի վրայ տեսանք Հեծեալ զօրամաս մը, հայ  
սպայ գնդապետ Մելիք-Ալլահօվերսեանի գլխաւոր-  
ութեամբ: Սպան գանգատեցաւ, որ իրեն արգելած  
են որեւէ միջամտութիւն՝ իրեն վերապահելով միայն  
զիտողի գերը: Զօրքերը կը տեսնէին, թէ ինչպէս մար-  
դիկ նախ կը լեցնէին տուներու վրայ՝ այրելու հա-  
մար գանձնք, բայց անկարող էին միջամտել:

Ձինուորական իշխանութիւնը կը պատճառա-  
բանէր, որ եթէ զօրքերը կրակ բանալու ըլլան ժողո-  
վուրդի վրայ, կիրքերը աւելի պիտի բորբոքուին և  
արիւնահեղութիւնը պիտի սաստկանայ:

Շարունակելով ճամբաս՝ պատահեցի դատախա-  
զի օգնական Կոզրեւիչին, որ կը ճանաչէր Թիֆլիսէն  
և որ իր ակերտ մէջ բռնած ունէր մեծ քանակու-  
թեամբ ժամացոյցներ: Չամչնալով՝ Կոզրեւիչը ըսաւ,  
որ այդ ժամացոյցները գնած է շատ չնչին գնով՝  
թուրքի մը ձեռքէ: Պարզ կը, որ հայու մը խանութ կը  
կողոպտուած և դատական իշխանութեան ներկա-  
յացուցիչը, փոխանակ Հետապնդելու ոճրագործը, իր  
չափին մասին է որ կը մտածէր:

Փամբ 12ին, եկան հայ պատգամաւորները, Կո-  
րիւն վարդապետը, քաղաքային վարչութեան ան-  
դամները: Եկան և թուրքերը, քաղաքագլուխը, նա-  
հանգապետարանի պաշտօնեանները, զօր. Տակայաչ-  
փիլին (վրացի):

Ճատով մը ևս զիմեցի երկու կողմերուն, որ զազրեցնեն աւելորդ արիւնահեղութիւնը: Ինչպէս միշտ, երկու կողմերն ալ կը ճատէին զարաւոր բարեկամութեան մասին, որ իրար կը կապէ երկու ժողովուրդները, որ «Շէյթանի» գործ է երկու ժողովուրդները իրար վրայ նետելը: Հենց այստեղ որոշուեցաւ պինդազգար կնքել՝ կամուրջը նկատելով որպէս չէզոք գօտի: Ինձ խնդրեցին պտտիլ քաղաքը և ամենուրեք յայտարարել խաղաղութեան մասին:

Քիչ մը մանրամասն կանց ասի այս ժողովի վրայ, որովհետեւ անկէ ետք, շատ վայրերու մէջ, ուր կ'իջխէին հրդեհն ու ծուխը, զուժարուեցան նոյնանրման ժողովներ, որոնք պսակցին մարդկանց պահանջած կիրքերը:

Երբ քաղաքը չբջկէն վերադարձանք, մեծ միթինկ մը զուժարուեցաւ: Եղան ճատեր: Գանձակէն մեկնեցանք՝ թողնելով այնտեղ Համազասպը:

Այնուհետեւ ինձ վիճակուեցաւ քանի մը ուրիշ վայրեր ալ հանդիպիլ և նոյնպէս խաղաղութիւն կնքել տալ երկու կողմերուն:

Հայ-թրքական ընդհարումներու հրդեհի բոցը վայրկեան մը լուսաւորեց կովկասահայ կեանքի ցաւոտ բոլոր կողմերը և հանրութեան առաջ դրաւ շարք մը խնդիրներ: 1906էն սկսած մինչև 1917, այդ խնդիրներէն շատերը քննութեան առարկայ դարձան: Քանի մը հարցեր ենթարկուեցան ինքնավարութեան խորհրդակցութիւններու, քանի մը հարցեր կովկասեան ժողովուրդները մղեցին զէպի նոր կոթիւններ, իսկ քանի մը հարցեր ալ մնացին անլուծելի, որոնք ապագային նորէն ասպարէզ պիտի գան:

Հայ-թաթարական ընդհարումները ուրիշ հետեւանք ալ ունեցան: Նախ քան ընդհարումները՝ հայերը անզին էին, իսկ թուրքերը միշտ ալ զինուած: Պէտք էր զինք ձեռք բերել Ռուսաստանէն, արտասահմանէն, պետական պահեստանոցներէն: Չլնքերը կը փոխադրուէին երկաթուղիով, խճուղիներով, սարերու վրայով, պապանի բոլոր միջոցներով: Չլնքերը կը հայթայթուէին յեղափոխական կազմակերպութիւններու միջոցով, բայց յաճախ փոխադրութեան ընթացքին կը բռնուէին կառավարութեան կողմէ: Իշխանութեան ձեռքը կ'անցնէին ցանկեր և հաշիւներ և ոռու կառավարութիւնը այս անգամ կ'ընդգրկէր պայքարի ուրիշ ուղի:

Առաջին անգամ հայերու ղեմ ան պայքարեցաւ իշխան Գոյիցիների ատեն, յատուկ օրէնքներով, կայւածներու գրաւումով: Պայքարի երկրորդ ուղին հայ-թրքական ընդհարումներն էին, իսկ երրորդ ուղին զատական հետապնդումներն եղան, այսպէս ստամ Հ. Յ. Դաշնակցութեան գաւոր:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Հայ-ուսական փոխ յարաբերութիւններու մասին կարելի է տարբեր տեսակետեր ունենալ, սակայն կան պատմական փաստեր, որոնք պէտք չէ անտես անուրին:

Օրինակ, երբ հայերը կը տառապէին սուլթանական ռեժիմէն, բնականաբար իրենց յոյսերը կապել էին ուսս ժողովուրդի հետ, կարծելով, թէ ուսս կառավարութիւնը կրնայ ուժ գործ դնել տաճիկներու վրայ՝ իրենց դրութիւնը բարելաւելու համար: Տաճկահայութիւնը սրբախօս թեմեր կը գլխաւորէր ուսական բանակները Տաճկահայաստանի մէջ, իսկ Ռուսաստան փոխադրուելով՝ տաճկահայը կը գտնէր տնտեսապէս և մասամբ ալ կուրտութեամբ կարգանալու համեմատաբար ազատ միջոցներ:

Կովկասի մէջ հայերը, սկսած անցեալ դարու իննսուներկան թուականներէն, մասնաւորապէս կուկուսեանի արչաւանքէն ղեկի Տաճկահայաստան, առաջ կը բերէին յեղափոխական կազմակերպութիւններ՝ բնուցելով Տաճկաստանի: Ռուս կառավարութիւնը Տաճկաստանի հետ վարած պատերազմներու ընթացքին (1877, 1914-17), կը գրգռէր հայերու թշնամութիւնը ղեկի թուրքերը, իսկ խաղաղութեան օրերուն կը հալածէր հայերու իրաւունք քաղաքականութիւնը:

Ու կը ստացուէր բարդ կացութիւն մը՝ բարեկամի և թշնամու: Մէկ օր բարեկամ, միւս օրը՝ թշնամի: Ու եթէ ի նկատի առնենք ևս այն պարագան, որ հայ յեղափոխական կազմակերպութիւններու գործունէութիւնը կը տարածուէր նաև ուսական սանձաններուն մէջ, պարզ կը լինի, թէ ի՞նչ առիթներէ օգտուելով՝ ուսական կառավարութիւնը կը ղիմէր պայքարի երրորդ միջոցին, այն է՝ ընդհանուր զատական հալածանքի Հ. Յ. Դաշնակցութեան դէմ:

1905 թուի յեղափոխութեան պարտուէն ետք, ուսս կառավարական ուղեւորն ուժ աւելի սաստկացաւ. ահա այդ թուականներէն է, որ կը սկսի Հ. Յ. Դաշնակցութեան գառավարութեան գործը: Իշխանութիւնը մէկ նպատակ կը նետապնդէր. ժողովուրդէն խլել այն, ինչ որ ձեռք էր բերած 1905ի յեղափոխութեան շնորհի:

Իմ վիճակը բաւական ծանր էր: Ես, որպէս քաղաքացուի, պէտք է մէկ կողմէն չկորցնէի իշխանութեան ղեկի ինձ ունեցած վստահութիւնը, իսկ միւս կողմէն՝ պէտք է ինձ վստահէր և ժողովուրդը: Ու ինձ կը թուէր, թէ այդ ծանր պայմաններու մէջ, ես կրցայ կատարել իմ պարտքս ժողովուրդին առջև: Փաստը այն է, որ Կովկասի կեանքի ամենամանր պայմաններու մէջ, երբ յեղափոխական կուսակցութիւնները ազատ գործելու հնարաւորութիւն ստացան, երբ տեղի ունեցան պատերազմն ու յեղափոխութիւնը, ես միշտ վայելիցի թէ՛ ժողովուրդի և թէ իշխանութեան կատարելալ վստահութիւնը:

Թող ներուի ինձ այս փոքրիկ մանրամասնութիւնը, որպէսզի կարողանամ ազատօրէն պատմել

գործի ամբողջ ընթացքը 1905-6ի յեղափոխութեան յաջորդող ունակստի օրերուն: Կառավարութիւնը կ'աշխատէր բոլոր ուզողութիւններով: Զօրավարները, բանակներու պոստը անցած, կ'այրէին պիղերը եւ կը գնդակահարէին կասկածելիները կամ կ'աքորէին Սիբիրի խորքերը:

Յաճախ կ'ըսէի Փոխարքային, որ այս միջոցները երբեք չեն կրնար բարեկամել Կովկասի կեանքը: Ան կը համաձայնէր ինձ հետ, սակայն բնականօրէն ուսուսական քաղաքականութիւնը սրի եւ հրի քաղաքականութիւնը կը միայն: Թիֆլիսի նահանգապետը կ'ըսէր, որ իրենք ունին բաւական քանակութեամբ ստիւններ՝ ճնշելու համար յեղափոխական որեւէ շարժում:

Ահա այս հրի եւ սրի քաղաքականութիւնն էր, որ առաջ բերաւ Շ. Յ. Դաշնակցութեան գաղտնաբերութիւնը:

Դատաւարութիւնը պէտք էր կառավարութեան: Եւ ստեղծելու համար պայն՝ ստիպուած եղաւ զիմեյ իրեն յատուկ զեղծարարութեան, որպէսզի կարենար երեւան բերել մեղաւոր տարրերը:

Գլխաւոր քննիչ նշանակուեցաւ յայտնի Լիժնիւր, որ իր տրամադրութեան տակ ունէր Կովկասի զանազան մասերու մէջ օգնական քննիչներ: Եւ սկսաւ խուսափելու քննիչներու, ձերբակալու մներու եւ սպիտակ տեղորոշի մեծ շրջան մը: Աչքի ինկող հայ գործիչներէն եւ մտաւորականներէն ոչ ոք ազատ էր խուսափելու իրենց քննիչներէն: Եւ ձերբակալուելու վտանգէն: Ետտեղը կը դիմէին ինձ՝ իմ պաշտպանութիւնը խնդրելով:

Ես ինքս տեղեկութիւններ ունէի, որ քննիչը, պատրուակ մը կը փնտրէր ինձ եւս հետապնդելու: «Մշակ»ի հանդուցեալ խմբագիր՝ Համբարձում Առաքելեանը ինձ բացաւ, որ քննիչը հետաքրքրուած է իմ մասին եւ հարցրած իրեն, թէ ի՞նչ կապեր ունիմ եւ հայ կուսակցութեան (Դաշնակցութեան) հետ:

Ես վճռեցի այցելու թիւն մը տալ Փոխարքային՝ վերջ դնելու համար այն ծանր կացութեան, որ կը տիրէր հայ հասարակութեան մէջ: Ընդ այդ ժամանակ էր, որ ձերբակալուեցան Թիֆլիսի աչքի ինկող հայ հարուստները, ի թիւս որոնց, բոլորի համակրանքը վայելող պրն. Մելիք-Ազարեանը: Ըսի Փոխարքային, թէ հայ յեղափոխականներու գործունէութիւնը սահմանափակուած է ինքնապաշտպանութեամբ՝ հայ-թաթարական բնահարումներու ժամանակ, թէ՛ գտնուած զինքերը այդ նպատակին են միայն յատկացուած, թէ՛ այն բոլոր մարդիկ, որոնք օժանդակած են կուսակցութեան, մէկ նպատակ են ունեցած, այն է՝ օգնել հայ ինքնապաշտպանութեան գործին: Փոխարքան կը լսէր ինձ եւ կ'ընդունէր իմ առարկութիւններու իրաւացի ըլլալը: Սակայն, կեղծոնական կառավարութիւնը, Ստոյիպինի զլխաւորութեամբ եւ արդարադատութեան նախարար՝ Շչեկովիտովի աջակցութեամբ, պարզօրէն հետեւում էր մէկ այլ քաղաքականութեան: Կը ստացուէր խառնաշփոթ վիճակ մը՝ «ենց իրեն» իշխանութեան ներքո: Մէկ կողմէն՝ թաղաւորի նշանակած կառավարութիւնը, միւս կողմէն՝ նոյն թաղաւորի նշանակած Փոխարքան, որ կ'ուզէր քիչ մը ուրիշ, աւելի մեղմ քաղաքականութիւն վարել, բնական է, որ

Ստորիպին և Շշեկյովիտով չլին սիրեր Փոխարքան՝  
Վորոնցով-Դաշկովը:

Փոխարքայի իշխանութիւնը սահմանափակ չէր:  
Օրկնադրութեան 11րդ յօդուածը կ'ըսէր, որ թէլ Փո-  
խարքան որեւէ պատճառով կատարուած թեան որո-  
շումները անհամապատասխան կը գտնէ կովկասի  
իրականութեան, կրնայ մերժել ընդունիլ այդ որո-  
շումները, պայմանով, որ այդ մասին յայտնէ թա-  
զուորին՝ ընդգծելով անշուշտ մերժումին գլխաւոր  
շարժառիթները: Ու պէտք է ըսել, թէ համայն Ռու-  
սաստանի մէջ, Փոխարքան առաջինն էր, որ կը վայե-  
լէր թագաւորի բացարձակ վստահութիւնը: Սակայն,  
Փոխարքայի իրաւասութեան սահմաններէն դուրս կը  
մնային դատական իշխանութիւնները, որոնք իբր թէ  
անկախ էին իրենց գործունէութեան մէջ: Փոխար-  
քան կրնար միայն խնդրել կամ դիմում ընել, բայց  
երբեք խառնուիլ քննիչի գործերուն կամ փոխել դա-  
տական որեւէ որոշում:

Ինչպէս վերջերս երեսաց կոմս Վորոնցով-Դաշ-  
կովի թագաւորին ուղղած նամակներէն, Փոխարքան  
իբրք որ մտածեր էր այդ ուղղութեամբ և թագաւորի  
ուշադրութեանն էր յանձնելը պատասխարութեան  
գործը: Հետաքրքիր է իր կարծիքը այդ մասին: Նա-  
մակներուն մէջ այ նոյն առարկայի մասերը կ'ընէ, ինչ  
որ բաժնի էր ինձ անձամբ, թէ՛ ինչ դէմ է այդ պատա-  
վարութեան, թէ՛ Դաշնակցութիւնը ուսական շա-  
հերուն դէմ չէ, թէ՛ պայքարելով Տաճկաստանի դէմ՝  
ան օգուտ կը բերէ ուս կատարութեան և թէ՛  
ոուս պաշտօնեաներուն դէմ կատարած ահարկուն-  
ները մասնակի բնոյթ կը կրէին:

Ինչ կը վերաբերի հայ ժողովուրդին, կ'ըսէր Փո-  
խարքան, ան կը սիրէ երեք բան՝ դպրոց, եկեղեցի և  
գրամ: Այսպիսի մէկ ժողովուրդ չի կարող յեղափո-  
խական լինել, մանաւանդ որ երկրի աշխարհագրա-  
կան դիրքը նպաստաւոր չէ այդ տեսակետին: Ինձ կը  
մեղադրեն, որ ես հայասեր եմ, — կը շարունակէ Փո-  
խարքան, — որ ես կը սիրեմ հայ ժողովուրդը, որպէս  
այդպիսին: Բայց ես հայերը կը գնահատեմ որպէս  
ոուս ազգաւորներ. կը նայեմ հայերուն վրայ որպէս  
ոուս ազգեցութիւնը տարածող լատպոյն տարրի մը,  
և ասոր մէջ պէտք է փնտոել հայերու ոուսասիրու-  
թեան աղբիւրը:

Ռուս նշանաւոր քաղաքագէտ և պատմաբան՝  
Միլիկով՝ գրեթէ նոյնը ըսաւ ինձ, մէկ հանդիպման  
ընթացքին:

«Հայի ուսասիրութիւնը սիրտէն չէ, որ կը  
ծագի, այլ գլուխէն»:

Ինչևիցէ, Փոխարքայի նամակները չազդեցին  
պատասխարութեան ընթացքի վրայ:

Պաշտպանութեան ծանր գործը իր վրայ կը  
առած իմ եղբայր Գեորգ Խատիսեանը, Հայաստանի  
պարլամենտի ապագայ անդամը: Բանտարկեալները  
կը պահուէին Թիֆլիս, Բագու, Ռոստով և Նախիջը-  
ւան: Ձերբակալուածներու թիւը հազարէն աւելի էր:  
Անոնց մէջ կային մտաւորականներ, վաճառական-  
ներ, գիւղացիներ և քանուորներ:

Որպէս քաղաքագլուխ՝ ես կը նախագահէի բան-  
տային կոմիտէին, որ պաշտօնունը չեւեւելու բան-  
տարկեալներուն սնունդին: Եւ որպէս բանտային կո-  
միտէի նախագահ, ես ազատ մուտք ունէի բանտերու

մէջ: Այդ ժամանակ Թիֆլիս ժամանեց նորրնտիր Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ան ցանկացաւ տեսնել բանտարկեալները եւ օրհնել զանոնք: Կաթողիկոսին առաջնորդեցի եւ:

Այստեղ պէտք է յիշատակեմ երկու դէպք. մէկը այն, որ առանց բանտապետի ուշադրութիւնը գրաւելու՝ եւ իստակին յայտնեցի այնպիսի բան մը, որ կրնար հետաքրքրել բանտարկեալները. միւսը այն, որ եւ թարգմանեցի Կաթողիկոսին ճառերը իշխանութեան համար, բայց այնպիսի ձեւով, որ իշխանութեան ղեմ ուղղուած մասը բացակայեց ճառին:

Կամաց-կամաց բանտարկեալները կ'ազատէին եւ միայն 160 հոգի յանձնուեցան դատի:

Ծանր է պատկերացնել բարոյական եւ նիւթական վիճակը հայ բնտանիքներու, որոնց անդամները տարիներու ընթացքին բանտի մէջ էին: Հայ հասարակութիւնը ճնշումի էր ենթարկուած, իսկ հայ բուրժուազիան կ'աշխատէր ամեն կերպ իր բարոյական կապերը խզել յեղափոխականներու հետ:

Նշանակալից է հետեւեալ փաստը:

Կր ժօտենային ընտրութիւնները քաղաքազուլութի: Հայ բուրժուաները կ'ըսէին ինձ, որ լաւ է յետաձգել ընտրութիւնները, մինչեւ որ եւս գնամ Փեթերպուրգ եւ վերադառնամ, որովհետեւ եւս կանչուած էի որպէս վկայ Գաշակցութեան գործով: Այսպիսի միջոցով, անոնք կ'ուզէին ազդել ինձ վրայ, որպէսզի Փեթերպուրգի մէջ եւս առանձնապէս չպաշտպանեմ հայ յեղափոխականները:

Եւ շհամաձայնուեցի: Ընտրութիւնները տեղի ունեցան եւ եւս ընտրուեցի քաղաքազուլութի՝ 60 սպի-

տակ եւ 2 սեւ քուէներով: Ընտրութիւնէն ետք, մեկնեցի Փեթերպուրգ, ուր դաշնակցականներու համար պատրաստուած էր արդէն լաւ պաշտպանութիւն: Պաշտպանի գերին մէջ էր եւ յայտնի իրաւարան Գրուզներբզը, որու հետ անձամբ տեսնուեցայ եւ բացատրեցի, թէ կուսակցութեան գործունէութեան մէջ պէտք է բաժնել զուս յեղափոխական աշխատանքը, որ ուղղուած է եղել տաճիկ բռնակալութեան ղեմ այն բոլոր նոր երեւոյթներէն, որ առաջ են եկած կուսակցութեան մէջ՝ հայ-թաթարական ընդհարումներու ընթացքին:

Պաշտպանութեան գլխաւոր խնդիրներէն մէկը այս երկու խնդիրներու իրարմէլ գատելն էր: Նոյնը պիտի ընէին եւ վկաները: Ծանօթ լինելով կոպկաստ անանձնայատուկ կեանքին, գիտնալով կուսակցութեան պատմութիւնը, անոնք պիտի ջանային գատել իրարմէլ կուսակցութեան գործունէութեան այդ երկու փոյլերը:

Ինձ վրայ ալ նոյն խնդիրն էր դրուած:

Գատավարութիւնը շատ երկար տեւեց: Հարցաքննուեցան մեծ թիւով վկաներ: Երբ հերթը ինձ հասաւ, մտայ դատարար՝ եւ տեսայ 160 հոգի մեղադրեալներու աթոռին վրայ. մեր աչքերը իրար հանդիպեցին եւ եւս շեմ մտոնար այն սպասորութիւնը, որ ունեցայ այն ժամանակ: Ծատ շատերու հետ մենք միշտ հանդիպած ենք կեանքի այլ պայմաններու մէջ, շատերու հետ ժողովի ենք նստած ու շատերու հետ ալ բարեկամ եղած:

Աչքիս առաջն էր ժ. Համօ Օհանջանեանի ղեմքը, կրր ան՝ առանց քաշուելու՝ դատարանի առջեւ կ'ը-



սէր, որ կը պատկանի Հ. Յ. Դաշնակցութեան: Կը յիշեմ Համագասպը, Աւ. Սահակեանը, Թայրեանը:

Ինձ հարց տուին, թէ ի՞նչ գիտեմ եւ կու սակցուի՞մ եւ նրա գործունէութեան մասին: Ես կը զգայի որ իմ տուած ցուցմունքներէն շատ բան կախում ունի, քանի որ պատարանի առջեւ կանգնած կը կովկասի մայրաքաղաքի քաղաքապետը, որ թէեւ կ'ընտրուէր ժողովուրդի ներկայացուցիչներէն, բայց կը հաստատուէր Փոխարքայէն: Դատարանի աչքին եւ պաշտօնական անձնաւորութիւն իր եւ իրենց համար միանգամայն վստահելի մարդ, հետո՛ւ յեղափոխական համակրանքները:

Ես խօսեցի մէկ ժամէն աւելի: Իմ նպատակն էր պարզել, թէ Հ. Յ. Դաշնակցութեան հիմքը Թրքահայաստանի պատուարումն է, թէ՛ կու սակցութեան պայքարը սահմանափակուած է տաճկական գործերով եւ թէ՛ այդ պայքարը շարունակութիւնն է ուսման շնորք քաղաքականութեան, զոր կատարութիւնը գործադրեցրու լղարները, սերբերը եւ յոյները տաճկական յուճէն ազատելու ժամանակ: Ռուսաստանը Արեւելքի մէջ հանդէս կու պայ որպէս քրիստոնէական եւ պաշտպան, իսկ հայ յեղափոխականներու աշխատանքը ուղղուած է նոյն գատի պաշտպանութեան:

Երկրորդ հարցը զինական պահեստներու եւ զինուորական կազմակերպութիւններու մասին էր: Ես պտայ ատոնց անհրաժեշտութիւնը՝ որպէս հետեւանք կովկասի քաղաքական մթնոլորտի: Ըստ, թէ հայերը ինքնապաշտպանութեան զրգուած, պէտք է որ գի-

մէին այդ միջոցներուն, թաթարական արշաւանքներու առաջին առնելու համար:

Երրորդ հարցը ամենափոխանակաւորն էր՝ անարեւելու մասին հարցը: Այստեղ եւ կտրականապէս յայտարարեցի, թէ սպաննուած պաշտօնեաները ծախուող, կաշտակեր եւ անպէտք մարդիկ են եղած, որոնք իրենց գործունէութեամբ կը վարկարեկէին իշխանութեան հեղինակութիւնը ժողովուրդի աչքին:

Ինձ հարցաքննեցին երկու քուկէս ժամ: Հարցեր կու տային ե՛ւ պաշտպանները, ե՛ւ դատարանները, ե՛ւ դատախազը, ե՛ւ մինչեւ անպաճ մեղադրեալները: Անոնց միտքը այն էր, որ իմ պատասխաններուս մէջ եւ հաստատեմ, թէ իրենց գործունէութիւնը սահմանափակուած է տաճկաներու դէմ պայքարով:

Դատաւարութիւնը պարզեց քննիչ լիմիտի զեղծարար գործունէութիւնը: Պետք է բսել, որ շնայած տիրող յետադիմութեան եւ կատարութեան ճնշումին՝ մեղմ դատաւարութիւն արձակուեցաւ գրեթէ բոլորի նկատմամբ: Վկաներու եւ պաշտպանութեան ջանքերը եւս իրենց գործը կատարեցին:

Փէթերպուրգի մէջ, այցելեցի արդարութեան նախարար Շչեկովիտովին, անոր ուշադրութեան յանձնելու համար վրացի փաստարան Գվազաւայի գործը, որ բանտ էր նետուած իր մէկ յօդուածի համար, զրուած չեխական սովորներու մասին: Նկարագրելով սովորներու կեանքը՝ Գվազաւան իր յօդուածը վերջացուցած էր հետեւեալ նախադասութեամբ. «Ե՛րբ պէտք է մեր սովորներն ալ երկինք բարձրանան»:

Իշխանութիւնը այս նախադասութեան մէջ նկա-

տած էր կոչ՝ ղէպի ապստամբութիւն և բանտարկած էր չեղինակը: Նախարարը ինձ բացատրեց, որ չեխերը կ'ուզեն ազատագրուիլ աստրիացիներու և գերմանացիներու յուճէն: Սոկոյները (բազմները) անոնց երիտասարդ սերունդն է, տողորուած այդ զաղափարով: Եթէ Գվազաւան կ'ուզէ, որ իրենց բազմներն այ երկիրք սաստնին, կը նշանակէ կ'ուզէ, որ վրաստանը ազատի Ռուսաստանէն:

Ես բացատրեցի, թէ չեղինակը երբեք ատիկա նկատի չէ ունեցած, թէ՛ ան չիմնուած է միայն մարմնամարզական կողմի վրայ: Խնդրեցի նախարարէն, որ օրէնքի սահմաններուն մէջ կրճատէ Գվազաւայի արկելափակման ժամանակաշրջանը: Ան խոստացաւ և իրօք որ Գվազաւան չուտով ազատեցաւ:

Այսպիսի փաստեր կարող էմ բերել հազարներ:

Պարզ էր մէկ բան, որ ժողովրդի գիտակցութեան և օրէնքի տրամադրութիւններու մէջ մեծ վիճ մը բացուած էր: Այն, ինչ ժողովուրդը կը համարէր չեռոսական, օրէնքի առաջ դատապարտելի էր: Օրէնքին հակառակ գործելը սովորական էր և ոյթ էր դարձած, իսկ օրէնք գործադրող պաշտօնեաները՝ ատելի մարդիկ:

Ահա թէ ո՛ր պէտք է փնտռել ռուսական յեղափոխութեան պատճառներէն պիտաւ որը:

Կը յիշեմ, թէ ինչպէս դատի կու տային խեղճ գիւղացիները և կը մեղադրէին օրէնքի ամենախիստ յօդուածներով, որպէս հակաուսկորդներ տիրող կարգերուն: Երբ գիւղացիի մը մօտ կը գտնէին տասնեակ մը փամփուշտներ, կամ երբ գիւղացիին կը հիւրընկա-

լէր կուսակցական մը, զանոնք կը մեղադրէին որպէս կուսակցականներ, կուսակցութեան ամբողջ գործունէութիւնը բարդելով անոնց վրայ:

Այս բոլորով հանդերձ, դատաւարութիւնը կը կատարուէր ռուսերէն լեզուով և յաճախ անգրագիտ թարգմանները աւելի կը բարդացնէին գործը: Ոչ միայն լեզուի բարդութիւններ առաջ կու գային, այլև կ'այլարանէին գործի էութիւնն իսկ. յաճախ, չեռոսական գործ մը ոճրագործութեան կը վերածուէր և, ընդհակառակը, պարզ սճրագործութիւնը կը նկատուէր որպէս չեռոսական գործ:

Ահա ղէպք մը ևս:

\* \* \*

Ամբողջ տասնէ հինգ տարի անցընելով Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ, տասը տարի 1907-1917՝ քաղաքագլուխի պաշտօնին վրայ, առիթ ունեցայ մօտէն դիտելու Կովկասի կեանքը՝ իր բազմապիսի արտայայտութիւններուն մէջ:

Շատ ղէպքեր, մինչև այսօր այ, տպաւորուած են իմ մէջ և ինձ կը թուի, թէ իմ բնութեցողներս պիտի չետաքրքրուին որոշ ղէպքերով, որոնք կապուած են Կովկասի այն ժամանակուան տրամադրութիւններու և հոսանքներու հետ:

Դէպքը, որ պիտի պատմեմ տեղի ունեցաւ Թիֆլիսի դատաստանական պալատի քաղաքական բաժնի մէջ: Պաշտօնիս բերուեով կը մասնակցէի դատաւարութեան՝ ազնուականութեան ներկայացուցչին,

Աւշայա գիւղի տանու տէրին և զատարանի շորս ան-  
դամներու հետ միասին:

Անցնենք զԼւարին:

Թիֆլիսը Վրաստանի մայրաքաղաքն է և ամ-  
բողջ Կովկասի վարչական կեդրոնը, որ կը գտնուի  
Կուր գետի երկու ափերուն վրայ: Քաղաքի Հաւա-  
բար թաղին մէջ, ուր կը գտնուին պատուհներու և  
կանաչեղէնի համեատ վաճառականներ, փայտաչէն  
տնակ մը կար, բաղկացած երկու սենեակի, պատրչ-  
զամէ և ջրհորի: Այդ տնակին յատակագիծը ներ-  
կայացուած էր քաղաքային վարչութեան և Հաս-  
տատուած էր վերջինիս կողմէն: Յատակագիծին տակ  
դրուած էին ճարտարապետին և քաղաքային վար-  
չութեան շինարարական մասի գործավարին ստո-  
րագրութիւնները: Վերջինս՝ պրն. Չուրարով՝ դար-  
ձաւ Թուսիոյ Պետական Դոմայի անդամ Թիֆլիսի  
կողմէն, որպէս սոցիալ-դեմոկրատ:

Տնակին մէջ երևու թապէս կը բնակէին խաղաղ  
վաճառականներ: Ամէն օր սալլակ մը կու գար, կը  
կանգնէր տան առաջ, բեռնաւորուած պատուհներով  
և կանաչեղէնով, կը գատարկէր իր բեռը և կը մեկ-  
նէր՝ բեռնաւորուած արկղերով և պարկերով:

Օգոստոսի մէջ, երեկոյ մը, երբ խանութը փակ-  
ւած էր արդէն և խանութպանները մեկնած, յան-  
կարծ վրայ կը հասնին ոստիկաններ, ժանտարմներ  
և զատախագային պաշտօնեաներ. կը շրջապատեն  
տունը, կը խուզարկեն սենեակները, ներքնայարկը,  
բայց կասկածելի ոչինչ կը գտնեն:

Ոստիկաններէն մէկը կը փորձէ իջնել ջրհորը:  
Ինքզինք կը կապէ պարանոյ մը և վար կ'իջնէ ջրով

լիքը ջրհորը: Երեք մեթր խորու թեւան մէջ, ան կը նկա-  
տէ անցք մը, որ կը տանի եղեր սենեակ մը, որու նկա-  
հաւորութիւնը սպարանական մեքենայ մըն էր և  
քանի մը ում մեր: Տպարանը և զնէքերը կը պատ-  
կանէին յեղափոխական կուսակցութեան մը:

Հետեւանքը կ'աւարանտարկու թիւններ և զա-  
տավարութիւն:

Դատաստանական պալատը լեփ-լեցուն էր Հա-  
սարակութեամբ: Դատապարտեալներու աթոռին  
վրայ նստած էին 7 հոգի: Դատարանը, պարզելէ ետք  
անոնց մեղաւկցութիւնը, կը պատրաստուէր ա-  
տանձնանայ՝ վճիռ հանելու համար:

Ծանր մթնոլորտ մը կը տիրէր: Մեղադրեալները  
չէին թաքցուցած իրենց համոզումները:

Նախապահը մեակերպեց առաջին հարցը.

— Կը նկատուէք արդեօք ապացուցուած այն  
հարցը, թէ մեղադրեալները՝ յեղափոխական նկա-  
տումներով՝ կազմակերպած են զայտնի սպարան մը  
և շինած են ում մեր և թէ երկտրական մէկ հպու-  
մով կարող էին առաջ բերել պայթումներ:

Հարցումէն յետոյ տիրեց երկարատեւ լուսութիւն:  
Բոլորս ալ գիտէինք, որ զատապարտեալները յան-  
ցաւոր են և որ անոնց գլխուն կախուած է տաժա-  
նակիր աշխատանքներու սպառնալիքը:

Ըստ օրէնքի, ամէնէն առաջ պիտի պատասխա-  
նէր ամէնէն փոքրը, այսինքն՝ Աւշայայի տանու տէրը:  
Աւշայան գիւղ մըն է Թիֆլիսէն առաջ քիլոմետր հե-  
ռաւորութեան վրայ: Տանու տէրը, վրացի գիւղացի  
մը, ուզիդ նայեց նախապահի երեսին և վատ ուսե-  
րէնով մը ըսաւ.

— Մենք կը գտնենք, որ անոնք մեզաւոր չեն:

Նախագահը կարծեց, թէ յաւ չէր յաած եւ նորէն կրկնեց հարցումը: Բայց նորէն նոյն պատասխանը ստացաւ: Նախագահը կորսնցուց հաւասարակշռութիւնը եւ նորէն դիմեց տանուտէրին բեկումով, թէ ինչպէ՞ս կրնան մեզաւոր չըլլալ մարդիկ, որոնք սու մերեր կը պատրաստեն մարդ սպաննելու համար:

Տանուտէրը իր կողմէն չհասկացաւ նախագահին գայրոյթը եւ աշխատեցաւ համոզել զայն, որ մեղադրութեանը չեն ուզած մարդ սպաննել, այլ ուզած են միայն սպաննել լրտեսներ եւ ստիկաններ:

— Անկապարուէ՞ր էք՝ ինչ է, — կը բացազանչէ նախագահը:

Բայց տանուտէրը կը պնդէ, թէ ամբաստանեալները մեղաւոր չեն, թէ՛ ինք կը հասկնայ իր ըսածը:

Գատական խորհուրդը յուզուած է, բայց այս պարագային ոչինչ կրնայ բնել, որովհետեւ գատական նիստերու ամէն անցու դարձ պաղտնի է եւ ամէն մէկ գատաւոր ազատ է իր խղճի առաջ:

Վերջապէս, ձայներու մեծամասնութեամբ, մեղադրեալները գատապարտուեցան տաժանակիր աշխատանքներու:

Ասկայն, գատաստանական պալատի նախագահը, օրէնքին հակառակ, ատեանի պատերէն դուրս բերաւ գաղտնիքը եւ յայտնեց կովկասի Փոխարքային ու Փեթերպուրցի իշխանութեան:

Քանի մը օր անցած, քոփս եկաւ Թիֆլիսի գատապետը եւ յայտնեց ինձ հետեւեալ մանրամասնութիւնները, ցանկալով ինձ տեղեակ պահել խնդրին,

քանի որ իմ ներկայութեամբ կը տեղի ունեցած զկար:

Փոխարքան, յարգելով գատաւորի անկասկածութիւնը, մերժած կը պատմել տանուտէրը, սակայն Թիֆլիսի նահանգապետին յայտնած կը անոր քաղաքական անբարեկամութեան մասին: Նահանգապետը կանչած կը գատապետը, որ հայ կը — պրն. Շանլեան — եւ առաջարկած կը անոր այնպիսի մի կէք պտնել, որ գաղտնապահութեան օրէնքը շխտաբար: Գատապետը կանչած կը տանուտէրը եւ բացատրած խնդրի էութիւնը՝ առաջարկելով անոր, որ տանուտէրը կամ կրկնէ իր բաժնիները եւ կամ յայտարարէ, թէ ինք հարբած վիճակի մէջ է եղած եւ չի յիշեր անցած դարձածը:

Աւշայայի տանուտէրը պատասխանած կը, թէ իբրեւ գատաւոր ինք իր տեսակէտն է յայտնած, բայց եթէ իշխանութիւնը կը ցանկանայ, պատրաստ է յայտարարել, թէ գատապարտութեան ստեղծ ինք հարբած վիճակ մը ունեցած է:

Տանուտէրը հեռացուեցաւ իր պաշտօնէն, բայց սպասեցաւ վարչական եղանակով Սիրերիա աքսորումէն:

Այսպէս վերջացաւ ահաբեկիչներու եւ Աւշայայի տանուտէրին գործը:

Նախագահը՝ զժպտն իշխանութեան վերաբերումէն՝ անվերջ դիմումներ բրաւ Փեթերպուրց, բայց իշխանութիւնը գտաւ, որ գատապետի կարգադրութիւնը յաւապոյն կէքն է եղած՝ ստեղծուած կացութենէն:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ  
ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1905 Հոկտ. 17ին, թագաւորին հրովարտակով Ռուսաստանին շնորհուեցաւ Սահմանադրութիւն: Մնունդ առին ազատ հիմնարկութիւններ, որոնք ժողովուրդի կամքը պիտի արտայայտէին: Նախքան Պետական Դումայի, այսինքն՝ ուսական պարլամենտի հրաւիրումը, կազմուեցաւ Բուլիցիների յայտնի յանձնախումբը, որ պաշտօն ստանձնեց ծանօթանալ ժողովուրդի ցանկութիւններու հետ:

Բուլիցիներ ներքին գործոց նախարար էր: Հայերն այ պետք է իրենց ցանկութիւնները յայտնէին: 1906 թուին որոշուեցաւ հրաւիրել առաջին բնդհանուր ուսահայկական համագումարը, որ կովկասահայ կեանքի մէջ նշանակալից երևույթ մըն էր:

Ամբողջ Ռուսաստանի, Կովկասի, Մոսկուայի, Փեթերպուրդի մէջ ապրող հայերը հրաւիրուած էին իրենց պատգամաւորներով մասնակցել այդ համագումարին: Հոն պետք է ձեւակերպէին հայ ժողովուրդի քաղաքական պահանջները: Կազմուեցաւ նախաձեռնող մարմին մը, որուն կ'անդամակցէի որպէս քաղաքապետութիւն:

Կոմիտէի հետք առաջին նիստին մէջ երևան եկան շարք մը լուրջ ժուարութիւններ: Ինչ հիմ-

նարկութիւններ պետք է մասնակցին համագումարին, քանի՞ հոգի իւրաքանչիւր հիմնարկութեանն էւ այլն: Ենթահիւ իմ մասնակցութեան, համագումարի նիստերու համար յատկացուեցաւ Թիֆլիսի քաղաքային վարչութեան սրահը:

Մենք ի նկատի առինք զլիսաւոր քաղաքները, նշանակեցինք անդամներու թիւը իւրաքանչիւր քաղաքէն, ցանկը կազմեցինք հիմնարկութիւններուն, որոնք կրնային մէկական պատգամաւոր ուղարկել: Ստացուեց 50 հոգիներից ցանկ մը: Պատգամաւորները հաւաքուեցան Թիֆլիս: Որպէս խմբագրական յանձնախումբ բնտրուեցինք էս էս Միքայէլ Պապաջանեանը, Պետական Դումայի ապագայ անդամը:

Մենք շատ աշխատեցանք պրն. Պապաջանեանի հետ, էի վերջոյ, համագումարի որոշմամբ ներկայացրինք հայ ժողովուրդի քաղաքական պահանջները: Այսօր, 1932 թուին, երբ ունինք Հայաստանը, մեզ տարօրինակ կը թուի այն համեստ պահանջները, որ 1906ին, այսինքն՝ բնդամէնը 25 տարի առաջ կը ներկայացնէինք, որպէս հայ ժողովուրդի քաղաքական պահանջներ: Ընդամէնը 25 տարի, բայց որքան է առաջացել հայ քաղաքական միտքը:

Ժիզյ է, համագումարը թերի էր իւր բնտրական ձեւով: Բայց կարեւորը այդ չէր. կարեւորը այն էր, որ հայ քաղաքական միտքի բոլոր հոսանքները ներկայացուած էին այնտեղ իրենց անդամներով: Կը յիշեմ մեր տաղանդաւոր բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը, որ բնտրութիւններու առթիւ գրած էր եր-

գիծարանական բանաստեղծութիւն մը, ուր կային  
Նևտու Էայ խօսքերը:

«Եկան բանկից, վաճփից եւ սեփական տա-  
նից»:

«Վանքից եւ սեփական տանից» խօսքերը կը վե-  
րաբերէին Պաժակին եւ Արչալոյս Մխիթարեանցին,  
որովհետեւ «տաղիներ» համալուծարի բացման օրը  
միայն՝ մեծ միթինկ մը գումարելով Թիֆլիսի վանքի  
բակին մէջ, ճառ մը խօսած էր այնտեղ եւ բնտրուած  
որպէս պատգամաւ որ «Հայ ժողովուրդի»: Ինչ բնկ  
կ'ուզէ, որ համալուծարը բնդունեց իր պատգամա-  
ւոր լինելու հանգամանքը, որովհետեւ իր Էտեւ  
կանդնած էր կուսակցութիւնը: Արչալոյս Մխիթար-  
եանցը իր գիւզէն ներկայացուց հաստատագիր, որ  
ինք բնտրուած է եւ նոյնպէս բնդունուեցաւ համա-  
լուծարին որպէս պատգամաւ որ: Անշուշտ, ի նկատի  
ունէին այն հանգամանքը, որ Մխիթարեանց «Մշակ»  
թերթի կարելի որ ներկայացուցիչներէն էր:

Այսպէս, յաճախ անտես կ'առնուէին բնդ հանուր  
բնտրութիւններու օրէնքի տրամադրութիւնները:  
Անօրէնութիւններ կը գործադրուէին մէկ նպատակի  
համար, այն է՝ որ հնարաւ որովհետեւ շարք, համալու-  
ծարին մէջ լրիւ ներկայացուած ըլլան հայ քաղաքա-  
կան միտքի բոլոր հոսանքները:

Այն ժամանակ, ճիշդ բնտրութիւններու խնդիրը  
չատայ չէր գրազեցներ միտքերը: Կար մէկ ուրիշ հիմ-  
նական երեւոյթ: ա՛յն, որ հասարակութեան լայն  
խտերը ապարկւոյ էին նետուեր Ռուսաստանի մէջ՝  
տաղիներ անգամ քաղաքական պահանջներով: Ռուս  
կայսրութեան գոյութեան ամբողջ բնթացքին մէջ

տաղիներ անգամն էր, որ կատարուէին որ կը գիծէր  
ժողովուրդին՝ հասկնալու համար անոր ցանկու-  
թիւնները:

1905ի զեպքերը ուստական յեղափոխութեան  
մեղաբար կարելի է համարել, որովհետեւ տաղիներ  
անգամն էր, որ ուստական ժողովուրդը ապարկւոյ կ'իջնէր՝  
գործադուլներով, բողոքներով եւ պահանջներով:  
Հայ գիւղացիութիւնն այ, հայ գիւղը, Նեոաւոր գա-  
ւառները նոյնպէս կը մասնակցէին տաղիներ անգամ  
յեղափոխական Էտեւ գեոին: Մեր գիւղացիութիւնը  
յետամնաց էր եւ անտեղեակ: Երբ 1908ին Յալկիի  
չրջանի (ոչ Նեոու Թիֆլիսէն) գիւղերէն մէկուն մէջ Էս  
հարցուցի գիւղացիներուն, թէ ի՞նչ է Պետական  
Դումա (պարլամենտ), անոնք պատասխանեցին, որ  
Պետական Դումա կը նշանակէ ոստիկանապետներու  
ժողով: Պեղծ գիւղացու աչքին բարձր իշխանութեան  
հասկացողութիւնը ոստիկանապետէն այն կողմ չէր  
անցներ:

Հայկական տաղիներ համալուծարը անցաւ իր  
աշխատանքներուն:

Ամենակարելի որ հարցը քաղաքական հարցն էր.  
պէտք էր որոշել Ռուսաստանի ապագայ վարչաձևը:  
Հայ պատգամաւորները, երկար եւ տաք գիծարանու-  
թիւններէ Էտք, կանգ առին Նևտու Էայ ձևակեր-  
պու մին վրայ: Ռուսաստանը պէտք է ունենայ «ներ-  
կայացուցչական ժողով»: Ոչ մէկ խօսք այն մասին,  
թէ այդ ժողովը սահմանադիր պէտք է ըլլայ, թէ  
միայն խորհրդակցական բնոյթ պիտի կրէ, թապաւ ո-  
րի կողքին:

Վրացական պահանջները աւելի կտրուկ էին եւ

պարզ: Անոնք կը պահանջէին օրէնսդրական պար-  
լամենտ եւ յետոյ՝ վրաց ուղղափառ եկեղեցու բաժա-  
նու մը ուս եկեղեցիէն: Շարք մը ուրիշ պահանջներ  
այ հոգերանօրէն կը պատրաստէին վրաց ժողովուրդի  
անկախութեան գաղափարը, թէ եւ պահանջներու մէջ  
պարզօրէն այդ մասին չէր խօսուեր:

Հայկական համալուծարի ցանկութիւնն էր՝  
քաղաքական խնդիրներու շուրջ արժատական որեւէ  
առաջարկ չներկայացնել: Համալուծարի երկրորդ  
պահանջն էր՝ հասարակցենկ փաստօրէն հայերու  
քաղաքացիական իրաւունքները ուսերու իրա-  
ւունքներուն: Կ'ըսենք՝ «փաստօրէն», որովհետեւ  
իրաւականօրէն բոլոր իրաւունքները հասարակ էին  
բոլոր քաղաքացիներու համար:

Պահանջի գլխաւոր միտումը այն էր, որ հայերն  
այ կովկասի մէջ կարողանային պետական ծառայու-  
թեան մէջ պաշտօններ ունենալ, որովհետեւ պաշտօ-  
նավարել ցանկացող հայերը կ'ուզարկուէին Ռու-  
սաստանի ներքին նահանգները, իսկ կովկաս կ'ու-  
զարկուէին ուս պաշտօնեաներ: Բոլորին յայտնի էր,  
որ նորաւարտ հայ իրաւարանը կարող էր միայն քար-  
տուղար լինել զատական որեւէ հիմնարկութեան մէջ  
կամ երկրորդական քննիչի օգնական: Իսկ եթէ ցան-  
կանար դառնալ Երջանային Դատարանի անդամ,  
պէտք է թողնէր հայրենի կովկասը եւ բռնէր Ռուսաս-  
տանի ճամբան: Նոյնը կարելի է ըսել եւ բժիշկներու,  
ճարտարապետներու, ուսուցիչներու մասին:

Այսպէս օրէնքը չէր սահմանափակեր հայերու  
մասնակցութիւնը կովկասի պետական պաշտօնա-  
վարութեան մէջ, սակայն փաստօրէն, դո՛ւները միշտ

զոց էին հայերու առջև: Հայերը՝ ստիպուած՝ կը  
զբաղէին կա՛մ ազատ արհեստով (մասնաւոր բժիշկ-  
ներ, մասնաւոր դասեր), կա՛մ ոչ պետական հիմնար-  
կութիւններու մէջ: Ամենէն շատ հայերը համարիւ-  
րուած էին Բագու, ուր նաեւ թիւարդի նարերու թիւնը  
կը շնորհէր մասնաւոր պաշտօններ գանազան հիմ-  
նարկութիւններու մէջ:

Վրացիներու համար չկար փաստական որեւէ  
սահմանափակում: Անոնք ազատ մուտք ունէին թէ՛  
զատական եւ թէ՛ վարչական բոլոր հիմնարկութիւն-  
ներու մէջ:

Ամբողջ կովկասի մէջ չկար հայ նահանգապետ  
մը, մինչդեռ մեծ թիւով վրացի նահանգապետներ  
կային, օրինակ՝ իշխան Նակաչիձէն, իշխան Շերվա-  
չիձէն: Կովկասի ամենամեծ հայ պաշտօնեան եղած  
էր հայրս, ան այն 56 տարեկան հասակին մէջ՝ խոսովե-  
լով թողած էր պաշտօնը, որովհետեւ իրեն փոխարէն  
իր օգնական ուսին էին յանձնած պետական գոյքե-  
րու կառավարիչի պաշտօնը կովկասի մէջ:

Ահա թէ ինչո՛ւ հայերու երկրորդ պահանջը հա-  
ւասար իրաւունքներու մասին լուրջ եւ կարեւոր  
նշանակութիւն ունէր:

Պահանջ ներկայացուցաւ նաեւ հայ գինուոր-  
ներու պաշտօնատեղի մասին: Հայ գինուորներն այ  
կը բռնէին Ռուսաստանի խորերը, ուր կլիմայական  
պայմանները աննպաստ էին կովկասցիներու հա-  
մար: Չինուորներէն շատեր տուն կը դառնային թո-  
բախտով կամ շափազանց հիւժուած:

Ուշագրաւ էր է՛ւ զպրոցներու խնդիրը: Մենք կը  
յահանջէինք թեթեւցնել ուս ժողովրդական տե-

սուշներու հակակշիւր հայ ծխական և թեմական  
գպրոցներու վրայ: Մեր գպրոցները մեծ մասով  
կապուած էին եկեղեցիին հետ: Եկեղեցիներն էին, որ  
կ'օժանդակէին նիւթապէս մեր գպրոցներուն: Եւ յս է  
պատճառը, որ հայ ունեւոր դասը այնքան առատա-  
ձեռն էր եկեղեցուն յատկացուած նուիրատուու-  
թիւններու մէջ: Հայ գպրոցներու մէջ սրբութեամբ  
կը պահուէր հայկական ոգին և հայ գպրոցներէն էր,  
որ դուրս կու գային հայ ականաւոր գործիչներ: Ահա  
թէ ինչո՞ւ մեր հասարակութիւնը այնքան կը գուր-  
գուրար իր գպրոցներուն վրայ:

Համազումարին առջև դրուած էին նոյնպէս  
կարևոր նշանակութիւն ունեցող շարք մը ուրիշ  
հարցեր՝ տնտեսական և գիւղացիական: Հայկական  
հողերը կը յատկացուէին Ռուսաստանի խորքէն  
գաղթած մայրականներուն և գուխորներուն:  
Կարսի շրջանի, Ալեքսանդրապոլի գաւառի մէջ, Սե-  
ւանի կղզիի շուրջը ուսացման նպատակներով բնա-  
կեցուած այդ սուս եկուորներուն կը յատկացուէին  
յաւապոյն հողամասերը՝ ի հաշիւ հայ գիւղացիու-  
թեան:

Իմ հայրս, իր պաշտօնավարութեան բնթացքին,  
աշխատած էր ամէն կերպ պաշտպանել հայերու  
իրաւունքը և այդ առթիւ միշտ բնդհարումներ էր  
ունեցած իշխանութեան հետ:

Գիւղացիական կեանքի գլխաւոր հարցերէն մէկը  
ջուրի հարցն էր: Հայ գիւղացու տնտեսութեան կա-  
կան ջրիցներէն մէկը՝ ջրային օրէնքը՝ անկատար էր:  
Շատ ոճրագործութիւններ տեղի կ'ունենային այդ  
հոգի վրայ:

Համազումարը պահանջեց ջրային նոր օրէնք-  
ներ՝ համապատասխան հայ գիւղացիի շահերուն:

Սուր բնայթ կը կրէր նաև արտօտօւլլերու հար-  
ցը: Պէտք է բեր, որ կովկասեան թուրքերը գլխաւոր-  
բապէս կը գրադին խաշնարածութեամբ. ամառնային  
տաքերէն ապաստանելու համար՝ անոնք ստիպուած  
են բարձրանալ սարերը, որոնց լանջերուն վրայ կը  
բնակին հայերը: Ամէն անգամ սար բարձրանալու  
ատեն, սարի տակ կու տան հայերու արտերը, այգի-  
ները. առաջ կու գային խոր անհամաձայնութիւններ  
և յաճախ կոտորուածքներ, երկու ժողովուրդներու միջև:  
Համազումարը այս խնդրի վրայ և ս ճրարեց իշխա-  
նութեան ու շարքութիւնը:

Պահանջ ներկայացուցաւ նաև տնտեսագի-  
տական, միջնակարգ և բարձրագոյն գպրոցներ բա-  
նալու մասին:

Ահա, բնդհանուր առմամբ, հայկական պա-  
հանջներու ամբողջութիւնը, զոր մշակեց հայկական  
անդրանիկ համազումարը, 1906-1907 թուականնե-  
րուն:

Ուշագրաւ է այն հանգամանքը, որ այդ թուա-  
կաններուն հայկական պահանջներու գլխաւոր կեղ-  
րոնը կը դառնար երեք կարևոր հարցերու շուրջ.

ա) Հայերը փաստօրէն կ'ուզէին հաստատել  
ոուս քաղաքացիներուն հետ.

բ) կ'ուզէին բարելաւել գիւղացիներու տնտե-  
սական վիճակը.

գ) Ձեռք բերել հայ մշակոյթը պարպացնելու հա-  
մար տանելի պայմաններ:

Ոչ մէկ խօսք ինքնավարութեան, անջատման



մասին: Այդ պիսի պահանջ պոյու թիւն չունի միտքերու մէջ անգամ: Քաղաքական գործիչներս ու կուսակցութիւնները իրենց ամբողջ ու շաղկապութիւնը կեդրոնացուցած էին տաճկահայկական վիլայէթներու վրայ:

Այստեղ կարևոր կը համարեմ մէջբերել Թիֆլիսի ժանտարմներու պետի Հետ ունեցած իմ խօսակցութիւնը համազուտարէն անմիջապէս ետք: Ես խօսք էի տուած, որ հայկական համազուտարը պիտի չընթանայ ոուս պետական շահերուն հակառակ: Այցելութեան մը ընթացքին, երբ ժանտարմներու պետը հետաքրքրուեցաւ համազուտարի աշխատանքներով եւ ես պատմեցի իրեն, որ հայերու պահանջները բացարձակապէս տնտեսական են եւ մշակութային, որ՝ հայ քաղաքական միտքը պահած է Տաճկահայաստանով եւ վիլայէթներով, ան ինձ պատասխանեց.

«Տաճկահայկական վիլայէթները ազատ չեն: Անոնք ունին իրենց ապագայ տէրը: Դա՛ Ռուսաստանն է, առանց որո՞ւ գիտութեան եւ խորհուրդի պէտք չէ, որ գբազիք այդ հարցով: Ահա թէ ինչո՞ւ մենք կը հետապնդենք Հ. Յ. Դաշնակցութիւնը կուսակցութիւնը»:

Համազուտարը վերջացաւ: Արձանագրութիւնները պատրաստուեցան: Անոնց տակ ստորագրեցին 1300 անձեր եւ թուղթերը ուղարկուեցան Փեթերպուրգ:

Որեւէ անմիջական ազդեցութիւն կամ նշանակութիւն ունեցա՞ւ համազուտարը կովկասահայերու համար: Ի հարկէ, ոչ: Սակայն, համազուտարը առաջին անգամ քով քովի բերեց հայ մտաւորականու-

թիւնը եւ ստեղծեց կովկասահայ մէկ հեղինակաւոր մարմին: Բացի էջմիածինէն, մենք որեւէ ուրիշ կեդրոնական մարմին չունէինք, որուն շուրջ կարողանար համախմբուիլ կովկասահայութիւնը: Թրքահայութիւնը մեզմէ աւելի երջանիկ էր այդ տեսակէտին: Անոնք ունէին Սահմանադրութիւն, կեդրոնական հիմնարկութիւններ Պոլսոյ մէջ եւ գաւառները:

Համազուտարը ցոյց տուաւ, որ հնարաւոր է հայերու միութիւնը, միասնարար հանդէս գալու հայկական շահերու պաշտպանութեան համար: Այնուհետեւ 1914 եւ 1917 թուականներուն, պատերազմի եւ յեղափոխութեան օրերուն, դիւրին եղաւ արդէն հրախիլել երկրորդ եւ երրորդ հայկական համազուտարները:

Երբ գումարուեցաւ Պետական Դուման, հայ պատգամաւորները զբին ժողովին առջեւ այն բոլոր պահանջները, որ որոշուած էին հայ համազուտարին կողմէն: Որպէս Պետական Դումայի անդամներ՝ հայերէն ընտրուեցան պրն. Պապաջանեան, Աթարեկեան, Տիգրանեան, Ա. Էտիքեան, Պետրոսեան, Սաղաթլեան եւ Ալվազեան:

Պէտք է ըսել, որ շնորհիւ ընտրութիւններու թերի կազմակերպման եւ օրէնքի խստութեան, հայկական ընտրութիւնները այնքան ալ յաջող չէին պատկաճաւորներու տաղանդի տեսակէտին: Սակայն, անոնք իրենց կրցածին չափ պաշտպանեցին մեր տնտեսական եւ մշակութային պահանջները:

25 երկար տարիներ են անցած հայկական առաջին համազուտարէն, բայց մեր այն ժամանակուան պահանջներէն չարք մը խնդիրներ մինչեւ այսօր ալ

կը պահեն իրենց այժմեականութիւնը: Հայ գիւղացին հողագործի է, իր հողերը չեն բաւեր իր կարիքներուն: Ճիշդ է, այսօր չկայ սուսներու պայթիւր, բայց փոխարէն կը հետապնդուի թուրքերու պայթիւր եւ հայկական հողամասերը կը բնակեցուին թուրքերով:

Շարք մը հարցեր ալ գոյութիւն չունին այլեւս. օրինակ, դպրոցներու ազատութեան խնդիրը: Հայ ժողովուրդը բոլորեց քաղաքական տարրեր շրջաններ ու բացարձակ անկախութենէն ինկաւ խորհրդային իշխանութեան տակ: Մենք այլեւս չենք մտածեր ձեռք բերելու կոմկասի մէջ պաշտօնավարելու իրաւունք, սակայն, կորսնցուցած ենք ազատութեան տարրական իրաւունքը: Այլ են մեր այսօրուան պահանջները, որոնց համեմատ մեր երբեմնի առաջադրութիւնները այնքան համեստ եւ խոնարհ էին: Այս տարօրինակութիւնը կարմիր գիծի պէս պիտի անցնի մեր հետագայ պատմութեան մէջ:

Ինչու է, այն ժամանակուան իշխանութիւնը հայերին կը համարէր ուժեղ կազմակերպուած, յեղափոխական տարր ու բացասական վերաբերում ունէր ղեկի մեզ. իսկ ղեկի վրացիները վերաբերմունքը աւելի տանելի էր, շնայած որ վրացիներու պահանջը աւելի կտրուկ էր ու խիստ: Իշխանութեան աչքին՝ վրացիները իրենցմէ մեծ ուժ մը չէին ներկայացրնէր:

Ինչո՞ւ այս տարբերութիւնը: Ինձ յաճախ կը հարցնէին այս մասին ու կը կարծեմ, որ երկու հանգամանք կը նպաստէին այդ վերաբերմունքին: Նախ՝ հայերու մասին այն կարծիքը գոյութիւն ունէր, որ հայերը խորամանկ են, ուժեղ, լաւ կազմակերպուած

եւ հարուստ, որ հայերը իրենց խոնարհ արտաքինի տակ կը կարողանան թաքցնել իրենց ուժն ու ծրագիրները: Մինչդեռ վրացիներու մասին այն կարծիքը գոյութիւն ունէր, որ աւելի ազմկոտ են, թեթեւաժիտ, շուտ են թարկուող ազդեցութեան եւ, ինչ որ պիտաւ սրն է, գործի են դրամական միջոցները:

Պէտք է բնել, որ մենք՝ հայերս ալ՝ վրացիներու մասին նոյն կարծիքն ունէինք: Իրենց համազուտարի խիստ պահանջները կը համարէինք աւելորդ, անտեղի եւ ոչ-գիւտնապիտական:

Համազուտարէն ետք, նախքան պատգամաւորներու ցրտիլը, ճաշակցան մը արուեստաւ կուրի ափին վրայ գտնուող «Ռոթաշարա»-ի այգիին մէջ:

1904-8 թուականներուն, ամէնէն աչքի ինկող ղէպքերը վերոյիշեալ երեք ղէպքերն էին՝ հայկական համազուտարը, հայ-թաթարական ընդհարումները եւ Դաշնակցութեան դատավարութիւնը:

1908ին կը սկսի յետադէմ իշխանութեան ուժեղացումը եւ քաղաքական բոլոր կուսակցութիւնները կ'անցնին ստորերկրեայ աշխատանքներու:

Գլուխ Ե.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԵՏԱԴԻՄՈՒԹԻՒՒՆԸ  
ԵՒ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ  
(1905-1907ԻՆ)

Կան գետեր, որոնք առաջոտ հարթավայրերու կամ լեռներու վրայ կը հոսին երկրի մակերեսով, յետոյ գետնի տակ կ'անցնին, երկար ճամբորդութենէ յետոյ, մէկ ալ նորէն մակերես կ'էլլին: Այնպէս որ անձանծօթ մէկը կրնայ կարծել, թէ առաջին անգամն է, որ գետը կը ժայթքէ հողի ներքին շերտերէն:

Նոյնը կարելի է բռնել և յեղափոխական շարժումներու մասին: 1905ին, կարծես թէ առաջին անգամ ներքնայարկերէն փողոց էին եկած կազմակերպչու ամ յեղափոխական ու ժերը իրենց զանգու ամենրու հետ մէկտեղ, բայց երբ յետագոյն իշխանութիւնը յաղթեց, նորից այդ ուժերը ներքնայարկ մտան, օր մը անշուշտ կրկին դուրս գալու համար:

Շէշտեցի արդէն, որ Թիֆլիսի քաղաքագլուխի պաշտօնը իւրայատուկ պայմաններ կը ներկայացունէր: Մէկ կողմէն կապուած էր երկրի բարձր իշխանութեան հետ, իսկ միւս կողմէն՝ ներքնայարկի մէջ գտնուող յեղափոխական կազմակերպութիւններու հետ: Այդ կազմակերպութիւնները բազմաթիւ առիթներով գիծուս կ'ընէին ինձ, երբ իրենց անդամներէն ոեւէ մէկը կը ձերբակալուէր, կամ կու սակցուէր: Իսկ անուրիկը յայտնի կը գտնուար իշխանութեան: Դատական հիմնարկութիւններու մէջ,

պաշտօնիս բերու մով, կը մասնակցէի որպէս միջնորդ կամ իրբէս գասաւ օր և այդ ուղղութեամբ հարուստ յիշողութիւններ ունիմ:

1905ի յեղափոխութեան ընթացքին, առաջին շարքերու վրայ կանգնած էին Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը և վրաց սոցիալ-դեմոկրատ մենչէիկեան կազմակերպութիւնը: Երկրորդ շարքերու վրայ կը գտնուէին սոցիալ-դեմոկրատ բոլշէիկները, սոցիալիստ-յեղափոխականները, հնչակեանները և յետոյ ազգայնական Ֆեղերախոսները:

Այս բոլոր կու սակցութիւնները մէկ նշանաբան ունէին իրարու հանդէպ. «Քալիլ առաւմոճիկն, բայց լիկնիլ միասին»: Որոշ համաձայնութիւն գոյութիւն ունէր անոնց մէջ զանազան տեխնիք հարցերու շուրջ: Միթիւններու ատեն պայմանաւորուած էր կու սակցական հոնտորներու մասնակցութեան թիւր:

Երևանեան հրատարակի վրայ կամ հայկական Հաւաքար թաղի և զանազան թաղամասերու մէջ կատարուող բազմամարդ միթիւններու ատեն, կու սակցութիւնները մրցումի դուրս կու գային իրարու հետ: Վրացի մենչէիկները ամէն կերպ կը ջանային հայկական զանգու ամները գատել շ. Բ. Դաշնակցութեան և կապել իրենց, բայց չէին յաջողեր: Իրենց կողքին մենչէիկները ունէին հայկական փոքրիկ խմբակ մը, որ կ'աշխատէր այդ ուղղութեամբ: Յայտնի էին Ա. Երզնկեան, Արշակ Զուրաբով և Խանոյեան: Մենչէիկներու և բոլշէիկներու բաժանում մէն յետոյ Խանոյեանը, Սա. Ծահու մեանը, ԲԱ-յանցարեանը և Տէր Պարտուեանը (Կամսն) գլխաւորեցին բոլշէիկեան կազմակերպութիւնը:

Շատերը կը գարձանան, թէ որտեղէն առաջ եկան բողեւիկները, որ 1917-20 թուականներուն տէր գարձան ողջ Ռուսաստանին: Կարևոր կը համարիմ կանգ առնել բողեւիկներու՝ ուսական բնդհանուր բանու որական կուսակցութիւնէն բաժանումին վրայ: Սակայն, պիտի ըսեմ որ 1905ին եւ հետո կի այն միտքէն, թէ բողեւիկ առանձին անհատներ, տարիներ ետք, պիտի կրնան իրենց ձեռքն առնել Ռուսաստանը:

Քաղաքապետութեան սրահներու մէջ, բողեւիկները զեւ այն ժամանակ կը յայտարարէին բնկերային յեղափոխութեան անհրաժեշտութիւնը: 1905ի յեղափոխութիւնը, իրենց տեսակէտով, յեղափոխութեան վերջնական փուլը չէր: Ռամկավար ապստամբութիւնները բաւարար չէին բանու որ դասակարգի համար, այլ բոնի ու ժով պէտք էր տապալել իշխանութիւնը, հրախրել Սահմանադիր ժողով եւ իրականացնել բնկերային յեղափոխութիւն:

Այն ժամանակ, այդ ճատերը ցնորական կը թրուէին: Սակայն, զկարգերը եկան տպացուցելու, որ բողեւիկները ոչ միայն բոնի ու ժով տապալեցին իշխանութիւնը, այլև ցրեցին Սահմանադիր ժողովը՝ իրենց ծրագիրները իրականացնելու համար:

Յաճախ կը հանդիպէի բողեւիկներուն այլ կուսակցութիւններու պատկանող անհատներու հետ՝ կողք կողքի պայքարելու ատեն ցարտկան բոնակալութեան զէմ, որու մէջ ամէնքս կը տեսնէինք Ռուսաստանի մեծագոյն շարիքը: Մինչև 1903, գոյութիւն ունէր սոս սոցիալ-դեմոկրատական բանու որական մէկ կուսակցութիւն: 1902ին, Բրիւսէլի հա-

մագումարին մէջ, որ յետոյ անցաւ Լոնտոն, առաջ եկան ու մեզ բախումներ եւ կուսակցութիւնը բաժնուրեցաւ երկու մասի՝ մեծամասնականներու (բողեւիկ) եւ փոքրամասնականներու (մենչեւիկ): Առաջին թեւը կը պիտաւ որքը Լենինը, իսկ երկրորդը՝ Մարտովը:

Երկու թեւերու անհամաձայնութիւնները պիտաւ որարար կը դառնային կազմակերպման եւ գործելակերպի խնդիրներու շուրջ: Փոքրամասնականները կը կարծէին, որ բնկերային յեղափոխութեան կարելի է հասնել աստիճանական գարգացման ճանապարհով, իսկ մեծամասնականները կը պահանջէին բոնի յեղափոխական միջոցներով տապալել իշխանութիւնը եւ հաստատել բանու որական պերիտիանութիւն: Փոքրամասնականները կողմնակից էին անհատական ահարկելու մեներու, ու զոյուած բանու որ դասակարգի անհատ թշնամիներու զէմ. մեծամասնականները կը պահանջէին պանցու ածային ահարկելու մ' ոչնչացնելու համար ամբողջ դասակարգ մը:

Կովկասի բանու որութիւնը կը յարկը փոքրամասնականներուն, մինչդեռ սոս բանու որութիւնը կ'ընդունէր աւելի մեծամասնականներու գործելակերպը: Փոքրամասնականներուն կը պատկանէր եւ Ջուղաշվիլին՝ Ստալինը, որ այսօր Ռուսաստանի բոնակալտն է: Ստալինը քարտու դարն էր վրաց սոցիալ-դեմոկրատիայի հիմնադիր՝ Ն. ժորդանիայի, որ այսօր, որպէս տարագիր, կ'ապրի Փարիզի մէջ:

Կուսակցութեան երկու թեւերուն մէջ գոյութիւն ունեցող կապը պնայով աւելի տկարացաւ եւ կտրուեցաւ՝ շնորհիւ Ռուսաստանի մէջ տեղի ունե-

ցող քաղաքական գահավժ դեպքերուն: Արժէ կար-  
դայ պրն. Սպերեղոնսփիշի շահեկան մէկ ուսումնա-  
սիրութիւնը (տպուած Փարիզ, 1922ին, 500 էջ), բող-  
շէ, իկններու մասին, անոնց սկիզբի օրերէն մինչեւ իշ-  
խանութեան անցնիլը:

Մենք առիթ ունեցանք վերը յիշելու, որ ոուսա-  
կան յեղափոխութեան սկիզբի օրերէն իսկ, յեղափո-  
խական կազմակերպութիւնները դուրս եկան նկուզ-  
ներէն և սկսան բացայայտ կերպով խօսիլ և ճատել:  
Առաջին քայլը ներքին գործոց նախարար Պիւլիբու-  
պանովիւնն էր, որ սեղի ունեցաւ 1904 Յուլիս  
15ին: Անոր յաջորդեց իշխան Միրսկին, որուն կառա-  
վարութեան շրջանը որակուեցաւ «Փարուն» բառով:  
1904-5 թուականներու ձմեռան, բոլորին լեզուները  
բացուեցան, և այնուհետեւ սկսաւ ցոյցերու և մի-  
թինկներու ամբողջ շարան մը: «Փարնան» հոսանքը  
տարածուեցաւ ամբողջ Ռուսիոյ մէջ: Իշխանութիւնը  
ստիպուած եղաւ դիմելու նոր բունութիւններու:

Երբ լոյս տեսաւ ցարի հրովարտակիր, ժողովուրդը  
բառիս յայն իմաստով փողոց թափեցաւ: Ամէնքը կը  
կարծէին, որ նոր դարազրուի մը կը բացուի ոուս  
պատմութեան մէջ: Նորէն միթինկներ և ցոյցեր, նո-  
րէն ճատեր ու ճատեր: Թիֆլիսի մէջ աչքի կը գարնէր  
երիտասարդ հայ մը՝ Սաշմանեան (Դե.), որ իր կրա-  
կոտ ճատերով կը ներկայացներ իշխանութեան ծի-  
ծաղկի կողմերն ու հասարակութեան կ'աւետէր նոր,  
երջանիկ օրերու պալուստը:

Իշխանութիւնը սակայն քնած չէր: Ան կը լարէր  
իր ցանցերը: Այս վիճակին մէջ յեղափոխական կու-  
սակցութիւնները պէտք է որ իրենց դիրքը ճշգրիտ

կատարուող դեպքերու հանդէպ: Ամէն մէկ առիթէն  
օգտուելով, յեղափոխականները կը ջանային բարձր  
պահել ժողովուրդի տրամադրութիւնները:

Օգոստոս 29ին, քաղաքային վարչութեան սրա-  
շին մէջ նշանակուած կը մեծ համախմբում մը: Ես կը  
գտնուէի Հիւսիսային կողմէս: Ինձ կը փոխարինէր  
պրն. Ք. Վերմիշեանը: Թիֆլիսի նահանգապետը հե-  
տախօսով կ'արգիլէ Վերմիշեանին գումարել այդ հա-  
մախմբումը, որ ժողովրդական բնոյթ կը կրէր: Սա-  
կայն, Վերմիշեան կը պատասխանէ, թէ ինք անկարող  
է ամբողջ առաջն առնել: Ժողովին կը նախապահել  
յայտնի փոքրամասնական էլիտայի եղբայրը, որ  
դիմելով ժողովին կը յայտնէ նահանգապետի որո-  
շումը և կ'առաջարկէ, որ սրահէն դուրս կլինեն  
անոնք, որ կը վախճան: Սրահը կը մտնէ սպայ մը՝  
առաջարկելով բոլորին ցրուիլ: Սակայն, ոչ ոք կը  
չարժուի իր տեղէն: Այն ժամանակ, կողակները կը  
սկսին կրակել ժողովուրդի վրայ:

Սարափելի իրարանցում կը սկսի անցնել ժողո-  
վուրդին մէջ: Կը սպաննուին 35 հոգի և ծանր կը վի-  
բաւորուին 10 հոգի: Սրահը ամբողջապէս կը ներկուի  
արիւնով:

Նոյն պատմութիւնը ուսական բազմաթիւ քա-  
ղաքներու մէջ: Բայց որքան վճռական կը դառնար  
իշխանութիւնը պայքարի մէջ, այնքան աւելի կը  
սաստկանային ժողովրդի ցասումն ու բողոքը: Ժո-  
ղովրդի և կառավարութեան միջեւ գոյացած վիճը  
գնայով աւելի կը խորանար:

Երբ 1905 թուին շրտաարակուեցաւ ցարի հրո-  
վարտակը ազատութիւններու մասին, ժողովուրդը

բաժնուեցաւ երկու մասի. մէկ մասը մնաց հաստա-  
րիմ յեղափոխական սկզբու նշներուն, իսկ միւսը  
կառչեց իշխանութեան: Ոստիկանութեան բաժան-  
մունքը Փեթերպուրգէն դիմեց դատարանին նոր  
ձեւերու: Ակսա կազմակերպել ջարդեր, սպանու-  
թիւններ և հայրենասիրական ցոյցեր: Այդպիսի ցոյց  
ժր տեղի ունեցաւ նաև Թիֆլիսի մէջ, Հոկտեմբեր  
22ին:

ժողովուրդը դրօշակներով և սուրբերու նկար-  
ներով կ'անցնէր Թիֆլիսի զիտաւոր փողոցներէն դե-  
պի Փոխարքայի պալատը: Անոր կը հետևէին ոստի-  
կանները, գործերը և զինուորական դպրոցի աշա-  
կերտները: Յոյցին շմանակցողները մայիլերու  
վրայէն կը դիտէին: Յանկարծ ատրճանակի պայթիւն  
ժը լսուեցաւ: Պարզ էր, որ ազդանշան ժը կը տրուէր:  
Զորքերը սկսան կրակել ժողովուրդին վրայ: Կոզակ-  
ները սկսան մտնել տուները և սուիճներով մեռցնել  
մարդիկ:

Առաջին Գիմնագիտնի աշակերտութիւնը նոյն-  
պէս ենթարկուեցաւ ջարդի: Կոպակները ներս խու-  
ժեցին «Թիֆլիսի Թերք» խմբադրատունը և հայ-  
կական ակումբը՝ իրենց արիւնտ գործը լրացնելու  
համար:

Այդ ժամին, մենք ժողովի նստած էինք քաղա-  
քային վարչութեան հետ: Երբ համապարկերու ձայնը  
մեզի հասաւ, անմիջապէս զնացինք Փոխարքայի  
ժօա: Ոստիկանական մասի օգնական գորավար Բա-  
րուշկինը արդէն գեկուցած էր անոր զէպքերու մա-  
սին՝ ամբողջ մեղքը բառնալով ժողովուրդին վրայ:  
Իբր թէ ժողովուրդն էր յարձակուել խաղաղ ցուցա-

բարներու և գորքերու վրայ, անոնք ալ ստիպուած  
էին եղեր զէնքի դիմել ինքնապաշտպանութեան հա-  
մար:

Այսպիսի ծանր օրեր ապրեցաւ Ռուսաստանը  
1905 և 1906 թուականներուն: Քաղաքական կու-  
սակցութիւնները նորէն նկուղները մտան, բայց այս  
անկամ արդէն երկար ժամանակով, ամբողջ 10 տա-  
րի, մինչև 1917 թուականի յեղափոխութիւնը:

Նախքան պատմելը այն մասին, թէ ի՞նչ բրին  
կուսակցութիւնները նկուղներու մէջ, պէտք է լսեմ,  
որ կովկասի մէջ ժողովուրդը օրգանապէս կապուած  
էր իր յեղափոխական կազմակերպութիւններուն  
հետ: Հ. Յ. Դաշնակցութիւնը և վրաց սոցիալ-դե-  
մոկրատները բառիս լայն իմաստով կարողացած էին  
մտնել ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ և իրենց  
կապել պանդուածները: Նոյնը չէր կարելի լսել Ռու-  
սաստանի մասին: 100 միլիոննոց ժողովուրդը, բնա-  
տանքները բնդհանուր մէկ ճակատ կազմելու հա-  
մար: Պրոպագանդի գործը նոյնպէս դժուարու-  
թեամբ կը տարուէր անոնց մէջ և իրենց հաշիւ շտա-  
լով՝ ուսուցանուածները իրենց այս ու այն կողմը կը  
նետէին: Ատոր ապացոյց այն, որ 1917 թուին, ուս  
ժողովուրդի 70 առ հարիւր իր քուէները տուաւ սո-  
ցիալիստ-յեղափոխականներուն, բայց ոչ մէկ տոկո-  
սը պաշտպանեց իր ընտրեալները, երբ բոլշևիկները  
զէնքի ու ժով ցրեցին ուս առաջին Սահմանագիր  
ժողովը:

Երբ յետադիմական իշխանութիւնը ու ժեղացաւ,  
քաղաքական կուսակցութիւնները ենթարկուեցան

Հայածանքներու, ձերբակալու մներու, բայց անոնց գործու նկու թիւը չդադարեցաւ: Կուսակցութիւնները սկսան աշխատիլ եւ ղեկավարել յեղափոխական շարժումները նկու ղներէն:

Յեղափոխական բոլոր կուսակցութիւններու կեդրոնը այդ ժամանակ կը գտնուէր Երկրի մէջ: Բոլշևիկներն էին միայն, որ իրենց կեդրոնը փոխադրած էին Փրննէ: Թողնելով Երկրի մէջ քանի մը անդամներ, կապ պահպանելու համար:

1907 թուին էր, որ իմ աշքերիս առջև տեղի ունեցաւ 200 հազար ուսուցիչ կողոպուտը: Փեթերպուրգէն Թիֆլիս 200 հազար ուսուցիչ էր ուղարկուած, որ պետական գանձարկղէն պիտի փոխադրուէր պետական դրամատունը: Բոլշևիկները գիտէին փոխադրութեան ճիշդ ժամը եւ վճռած էին կողոպուտը ամբողջ գումարը:

Գործը պատրաստուած էր ամենայն հետուութեամբ եւ գաղտնապահութեամբ: Կ. Կոմիտէի անդամներէն շատերը անգամ տեղեկութիւն չուներին այդ մասին: Մրազիբը պատրաստած էր ինքը՝ Լենինը, իսկ գործադրութիւնը յանձնուած էր Տէր Պետրոսեանին, որուն կեղծանունն էր Կամօ: Կամոյի բնտանիքը կը ճանչնամ անձամբ: Իր քոյրը, նոյնպէս բոլշևիկ, կը պաշտօնավարէր քաղաքային վարչութեան մէջ. հիւանդ աղջիկ մը, որ մեռաւ թոքախտէն:

Եւ կ'աշխատէի քաղաքային վարչութեան մէջ, իմ գրասենեակը: Ժամը 12ին, պետական գանձարանէն դուրս կու գայ գանձապահը, կը նստի կառքը եւ ոտքերուն տակ կը տեղադրէ պարկ մը, որուն մէջ կը գտնուէր 200 հազար ուսուցիչի գումարը: Կառքի առ-

ջևէն եւ Լոսէնէն կ'ուղեկցին ձիաոր կողակները: Երբ կառքը կ'անցնի Երևանեան հրապարակը ու կը թեքուի Սոլոյաքեան փողոցը, անկիւնի տան կտուրէն, որ կը պատկանէր իշխան Սուսրաթովին, ուսմբ կը նետուի կառքի մէջ: Երեք ուրիշ ուսմբեր ալ կը նետուին կողակներու վրայ:

Պայթիւնը այնքան ուժեղ էր, որ գրասենեակիս ապակիները կոտորատուեցան:

Օգտուելով խառնաշփոթ վիճակէն, բոլշևիկները գանձապահի ձեռքէն կը խլեն գրամներու պարկը եւ կ'անյայտանան:

Տէր Պետրոսեանը, ինչպէս յայտնի էրաւ հետագային, դրամներու պարկը առնելով կը պատսպարուի մօտակայ տուներէն մէկուն մէջ եւ քանի մը օր ետք, կը յաջողի Ռուսաստանի վրայով անցնիլ Ծինյանդիս՝ գեկուցելու Լենինին եւ յանձնելու գրամները:

Փարիզի մէջ, Արմիենովը, որ այսօր Խորհրդային Ռուսիոյ արտաքին գործոց նախարարն է եւ Փրննէի մէջ կը գլխաւորէ խորհրդային պատուիրակութիւնը՝ գինաթափման համաժողովին, աշխատեցաւ մանրէլ կողոպուտած գրամները եւ այդ պատճառով բանտարկուեցաւ:

Տէր Պետրոսեանը, Միրսկի կեղծանունով, Բերլինի եւ Փարիզի մէջ գլխաւոր գնեց ու փոխադրեց Ռուսաստան բոլշևիկներուն համար, սակայն ձերբակալուեցաւ Բերլինի մէջ եւ, որպէսզի խուսափի Ռուսաստանին յանձնուել, ինքզինք խենթ ձեւացուց: Բերլինի լաւագոյն հոգեբոյժները, քննութենէն Լոք անդամ, չկարողացան երեւան հանել կեղծիքը: Գեր-

մանացիք որոշեցին Տէր Պետրոսեանը յանձնել ուս-  
ներուն, որպէս խենթի: Ռուսները պայմանը ընդու-  
նեցին և ակզափոխեցին Տէր Պետրոսեանը Թիֆլիսի  
Հոգևոր ժարանը, ուր երկու Հոգևորոյժներ՝ Օրբելի և  
Չուփնովսկի կը շարունակեն իրենց հակողութիւն-  
ները: Տէր Պետրոսեանի քոյրը ինձմէ խնդրեց իմանայ  
բժիշկներէն՝ իր եղբօր «հիւանդութեան» մասին: Բը-  
ժիշկները ինձ քսին, որ իրենք կը կասկածին Տէր  
Պետրոսեանի խենթութեան իսկութեան մասին: Տէր  
Պետրոսեան կը ձեռնար այնպիսի խենթ մը, որ իր  
սեփական աղտոտութիւնները կ'ուտէր՝ մնալով մի-  
նակ իր խցիկին մէջ և գիտնալով, որ իրեն զաղտնո-  
րէն կը հետեւին:

Մինչ այդ, Թիֆլիսի բուշուիկները կրցել էին  
կապ հաստատել Կամոյի հետ՝ բժիշկի օգնականի մի-  
ջոցով: Ուղարկելով մէկ ձեռք հագուստեղէն և եր-  
կար պարան՝ հնարաւ որութիւն տալով Տէր Պետրոս-  
եանին զգեստները փոխելու, լուսամուտը կտարելով  
դուրս գալու իր խցիկէն, կախուելով իջնելու Կուր  
վեախ ափը, անցնելու վերայի կամուրջէն և անյայ-  
տանալու: Ոտքի հանուեցաւ ամբողջ ուտիկանու-  
թիւնը, բայց ապարդիւն: Բանտարկուեցաւ Կամոյի  
քոյրը, որմէ ոչ մէկ տեղեկութիւն կրցան ստանալ:

Հետագային, Տէր Պետրոսեան նորէն եկաւ Թիֆ-  
լիս և կազմակերպեց փոստի կողոպուտը: Գործը  
վերջացնելէն ետք, եկաւ քաղաքային վարչութիւն,  
որպէս անմեղ մէկը և յետոյ նորէն անյայտացաւ  
աննկատ կերպով:

Տէր Պետրոսեան ի վերջոյ ձերբակալուեցաւ իշ-  
խանութեան կողմէ, դատուեցաւ և աքաղորուեցաւ

Սիբերիա: 1917ին ազատելով՝ եկաւ Թիֆլիս և մե-  
ռաւ՝ իյնալով օթոմորիի տակ: Ստալինի յատուկ  
հրամանով օթոմորիի վարիչը անմիջապէս գնդակա-  
հարուեցաւ:

Բուշուիկները թուով շատ քիչ էին Կովկասի մէջ,  
բայց միշտ աւելի եռանդուն և գործունեայ էին:  
Շատեր, որոնց ևս կը ճանչնամ դեռ 1905 թուակա-  
նէն, այսօր Անդրկովկասեան Հանրապետութիւննե-  
րուն և Ռուսաստանի մէջ առաջնակարգ դեր կը  
կատարեն, ինչպէս օրինակ՝ Մախարաձէ, Էլիաւա,  
Օրեխելաշվիլի, Երզնկեան, Պանոյեան, Յիսակայա և  
վերջապէս Ջուղաշվիլի — Ստալին: Այս հանգաման-  
քը ցոյց կու տայ, որ յեղափոխութեան յորձանքը չէր,  
որ վեր բարձրացուց այս մարդիկը, այլ այն յամառ,  
յեղափոխական աշխատանքը, որուն հետեւեցան ա-  
նոնք վերջնական նպատակի համար՝ քսան տարի շա-  
րունակ ու հասան իրենց նպատակին:

Ողջիւյլ-դեմոկրատ փոքրամասնականները  
(մենչուիկները), այդ ժամանակ, գրադած էին մաս-  
նակի ահարկու մներով: Անոնք սպաննեցին շտաբի  
վեա Գրեազնովին և շարք մը ուտիկաններ, ժան-  
ոարմներ: Կառավարութիւնը կը պատասխանէր  
'արդելով, որմէ կը սուսէր ժողովուրդի ոչ մեկաւ որ  
'ասը և ևս: Թիֆլիսի դատաւորներէն մէկը ինձ կ'ը-  
սէր.

«Եթէ ոճրագործութեան վայրիճ վրայ բռնուի  
ոեւէ մէկը սեւ շապիկով, ան պէտք է դատուի որ-  
պէս ահաբեկիչ: որովհետեւ եթէ ան չէ սպաննած,  
միեւնոյնն է՝ օր մը պիտի սպաննէ ոեւէ մէկը»:

Հաւ կը յիշեմ երկու այդպիսի դէպքեր:



Անգամ մը, նստած Թիֆլիսի նահանգապետ՝  
Կառլ Ծոն Տրատրենրերգի մօտ, կը գրուցէինք զոր-  
ձերու մասին: Յանկարձ լուսեցան հրացանի համա-  
գարկեր: Նահանգապետը իր գինու որներէն մէկը ու-  
ղարկեց իմանալու ելելու թիւը: Կէս ժամէն, գին-  
ւորը վերադարձաւ եւ իր գիւղացիական պարզու-  
թեամբ գեկուցեց: «Այնպէս որ, Ձերդ Գերագանցու-  
քիւն, փողոցի մէջ մէկ ոստիկան եմ սպաններ եւ  
փախեր: Մեր գինու որները կը ջարդեն մօտակայ  
տան բնակիչները: Դու որ կողպած եմ եւ կ'աշխա-  
տիմ ներսը»: Նահանգապետը իսկոյն ուղարկեց իր  
համարակից՝ զէպթի առաջին առնելու համար: Համ-  
արգը վերադարձաւ եւ գեկուցեց, որ գինու որները  
սպաննած են տան բոլոր սպամարդ բնակիչները,  
Թալանած են տունը եւ քաշուած:

Երկրորդ զէպթը հետեւեալն էր:

Թիֆլիսի մէջ կար ոստիկանապետ մը, Մարտի-  
նով, որ Թիֆլիսի սպաներէն էր եւ աւելի ուշ դարձաւ  
Բագուի քաղաքապետ: Յեղափոխականները քանի մը  
անգամ փորձեցին սպաննել զինք, բայց անյաջող: Օր  
մը, նստած էի իր մօտ, լուսամուտի առջև: Մարտի-  
նովը խնդրեց տեղափոխուիլ ուրիշ տեղ՝ պատճառ  
բռնելով, որ կրնան զիս իր տեղը բնդու նել եւ սպան-  
նել: Քանի մը օր ետք, ազնուական Գիմնագիտնի  
չէնքին առջև, իր վրայ ու մը մը նետեցին: Իշխա-  
նու թիւը վրայ հասնելով՝ անմիջապէս խուզարկած  
էր Գիմնագիտնի չէնքը եւ սպաննած տեսուչ՝ Ձին-  
վաղ զէն, որ ի հարկէ ոչ մէկ կապ ունէր ահարկելու մին-  
հետ:

Այս օրինակներէն պարզ է, թէ ինչպիսի սաստ-

կութեամբ եւ կատաղութեամբ կը տարուէր կոխը  
իշխանութեան եւ ժողովուրդին միջև:

Ժողովուրդը ուրիշ միջոց չունէր պայքարելու իր  
ազատութիւններու համար: Չկար ոչ մէկ օրինական  
համարայ պայքարի համար: Վիճ մը բացուած էր իշ-  
խանութեան եւ ժողովուրդի միջև: Կեղրոնական  
Ռուսիոյ մէջ կացութիւնը աւելի վատթար էր: Այն-  
տեղ մեծ վիճ մը կար ոչ միայն իշխանութեան եւ ժո-  
ղովուրդի, այլեւ ժողովուրդի եւ մտաւորականու-  
թեան միջև: Ահա թէ ինչո՞ւ, բողջեիկեան յեղափո-  
խութեան ժամանակ, զիւղացիութիւնն ու գինու ո-  
րութիւնը բողջեիկներու գիրկը նետուեցան եւ իրենց  
հաշիւները մաքրեցին երկու թիւ հետ այ:

Կովկասի մէջ, բարերարտարար, վերջին երե-  
ւոյթը գոյութիւն չունէր: Իշխանութիւնը հաստատ  
Թշնամութեամբ կը նայէր քննադատական բոլոր  
ձգտումներուն: Ամէնէն անմեղ զիմաղրութիւնը եւ  
ձախակողմեան ահարկչական փորձը մէկ ակնոցով  
կը դիտուէր իր կողմէ. այս հանգամանքը շատերը կը  
դատէր բնդ զիմաղիրներու շարքը: Յետադիմական  
կատապարտութիւնը թոյլ չէր տար որեւէ ազատ ար-  
տայայտութիւն: Կը յիշեմ, թէ ինչպէս հսկողութեան  
եւ հակակշիռ կ'ենթարկու լին այն բոլոր գումարնե-  
րը, որոնք կը յատկացու լին նոյնիսկ այնպիսի անմեղ  
հիմնարկութիւններու, ինչպիսիս էր, օրինակ, հրչէջ-  
ներու գումարը: Ամենահասարակ պաշտօնականներու  
նշանակու մը կախու մ ունէր իշխանութեան հաստա-  
տումէն, որովհետեւ իւրաքանչիւր պաշտօնեայի մէջ  
անոնք կը տեսնէին քաղաքական անբարեկարգի մէ-

կը: Այս հանգամանքը կը զրգուր ամբողջ ժողովուրդը՝ բնոյգլմ իշխանութեան:

Պատմեմ զկպք մը եւս, ցոյց տալու համար, թէ ինչպիսի անմտութեամբ իշխանութիւնը կը թափեր քաղաքացիներու արիւնը եւ հրդեհի կու տար անոնց կայքերը:

Ձիւնուորական շուկայի մօտ, անծանօթ մէկը ուսմբ մը կը նետէ կողակներու վրայ: Դէպքը տեղի կ'ու նենայ հայկական ներսիսեան զպրոցի մօտերը: Անմիջապէս թնդանօթներ կը բերեն, կը ոմբակոծեն եւ կ'այրեն զպրոցը, իսկ շէնքէն ելլողները կը սպաննեն:

Ինչ խօսք կարող է լինել համերաշխութեան եւ խաղաղութեան մասին այսպիսի մթնոլորտի մէջ: Գոյութիւն չունէր ազատ խօսք, մամուլի ազատութիւն. քաղաքային վարչութիւնների իրաւունքը կրճատուած էր. քաղաքական կուսակցութիւնները նկուզներն էին մտած. գիրը երկրի խորքերն էր մտած՝ նորէն դուրս գալու համար:

Անսովոր աչքերու համար, յեղափոխութիւնը վերջացած էր արդէն: Բայց ներքնայարկերու մէջ կը պատրաստուէին յեղափոխական նոր շարժումներ:

Մենք այ մեր պատմութեամբ հետեւինք նկուզային այդ շարժումներուն:

ԳԼՈՒԽ Զ.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԿՈՒՂԱՅԻՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՒ ԻՄ ԿԱՊԸ ԱՆՈՒՆՑ ՀԵՏ  
(1907-14)

Մտնելով նկուզները՝ կուսակցութիւնները շղաղրեցուցին իրենց կազմակերպչական եւ քարոզչական աշխատանքները: Հայաժուտած իշխանութենէ՝ անոնք ասաջին հերթին ջանացին լեցնել ձերբակալուած եւ աքսորուած անդամներու տեղը: Կուսակցութիւններու ասաջին քայլն եղաւ կարգի բերել ներքին մեքենան, կապ հաստատել կեդրոնի եւ ծայրագուտներու միջեւ, այսինքն՝ լծուիլ գուտներքին աշխատանքներու:

Քաղաքական զկպքերը ծանր հարուած էին հասցուցած եւ կուսակցական շարքերուն: Շատ համակիրներ քաշուած էին ասպարէզէն եւ մեծ թիւով կուսակցականներ ի սպաս չկորսացած: Ինչ բակ կ'ու գէ, որ կուսակցական եռանդուն եւ հաստատարիմ տարրը միշտ շարքերուն հետ էր փտանցի մենագիծուար րուպէներուն անկամ:

Կուսակցական ուժերու վերահաստատման համար, կուսակցութիւնները բնտրած էին երկու ճանապարհ. մէկը՝ արհեստակցական միութիւններու կազմակերպումը, իսկ միւսը՝ ժողովրդական համախարանի եւ մեծերու համար բացուած զպրոցներու բողին տակ դասախօսութիւններու կազմակերպումը:

Արհեստակցական միութիւններու կազմա-  
[կերպման աշխատանքներու առընչութեամբ, վր-]\*  
րացի սոցիալ - դեմոկրատները չափազանց մեծ  
եռանդ կը թափէին այս ձեռնարկներու մէջ, ես կ'օգ-  
նէի անոնց խօսքով եւ գործով: Արհեստակցական  
միութիւններու մէջ, դասախօսութիւններ կու տայի  
արհեստակցական շարժումներու մասին, կամ հան-  
դէս կու գայի որպէս հաշտարար դատաւոր, բան-  
ւորներու եւ գործատէրներու միջեւ:

Արհեստակցական միութիւններու մէջ, կարելի որ  
տեղ կը ըլնէր այն հարցը, թէ այդ միութիւնները  
պէտք է լինին կուսակցական, թէ անկուսակցական:  
Հ. Յ. Գաշնակցութեան կարծիքով արհեստակցական  
միութիւնները պէտք է լինին կուսակցական, իսկ  
վրաց փոքրամասնականները կը պնդէին անկուսակ-  
ցական կազմակերպութիւններու վրայ:

Վրացիներու տեսակէտը պարզ կը. անկուսակ-  
ցական անուան տակ՝ անոնք կ'ուզէին զբաւել հայ  
բանուոր գանդուածները եւ իրենց ուզած ձեռքով զե-  
կապարել միութիւնները: Հ. Յ. Գաշնակցութեան  
մտածողութիւնը այլ կը. եթէ արհեստակցական  
միութիւններու զերբ քաղաքական պայքարն էր,

(\*) Յուշագրութեան մէջ, առնուազմ տող մը կը պահու-  
տեմնի՝ «Հարեհիք» ամսագիր, Ժ. Տարի, թիւ 9 (117), Յուլիս  
1932, էջ 96բ.: Մեր կողմէ աւելցուցած ենք փակագիծներու մէջ  
առնուած բառերը՝ պարբերութիւնը ամբողջացնելու նպատա-  
կով:

ԽՍՀՄ.

այսպէս ուրեմն դժուար էր անոնց կեանքը պատկ կու-  
նակցութեան ընդհանուր կեանքէն ու շարժումնե-  
րէն. կուսակցականօրէն կազմակերպուած միութ-  
իւններն են, որ ի վերջոյ մաս պիտի կազմեն արհես-  
տակցական ընդհանուր Գաշնակցութեան:

Կր յիշեմ այդ միութիւններու առաջին ժողովնե-  
րը, որոնք տեղի կ'ու նենային Դիարիխի պարեջրային  
գործարանին մէջ. անոնց կը մասնակցէին բանուոր-  
րական պատգամաւորները, բնտրուած՝ մեծ արհես-  
տանոցներէն: Պէտք է ըսեմ, որ բացի կաշկոյրծա-  
րաններէ, Երկաթուղային եւ հանրակառքի արհես-  
տանոցներէն, աչքի ընկնող մեծ գործարաններ չկա-  
յին, ուր համախմբուած ըլլային բանուորական մեծ  
բազմութիւններ: Թիֆլիս ընդհանուր առմամբ մանր  
արտադրողներու եւ արհեստաւորներու քաղաք էր:  
Բանուորները սիրով կը մասնակցէին արհեստակցա-  
կան շարժումներուն, որովհետեւ իրենց համար այդ  
միակ միջոցն էր խմբովին մասնակցելու գործարա-  
նատիրոջ ղեկ մղուող պայքարին, աշխատավարձը  
բարձրացնելու եւ աշխատանքի ժամերը կրճատելու  
համար:

Իշխանութիւնը ատանձին մտահոգութիւն չու-  
նէր արհեստակցական շարժումներէն: Կովկասը, եթէ  
հաշուի չառնենք Բագուս, ուր նախքան արդի նարե-  
րութեան շնորհիւ հաւաքուած էր մօտ 30,000 բան-  
ւոր, չունէր սուր կերպով զրուած՝ բանուորական  
հարց: Գործարանները, այն ալ քիչ թիւով, ջրուած  
էին ամբողջ Երկրի մէջ. հանդամանք մը, որ կ'արդի-  
ւոր բանուորական գանդուածներուն կեղբոնանալ  
մէկ վայրի մէջ կազմակերպուելու համար:

Շատերուն պարմանք կը պատճառէր այն հան-  
գամանքը, որ կոպկասը՝ ունենալով չափազանց քիչ  
բանու որութիւն՝ Փեթերպուրգ կ'ուղարկէր Պետա-  
կան Դումայի անդամներ, մեծ թիւով ընկերվարա-  
կաններ: Այդ կը բացատրուէր այն բանով, որ Հ. Յ.  
Դաշնակցութիւնը եւ սոցիալ-դեմոկրատները, լինե-  
լով ընկերվարական կազմակերպութիւններ, իրենց  
չարքերուն մէջ ունէին մեծ թուով ոչ-ընկերվարա-  
կան տարրեր՝ գիւղացիներ, արհեստաւորներ, վար-  
պետներ եւ մասամբ միայն բանու որներ: Հայ տարրը  
Դաշնակցութեան զրօշի տակ կը պայքարէր տաճկա-  
հայ ազատագրութեան համար, իսկ վրացիները՝  
իրենց լեզուի եւ ազատութեան համար: Վրաց սոց-  
իալ-դեմոկրատիայի հիմնադիրները եւ պարագը-  
լուիները ամէն պատեհ առիթով կը ժխտէին իրենց  
կազմակերպութեան ազգային ընդթր: Սակայն,  
1917ի դեպքերը եկան հակառակն ապացուցելու:  
Նոյն սոցիալ-դեմոկրատիան էր, որ հոչակեց Վրաս-  
տանի անկախութիւնը՝ վարկելով գոտ ազգային քա-  
ղաքականութիւն: Բայց այս մասին՝ յետոյ:

Արհեստակցական շարժումը կ'ընթանար բաւա-  
րար կերպով: Երկու ժողովուրդներ, վրացիներն ու  
հայերը, կարողացան կարճ ժամանակի մէջ հետեւիլ  
եւ րոպական ազգերու օրինակին: Կասկած չունիմ, որ  
եթէ մենք այ պետական ազատ պայմաններու մէջ լի-  
նէինք, այսօր պիտի դասուէինք քաղաքակիրթ ազգե-  
րու շարքին: Որքան որ ես կը ծանշեմ կոպկասի մեր  
երկու ժողովուրդները, ծանօթ եմ անոնց պատմու-  
թեան, ականատես եղած եմ անոնց տանջանքին,  
թշուառութեան եւ ուրախութեան, վստահօրէն պիտի

պնդեմ, որ անոնց բացասական բոլոր գիծերը կու  
գան օտար պետութիւններու բռնութենէն: Երբ վե-  
րանայ այդ բռնութիւնը եւ մեր երկու ժողովուրդ-  
ները իրենց ճակատագրին տէր դառնան, շատ բացա-  
սական գիծեր պիտի վերանան մեր մէջէն:

Արհեստակցական շարժումը լուսադոյն դպրոցն  
էր կոպկասի բանու որութեան համար. երբ հնարաւոր  
ութիւն ստեղծուեցաւ ազատ զարգանալու՝ այդ մի-  
ութիւնները Թիֆլիսի, Բագուի եւ Երևանի մէջ ի  
այս բերին հարուստ եւ բեղմնաւոր գործունէու-  
թիւն:

Թիֆլիսի մէջ միութեանը յատկացուած էր Ա-  
րամեանի շքեղ տունը, ուր եւ առաջ եկաւ հոյակապ  
կազմակերպութիւն մը: Արհեստակցական միու-  
թիւնները կ'աշխատէին բարեկաւէ բանու որներու  
փծակը: Ես, որպէս քաղաքապետի, բաւական նուրբ  
փծակի մէջ կը գտնուէի. ստիպուած էի հանդէս գալ  
շատ յաճախ ոչ միայն պաշտօնիս շնորհիւ, այլեւ այն  
հեղինակութեան, որ ունէի որպէս քաղաքապետի:  
Միջնորդ դասաւորի գերի մէջ՝ որոշումներ պիտի ար-  
ձակէի բանու որներու եւ գործատիրներու մէջ ծա-  
ցած անհամաձայնութիւններու պարագային: Միւս  
կողմէն, քաղաքային վարչութիւնը կարող էր հրա-  
տարակէլ պարտադիր որոշումներ աշխատանքի կա-  
նոնաւորման համար:

Պէտք է ըսեմ, թէ Թիֆլիսի քաղաքային վարչու-  
թիւնը իր կազմի կրթական ցենզով համարեա՛ առա-  
ջինն էր ոչ թէ սաստանի մէջ, որ կը փնտրէ ամէն  
կերպ թեթեւ ցնէլ աշխատանքի պայմանները, կրճա-  
տել բանու որական ժամանակը, ստեղծել առողջա-

պահական տանելի պայմաններ և կարգաւորել երեւթաներու աշխատանքի պայմանները:

Հենց որ արհեստակցական միութիւնները գգացին իրենք գիրենք ու մեկ և ի վիճակի եղան նոր պահանջներ առաջադրելու գործատէրներուն, սկսան գործադուլները: Գործատէրները չէին համաձայնեք բանու որներու պահանջներուն: Բանու որները կը դադրեցնէին աշխատանքը: Ոստիկանութիւնը կը հակէր չէնքերու վրայ. երկու կողմերն ալ կը դիմէին ինձ՝ բանակցելու և եզրակացութեան մը յանդէս համար:

Կը յիշեմ, որ միջնորդ դատաւորի գերին մէջ հանդէս եկայ հաշտեցնելու հանրակառքի բանու որները իրենց գործատէրներուն հետ, պանրագործները, բաղնիքներու և խանութներու ծառայողները, երկկտրակայանի բանու որները, կաշեկործները: Ուր որ դէպքերու մէջ ալ յաջողեցայ գտնել համաձայնութեան եզր մը: Պէտք է բռնեմ, որ աշխատանքի և դրամապլուխի պայքարի ընթացքին ոչ մէկ արիւնահեղութիւն պատահեցաւ: Թիֆլիսի մէջ և ոչ մէկ ահարկեցութիւն:

Նահանգային իշխանութիւնը երբեմն կը շտապէր ձեռքառնել գործադուլի պարագլուխները, բայց իմ դիմումներուն շնորհիւ բանտարկեալները ազատ կ'արձակուէին: Բոյսը գլխաւորուէն ալ ևս հանդէս կու գայի որպէս բանու որներու ներկայացուցիչ:

Մէկ անգամ միայն ևս հանդէս եկայ միջնորդ դատարանի մէջ որպէս ներկայացուցիչ Բորչալուի գլուխ պանրագործարանի տէրերու, իսկ բանու որներու կողմէն նշանակուած էր բողշեիկ Սպան-

դարեանը: Փոխադարձ համաձայնութեամբ դատարանի նախագահ Նրաւիրեցիք Ստ. Շահումեանը, նոյնպէս բողշեիկ, որ շնայած իր կուսակցական համոզումներուն, ցոյց տուաւ միանգամայն անաչտ վերաբերմունք: Այն ժամանակ, բողշեիկներու հետ դեռ կարելի էր խօսիլ: Ստ. Շահումեանը սպաննուեցաւ իր միւս 25 ընկերներուն հետ 1918ին: Երբ Շահումեանը բանտարկուած էր, իր կինը խնդրեց իմ միջամտութիւնը իշխանութեան առաջ և ևս յաջողեցայ թէթեւեւ իր վիճակը:

Արհեստակցական միութիւնները կ'աշխատէին իրար պաշտպանել և հարկ եղած պարագային կը յայտարարէին ընդհանուր գործադուլ: Քաղաքային վարչութիւնը իր որոշումներու մէջ կ'աշխատէր մօտենայ աշխատանքի 8 ժամեայ սկզբունքին: Կը յիշեմ, թէ ինչպէս հանրակառքի բանու որները կ'աշխատէին 16 ժամ, շահելով օրական միայն 60 կոպէկ (2 Քրանկ) և այն ալ առանց ճաշի դադարին: Դեռ իմ ժամանակ հաստատուեցաւ 9 ժամեայ աշխատանք, իսկ աշխատավարձը բարձրացաւ օրական 2 ուրբիլի: Մենք կարողացանք ապահովել խանութներու երեկոյեան ժամը 7ին կողպելու դրութիւնը և կիրակեօրեայ հանգիստը՝ բանու որներուն համար:

Երբ արհեստակցական միութիւնները ձեռք կը բերէին նորանոր դիւրութիւններ բանու որներու համար, իրենց ևսին կանգնած կուսակցութիւններու հեղինակութիւնն ալ աւելի կը բարձրանար: «Արհեստակցական միութիւններու միջոցով դէպի կուսակցութիւն» ալ կը կուսակցական գործիչներու նշանարանը:

Երբ կը բանտարկու իր կամ աքսորի կ'ենթարկը-  
ւեր ունէ կու սակցական գործիչ կամ երբ կու սակցա-  
կան ձեռնարկ մը յայտնի կը պատնար իշխանութիւն-  
ներու ն, կու սակցութիւնները ի վիճակի շէին դիմելու  
օրինաւ որ պաշտպանութեան. միայն քաղաքագլու-  
սին կը մնար հարկ եղած զիմու մներն ընել, պաշտ-  
պանել, խնդրել կամ թեթեւ վճիռ արձակել, երբ ան  
հանդէս կու գար որպէս գատաւ որ: Այս մասին ունիմ  
հարտայայտեն եւ կը բնորոշեն բարձրն ու ժամա-  
նակը:

Յայտնի սոցիալ-գեմոկրատ Իսիդոր Ռամիչվիլին  
աքսորուած էր Հաշտարխանի նահանգը: Հեռագրով  
ան ինձ խնդրեց միջամտել Փոխարքայի մօտ, որ թոյլ  
տայ իրեն մէկ շարաթով Թիֆլիս գալ՝ տեսնուելու  
համար իր հիւանդ աղջկան հետ: Ռամիչվիլին կը  
խոստանար, որ այդ շարաթուան ընթացքին բնաւ  
պիտի չզրադի յեղափոխական գործունէութեամբ:  
'Իմեցի Փոխարքային՝ Ռամիչվիլիի համար՝ հաստա-  
տելով իր խոստումը, յեղափոխական գործունէու-  
թեամբ չզրադելու մասին: Փոխարքան թոյլատրեց  
Ռամիչվիլիի Թիֆլիս գալը, սակայն ըսաւ .

«Ինչ կը վերաբերի Ռամիչվիլիի ազնի խօս-  
քին, այդ միեւնոյնն է քէ քիֆոյի մանրէն խօսք  
տայ. քէ ինք հիւանդութիւն պէտք չէ առայ բերէ,  
եքէ իյնայ մարդկային մարմնի մէջ»:

Փոխարքան կը ճանչնար անշուշտ յեղափոխա-  
կան գործիչները եւ զիտէր, որ անօգուտ էր անոնց  
խոստումներուն առանձին ու շաղրութիւն դարձնել:  
Սակայն, զիտէր եւ մէկ բան, որ կարելի չէ ու մի գոր-

ծաղրու մով արմատախիլ ընել յեղափոխական շար-  
ժումները: Այս պատճառով յաճախ կը դիմէր գիջու մ-  
ներու:

Փոխարքան կ'ուզէր տեղեակ ըլլալ անցու դար-  
ձին: Կան մարդիկ, որ շատ լաւ կը խօսին: Փոխարքան  
լաւ կը լսէր, զիմացինին հնարաւորութիւն կու տար  
խօսելու: Ան ինձ կը խնդրէր իրեն մօտ տանիլ յեղա-  
փոխական գործիչները: Ես իրեն մօտ տարի գլխաւ որ  
կու սակցութիւններու աչքի ինկոյ թանի մը անդամ-  
ներ: Երկար գրու ցեցինք Փոխարքայի հետ: Այդ այցե-  
լու թիւնները ոչ մէկ վատ հետեւանք ունեցան այցե-  
լուներու համար:

Շատ անգամներ ստիպուած եմ եղեր Փոխար-  
քայի մօտ գնալու եւ խնդրելու բանտարկեալներու  
եւ աքսորեալներու ծանր վիճակը թեթեւցնելու մա-  
սին: Անոնց կիներն ու մայրերը գրեթէ ամէն օր ինձ  
մօտ կու գային նման խնդիրներով: Այսպէս. բարե-  
խօսած եմ Ստեփան Շահումեանի, Նոյ Ռամիչվիլիի  
(որ վերջերս սպաննուեցաւ Փարիզի մէջ), Մերեթելի-  
ի, Ջապարիձի, Էլիաւայի, Տէր Պետրոսեանի եւ  
բայցմաթիւ պաշնակցականներու եւ սոցիալ-գեմոկ-  
րատներու համար:

Շատ ծանր էր իմ վիճակը, երբ ես ստիպուած էի  
պաշտպանել երկու մահապարտ հայ բանուորներ,  
որոնք Ղարաբիլիսի մէջ սպաննուած էին ռուս սեւ հա-  
րիւրակեան ճարտարապետ մը: Ղարաբիլիսի ռուս  
պաշտօնէութիւնը վրդովուած՝ կը պահանջէր մահ-  
ուան պատիժ երկուքին համար ալ: Դատարանը մա-  
հապատիժի որոշում տուաւ: Փոխարքային կը մնար  
փրկել անոնց կեանքը: Մահապարտներու ընտանիք-

ները եկած էին Թիֆլիս: Գալով բնակարանս՝ կ'աղերսէին ծնկաչոք իմ պաշտպանութիւնս, մահուան պատիժը տաժանակիր աշխատանքներու փոխելու համար: Գնացի պալատ: Փոխարքան ինձ լսեց, ապա կանչեց գորքերու հրամանատարը: Վերջինս զեկուցեց իրեն, թէ ուսումնարանը պաշտօնէութիւնը կը գրգռուի եթէ Փոխարքան չհաստատուի մահապատիժը: Փոխարքան դարձաւ ինձ բռնով:

— Կը տեսնէ՞ք՝ այնտեղ կան մարդիկ, որոնք ուրիշ կերպ կը մտածեն: Պետք է անոնց այ բաւարարութիւն տամ: Այդ իսկ պատճառով ես մէկը պիտի ազատեմ, իսկ միւսը պիտի մեռնի: Ընտրեցէք ինքներդ, թէ ո՞րը կ'ուզէք որ ազատուի:

Մահապարտներէն մէկը ունէր կին եւ երկու երեխայ, իսկ միւսը ամուրի էր, բայց ունէր ծերունի ծնողներ: Մանր երկրնտրանքի առջև էի, բայց պետք էր շտապել գոնէ մէկը ազատելու համար: Ես բնտրեցի հայրը, որ գաւակներ ունէր, իսկ միւսը պետք էր ենթարկուի մահապատիժի:

Երբ տուն վերադարձայ, երկու քի բնտանիքներն այ ինձ կը սպասէին: Հագուի ինքզինքս գոպելով՝ հաղորդեցի Փոխարքայի որոշումը:

Բայց ահա նաև զէպք մը, երբ ես մերժեցի իմ պաշտպանութիւնը: Երիտասարդ հայ մը կը նախանձի իր կնոջ հանդէպ բժիշկ Աղամալեանի ունեցած զգացու մներուն համար: Պատրուակ բռնելով կնոջ հիանդութիւնը՝ տուն կը կանչէ բժիշկը: Եւ կը սպաննէ, իսկ մարմինը կտոր-կտոր բնելով կը տեղափոխէր զամբիոյ գի մը մէջ: Յետոյ, իբր թէ ուխտագր-

նացութեան համար՝ կ'երթայ վանք մը, կը ձգէ այնտեղ զամբիոյ դը եւ կ'անյայտանայ:

Գործը կը բացուի եւ դատարանը մահուան կը պատապարտէ յանցանորը: Իր ծնողներն ու կինը շուքած կու լային անվերջ, բայց ես մերժեցի իմ միջամտութիւնը, որպէսզի մեր յարաբերութիւնները Փոխարքայի հետ չխզուին:

Ահա թէ ինչպիսի գործերով ինձ մօտ կու գային եւ իմ միջամտութիւնը կը խնդրէին:

\* \* \*

Թեթև չէր իմ կացութիւնը եւ այն ժամանակ, երբ ես հանդէս կու գայի իբրև դատաւոր:

Ինչպէս յիշած էի վերը, քաղաքային գործերու համար յատուկ ատեան մը գոյութիւն ունէր Թիֆլիսի Դատաստանական Պալատին կից, որուն անդամներն էին՝ Դատաստանական Պալատէն շորս պատուորներ, ազնուականութեան պարագլուխը, քաղաքագլուխը եւ գիւղի տանուտէրը: Ես պատճառ եմ արդէն զէպք մը, Հալաբարի ահաբեկիչներու կեանքէն: Այժմ պիտի պատմեմ երկու այլ զէպքեր, որոնք իրենց ժամանակին մեծ ազնուկ հանեցին կովկասի մէջ եւ որոնց արձագանդները մինչև Փեթերպուրգի Անատը (Գերագոյն Դատարան) հասան: Պետք է ըսել, որ ամբողջ կովկասի համար, այդ պիսի միայն մէկ ատեան գոյութիւն ունէր:

Առաջին գործը կը վերաբերուի իմ վեց հոգիէ բաղկացած խմբակի մը, որու գլուխն անցած էր յայտնի վրացի յեղափոխական՝ Զիւկիչվիլին: Վերջինս, Վրաստանի անկախութեան օրերուն, 1920ին, Թիֆ-

յիսի քաղաքագլուխ դարձաւ, իսկ 1924ին գնդակա-  
հարուեցաւ բոլշևիկներու կողմէ: Պժրակը կը մե-  
ղադրուէր կողակներուն վրայ յարձակում գործելու  
և սպանութիւն կատարելու մէջ: Մեղադրանքը շատ  
ծանր էր: Մեղապարտներուն կը սպասէր երկարամե-  
այ տաժանակիր աշխատանք: Անոնք գերծ էին մահ-  
ւան պատիժէն, որովհետեւ մահուան պատիժ կըր-  
նային արձակել միայն պինտ որական դատարաննե-  
րը:

Գործի պաշտպանութեան համար կանչուած էին  
Թիֆլիսի յաւազոյն իրաւարանները: Սոցիալ-Դե-  
մոկրատ կուսակցութիւնը պաղտնօրէն կը հետեւէր  
գործի ընթացքին և անհրաժեշտ ծախքերը կ'ընէր:  
Ծանր մթնոլորտի մէջ տեղի կ'ունենար դատավա-  
րութիւնը: Յամառօրէն կը խօսէին, որ յեղափոխա-  
կանները պիտի պայթեցնեն դատարանի շէնքը: Հան-  
գամանք մը, որ կը ջլգայնացնէր դատաւորները և  
մեղապարտները: Բոլորը կը սպասէին ծանր դատա-  
վճիռ մեղապարտներու համար: Հինգ օր արդէն տե-  
ւած էր դատավարութիւնը և մօտ էր վախճանին,  
երբ սոցիալ-դեմոկրատներու կոմիտէի անդամնե-  
րէն՝ փաստաբան Դ. Լ. Ինձ մօտ եկաւ և խնդրեց  
կուսակցութեան անունէն, որ կերպով մը վիժեցնեն  
դատավարութիւնը:

Առաջարկը մօտ էր իմ սրտին, բայց ինչպէ՞ս  
ընել: Վճուցի հիւանդ ձեւ անայ: Նախազահին յայտ-  
նեցի, որ տաքութիւն ունիմ և ճաշի դաղարէն ետք՝  
մտայ անկողին: Նախազահը ամէն կերպ ինձ խրնդ-  
րեց, որ չբացակայիմ նիստերէն: Սակայն, իրեն նա-  
մակով մը յայտնեցի, որ հիւանդութեանս լրջութիւնը

Թոյլ պիտի չտայ ինձ քանի մը օր վեր կենայ անկողի-  
նէն:

Նախազահը կասկած յայտնած էր հիւանդու-  
թեանս լրջութեան վրայ, սակայն միւս անդամները  
պնդած էին, որ եթէ բժիշկ մը կը գրէ, որ ինք հիւանդ  
է, պէտք է հաւատայ և խնդիրը փակել:

Քաղաքագլուխ ըլլալուս հանգամանքը ազատեց  
պիս Դատաստանական բժիշկի այցելութենէն, որ  
ստանց դժուարութեան կրնար հաստատել իմ կեղ-  
ծիքը: Անկողին մնացի չորս օր: Դատը յետաձգուե-  
ցաւ և փոխադրուեցաւ Օտեսա, ուր այլ մթնոլորտի  
և կիրքերու խաղաղ միջավայրի մէջ տեղի ունեցաւ  
դատավարութիւնը: Յանցանքին համեմատ թեթե-  
ւոյաւ պատիժը: Գլխաւ որ յանցապարտը, որ հիւանդ  
էր թոքախտով, դատապարտուեցաւ չորս տարի տա-  
ժանակիր աշխատանքի: Սակայն, ճակատագրի բե-  
րումով, 15 տարի ետք, գնդակահարուեցաւ բոլշե-  
ւիկներու կողմէն, Սիրերիայէն վերադարձած իր ըն-  
կերներ՝ Պոմերիկի և Ջուղաշվիլի հետ:

Երկրորդ գործը աչքի կ'իյնար իր անհեթեթու-  
թեամբ և անարդարութեամբ:

Բազուի մէջ կը հրատարակուէր «Բագու»  
անուամբ սուսերէն թերթ մը, որուն խմբագիրը հա-  
յազգի Ք. Վերմիշեանն էր: Երբ գործով Թիֆլիս կու-  
գար, զինք կը փոխարինէր ուրիշ մէկը: Անգամ մը,  
չորս օրով Վերմիշեան Թիֆլիս կու գայ և այլ ժա-  
մանակ թերթը կը շարունակուի լոյս տեսնել իր ստո-  
րագրութեամբ, որպէս խմբագիրի: Թերթին մէջ լոյս  
կը տեսնէ Պարսկաստանէն յօդուած մը, որ կը պա-  
րունակէ Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ հրատարակ-



ւած նամակ մը՝ պարսից Շահին գլխ: Վերմիչեան անփոյթ գտնուած էր՝ բացակայութեան ժամանակ թերթի ձակատէն վերցնելու իր անունը:

Ըստ ուսական օրէնքին, խմբագիրն էր միակ պատասխանատուն թերթին մէջ յայտակարար յօդուածներուն համար: Վերմիչեանը կը բանտարկեն և կը յանձնեն գատական բարձր ատեանին, որուն անդամն էի և: Եւ: Ան կը մեղադրուէր Հ. Յ. Գաշնակցութեան անդամ ըլլալու յանցանքով, որովհետեւ թոյլ էր տուած իր թերթին մէջ տպագրելու կուսակցութեան թուստիկը: Եւ շնայած որ յօդուածը գրուած էր Պարսկաստանէն և ուղղուած էր պարսից Շահին գլխ, Գատաստանական Վարչութիւնը նկատած էր զայն՝ ուղղուած ուսուցարի գլխ: Ինչպիսի՛ նկատանք:

Վերմիչեանը հետոյ էր յեղափոխական հոսանքներէ: Այս՝ նոյն Վերմիչեանն էր, որ շկարողացաւ արձակել 1905 թուի 29 Օգոստոսի քաղաքային վարչութեան սրահին մէջ գումարուած ժողովը, որ վերջացաւ այնքան արիւնով: Յեղափոխականները անարդարօրէն կը մեղադրէին զինք որպէս իշխանութեան կողմնակից, իսկ իշխանութիւնը կը հայածէր՝ որպէս յեղափոխականի: Ան հազիւ ապստեղցաւ անարեկուտ:

Չնայած իմ և ազնուականութեան առաջնորդի բողոքներուն, գատարանը որոշեց ցմահ աքսորել զինք Սիրերիա: Իր փաստարանը գործը փոխադրեց Փեթերպուրգ. ահա թէ ինչու Վերմիչեան երկար ամիսներ բանտարկուած մնաց:

Գործին երկրորդ քննութիւնը իր համար երջա-

նիկ վախճան ունեցաւ: Ան ենթարկուեցաւ 300 ուսուցիչի տուգանքի՝ պարսնուութեան օրէնքները խախտելուն համար և այդպիսով փակուեցաւ խրնդիրը:

Ահա կենդանի նմուշներ ցարական օրերու գատական կեանքէն ու բարբերէն:

Ուրիշ գեղջ մը:

Եօթանասուն տարեկան ծերունի պապափարպաչու գրող մը՝ Ռոստոմով՝ կը հրատարակէր ցրտածք մը, որուն մէջ կ'երազէ թէ 100 տարի ետք կեանքը ուրիշ ձև պետք է ունենայ, թէ՛ պետք չէ լինին պատերազմներ, զօրք, գատարաններ և երկրի վրայ պիտի տրել եղբայրութիւն ու սէր: Գրուածքը այնպէս բացատրուեցաւ, որ իբր թէ Ռոստոմով գլխ է տիրոջ իրաւակարգին և կոչ կ'ընէ ապստամբելու անոր գլխ:

Այս գործի մէջ այ ևս կ'անդամակցէի գատական կազմին: Գատարանը որոշեց Ռոստոմովը ցմահ աքսորել Սիրերիա և 70ամեայ ծերունին բռնեց աքսորի ճամբան:

Այսքան օրինակներէն իսկ պարզ է, որ գատական իշխանութիւնը կ'աշխատէր ամրապնդել յետագլխ իշխանութեան զիրքերը:

Գատաստանական Պալատի պաշտօնին մէջ էր Լազոդա անունով մէկը, որ աչքի կ'իյնար իր գաժանութեամբ: Երկրի բոլոր խաւերը գլխ էին իրեն: Որովհետեւ Փոխարքայի ուշադրութիւնը հրաւիրել այդ անձնաւորութեան վրայ: Բայց, ինչպէս ըստ արդէն նախապէս Անդրկովկասի գատական պաշտօնէնները վարչականօրէն չէին ենթարկուէր Փոխարքա-

յին: Վերջինս գիտու մներ բրաւ Փեթերպուրգ եւ Լա-  
պոպան յետ կանչուեցաւ Կովկասէն:

\* \* \*

Ըստ արդէն, որ պրոպագանդի լաւագոյն միջոց-  
ներն էին դասախօսութիւնները եւ ժողովրդական  
համայնարանի կազմակերպութիւնը:

Գոյութիւն ունէին այդպիսի երեք համայնա-  
րաններ - ուսական, հայկական եւ վրացական: Ես  
կր խօսէի բնախօսութեան մասին ուսերէն յեզուով:  
Հայկական մասի դասախօսներն էին Գ. Պամակ եւ Ե.  
Թոփչեան: Երկուքն ալ աւելի ուշ սպաննուած Թուր-  
քիոյ մէջ: Ժողովրդական համայնարանը մեծ յաջո-  
ցութիւն ունէր ժողովուրդի լայն ցանցումներուն  
մէջ: Դասախօսութիւններու միջոցով անոնք կը ծա-  
նօթանային բնկերային նոր գիտութիւններուն եւ  
արհեստակցական շարժումներուն:

Պետք է ըսել, որ յեղափոխական շարժումներու  
ձախողման պատճառով շատ պաշտօնեաներ եւ բան-  
ուորներ սպառ արձակուեցան: Իրբեւ Տետեանք,  
Թիֆլիսի մէջ առաջ եկաւ անպորժութիւն: Կուսակ-  
ցութեան պարագլուխները դիմեցին ինձ՝ խնդրելով  
գործ հայթայթել անպորժներուն: Իմ առաջարկու-  
թեամբ, քաղաքային վարչու թիւեր 100 հազար ուրիշ  
տրամադրեց հանրային աշխատանքներու համար:  
Մրապրուեցաւ նորոգել մայթերը, կառուցել նոր շի-  
նոթիւններ եւ շտկել ճամբաները, որով շատ ան-  
գործներու հնարաւորութիւն տրուեցաւ իրենց  
գոյութիւնը պահպանել:

Բանուորներու ընտրութիւնը պաղտնօրէն իմ  
աջակցութեամբ կը կատարուէր, համաձայն կուսակ-  
ցական պարագլուխներու ցուցմունքներու: Ուրպէս  
հաշու ահալներ կ'աշխատէին Պաշտանեանք (Դեւը),  
որու մասին նախապէս յիշած եմ արդէն, Երաձէն, որ  
անկախ Վրաստանի աշխատանքի նախարարը պար-  
ձաւ, Երզնկեանք, որ այսօր Խորհրդային Հայաստանի  
ժողովրդական կոմիսարի պաշտօնը կը վարէ եւ շատ  
ուրիշներ՝ այն ժամանակ նկուզներուն մէջ աշխա-  
տողներէն:

Ցարական կառավարութեան միակ հոգն էր խել  
ժողովուրդէն այն բոլոր բարիքները, որ խոստաց-  
ւած էին անոր՝ ցարի հրովարտակով՝ 1905ին: Պետք է  
ըսել, որ հրովարտակէն մնացած էր միայն Պետական  
Դուման՝ կրճատուած իրաւունքներով: Կառավա-  
րութեան եւ Դումայի միջեւ տեղի կ'ունենար անցույ  
պայքար: Մինչ Դուման կ'աշխատէր պահել իր  
իրաւունքները, կառավարութիւնը կը ձգտէր խել  
անոր օրէնսդրական իրաւասութիւնները՝ թողելու  
համար գայն խորհրդակցական դերի մէջ:

Ընթերցողը պիտի արդէն, թէ ինչո՞ւ պտակուե-  
ցաւ այդ պայքարը: 1917 Փետրուարին, Դուման  
դարձաւ յեղափոխական շարժումներու կեդրոն՝  
տապալելով ցարական կառավարութիւնը եւ Ռումա-  
նովներու տունը. սակայն նոյն թուի Հոկտեմբերին,  
արդէն տապալեցաւ եւ ինքը՝ Ռուսական Հիմնադիր  
Ժողովին հետ միասին (1918), բոլշևիկներու կողմէ:

Ցարական իշխանութեան սեւ յետադիմութեան  
օրերուն, երկրի բոլոր ժողովուրդները իրենց բախտը  
կը համարէին կապուած Պետական Դումային հետ:

Շատերը կը հաւատային, որ Դուժայի միջոցով կարելի է յեղափոխութեան առաջին անակ՝ ընթանալով աստիճանական յառաջդիմութեան ճամբով: Շատերը կը կարծէին, որ Դուժայի միջոցով դիւրին կը լինէր առաջ բերել յեղափոխական ցնցումներ: Հայերը կ'ընթային Դուժա՝ օրէնսդրական աշխատանքներու համար:

Վրացի սոցիալ-դեմոկրատները՝ Ժորդանիան, Չիւնկելին, Չիւիձէն, Գեղեչկորին, Ջապարիձէն ունէին յեղափոխական ձգտումներ: Վրաց ազգայնականները կը պահանջէին Վրաստանի ինքնավարութիւնը՝ միշտ մեղադրելով հայերը, որ իրենց երկրի մէջ ձեռք բերած են հարստութիւն և ազդեցութիւն:

Ըստ բնարական օրէնքի, իւրաքանչիւր քաղաքացի կրնար բնորոտիլ միայն իր քաղաքի մէջ, ուր ունէր տուն կամ կայուածք: Թիֆլիսցի հայերու ունք չունէր քուլարկելու Երևանի մէջ: Այն ժամանակուան մեր աչքի ինկող մտաւորականութիւնը կը պանուկը Բագու և Թիֆլիս և որովհետև այդ երկու շրջաններու մէջ այ մեծամասնութիւն չէինք, հետևաբար գուրկ չէինք մեր մտաւորականութեան յաւազոյն ու ժերը Դուժա ու զարկելու հնարաւորութեան: Ստիպուած էինք բաւականանալ Երևանի երկրորդական ու ժերով:

Այդ տեսակէտէն, վրացիները մեզմէ երջանիկ էին: Թիֆլիսէն և Քուիթիսէն անոնք Դուժա կը զրկէին իրենց յաւազոյն ու ժերը:

Ընտրութիւնները երկաստիճան էին: Թիֆլիսի նահանգը կու տար 35 նոգի բնարողներ, որոնք իրենց մէջէն պիտի ընտրէին պատգամաւոր: Հայ բնարող-

ներու թիւը կը հասնէր վեցի: Հինգը Ախալքալաքի գաւառէն էր, որուն 90,000 բնակիչներէն 75,000ը հայեր էին, իսկ վեցերորդը ևս էի, որպէս կայուածատը Թիֆլիս նահանգի Կարայազ գիւղի, բնարուած հայ կայուածատներնրու կողմէ: Բոլոր հայ պատգամաւորները պաշտօնական կապ ունէին Հ. Յ. Գալնակցութեան հետ: Պարզ էր, որ մեր վեց ձայնովի գորու չէինք մեր պատգամաւորն բնորելու: Կը մնար, որ մեր ձայներով ուժ տայինք վրացի այս կամ այն պատգամաւորին: Իսկ վրացական կուսակցութիւնները ուժգնօրէն կը պայքարէին իրարու դէմ: Ակնուական դատակարարիչ պատկանող ազգայնականներու թեկնածուն իշխան Անդրոնիկովն էր, իսկ սոցիալ-դեմոկրատներու թեկնածուն էր Չիւիձէն: Մեր ձայներէն առաւելապէս կախում ունէր մէկուն կամ միւսին բնարութիւնը: Չիւիձէն ընկերվարական էր և աւելի մտահոգուած ընդ հանուր ուսական խնդիրներով: Դուժայի մէջ ան մեկ հանդիստ պիտի թողուր. իսկ Անդրոնիկովը, որպէս կծու ազգայնական, միշտ պիտի ճառէր հայերու և հայկական ազդեցութիւններու դէմ: Որպէնչիւք մեր քուները տայ Չիւիձէին:

Ընտրութեան մէկ օր առաջ, ինձ իր ժող հրաւրեց Փոխարքան և յայտնեց, որ վրաց ազգայնականները դիմած են իրեն և խնդրած, որ հայ պատգամաւորները իրենց ձայները տան իշխան Անդրոնիկովին: Փոխարքան խոստացած էր խօսիլ ինձ հետ:

— Ոչ մէկ իրաւունք ունիմ խառնուելու ձեր գործերու, անգամ իսկ հարցնելու ձեր որոշումը: Սակայն, մեր յարաբերութիւնները քոյլ կու տան

ինձ դիմելու ձեզ այս խնդրով, — ըսաւ Փոխարքան:

Անմիջապէս յայտնեցի իրեն Հայ բնորոշներու որչա՞ս մը եւ խնդրեցի, որ ինք դատէ, թէ ինչպէ՞ս կը վարուէր ինք՝ Հայերու փոխարէն: Փոխարքան ըսաւ, որ ինք կը բաժնէ մեր տեսակետը, քանի որ Չխէիձէի պայքարը Ռուսաստանի դէմ է, իսկ Անդրոնիկովը՝ որպէս Վրաստանի կողմնակից՝ պիտի միշտ յարձակի Հայերու վրայ: Յետոյ, Փոխարքան աւելցուց, որ ինք անձամբ կը պերպոյսէ Չխէիձէի բնորոշութիւնը: Չխէիձէն պիտի գործէ ցարի դէմ. մէկ յեղափոխական աւելի կամ պակաս, այդ միւս նոյնն է: Իսկ Անդրոնիկովը պիտի յարձակի կովկասի վարչութեան վրայ, որով եւ զինք հանգիստ թողելու չէ:

Գատախանեցի, որ մեր տեսակետները նոյնն են այս հարցի շուրջ: Փոխարքան ծիծաղեց եւ ասաց, որ ինք ինձ վրայ ոչ մէկ ճնշում գործ դրաւ եւ որ ազնուականներուն կը պատասխանէ, թէ իրենց խնդիրը կատարած է խօսելով ինձ հետ:

Հինգ օրէն տեղի ունեցան ընտրութիւնները: Մեր ձայներու շնորհիւ անցաւ Չխէիձէն, որ պէտք է ըսել, Դու մայի մէջ մեր դէմ չգործեց: Չխէիձէն եւ մէկ ուրիշ սոցիալ-դեմոկրատ եկան ինձ յատուկ շնորհակալութիւն յայտնելու հայկական ձայներու համար: Ինչպէս պիտէ ընթերցողը, այդ նոյն Չխէիձէն էր, որ 1917 թուականին զլիսա որեց Համայն Ռուսիոյ Բանօրներու եւ Չինուորներու Թորհուրդը Փեթերպուրգի մէջ:

\*\*\*

Երբ 1914 թուին ցար Նիկոլայ Բ. Թիֆլիս եկաւ

եւ, քաղաքային հիմնարկութիւնները այցելելէ ետք, պայտառի նախարարին միջոցով դիմեց ինձ՝ առաջարկելով աստիճան, շքանշան կամ տիտղոս: Փոխարքան կանչեց զիս եւ խորհուրդ տուաւ մերժել պարգևները: Ինձ ըսաւ, թէ միապետի ուշադրութիւնն արդէն ամենամեծ պնահատանքն ու պարգևն է, իսկ եթէ ես որեւէ պարգև ընդունիմ, ժողովուրդի գանձը աւճներու առջեւ պիտի կորսնցնեմ իմ վստահութիւնը եւ իշխանութեան առջեւ՝ իմ արժէքը, որովհետեւ կուսակցութիւններու եւ ժողովուրդի վստահութիւնն է, որ արժէք կու տայ ինձ իշխանութեան աչքին:

Այդպէս ալ ըրի եւ ապագային, երբ դարձայ նախարար եւ վարչապետ անկախ Հայաստանի. ինձ հետ տարայ ժողովուրդի նոյն վստահութիւնը ու մինչեւ այսօր ալ ես չունիմ ոչ մէկ աստիճան եւ ոչ մէկ տիտղոս:

Տասը երկար տարիներու ընթացքին ամենամօտ յարաբերութիւնները մշակելով իշխանութեան հետ, եւ երբեք չօգտագործեցի զիրքս անձնական որեւէ շահի համար, այլ իմ բոլոր ու մերս գործածելի ժողովուրդին համար: Այդ պատճառով էր, որ 1917 թուի յեղափոխութեան ընթացքին, նորէն մնացի իշխանութեան զլուխ կովկասի եւ ապա՝ Հայաստանի Հանրապետութեան մէջ:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ  
ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԸ  
ԵՒ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՌԹԻՒՆՆԸ

Յարական Ռուսիոյ քաղաքային առաջին օրէնքը, որ կը վերաբերէր ինքնավարութիւններու իրաւասութիւններուն և բնտրողական ցեւեղին, Տրատաւակուեցաւ 1870 թուին: Օրէնքը իր ներքին իմաստով ազատամիտ հակումներ ունէր: Լայն իրաւասութիւններ կը շնորհուէին քաղաքացիներուն և բնտրողական ոչ բարձր ցեւեղ: առ այդ, ժողովուրդի լայն խաւերը ի վիճակի էին մասնակցել բնտրութիւններուն: Սակայն, կառավարութիւնը գնայով կրճատեց քաղաքներու իրաւունքները և, օրէնքը բարեփոխելու փոխարէն, 1892ին Տրատաւակեց նոր օրէնք մը, որով կրճատուեցան քաղաքներու և քաղաքացիներու իրաւունքները, բարձրացաւ բնտրողական ցեւեղը և իշխանութեան վարչական իրաւունքները ընդարձակուեցան:

Կր մատնանշեմ այս փաստը, որովհետեւ ան ժողովուրդի զժգոհութեան զլիսաւոր պատճառներէն մէկը կը հանդիսանար: Դժգոհութիւն մը, որ 1917ին յանգեցաւ ուստական մեծ յեղափոխութեան և տապալեց ցարական կառավարութիւնն ու գահը:

Պարլամենտի (խորհրդարանի) չգոյութեան պատճառով, ամբողջ Ռուսաստանի մէջ մեծ էր դերը

քաղաքային և գաւառական ինքնավարութիւններու, որոնց մէջ ժողովուրդը հնարաւորութիւն ունէր քննութեան առնելու պիտի անմիջականօրէն հետաքրքրող հասարակական խնդիրները: Կովկասը մինչև իսկ չուներ գաւառային ինքնավարութիւններ և քաղաքի բնակիչներն էին միայն, որ իրենց ինքնավարութիւններու միջոցով կրնային իյայտ բերել որոշ ինքնուրոյնութիւն:

Չնայած 1892ի օրէնքին, քաղաքի բնակիչները մեծ եռանդ կը թափէին՝ աշխատելով ինքնավարութեան մէջ և ինքնավարութեան համար: Չորս տարին անդամ մը տեղի կ'ունենային բնտրութիւնները: Կր սկսել բնտրական պայքար, կը բորբոքէին կիրքերը:

Կովկասի հայկական շրջանում ինքնավարութիւններ գոյութիւն ունէին Երևանի, Ախալքալաքի, Ախալցխայի, Նոր Բայազետի և Ալեքսանդրապոլի մէջ: Բացի Երևանէն և Ալեքսանդրապոլէն, միւս քաղաքներու մէջ ինքնավարութիւններու իրաւասութիւնները աւելի կրճատուած էին, որովհետեւ գոյութիւն ունէր յատուկ օրէնք փոքրիկ քաղաքներու ինքնավարութիւններուն համար: Կարսի մէջ օրինակ, չկար ինքնավարութիւն, որովհետեւ Կարսը լինելով բերդային քաղաք՝ իշխանութիւնը կ'ուզէր իր ձեռքերու մէջ կեղբոսնացնել քաղաքի բոլոր գործերը:

Բացի Թիֆլիսէն, ուր ինքնավարութեան անգամներու մեծամասնութիւնը կը կազմէին հայերը (Թիֆլիսի ինքնավարութիւնը իր կազմի կրթական ցեւեղով, առաջինն էր ամբողջ Ռուսաստանի մէջ, որու անդամներէն 80 առ հարիւր բարձրագոյն կրթութիւն ունէին), հայկական միւս մասերու ինքնավար-

բութեանց խորհրդատուները ամբողջապես հայեր էին:

Եթէ նախապատերազմեան բառերը գործածելու ինններ, կարսի շրջանը և Գանձակի նահանգի հայկական մասը աշխարհազբախկանօրէն ամենազատ դասաւորուած շրջաններն էին և տնտեսապէս թոյլ և աղքատ: Մինչդեռ Թիֆլիսի ու Բուխարիի նահանգները և Բաթումի շրջանը կամ Բագունի իր նաթուփ, հարուստ շրջաններ էին: Հայկական քաղաքներու բիւզընն այդ իսկ պատճառով աղքատ էր, իսկ առանց բիւզընի և կրթուած խորհրդատուներու, դժուար էր ցոյց տայ լայն գործունէութիւն:

Քաղաքային վարչութիւններու միակ հասոյթներն էին՝ քաղաքային տուներու տուրքերը և քաղաքային ձեռնարկները (Ջրմուղ, հանրակառք և այլն): Հայկական փոքրիկ քաղաքները գուրկ էին այս վերջին և կարեւոր հասոյթէն: Երեւանը՝ Հայաստանի հանրապետութեան ապագայ մայրաքաղաքը՝ ուներ ընդամենը 35,000 բնակիչ, իսկ Ալեքսանդրապոլը՝ 25,000: Թիֆլիսի բնակչութեան թիւը կը հասնէր 300,000ի, մէջն առնելով և բանակը: Մեծ էր և Թիֆլիսի պաշտօնէութեան թիւը:

Ահա թէ ինչո՞ւ 1918ին, երբ Անդրկովկասեան Հանրապետութիւնները հռչակեցին իրենց անկախութիւնը, վրաստանը, շնորհիւ Թիֆլիսի և Բաթումի, ունէր պետութեան ազատ զարգացումի համար բոլոր տուեալները. պատրաստի շինքեր, լաւ նաւահանգիստ, ինչպէս նաև թալանի, գաղթի ու ջարդի չենթարկուած խաղաղ ազգաբնակչութիւն: Նոյն այդ պատճառները ազատ զարգացման հնարաւորու-

թիւններ կու տային և Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան:

Ինքնավարութեան ներքին կազմակերպութիւնը նետեւեալն էր.

1) Քաղաքային Խորհուրդ, օրէնսդրական մարմին մը, որ ժողովներ կ'ունենար բիւզընի շուրջ շաբաթը մէկ երկու անգամ:

2) Քաղաքային վարչութիւն - գործադիր իշխանութիւն, որ կ'ընտրուէր Խորհուրդի կողմէ՝ չորս տարի ժամանակով և կը բաղկանար քաղաքապետութիւն, օգնական և չորս անդամներէ:

Խորհուրդի անդամները սոճիկ չունէին, իսկ քաղաքապետութիւնը և վարչութեան անդամները կը ստանային սոճիկներ: Քաղաքային Խորհուրդի բոլոր որոշումները պետք է հաստատուէին նահանգապետի կողմէն: Այդ պատճառով, առաջ կու գային լուրջ անհամաձայնութիւններ, որոնց զէպքում վերջնական վճիռը կը պատկանէր Փեթերպուրգի Պետական Անատին:

Ինքնավարութեան գլխաւոր աշխատանքները կը կայանային տեղական կարիքները հոգալու մէջ. լուսաստորութիւն, մայթերու կանոնաւորում, ջրմուղներ, հանրակառք, հիւանդանոցներ, ճանապարհներ, դպրոցներ, առողջապահութիւն և այլն:

Այս բոլորը կը վերաբերէին ժողովուրդի անմիջական պահանջներուն: Սակայն, պետք էր մտածել և որոշ «օգուտներու» մասին: Ահա այստեղ էր, որ միշտ ընդհարումներ տեղի կ'ունենային նահանգապետի և քաղաքային վարչութեան միջև:

Պարլամենտի շղջութեան պատճառով, հասա-

բակական ամբողջ կեանքը կ'անցնէր քաղաքային ինքնավարութիւններու բովկն: Հասարակութեան «օգուտներ» բսելով, կը հասկնայինք գործունէութեան աւելի լայն ապարկզներ, մինչդեռ նահանգապետարանը կ'աշխատէր կրճատել մեր գործունէութեան սահմանները: Օրինակ, բարձրագոյն զարդներ բանալու խնդիրը, Կովկասի գաւառային ինքնավարութիւններու հետ կապուած բոլոր հարցերը կը նկատուէին մեր իրաւասութեան սահմաններուն մէջ: Սակայն, մեր միջամտութիւնը իշխանութեան անօրէն գործունէութեան կամ մեր քաղաքացիական ազատութեան պահանջները կը համարուէին ապօրինի եւ մեր իրաւասութիւններէն դուրս:

Այս ձեռի աշխատանքները անէին երկու խոշոր հետեւանքներ: Նախ՝ ժողովուրդը կը սովորէր կուսիլ եւ պաշտպանել իր ինքնավարութիւնը: Եւ յետոյ՝ դիմադրական ուժին կը գարպանար ոչ միայն յատաճ-դիմադր մտաւորականութեան, այլեւ ժողովուրդի այն բոլոր խաւերուն մէջ, որոնք իրենց չահերով սերտօրէն կապուած էին քաղաքային ինքնավարութեան:

Շատ օրինակներ կարող եմ բերել՝ ցոյց տալու համար, թէ ինչպէս ժողովուրդի մէջ ծայր կու տար զժգոհութիւնը բնդզէմ իշխանութեան: Ոստիկանութիւնը իր ոռճիկը կը ստանար քաղաքային վարչաթեւէն, բայց ան ոչ միայն չէր ենթարկուել քաղաքային վարչութեան, այլ վերջինս իրաւունք իսկ չուներ հակակշօր ենթարկելու ոստիկանութեան հաշիւները: Որքան զրամ կը ծախսուէր հազար տեղէնի, ասելիքներու եւ շէնքերու վարձքին վրայ՝ ինքնա-

վարութիւնը ոչինչ գիտէր: Քաղաքացիք՝ վճարելով ոստիկանութեան ծախքերը՝ գիտէին, թէ այդ ոստիկանութիւնը կը ծառայէ իշխանութեան կարիքներուն, այսինքն՝ կը սնուցանէին ուժ մը, որ ուղղուած էր իրենց իսկ դէմ:

Ժողովուրդը կը վախնար ու կ'ուզէր, որ ոստիկանները իրեն ենթարկուէին: Ոստիկանութիւնը կը զլխաւորէին այնպիսի մարդիկ, որոնք քրէական յանցաւորներ էին:

Կը յիշեմ, որ 1916 թուին, Թիֆլիսի ոստիկանապետը, պապանի ոստիկաններու աջակցութեամբ, առեւանգեց հարուստ վաճառականի մը երիտասարդ որդին եւ երկար պրպտումներէ ետք, առաջարկեց խեղճ հօրը վճարել 10 հազար սուրբի՝ փնտաւաւ քի գործը կազմակերպելու համար: Վաճառականը 10 հազար սուրբին վճարեց եւ որդին գտնուեցաւ:

Նոյն ոստիկանապետը կարողացաւ նման զկպք մը եւս կազմակերպել՝ մէկ ուրիշ հայ վաճառականի որդին առեւանգելով:

Ուրիշ ոստիկանապետի մը կինը կը յաճախէր խանութները, կը գնէր ապրանքներ՝ առանց վճարումի: Վաճառականները լուռ ցատուժով բաց կը թողնէին ապրանքները, բայց անգամ մը, երբ արարքը բացուեցաւ, ոստիկանապետը անձնապահան եղաւ գերեզմանատան մը մէջ:

Պատերազմի նախօրեակին, երբ կեանքը գնալով կը սղըր, երբ կամաց կամաց կը պակսէին կեանքի անհրաժեշտ պիտոյքները, երբ գնացքները կ'երթէ եւ կէին չափազանց անկանոն, ոստիկանութիւնը որդեց դիմել մէկ այլ պրոփոկասիտն միջոցի. այն է՝ յայ-

տարարեց որ ապրուստի սղութեան պատճառը վաճառականութիւնն է, որ կը պահէ ապրանքները իր շտեմարաններուն մէջ: Բանտարկուեցան աչքի ինկող հայ վաճառականներ՝ Միլեանը, Սերերբեակեանը, Աղիխասեանը: Ժողովուրդը գրգռուեցաւ անոնց դէմ: Բայց յետոյ իմացուեցաւ ոստիկանութեան դաւադիր ծրագիրը եւ մեղադրեալները արգարացան հասարակութեան աչքին:

Սակայն, ոստիկանութեան ցանած խոտովութեան սերմերը տուին որոշ արդիւնքներ. գրգռուած ոռուկանայք եւ բնակչութեան մութ ու մերը յարձակեցան խանութներու վրայ ու մատնեցին գանձիչ շտեմարանում կողոպուտի: Ռուս զինուորները հրացանները ու սերին, յուսականատես եղան զւպերուն եւ ոչ մէկ միջամտութիւն ցոյց տուին՝ ոտնահարուող դասի իրաւունքները պաշտպանելու համար:

Իմ աչքերուս առջև տեղի ունեցան թալանի եւ անիրաւութեան այս զւպերը, բայց ես անզօր էի գրգռուած ամբոխի առաջին առնելու: Իմ ձեռքիս տակ շկային ոստիկանական ուժեր. քաղաքի ոստիկանութիւնը կը վարձատրուէր ժողովուրդի կողմէն՝ ժողովուրդի զիտուն իսկ պատու հաս զառնալու համար: Ու պարզ կը թէ ինչո՞ւ ժողովուրդը կ'ուզէր իր ոստիկանութիւնը ու կ'ընդվզէր իշխանութեան եւ երկրի օրէնքներուն դէմ:

\* \* \*

Մեր տնտեսական գործունէութեան հիմք կը

կազմէր կրթական գործը, որու համար ինքնավարութիւնը ոչ մէկ միջոց կը խնայէր:

Պատերազմի նախօրեակին գրուած էր պարտապիր ուսման խնդիրը. բան մը, որ գոյութիւն չունէր ամբողջ Ռուսաստանի մէջ: Սակայն, պատերազմը եւ անոր հետ կապուած քաղաքային բիզնէս նուազուած արգելք հանդիսացան այդ ծրագրի իրականութեան:

Քաղաքն ունէր 20 քաղաքային դպրոցներ, յաւաքոյն շէնքերու մէջ տեղադրուած, արհեստագիտական դպրոցներ մանչերու եւ աղջիկներու համար, բազմաթիւ մասնագիտական դպրոցներ՝ երկաթուղային, հողագործական, այգեկործական, գեղարուեստական, երաժշտական, շահուած զեռ ազգային դպրոցները (հայկական՝ Ներսիսեան, Յովնանեան եւ ծխական դպրոցները, վրացական՝ Ակնուական Գիմնազիոնը): Կային 12 Գիմնազիոններ՝ վեցը աղջիկներու եւ վեցը մանչերու համար:

Բոլոր դպրոցներու մէջ ալ հայերը կ'ուսանէին բաւական մեծ թուով. իրաց առեւալ վրացական գիմնազիոնէն: Թիֆլիսի մէջ կրթուելով՝ հայերը կը վերադառնային իրենց ծննդավայրերը, ուր գոյութիւն չունէին այդպիսի դպրոցներ: Այսպիսով Թիֆլիսը կը հանդիսանար ամբողջ Կովկասի կրթական կեդրոնը:

Թիֆլիսի մէջ կային կանանց բարձրագոյն դասընթացներ, մանկարարական դասընթացներ, իսկ յեղափոխութեան նախօրեակին հիմքը գրուեցաւ նաև Պոլիտեխնիկում մասնագիտական բարձրագոյն դպրոցին, որու մասին զեռ պիտի խօսինք:

Մենք կ'աշխատէինք, որ բարձր դպրոցներու ու-



ուսուցչական կազմին մէջ եւս մտնելին հայեր: Բայց իշխանութիւնը արգելք կը հանդիսանար եւ միայն մէկ ուսական Գիմնագրիայի տեսուչն էր հայ:

Երկրորդական դպրոցներու ուսուցչական կազմի մէջ հայ ուսուցիչ-ուսուցչու հիններու թիւը բաւական բարձր էր:

Բախտի ինչպիսի՛ խաղ. Կովկասի կրթական գործի գլուխը կանգնած էր ուսուցիչ Պրոգրէսոր, որ այսօր Քարիզի հայկական Գիմնագրիայի տեսուչն է:

Առողջապահական գործը նոյնպէս գրուած էր իր բարձրութեան վրայ: Քաղաքն ունէր շատ հիւանդանոցներ, բուժարաններ, քաղաքային բժիշկներ, որոնց թուին մէջ մեծ տեղ կը բռնէին հայերը: Այդ բժիշկները կ'այցելէին տուները՝ աղքատ հիւանդները բուժելու համար:

Ամենայաւ հիւանդանոցը շինուած էր հարուստ հայ Արամեանցի ծախքերով, իսկ ամենայաւ երեխաներու բուժարանը կառուցուած էր վրացի հարուստ Չուրայովի գրամներով: Իմ ժամանակ, հիմնուեցաւ մեծ հիւանդանոց մը՝ ներքին, մորթի եւ կանանց հիւանդութիւններու համար: Պատերազմի ընթացքին, պետական միջոցներով հիմնուեցաւ նոր հիւանդանոց մը եւս՝ 2000 մահճակալով:

Յաճախ Կովկասի միւս քաղաքներէն՝ Երևանէն, Ալեքսանդրապոլէն, Բապուէն եւ Քութայիսէն մեկ մօտ կու գային քաղաքային գործիչներ եւ բժիշկներ՝ ծանօթանալու համար հիւանդանոցային մեր կազմակերպութեան հետ: Այս հանգամանքը ցոյց կու տայ, թէ ինչ մեծ ազդեցութիւն ունէր Թիֆլիսի հայ

մտաւորականութիւնը Կովկասի բոլոր գործերու վրայ:

Աչքի կ'իյնային Թիֆլիսի սպանդանոցը իր սառցարաններով, որ, բաւ գերմանական սխաւմի, կառուցած էր հայ ճարտարապետ Սահմանեանը, էլեկտրակայանը, որ կառուցած էր նոյնպէս հայ ճարտարապետ Նալբանդեանը, գետնայարկ ուղին կառուցուած երրորդ կողմէ, եւ Փունիկոլիօրը (յետնային երկաթուղի), որ կը տանէր Ս. Գալիթ լեռան գագաթը:

Արդար լինելու համար՝ բռնեք, որ ամբողջ Ռուսաստանի մէջ, Մոսկուայէն յետոյ Թիֆլիսի քաղաքային տնտեսութիւնը առաջինը կը համարուէր: Հանգամանք մը, որ միշտ կը մտածանշուէր քաղաքային գործիչներու համագումարներու մէջ: Ու պէտք է բռնել, որ այդ գործին մէջ մեծ էր դերը հայ քաղաքապետներու, քաղաքային գործիչներու, բրժիշկներու եւ ճարտարապետներու: Թող այս հանգամանքն անգամ մըն այ ապացոյց լինի, որ հայ մտաւորականութիւնը ի վիճակի է ստեղծել եւ իր օրինակելի պետութիւնը:

Միայն գործի տեխնիքական կողմը չէր սակայն որ արժանի էր գնահատանքի: Երկար տարիներու ընթացքին, քաղաքային գործիչներու մէջ շրջադասեցան կաշառակերութեան կամ վատնուածի դէպքեր: Եղան անշուշտ փոքրիկ շեղումներ ծառայողներու ընթացքին մէջ, բայց աստուք այնքան հազուադէպ եւ այնքան աննշան չէին, որ արժանի իսկ չեն յիշատակութեան: Բոլորն այ կը ծառայէին ազնուօրէն՝ իրենց գործին մէջ դնելով սէր եւ մարքութիւն:

Քաղաքն ունէր արհեստական անտառ, յա-  
ջրմուղի, որ կը պաշտպանէր քաղաքը վարակիչ հի-  
ւանդութիւններէ: Ծրագրած էինք կառուցանել մէկ  
նոր մեծ ջրմուղի եւ հիդրոէլեկտրակայան: Պատրաս-  
տել էինք բոլոր ծրագիրները եւ այսօր բոլշէիկները  
կ'իրագործեն մեր նախագծած ծրագիրները: Փողոց-  
ները մայթուած էին գանապան ձեւերով: Սկիզբը  
մայթելու նիւթերը կը ստանայինք արտասահմանէն,  
իսկ յետոյ, երբ հայկական Ղարաբիլիսէի մօտ գտնը-  
ւեցան քարահանքեր, նիւթերը անմիջականօրէն կը  
ստանայինք այդ քարահանքերէն:

Քաղաքն ունէր յաւ գրադարաններ, Քատրոն-  
ներ, ուր երեք պիսաւոր յեկուներով տեղի կ'ունե-  
նային ներկայացումներ: Ունէր նաեւ սեփական  
թէրթ, ուր կ'արծարծուէին տնտեսական բոլոր խըն-  
դիրները: Մի խօսքով՝ Թիֆլիսի քաղաքային ինքնա-  
վարութիւնը յաւազոյն զպրոցն էր, որուն բովէն պի-  
տի անցնէին պետական ապագայ գործիչները:

1917 թուի յեղափոխութեան ընթացքին, իշխան  
Լյովի գլխաւորութեամբ, պետական պաշտօնեաներ  
դարձան քաղաքային եւ գաւառային վարչութիւն-  
ներու անդամներն եւ քաղաքապետ խնդրը: Շատերը  
դարձան նախարարներ: Հայաստանի առաջին կա-  
ռավարութեան մէջ, քաղաքային գործիչներէն մտան  
Թիֆլիսի նախկին քաղաքապետներ՝ Վերմիշևանը  
եւ Լու, քաղաքային գործիչներ՝ Մելիք Ղարազեօզ-  
եանը, Գիւլեանը, Զմիշկեանը, Յարութիւնեանը,  
Աթարեկեանը եւ Էդրայրս, որպէս կառավարութեան  
դիւանի վարիչ:

Պէտք է ըսել, որ կառավարութեան գլուխն ան-

ցան երկու տարրեր զպրոցներու պատկանող մար-  
դիկ: Այդ զպրոցներէն մէկը քաղաքային ինքնավա-  
րութիւններն էին, իսկ միւսը՝ քաղաքական-յեղա-  
փոխական կուսակցութիւնները՝ Հ. Յ. Դաշնակցու-  
թեան գլխաւորութեամբ: Այս երկու զպրոցներն էին,  
որ ապագային կերտեցին Կովկասի քաղաքական  
րախար:

Հայ մասնագէտ մտաւորականութիւնը տեղ  
գտաւ հայկական նախարարութիւններու մէջ, ու-  
սական հին հայ պաշտօնեաներու հետ միասին,  
որոնցմէ շատերը նոր էին եկած Ռուսաստանէն, ինչ-  
պէս օրինակ գորավար Նազարեկեանը, որ հայկա-  
կան գործերու հրամանատարը դարձաւ, պրոֆ.  
Ղամբարեանը՝ իմ թեոյաբ, որ համալսարանի տե-  
սուչ նշանակուեցաւ, ճարտարապետ ակադեմիկոս  
Թամանեանը, պինուորական նախարարներ՝ Արա-  
բատեանն ու Հախվերտեանը եւ շատ ուրիշներ:

Մինչեւ այժմ, մենք կանգ առինք այն մասին  
վրայ, որ կը վերաբերէր մեր տնտեսական աշխա-  
տանքներուն եւ իշխանութեան հետ ունեցած փոխ  
յարաբերութիւններուն: Սակայն, քաղաքային ինք-  
նավարութեան գործունէութեան մէջ կար ուրիշ կէտ  
մը եւս, որ կ'ընդգրկէր ընդհանուր կովկասեան  
խնդիրներ: Պէտք է ծանօթանայ Կովկասին իր ամ-  
բողջութեան մէջ, պիտեայ իր ապագային եւ աշխար-  
հագրական բաժանումները, աչքէ անցընել վարչա-  
կան ձեւաւորումները՝ իմանալու համար, թէ ի՞նչ  
չափով այդ համակովկասեան հարցերը կը շօշափէին  
հայկական շահերը եւ ի՞նչ չափով առընչութիւն ու-  
նէին մեզ հետ:

Այդ հարցերը հետեւեալն են՝ 1) գաւառային ինքնավարութիւնները եւ անոնց հետ կապուած փարչական նոր բաժանումներու խնդիրը, 2) լեռնային ճամբու կառուցումը Այսպիկավազկն մինչև Քիֆլիս, 3) բարձրագոյն դպրոցի մը բացումը Քիֆլիսի մէջ եւ վերջապէս, 4) երդուեալ գաւառ որներու հաստատումը Կովկասի գաւառական հիմնարկութիւններուն մէջ:

Այս շորս գլխաւոր հարցերն էին, որ երկար տարիներու բնթացքին պրպակցուցին միտքերը եւ պայմանաւորեցին Կովկասի հանրային կեանքը: Այդ հարցերու պարզաբանումին կը դառնանք առանձին-առանձին: Բայց անաչառ լինելու համար, պէտք է բռնեք, որ Կովկասի միւս քաղաքներու ինքնավարութիւնները անհամեմատ աւելի թոյլ էին Քիֆլիսէն թէ՛ իրենց բիզնէսի եւ թէ՛ մտաւորական կազմով:

ՔՂՈՒԽ Ը:

ԻՆՔՆԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ԵՒ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

Նախայեղափոխական Ռուսոյ հասարակական հիմնարկութիւններն յաւաքոյնը գաւառական ինքնավարութիւններն էին, որոնք գիւղերու եւ գաւառներու մէջ նոյն դերը կը կատարէին, ինչ որ քաղաքային ինքնավարութիւնները՝ քաղաքներու մէջ: Ենթահի գաւառական ինքնավարութիւններուն, ոոսս պիտացին ունէր բժիշկ, դպրոց, զբոսայգի, ճամբաներ, գիւղատնտեսական օգնութիւն եւ մինչև իսկ՝ որոշ նահանգներու մէջ՝ հեռախօսային հաղորդակցութիւն: Ինքնավարութիւններու ներքին կազմակերպութիւնը նոյնն էր, ինչ որ քաղաքներու մէջ: Կար է՛ գործադիր վարչութիւն, է՛ նախագահ, որուն իրաւասութիւնները կը համապատասխանէին քաղաքապետի իրաւասութիւններուն:

Կովկասը չունէր գաւառային ինքնավարութիւններ ու գաւառներու բախար յանձնուած էր իշխանութեան հոգատարութեան: Սակայն, Կովկասն ունէր բնդ հանուր հաստատութիւններ ամբողջ Կովկասի համար: Օրինակ. Կովկասի բժշկական վարչութիւնը, հաղորդակցական միջոցներու վարչութիւնը եւ այլն, եւ այլն:

Այս հաստատութիւնները ունէին իրենց պաշտօնէութիւնը, բաղկացած բժիշկներէ, ճարտարապետ-

վարու թիւներու մասին: Արդէն իսկ սկսած էին բարձր խօսիլ այդ մասին: 1909 թուին, բամպակագործներու համագումարին մէջ, որ տեղի ունեցաւ Քիֆլիս, որոշուեցաւ որ բամպակագործութիւնը միայն ինքնավարութիւններու հաստատումով կրնայ աճիլ և զարգանայ: Նոյն որոշումը տուին և ծխախոտամշակութեան և անողջապահական-գարոջական համագումարները: Տեղի կ'ունենար նոյն երկուցիցը, ինչ որ նախայեղափոխական Ռուսաստանի մէջ, երբ բոլոր համագումարները՝ տնտեսական, գիւղատնտեսական, բժշկական, կր վերջանային պատասխանատու կառավարութեան պահանջով:

Ներքին գործոց նախարար Պլեկն, որ 1904 թուին սպաննուեցաւ տեսարկաւ մը սու մտով, կ'ըսէր.

«Ինչպէս կ'երեւի, Ռուսաստանի մէջ առանց սահմանադրութեան կարելի չէ գետնախնձոր իսկ ցանկել»:

Ճիշդ է, ծիծաղելի էր այս միտքը. սակայն, եթէ ի նկատի ունենանք գիւղի այն ժամանակուան վիճակը, երբ կիները ծննդաբերութիւն կ'ունենային անողջապահական ամենափառ պայմաններու մէջ, երբ երեխաները կը մեռնէին ծնողներու ապիտակութեան պատճառով, երբ անճարակ գիւղացին ի վիճակի չէր բարձրացնելու իր հոգեկոտ բերքը, հասկնայի կը գատնայ ինքնավարութիւններու անհրաժեշտութիւնը, որ պիտի գրազէր գիւղի կարիքներով և հոգեկոտով:

Կովկասի քաղաքային ինքնավարութիւնները և ասոսիին հերթին Քիֆլիսը, բանաձեւեր կը հանէին

պատասխին ինքնավարութիւններու անհրաժեշտութեան մասին, զիմումներ կ'ուղարկէին Փեթերպուրգ: Բայց այդ զիմումները կը մնային անհետեւանք: Կոմս Վորոնցով-Յաշկովը, Քիֆլիս հաստատուելէն ետք, որոշեց ընդատալ զնայ ժողովուրդի ցանկութիւններուն և ուսումնասիրել խնդիրը: Իր հրամանով, նահանգային քաղաքներու մէջ կազմուեցան յատուկ խորհուրդներ, որոնք պիտի ուսումնասիրէին բարենորոգումներու ծրագիրը և պատրաստէին նիւթեր՝ ապագայ ինքնավարութիւններու համար: Քաղաքային ինքնավարութիւններուն կից, նոյն նպատակով, տեղի կ'ունենային խորհրդակցութիւններ:

Այդ խորհրդակցութիւնները շարունակուեցան նաև մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչի փոխարքայութեան ժամանակ: Եւ մասնակցեցայ այդ բոլոր խորհրդակցութիւններուն, նախ որպէս Քիֆլիսի ներկայացուցիչ, ապա համակովկասեան խորհրդակցութեան մէջ՝ իրրև: Հայ ժողովուրդի ներկայացուցիչներէն մէկը:

Վերջիշեւով այսօր բոլոր պատճառարանութիւնները, որ կը բերուէին այդ խորհրդակցութիւններու մէջ, կարողալով նորէն անոնց սուղագրուած հաշուետուութիւնը, պէտք է բռնմ, որ ինքնավարական հիմնարկութիւններու հաստատման գլխաւոր գծուարութիւնը կովկասի ցեղային անանձնայատուկ վիճակն էր. այն է՝ հայ-թաթարական և հայ-վրացական խոտն բնակչութիւնը, համախմբուած միեւնոյն հողամասերու վրայ: Այդ գծուարութիւնը աւելի աչքի գարնուեցաւ 1918ին, երբ առաջ եկան երեք ան-

կախ պետութիւններ: Այդ դժուարութիւնը կայ նաև այսօր և պիտի լինի վաղը:

Կովկասեան կեանքի ամենացաւոտ կողմերէն մէկն է այս խնդիրը, որուն վրայ անհրաժեշտ է լուրջ ուշադրութիւն դարձնել:

**Թողունք որ խօսին անաչառ թիւերը:**

Ըստ պաշտօնական տեղեկութիւններու, 1910ին կովկասի մէջ կ'ապրէին 7,901,514 մարդ, որոնցմէ 3,320,368ը թաթարներ (42.02 առ հարիւր), 1,809,605ը՝ հայեր (22.92 առ հարիւր) և 1,651,378ը՝ վրացիներ (20.89 առ հարիւր): մնացածը՝ ուսսներ, Նըր-եաներ, քիւրտեր և այլն, ընդամէնը 1,120,163 (այսինքն՝ 14.17 առ հարիւր):

Այս թիւերէն կ'երևի, որ կովկասի մէջ կը բնակին բազմաթիւ ցեղեր: Բայց եթէ չորս գլխաւոր ցեղերու երկիրները բաժանուած լինէին իրարմէ, այն ժամանակ ինքնավարութիւններու կազմի մէջ կը մտնէին միայն նոյն ցեղին պատկանող տարրեր: Սակայն կացութիւնը այլ էր: Հայերը կը բնակէին վրացիներու և թուրքերու նետ խառն՝ մինչ թուրքերը, ինչպէս նաև վրացիները, չափով մը խմբուած էին որոշ հողամասի վրայ:

Կովկասի տասը նահանգներէն և շրջաններէն (Բագու, Բաթում, Գանձակ, Չաքաթայա, Կարս, Քուրթայիս, Սուխում, Սևիծովեան շրջան և Երևան) միայն Երևանի նահանգի մէջ Հայերը մեծամասնութիւն կը կազմէին: Այդ նահանգի 1,114,498ը հոգի բնակչութենէն 669,871ը Հայեր էին, թուրքերը 373,582 հոգի էին և քիւրտերը՝ 36,508ը:

Թուրքերը բացարձակ մեծամասնութիւն էին

Բագուի նահանգին (892,000 հոգի՝ 1,275,000 ընդհանուր թիւէն) և Գանձակի նահանգին մէջ (1,275,000 ընդհանուր բնակչութեան թիւէն 783,000):

Վրացիներն ալ բացարձակ մեծամասնութիւն էին Քուրթայիս և Քիֆլիսի նահանգներուն մէջ: Առաջինին մէջ անոնց թիւը կը հասնէր 992,931ի (նահանգի ընդհանուր բնակչութիւնը կը հաշուէր 1,034,411 հոգի), իսկ երկրորդին մէջ՝ 1,473,308էն 580,957ը վրացիներ էին:

Պատկերը աւելի ցաւալի կը դառնայ, եթէ կովկասի ազգարնակչութիւնը բաժնենք բառ գաւառներու: 47 գաւառներէն միայն վեցին մէջ Հայերը մեծամասնութիւն էին:

	Հայեր	Թուրքեր	Չափազանց	Բնի-քի
1. Շուշիի գաւառ (Փանձակի նահանգ)	98,809	85,671	4,265	188,745
2. Ախալքալաքի գ. (Քիֆլիսի նահանգ)	82,775	9,212	15,186	107,173
3. Արևմտակովքի գ. (Երևանի նահանգ)	202,505	9,251	14,424	206,080
4. Նոր Բայազետի գ. (Երևանի նահանգ)	129,347	53,677	5,835	188,859
5. Երևանի գ.	106,933	93,554	5,200	205,617
6. Էրիթաձնի գ. (Երևանի նահանգ)	115,026	50,963	1,797	167,786

Բնորոշ է այն փաստը, որ Հայաստանի մայրաքաղաքի շուրջը, Երևանի գաւառին մէջ, Հայ ազգարնակչութեան թիւը հաւասար էր թուրք ազգար-

նակչութեան. Հանգամանք մը, որ շարաքաստիկ գեր խաղաց անկախութեան օրերուն: Երևանէն մեկնող գնացքները յարձակման կ'ենթարկուէին թրքական գիւղերէն, ճիշդ Երևանի սահմաններուն շուրջ:

Բացի վերոյիշեալ վեց գաւառներէն, հայերը համեմատական մեծամասնութիւն ունէին նաեւ հետեւեալ չորս գաւառներու մէջ՝ Բորչալուի գաւառ (Թիֆլիսի նահանգ), Թիֆլիսի գաւառ (Թիֆլիսի նահանգ) եւ Կարսի ու Կաղզուանի գաւառներ (Կարսի շրջան): Այս գաւառներուն մէջ կողկասեանն ոչ մէկ ժողովուրդ բացարձակ մեծամասնութիւն ունէր: Այդ պատճառով, տեղի կ'ունենային ուժեղ պայքարներ իշխանութեան համար. մասնաւորապէս Բորչալուի եւ Թիֆլիսի գաւառներու մէջ, որոնց սահմանային ընդգծումները լուրջ վճճերու առարկայ կը դառնային երեք հանրապետութիւններու մէջ: Ժողովուրդներու այս խառնիճաղանձ կացութիւնը առիթ կու տար մտածելու, թէ լաւագոյնն է կողկասք բաժնէ վարչական նոր միաւորներու, հիմնուելով ազգապարական տուեալներու վրայ:

Այս միտքն էր միայն, որ կը զրդէր հայերը գաւառական ինքնավարութիւններու խորհրդակցութիւններու մէջ պնդել վարչական նոր բաժանումներու վրայ՝ ստեղծելու համար նոր գաւառներ եւ նոր նահանգներ, ուր հայերը կարող ըլլային մեծամասնութիւն կազմել: Սակայն, այն ժամանակուան պայմաններու մէջ, անկարելի էր պարզ եւ բացորոշ կերպով յայտնել այդ միտքը, որպէսզի չմեղադրէին հայերը նեղ ազգասիրութեան յանցանքով: Մենք ստիպուած էինք բերել երկրորդական պատճառներ եւ փաս-

տեր, հիմնուելով ջրային սխտեմներու, քոչու որներու խնդրի, զաշտային մշակոյթի նայնամանու թեան եւ այլ տուեալներու վրայ:

Վրացիները եւ թուրքերը դժ չին մեր առջարկներուն: Անոնք ոչ միայն մեծամասնութիւն էին իրենց նահանգներուն մէջ, այլեւ կ'օգտաւորուէին իրենց սահմաններու մէջ գտնուող հայ տարրը. ահա թէ ինչու ընդհանուր շափով զգալիօրէն կը թույնար հայ ժողովուրդի արժէքն ու կշիռը Կովկասի մէջ: Պարզ էր, որ այսպիսի կարեւոր խնդիրները վերոյիշեալ խորհրդակցութիւններու մէջ աւելի պիտի բարձրէին ազգային զգացումներն ու կիրքերը:

Երկրորդ, ոչ նուազ կարեւոր հարցը, գոր նոյնպէս կ'առաջադրէին հայերը, կը վերաբերէր ինքնավարութեան սկզբունքին եւ ձեւին: Հայերը կը պահանջէին ինքնավարական միաւորները կազմել ոչ ըստ հողամասային սկզբունքի, այլ ըստ ազգային սկզբունքի հիման վրայ. այսինքն՝ առաջ կը քշէին Հ.Յ.Դաշնակցութեան հին ծրագիրը, որ կողկասեան հանրապետութիւններու անկախութիւնն առաջ կը նախատեսէր մշակութային, ազգային ինքնավար շրջաններու ստեղծումը Կովկասի մէջ, չվեցարական կանաւներու պէս:

Այս ծրագիրը կը կատողեցնէր մեր հակառակորդները, թէեւ այն ժամանակ մեր պահանջը կը բխէր ասոցիզ պատուութիւնէ:

Հայերը երկու ելք ունէին անհնար կացութեանը դուրս գալու համար: Կամ պէտք է լինէր պատերազմ, ջարդ ու կոտորած եւ ժողովուրդներու սեղանանում, որպէսզի ստացուէր միատարր ժողովուրդ եւ

կա՛մ պետք է հաստատուէր ինքնավար ազգային մի-  
ութիւն, անկախ հոգային սկզբու նքններէն:

Իկպքերը վարպաշան առաջին ճամբով: 1918-20  
թուականներուն, տեղի ունեցան հայ-վրացական  
պատերազմը, վիր-թաթարական բնդ հարսմները,  
հայկական ջարդերը Բագուի նահանգի մէջ, ինչպէս  
նաև թաթարական բմբոստութիւնները հայկական  
գաւառներու մէջ: Այսինքն՝ արիւն, կտորած և տե-  
ղահանութիւն. այս բոլորը այն պատճառով, որ կոպ-  
կասի ժողովուրդները խառնուած են իրարու և  
կտրուած իրենց ազգային սահմաններէն:

Ստորերկրեայ գետի պէս, այս հարցն ալ այսօր  
թաղուած է հողին տակ. բայց մի օր, պիտի դուրս  
գայ, որովհետև իր վերջնական յուժումը գետ չէ  
ստացած կեանքէն:

Յուսանք, որ իրաւարարութեան կամ փոխա-  
դարձ համաձայնութիւններու միջոցով, կարելի պի-  
տի լլկայ յուժել մեր կեանքի այս ցաւոտ ու կնճոտս  
հարցերէն գլխաւորը:

\*\*\*

Կովկասի վարչական նոր բաժանումներու ծրա-  
վիրը Աւետիք Շահխաթունին մշակած էր սուսերէն  
մէկ գիրքով: Պետք է բռնել, որ մինչև այժմ լոյս տեսած  
գիրքերէն ամենէն աչքի ինկոյց աշխատութիւնն է  
ատիկա թէ՛ իր փաստական տուեալներով և թէ՛  
առաջադրուած տեսակետերով: Այդ ծրագիրը բն-  
գունեցին հայ բոլոր պատգամաւորները և ետանդով  
ուսու մնասիրեցին անոր բոլոր տուեալները:

Սակայն, ԼԹԷ ընթերցողը կը ցանկայ աւելի ճօ-  
ւալն ծանօթանայ կովկասեան ժողովուրդներու վի-  
ճակին և փոխ յարարերու թեանց՝ թիւերով և փաս-  
տերով, թող կարգայ Դաւիթ Անանունի «Ռուսա-  
հայերի հասարակական զարգացումը» վերաս-  
տութիւնը կրող գիրքի երրորդ հատորը (Տրատարակ-  
ւած Վենետիկ, Ս. Ղազարոս, 1926, 694 էջ), ուր հե-  
ղինակը իւր ճատրկն հասարած և գաստարած է մեր  
կեանքին վերաբերող բոլոր փաստերն ու թիւերը:  
Թէև գիրքը որոշ միտումներ ունի, շնորհիւ հեղինա-  
կի սցիլայ-գեմակրատ կուսակցութեան անդամ լի-  
նելուն, այնուամենայնիւ փաստական կոյմը ճիշդ է  
և հարուստ:

\*\*\*

Դառնանք մեր խորհրդակցութիւններուն:

1905-09 թուականներուն, կոմս Վարսնյոյով -  
Դաշկովի օրով, խորհրդակցութիւնները ոչ մէկ եզրա-  
կացութեան յանգեցան: 1915ին, երբ փոխարքայ  
նշանակուեցաւ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեիչը,  
իր կարգադրութեամբ նորէն սկսան խորհրդակցու-  
թիւնները: Նորէն հայերը առաջ բռնեցին իրենց ծրա-  
վիրը: Նորէն կազմուեցաւ վիր-թաթարական միութի-  
ւնը, որ ունէր 58 անդամ. մենք միայն 23 էինք:  
Մենք կը պահանջէինք ինքնավարական փոքր միա-  
ւորներ, վարչական բաժանում, համակովկասեան  
բնդահանուր կեզրուն և բնարողական գեմակրատիկ  
ցեղնք:

Այդ շրջանին, անկախութեան գաղափարը թոյլ

կը հայ ժողովուրդի մէջ: Այդ գաղափարը տարած-  
ւեցաւ եւ ժողովրդականացաւ: պատերազմի ատեն,  
այլ պայմաններու մէջ: Բայց մեր պահանջներու հիմ-  
քը կը կազմէին ապագայ պետութեան հետանկարնե-  
րը:

Մեր հակառակորդները չէին հաշտուեր համա-  
կովկասեան կեդրոն ու նենալուն հետ: Անոնք համա-  
ձայն չէին նաեւ, որ կովկասը բաժնուի նոր միաւոր-  
ներու եւ ունենայ ղեմակրատիկ, բնտրական ցած  
ցեղնք, որ ղէմ կը իրենց շահերուն: Կինկով մեծ կալ-  
ւածատէրներ, կը վախճային կորցնել իրենց ուժն ու  
ազգեցութիւնը: Մինչդէռ հայերը, այդ կողմէն վախ  
չունէին. բնտրական ցած ցեղնքը հնարաւորութիւն  
կու տար մեզ աւելի լայն շարժումով մասնակցելու  
բնտրութիւններուն:

Ռուսական իշխանութիւնը, յանձինս փոխար-  
քայութեան, կը բաժնէր հայերու տեսակէտը, ոչ անոր  
համար որ ղէպի մեզ ատանձին համակրանք ունէր,  
այլ որովհետեւ ատաջին անգամը չէր, որ հայ-ռու-  
սական շահերը կովկասի մէջ կ'ընթանային նոյն ու-  
ղիով:

Մեր հակառակորդները մեզ կը մեղադրէին ռու-  
սասիրութեան մէջ: Այսօր այլ նոյն մեղադրանքը  
կ'ուղղեն մեզի: Սակայն, մենք մեղաւոր չենք, որ հայ  
ժողովուրդը իր պաշտպանութիւնը կը փնտո՛ւ ռուս-  
ներու մէջ՝ իր հարեւաններու դաւերը իր գոյութեան  
ղէմ կասեցնելու համար: Վրաց մամուլը կը մեղադ-  
րէր մեզ տեսակ մը հայկական հողամաս ստեղծելու  
ձգտումին մէջ: Բայց այդ իրողութիւնն էր: Հ. Յ. Գալ-  
նակցութիւնը որդեկրամ կը այդ քաղաքականու-

թիւնը եւ մենք՝ Աւ. Սահակեան, Ս. Տիգրանեան, Աւ.  
Շահխաթունի ու ես, որ ծօտ էինք կանգնած կուսակ-  
ցութեան, ամէն գնով կը պաշտպանէինք հայկական  
տաղաքակները, որոնք հիմը կը կազմէին ապագայ  
հայկական պետականութեան ստեղծումին, ինչպէս  
նաեւ անհրաժեշտ էին հայ ժողովուրդի ինքնա-  
պաշտպանութեան համար:

1916ին տեղի ունեցած խորհրդակցութիւններն  
այ ոչ մէկ եզրակացութեան բերին: Վեց ամիս ետք,  
բունկեցաւ ռուսական յեղափոխութիւնը, որ տապա-  
լեց ռուսական գահը եւ կովկասի փոխարքայու-  
թիւնը: Բայց այս մասին՝ յետոյ:

Այսօր, մի քանի խօսք միայն այն մասին, թէ ի՞նչ  
բախտի արժանացան կովկասի մէջ զաւտական  
ինքնավարութիւններ հաստատելու համար կոչուած  
խորհրդակցութիւնները:

1917ին, երբ կովկասը փաստօրէն (ոչ իրաւակա-  
նօրէն) բաժնուեցաւ բոլշևիկներու գիրկն ինկած  
Ռուսաստանէն, ստեղծուեցաւ համակովկասեան իշ-  
խանութիւն մը, որ հրահանգով մը մտցուց կովկասի  
մէջ զաւտական ինքնավարութիւններ հետեւեալ  
հիմունքներով.

1) Ինքնավարական հաստատութիւնները կը  
մտցուին ամբողջ կովկասի մէջ:

2) Այն զաւտներու մէջ, ուր չի սպասուիր վար-  
չական որեւէ փոփոխութիւն, ինքնավարութիւնը կը  
հաստատուի անմիջապէս (անուանուած են զաւտ-  
ներ, ուր գոյութիւն ունի ոեւէ ժողովուրդի բացար-  
ձակ մեծամասնութիւն, Բազուի նահանգ, Գուրթա-  
սի նահանգ, Գաղտանի շրջան եւ այլն):



3) Այն գաւառներու մէջ, ուր կը սպասուի վարչական սահմաններու փոփոխութիւն, մէկ ամիս ժամանակ կը տրուի հայ, վրացի եւ թաթար ազգային խորհուրդներուն՝ համաձայնութեան գալու վարչական նոր բաժանումներու շուրջ. անկէ ետք ինքնավարութիւնը անմիջապէս պետք է հաստատուի նոր կազմած գաւառներուն մէջ:

Այսպիսով, հայերը ոչինչ ունէին որ ենթակայ շլիներ վճի եւ փոփոխութեան: Փաստօրէն, այս որոշումը մնաց անհետեւ անք: Հետագայ դեպքերը գարգացան այլ ուղղութեամբ: Կովկասը բաժնուեցաւ անկախ պետութիւններու եւ վարչական սահմանային խնդիրները պատճառ դարձան արիւնահեղ ընդհարումներու:

Այս խնդիրներու մասին լրջօրէն պետք է մտածել: Անցեալին մէջ անոնք աւելի թոյլ էին դրուած, քան այսօր: Անցեալի ինքնավարական խնդիրները այսօր դարձած են պետական խնդիրներ: Բոլշևիկներու կոպիտ ուժը գետնի տակ է մղած ու մի ամբամանակ լուեցուցած կիրքերը, բայց վա՞ղը...: Վաղը, երբ ինչայ բոլշևիկներու իշխանութիւնը, պատրաստ պետք է լինինք Երես առ Երես կանգնելու մեր հակասակարգներու դէմ:

Թերեւս իրաւարարութիւնը ցանկալի ուղղութիւն տայ այս հարցի լուծման: Սակայն, ատիկա կը վերաբերի հետագայ ապագային:

1918ին, երբ կովկասեան հանրապետութիւնները հռչակեցին իրենց անկախութիւնը՝ կեանքի կոչուեցան ինքնավարական հաստատութիւնները: Հաստատանի Հանրապետութիւնն այժմոցուց ինքնավար-

ական սխառեմը գաւառներու մէջ: Սակայն, բոլշևիկեան յորձանքը եկաւ խեղդելու այս ձեռնարկը, ինչպէս եւ բոլոր ձեռնարկները, որ հիմնուած էին ազատութեան եւ ազատ ինքնազործունէութեան բարկրունքներու վրայ:

Այս եղաւ Կովկասի գաւառական ինքնավարութիւններու տրուր վախճանը:

ԿՈՎԿԱՍԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ  
ԵՒ ԻՄ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ԴԵՊՒ ՓԵԹԵՐՊՈՒՐԳ

Կովկասի հասարակական և անտեսական կեանքը ու ներ բազմաթիւ խնդիրներ, որոնց ոչ բոլորի յու ծու մը կարելի էր ստանայ տեղական իշխանութիւններէն:

Կային խնդիրներ, որոնց համար յատուկ դիմումներ պէտք է ըլլային Փեթերպուրգ: Կեղբոնի կառավարութեան և նոյնիսկ ցարի հասանութիւնն անհրաժեշտ էր անոնց յու ծման համար:

Դպրոցներու, հիւանդանոցներու բացման, նոր ձամբաներ շինելու, կամուրջներ կառուցելու խնդիրները կարող էին յու ծու մ ստանայ տեղական իշխանութիւններէն. իսկ ինքնավարութիւններու հաստատման, գաղտնական բարեփոխումներու, բարձրագոյն դպրոցներու բացման խնդիրները կը պահանջէին կեղբոնական կառավարութեան միջամտութիւնը: Եւ ստիպում էր յաճախ այդ խնդիրներով մեկնիլ Փեթերպուրգ՝ անձամբ դիմումներ կատարելու:

Կովկասի համար այդ խնդիրները կարելի էր նշանակու թիւն ունէին:

Պատահական ինքնավարութիւններու հարցի մասին, մանրամասն խօսեցանք նախորդ գլուխին մէջ: Այժմ, պիտի խօսինք ուրիշ հարցերու և ամէնէն

առաջ՝ բարձրագոյն դպրոցի հաստատման մասին: Այս հարցն այ, Կովկասի իրականութեան մէջ, դարձաւ ազգային անհամաձայնութիւններու առարկայ:

Կովկասի գործիչները վաղուց արդէն եկած էին այն եզրակացութեան, որ երկիրը կարիք ունի բարձրագոյն դպրոցի: Քաղաքային վարչութիւնը այս մասին քանի մը անգամ դիմումներ բրաւ Փեթերպուրգ, սակայն կեղբոնի իշխանութիւնը միշտ այ պատասխանեց, թէ Կովկասի համար ժամանակը չէ հասունացած բարձրագոյն դպրոց ունենալու:

Պէտք է բնկ, որ քաղաքը իր միջոցներէն յատկացուցած էր 100,000 ոսրլի և 200 հեկտար հողամաս, որուն մէկ մասը պիտի ծառայէր դպրոցի շինութեան, իսկ միւս մասը պիտի վաճառուէր ի նպաստ նոր կառուցուելիք կրթական բարձր հաստատութեան: Այսպիսով, քաղաքի յատկացուցած բնդ հանուր օժանդակութիւնը կը հասնէր մէկ միլիոն ոսրլու, ի նկատի ունենալով որ հողարածինը կը գտնուէր քաղաքի բարձր մասին մէջ և կապում էր կեղբոնին հետ երկարաբարը գնացքներով:

Թաղամասը, ուր կը գտնուէր համալսարանի հոգը, կը կոչուէր Հալարար, որուն բնակչութիւնը կազմում էր էրպրա մէկ եկած հայերէն: Այդ տեղ կը գտնուէին նաև քաղաքի միւս հաստատութիւնները, ինչպէս՝ հիւանդանոցները, սպանդանոցը և ուրս բանակի գորանոցները:

Ամէնէն առաջ, կովկասցիներու առջև կրում էր այն հարցը, թէ ի՞նչ ձևի բարձրագոյն դպրոց բանայ: համալսարան՝ իր իրաւարանական, բժշկական, պատմական և բնագիտական մի գերով, թէ՛ պոլի-

տեխնիկու մ' ճարտարագիտական մասնագիտու-  
թիւններով:

Սկիզբը, այն կարծիքը կար, որ երկրի համար  
լուսազոյնն է ունենայ համալսարան, որպէս մշա-  
կոյթի ցարգացման և բարձրացման անհրաժեշտ յե-  
նարան: Սակայն, վերջին տարիներու ընթացքին, երբ  
Կովկասի բնական հարստութիւնները սկսան լայնու-  
րէն շահագործուիլ, երբ առաջ եկան բամպակի ու  
բրինձի մշակոյթի, ինչպէս նաև ջրմուղիներու կա-  
ռուցման խնդիրներ, միտքերը սկսան թեքիլ ղէպի  
մասնագիտական բարձրագոյն դպրոցի անհրաժեշ-  
տութիւնը, ճարտարագիտական իր բոլոր ճիւղերով:

Նախ՝ պէտք էր անհրաժեշտ գումարը հայթայ-  
թել, պէտք էր ձեռք բերել կառավարութեան հաւա-  
նութիւնը և որոշել թէ ո՞ր պէտք էր հիմնել դպրոցի  
բազմաթիւ շէնքերը:

Այս բոլոր խնդիրներու մէջ, ինձ ևս սիրահու-  
ցաւ մասնակցութիւն բերել: Եւ ևս կը յիշեմ շատ բնո-  
րոշ ղէպեր, որ տեղի կ'ունենային աշխատանքներու  
և բանակցութիւններու ընթացքին:

Սկսիմ միջոցներու հայթայթումէն:

Պէտք է բռնմ, որ կառավարութեան հաւանու-  
թիւնը ստանալը մեծապէս կախուած էր այն միջոց-  
ներէն, զորս Կովկասը պիտի յատկացնէր դպրոցի հա-  
մար: Թիֆլիսը սուած էր իր լուսման: Կովկասի միւս  
քաղաքները՝ Բաթումը, Երևանը, Քութայիսը, իրենց  
աղքատիկ բիւզնով, կրցան մասնակցիլ որը երկու  
հազար ուրբիթ, որը տասը հազար ուրբիթ օժանդա-  
կութեամբ:

Կը մնար Բազում, որ կարող էր մեծապէս օգնել

ձեռնարկին, շնորհիւ իր նախախնային հարստութիւննե-  
րուն: Բացի քաղաքային վարչութենէն, Բազումի մէջ  
կը գործէր և նախարդի նախնորոշներու վարչու-  
թիւնը: Առաջինը իր ուս քաղաքագլուխով կը  
գնանուր թաթարներու ազդեցութեան ստակ, մինչ-  
դեռ երկրորդի մէջ՝ կը գերիշխէին հայերը:

Պէտք է բռնել, որ Փոխարքայ Վորոնցով-Իաչկովը  
կողմնակից էր Կովկասի մէջ բարձրագոյն դպրոցի  
հաստատման: Եւ այդ պատճառով, ազատօրէն ձեռ-  
նարկեցինք միջոցներու հայթայթման. ինչ որ մեծա-  
պէս պիտի զիւրացնէր մեր գործը՝ կեկրունէն իրա-  
ւունք ստանալու, քանի որ ունենալով մեր դրամա-  
գլուխը, պիտի չձանրանայինք ուսական գանձարկ-  
ղի բիւզնի վրայ:

Որոշեցինք երթալ Բազում:

Քաղաքային վարչութեան կողմէն գնացինք  
Երեք Տոյի. ևս իբրև քաղաքագլուխ, հայազգի իշխան  
Քումանովը՝ ուսական «նախոյճ Օբոգրեմի» թեր-  
թի խմբագիրը և վրացի Դոտուան՝ վրացական «Աե-  
րաճնունը» թերթի խմբագիրը:

Բազումի մէջ մեզ ցոյց տուին լուս բնդունելու-  
թիւն: Կայարան էին եկած մեզ գիմաստրելու՝ քաղա-  
քագլուխը և քանի մը պատգամաւորներ:

Այդ ժամանակ, Բազումի մէջ մեծ դեր կը խաղար  
իմ եղբայրս՝ Կոստանդին Ստախովանը, որ նախա-  
գահն էր Բազումի Տեխնիքական Միութեան, Հայոց  
Բարեկործական բնկերութեան և քաղաքային ինք-  
նավարութեան անդամ: Անոր միջոցով ծանօթացայ  
տեղական հայ մտաւորականներու և անոնց տրա-  
մադրութիւններուն հետ:

Շուտով սկսանք մեր այցելութիւնները: Ամէնէն առաջ տեսակցեցանք քաղաքային ինքնավարութեան անդամ՝ Հաճի Ջէյնայ Արդուի Քաղիւի Հետ, որուն ապկեցութիւնը շատ մեծ էր քաղաքի բոլոր գործերու վրայ: Քաղիւի Նասարակ քարտաշէն, իր բնական խելքի շնորհիւ, դարձած էր Բազուի ամէնէն հարուստ մարդը և ամէնէն ապկեցիկը: Իր հարստութիւնը կը ծառայեցնէր բարեկործութիւններու: Հիմնած էր կերպասի գործարան մը և իր գործունէութեան համար ստացած էր ուսուցողութեան կողմէլ քաղաքացիական ժեներայի աստիճան: Ամուսնացած էր շատ պեղեցիկ, երիտասարդ և լաւ կրթուած թրքուհի մը հետ: Գիտէինք, որ ստանց Քաղիւի համաձայնութեան, պիտի շկրնանք յաջողիլ քաղաքային ինքնավարութեան մէջ:

Քաղիւի մեր գալուստի միւս օրը, մեզ հրաւիրեց ճաշի իսկ երեկոյեան, նշանակուած էր քաղաքային ինքնավարութեան ժողով: Ճաշի հրաւիրուած էին և՛ ինքնավարութեան բոլոր անդամները, շուրջ 70 հոգի: Մեզ գիժաւ որեցին պատուոյ ճատերով: Ես պատասխանեցի իրենց շնորհակալութեամբ և պարգարանցի մեր գալուստը: Քաղիւի վեր կրու և երկու խօսքով բաւ:

«Ձեր ձեռնարկած գործը մօտ է մեր սիրտին: Խնդրեմ կը յատկացնեմք ձեզ 100,000 ոսրլի»:

Կեցցէներու տարափի տակ, Քաղիւի նստեցաւ:

Շատ բնորոշ երևոյթ մըն էր այս: Դեռ ինքնավարութեան նիստը չու մարտած՝ մասնաւոր սաշի մը բնթացքին, մէկ մարդ կը կարգադրէ խնդիրը:

Երեկոյեան գնացինք նիստի: Քաղաքայու իր,

բանալով ժողովը, ներկայացուց մեր առաջարկը: Ես ճառ մը արտասանեցի: Քաղիւի խօսք անկողով՝ առաջարկեց ժողովին յատկացնել Քիֆիսի պոլիտեխնիկու մի համար 100,000 ոսրլի: Միաձայնութեամբ և ստանց միտքերու փոխանակութեան, ընդունեցաւ Քաղիւի առաջարկը:

Միւս օրը, նոյն խնդիրը պրկէ ինք արդէն նա թարղի նարերողներու ընկերութեան առջև: Այստեղ մեծ ազդեցութիւն ունէին եղբայրք Ղուկասեանները: Քանի մը ճատերկ ետք, այս հարցին ալ որոշեցաւ տրամադրել մեզ պոլիտեխնիկու մի համար 100,000 ոսրլի: Այսպիսով, մեր նպատակները կ'իրաւորուէին: Բազուի լայնօրէն կ'աջակցել մեզի:

Որոշեցինք անձամբ ներկայանալ Քաղիւին և շնորհակալութիւն յայտնել իրեն՝ իր աջակցութեան համար: Քաղիւ մեզ շատ սիրալիր բնդունեց և քիչ յետոյ խնդրեց ինձ անցնել իր առանձնասենեակը՝ գլխով զիմաց խօսելու համար:

Այստեղ պետք է պատմեմ շատ բնորոշ մէկ փաստ: Քաղիւի ունէր սան մը, որ իր հաշուով սովորած էր ճարտարագիտութիւն: Սանի անունն էր Բերուի: Երիտասարդ ճարտարապետի և Քաղիւի նոյնպէս երիտասարդ կնոջ միջև սկսեւ ին մտերմական յարաբերութիւններ: Մերու նի Քաղիւի կատակը կը ու պատու իրեր կը իր ծառաներուն՝ Բերուի թովի այցելութեան ժամանակ՝ կապել գայն և լաւ մը ձեռնէ: Մտտաները այդպէս ալ բրած էին. բայց գործը շուտով յայտնի էր գարձեր քաղաքի մէջ և Քաղիւի կանչուէր կը գատական պատասխանատուութեան: Չնայած իր 70 տարուան հասակին, շնայած իր գոր-

ձերուն և ազդեցութեան, գտաարանք վճուեց բան-  
տարկել Քաղիւր:

Իր առանձնասենեակի մէջ, Քաղիւր խնդրեց  
ինձ անմիջապէս Հետադրել Փոխարքային, թէ ինք՝  
Քաղիւր՝ մեծապէս աջակցած է պոլիտեխնիկոս մի  
գործին: Ան գիտէր, որ Փոխարքան կողմնակից է  
բարձր պարտքի կատուցման և կ'ուզէր այդ միջոցով  
անոր համակրանքը շահիլ: Յետոյ, Քաղիւր ի միջի  
այլոց բաւ, որ կ'ուզենար Փոխարքայի միջամտու-  
թիւնը ցարի ստաջ՝ իր վրայ գրուած պատիժը վերա-  
ցրելու համար:

Թիֆլիս հասնելու ապէս, խնդրեցի Փոխարքային,  
որ խնդրէ ցարի աջակցութիւնը և ձերունի Քաղիւր  
ազատեցաւ բանտարկութեան պատիժէն:

Մենք արդէն ունէինք մէկ միլիոնէ աւելի դրամ,  
որ կ'ընդգրկէր նաև քաղաքային հողերու վաճառքին  
ստացուած հասոյթները: Պէտք էր այժմ ստանալ ցա-  
րի համաձայնութիւնը և որոշել քաղաքի մէջ պարտքի  
տեղը:

Վերջին հարցը առաջին իսկ օրէն առաջ բերաւ  
ժայրայեղ ազգային կիրքեր: Քաղաքային վարչու-  
թեան յատկացուցած հողամասը կը գտնուէր Հալա-  
բարի մէջ, ուր կը բնակէին հայերը: Այս հողը քաղաքի  
բոլորային մասին մէջ էր: Վրաց ազնուականութիւնը  
կը յատկացներ ուրիշ հողամաս մը, նոյնպէս 200 հեկ-  
տար, բայց քաղաքի ցած մասին մէջ: Երկու կողմերն  
այ, թեր ուզէմ պատճառարանութիւններ կը բերէին:  
Հասարակական միջնորդութիւնը որտեղ ցարու  
ամբողջ հասարակական գործիչները, մամուլը, ժողովուրդը  
ամբողջ թափով և կիրքով կը մասնակցէին վճիռն:

Ամիսներ շարունակ, միտքերը գրազած էին այս  
հարցով: Բազուն և Քուրթայիս նոյնպէս խառնուե-  
ցան վճիռն և հարցը կամաց-կամաց դարձաւ հայ-  
վրացական ընդհարու մեկուս խնդիր:

Ննդիրը վերջնականապէս պիտի որոշէր Փոխար-  
քան: Ան կազմեց 16 հոգիէ բաղկացած յանձնաժողով  
մը, անդամակցութեամբ գիտնականներու և բարձր  
պաշտօնեաներու: Յանձնաժողովը լայնօրէն պիտի  
ուսու մնասիրէր խնդիրը և իր կարծիքը յայտնէր Փո-  
խարքային: Յանձնաժողովը քննեց խնդիրը՝ ի նկատի  
առնելով տեղի երկրաբանական վիճակը, քամիներու  
ուղղութիւնը, խոնաւութիւնը, հողորդակցական  
միջոցները, կարծես թէ կ'որոշուէր պետական նշա-  
նակութիւն ունեցող կարևոր հարց մը:

Քաղաքային հողամասը իր պաշտպաններն ու-  
նեցաւ յանձնելու գիտնականներու և Բազունի քաղա-  
քային գործիչներու և որոշուեցաւ պոլիտեխնիկոս մը  
կառուցանել քաղաքային հողամասի վրայ, այսինքն՝  
հայկական թաղին մէջ, սու այդ, հայ-վրացական յա-  
բարերութիւնները երկար ժամանակ մնացին լար-  
ուած:

Կը մնար վերջին խնդիրը՝ ցարի հաւանութիւնը:  
Քաղաքային խորհուրդի որոշումով, ևս մեկնեցի  
Փեթերպուրգ՝ տանելով ինձ հետ քանի մը գիտնա-  
նէր: Առաջինը՝ բարձրագոյն պարտքի գիտնա-  
նէրը՝ պատուաւ, ինքնապարտութիւններու  
խնդիրը, որու մասին յիշատակեցի նախորդ գլուխի  
մէջ, երրորդը կը վերաբերէր երկու կողմի պատու  
որնե-  
րու հաստատման իսկ շորորդը՝ մեծ ճամբու շինու-  
թեան խնդիրն էր: Ճամբան կովկասեան լեռնաշղ-  
թի

Թայլն անցնելով, պիտի միացնել Թիֆլիսը Վլադիկապոլսին, և պիտի ունենար 20 վերստ երկարություն՝ գետնու զի մը, որով 24 ժամուան փոխարեն՝ Վլադիկապոլսի կարելի պիտի ըլլար երթալ ընդամենը շորս ժամուան ընթացքին:

Հետս առնելով բոլոր վաւերաթղթերը և ունենալով Փոխարքայի համակրանքը բոլոր խնդիրներու հանդէպ, մեծ հաւատքով ճամբայ ելալ ղէպի Փեթերպուրգ:

Նախարարներու խորհրդի նախագահը այդ ժամանակ Ստոլիպինն էր, որ յետոյ սպաննուեցաւ յեղափոխական-պրովոկատորի մը ձեռքով: Ստոլիպինը ինձ ընդունեց բաւական սառը: Պէտք է ըսել, որ Ստոլիպինի և Փոխարքայ Վորոնցով-Դաշկովի յարաբերութիւնները նոյնպէս սառն էին: Ստոլիպինը ըսաւ, թէ Փոխարքան կովկասի մէջ որդեկրած է շատ մեղմ քաղաքականութիւն մը և թէ բոլոր խնդիրներու շուրջ անմիջականօրէն դիմումներ կ'ընէ ցարին: Ստոլիպինը ինձ կը նայէր որպէս այնպիսի երկրէ մը եկած պատգամատորի, որ իրեն լրիւ կերպով չի հպատակիր: Լսելով իմ դիմումները, ան ըսաւ.

«Կը գարմանամ, պրն. Թիֆլիսի քաղաքապետութիւն, որ նման հարցերով դուք ինձ մօտ էք եկած: Կովկասի մէջ դուք ունիք մէկը, որ ցարի պէս բան մըն է ձեզ համար: Ան կրնար վեճեր կայացնել այս բոլոր խնդիրներու մասին»:

*Քիչ մը լուռ թեւնէն ետք, աւելցուց.*

«Կուսը ինձ գրած է այդ բոլորի վերաբերեալ՝ յայտնելով ինձ միաժամանակ եւ ձեր գալու մասին: Ինչ կը վերաբերի բարձրագոյն դպրոցին, ես

կազմած եմ յատուկ յանձնախումբ մը նախարարներու օգնականներէն, նախագահութեամբ՝ լուսաւորութեան նախարար Կասսոյի: Հոն դուք կ'ընէք ձեր գեկուցումը: Որպէս ներքին գործերու նախարարութեան ներկայացուցիչ, յանձնախումբի աշխատանքներուն պիտի մասնակցէք օտարականակա ղեկավարամեծի պետ Զուեւր: Գաւառական ինքնավարութիւններու համար դրական որոշում կայացնելը կը գտնեմ վաղաժամ, որովհետեւ կովկաս յեղափոխական եռուզեռի մէջ է եւ անոնք պիտի դառնան յեղափոխութեան օճախներ: Երդուեալ դատաւորներու հաստատումը կովկասի մէջ չեմ գտներ նպատակայարմար: Հայ դատաւորը պիտի պաշտպանէ հայը, վրացին՝ վրացին, իսկ թուրք դատաւորը՝ թուրքը: Ընդհանրապէս երկարուղի խնդիրը: Ինձ կը բուռն քեզ յամենայն դէպս շուտ գլուխ գալիք գործ չէ այդ: Գիտէք, որ հիմա հերթը Սեւծովեան երկաթուղիով կառուցմանն է: Հոն մեծ իշխանները ունին կալուածներ եւ շահագրգռուած են շուտափոյք կերպով լուծելու այդ խնդիրը: Պարզ է, որ դուք պիտի չյաջողիք ձեր այս ծրագրի մէջ»:

*Լսելով նախարարներու խորհրդի նախագահին սառն դատողութիւնները իմ բոլոր դիմումներու մասին, պատասխանեցի, թէ ես պիտի աշխատիմ լուրջ տուեալներով ապացուցանել, որ կովկասի ժողովորդը միանգամայն հասունցած է բարենորոգումներու համար:*

*Ստոլիպինը ինձ առաջարկեց իրեն թողուլ բոլոր*

գրու թիւները, որպէսզի իրենք քննութեան առնեն  
յարու ցածս խնդիրները:

Գիտէի, որ Փեթերպուրկի մէջ ինձ կը սպասէր  
ծանր, անհասարար պայքար: Յոյսս կոմս Վորոն-  
ցով-Գաշկովի ծանօթութիւններն էին և իր բարե-  
կամական նամակները, ուղղուած նախարարներու  
խորհրդի նախկին նախագահ՝ կոմս Վիտտէին և Ֆի-  
նանսներու նախարար Կոկովցեւիին:

Առաջին այցելութիւնս ըրի Վիտտէին, որ 1906  
թուին Ռուսաստանին տուաւ առաջին սահմանադ-  
րութիւնը և որ ամենահփոք իշխողն էր այն ժամա-  
նակուան Ռուսաստանի: Վիտտէն այժմ մոռցուած  
էր կարծես, սակայն մտերիմ էր ցարին ինչպէս և Վո-  
րոնցով-Գաշկովին, որովհետեւ երկուքն այ նախա-  
բարներ էին եղած ոչ միայն իր, այլև իր հօր՝ Աղեք-  
սանդր Գ. Ի. Թագաւորութեան օրօք: Վիտտէն և Վո-  
րոնցով-Գաշկովը կը կազմէին ոռուս բիւրոկրատիի  
ազատասէր թեւը:

Վիտտէն զիս ընդունեց զանգատներով, որ այ-  
սօրուան իշխանութիւնը երկիրը կը տանի ղէպի յե-  
տադիմական կարգեր և կը նպաստէ երկրի յեղափո-  
խական տարրերու զարգացման: Ինք՝ Վիտտէն՝ ոչ  
մէկ ազդեցութիւն ունի այսօրուան իշխանաւորնե-  
րու վրայ, ապա և անգործ ինձ օգնելու որեւէ կերպ:

Երկրորդ այցելութիւնս եղաւ Կոկովցեւիին, որ  
Ստոլիպինի սպանութենէն ետք զարձաւ նախարար-  
ներու խորհրդի նախագահ: Կոկովցեւի ղէմ ար-  
տայայտուեցաւ Կովկասի բարձրագոյն դպրոցի ծը-  
րագրին: Իր կարծիքով, ուսանողները ոչինչ կը սովո-  
րին: Չանոնք միայն կը հետաքրքրէ դպրոցի վկայա-

կանը: Ուրեմն, կարիք չկայ, որ մասնազատ փրոֆե-  
սորներ զբաղին դասախօսութիւններով, երբ ուսա-  
նողութիւնը միւսնոյնն է, պիտի չլսէ գանոնք: Կով-  
կասցիները միշտ կարող են, եթէ ցանկանան, Ռու-  
սաստանի մէջ շարունակել իրենց բարձրագոյն կրթ-  
ութիւնը:

Այստեղ այ անյաջողութեան մատնուեցի: Վրոն-  
ցեցի զնալ Պետական խորհրդի նախագահ՝ Գուշկովի  
մօտ, խնդրելու իր աջակցութիւնը՝ Ստոլիպինի վրայ  
ազդելու համար:

Գուշկովը առաջնորդն էր Պետական խորհրդի  
ամենամեծ կուսակցութեան՝ Հոկտեմբերեանական-  
ներու, որ որպէս պահպանողական՝ կը պաշտպանէին  
Ստոլիպինը: Այդ կուսակցութիւնը բաղկացած էր  
մեծ կայուածատէրներէ և ունեւորներէ: Ինձ կը  
թուէր, թէ Գուշկովը պիտի կարողանայ ազդել Ստո-  
լիպինի վրայ: Սակայն, Գուշկով ղէմ արտայայտուե-  
ցաւ գաւառական ինքնավարութիւններու հաս-  
տատման՝ պատճառարանելով, որ այդ ինքնավա-  
րութիւնները պիտի դառնան ազգային օճախներ և  
փտանց պիտի հանդիսանան Ռուսաստանի ամբող-  
ջութեան զաղափարին:

Գուշկովը այսօր Փարիզ է և իր ուժերու ներա-  
ծին չափ կը գործէ բոլշեւիկներու ղէմ՝ փոքրիկ  
զբոյնները հրատարակելով:

Ինչ մը մանրամասնօրէն կանց առի այն ժամա-  
նակուան Ռուսաստանի իշխանաւորներու առար-  
կութիւններու և կարծիքներու վրայ, որպէսզի ցոյց  
տամ, թէ ինչպէս կառավարութիւնը իր կոյր ու յետա-  
ղէմ քաղաքականութեամբ կը նպաստէր յեղափոխա-

կան արամադրութիւններու գորգացման և ամձան: Ոստիկանութիւնը, ժանտարմերիան, գորքը և երկրի մութ ու ձերք, համախմբուած «ոռու ժողովուրդի միութեան» մէջ, իր յեռարանը կը կազմէին:

Հետագայ գէպերը ցոյց տուին որ այդ ուժերը մատր մատր չգարկին 1917 թուին՝ փրկելու համար թաղաւորն ու գահը:

Այսպիսով, կառավարական շրջանակներու մէջ ևս պաշտպանութիւն չգտայ:

Որչեցի զիմու մներ ընկ Պետական Դումայի ձախակողմեան կուսակցութիւններու պետերուն և ազդեցիկ թերթերու խմբագիրներուն: Տեսնուեցայ յայտնի փոքրատար կախալե սկիի և Միլիկովի հետ: Պետական Դումայի մէջ, ձախ հոսանքները անվերջ պայքար կը մղէին կառավարութեան դէմ՝ մեր նոյն սկզբունքներու համար: Բայց սպարպիւն: Անոնք ևս կ'ուզէին մամուլի ու խօսքի ազատութեան միջոցով գործունէութեան կանչել երկրի ազատասէր տարրերը: Բայց կառավարութեան ականջները խալ կին նրանց ձայների հանդէպ: Ստոլիպինը կ'ըսէր անոնց.

«Դուք կ'ուզէք մեծ փլուզումներ. մեք կ'ուզենք մեծ Ռուսաստան»:

«Չէք վախեցնէք», — կ'ըսէր այն պատգամաւորներուն, որոնք ցոյց կու տային երկրի մէջ ծայր տուօց զի պացիական անբաւականութիւնները: Ահարեկումներու և սպանութիւններու դէմ ան կը պայքարէր կախաղաններով: Այս վերջինները այնպէս կը գործէին, որ Պետական Դումայի մէջ մէկը անոնց անունը դրած էր «Ստոլիպինեան փողկապներ»:

Ես կը տեսնէի այդ բոլորը, բայց ի՞նչ կարող էի

ընել: Քաղաքացիութիւն հանգամանքը կը ստիպէր ինձ օրինական ճամբաներով ընթանալ և օրինական ձևերով իշխանութեան հասկցնել ժողովուրդի պահանջները: Եւ որիչ ճամբայ չունէի, բայց էթի իշխանութեան ճամբան, շնայած որ լաւ կը ճանչնայի այդ յետադէմ իշխանութիւնը և ատելութեամբ լցուած էի անոր հանդէպ:

\* \* \*

Փեթերպուրգ հասնելուս մէկ շաբաթ ետք, հրաւիր ստացայ ներկայանալու նախարարներու օգնականներու նիստին, որուն կը նախագահէր լուստօրութեան նախարար Կասսան, ծագումով յոյն:

Նախքան այդ ժողովին գնալս, այցելութիւն տուի մեծ իշխան Նիկոլայ Միխայլովիչին, Կովկասի նախկին Փոխարքայի որդուն, որ Ռուսաստանի մէջ յայտնի էր որպէս լաւ պատմաբան և որպէս կրթուած ու ազատասէր մեծ իշխան: 1919ին, բոլշեւիկները զինք ալ գնդակահարեցին: Մեծ իշխանը կը ճանչնար հայրս և մեր ամբողջ ընտանիքը: Հաճոյքով լսեց խնդիրքս, բայց ըսաւ, որ ոչինչ կարող է ընել:

Ձեռքը պարզելով դէպի Չմեռային Պալատը, ուր կ'ապրէր ցարը, մեծ իշխանն ըսաւ.

«Այնտեղ ինձ յսոց չկայ: Զիս չեն ալ սիրեր: Ես կը սիրեմ Կովկասը. այնտեղ եմ անցուցեր մանկութիւնս ու յաճախ կ'երթամ Կովկաս: Բայց ի՞նչ կարող եմ րնել»:

Մեծ իշխանը 1916ին ցարին պուշացուցեր էր, թէ ի՞նչ մեծ վտանգ է Լենինի գահն ու թագաւորի



ամբողջ տոհմը. բայց պատասխանի փոխարեն՝ ցարը աքսորած էր զինք Փեթերպուրգէն:

Այսպէս, ամէն տեղ անյաջողութեան հանդիպելով, զնացի նախարարներու օգնականներու նիստին՝ զեկուցանելու համար, թէ ՔիՖլիսը կարիքը ունի բարձրագոյն զպրոցի, որուն համար կառավարութենէն ոչ մէկ սենթ դրամ կը պահանջէ: Չիս հրաւիրած էին ժողովէն մէկ ժամ առաջ: Չիս բնույնը նեց լուսաւորութեան նախարար Կասսոն, ցարի ամենայնտաղէմ աստիճանաւ որներէն մէկը: Ես զեկուցեցի իրեն: Յոյց ատի, որ Կովկասը կարիքը ունի մասնագիտական բարձր զպրոցի մը բացման:

Կասսոն ինձ պատասխանեց, թէ ինք ծանօթ է խնդրին. թէ՛ Փոխարքան զրկը է իրեն արդէն այլ մասին. թէ՛ ժողովին պիտի մասնակցին բոլոր նախարարութիւնները և թէ՛ ինք նախքան իր կարծիքն ինձ յայտնելը՝ կ'ուզէր բոլորի կարծիքներն իմանայ:

Այդ ժամը իննին զիս կանչեցին ժողովի: Կըր մեծ սեղանի շուրջ նստած էին մօտ 15 հոգի, նախարարներու օգնականներ, մինակ կամ զեպարտամենտներու վարիչներու ընկերակցութեամբ: Իրենց ձեւական հազուատներով, սեղմ կոճկուած, թղթապանակները առաջները զրած, բոլորը նստած էին լուս և լուրջ: Ինձ առաջարկեցին տեղ զբաւել Փոխարքայի Փեթերպուրգի ներկայացուցիչին քով, որ պիտի խօսէր Փոխարքայի կողմէն:

Ժողովը բացաւ Կասսոն՝ յայտարարելով, թէ օրակարգի միակ հարցը Կովկասի բարձրագոյն զպրոցի հարցն է: Առաջին խօսքը տրուեցաւ Փոխարքայի ներկայացուցիչին, որ մի քանի խօսքով ներկա-

յացուց Փոխարքայի դրական կարծիքը այս խնդրի մասին՝ աւելցնելով, որ Կովկասն ունի նիթական միջոցներ և նախարարներու խորհուրդին կը մնայ, ուրեմն, որոշել և ստանայ ցարի համաձայնութիւնը միայն:

Երկրորդ խօսքը տրուեցաւ ինձ: Մանրամասն կանգ առի Կովկասի մէջ պոլիտեխնիկում ունենալու անհրաժեշտութեան վրայ, ոչ միայն անոր համար որ Կովկասը հարուստ է նաթով, մանկանկով և այլ հանքերով, ոչ միայն անոր համար որ Կովկասը կարող է ինք հոյակ իր բարձրագոյն զպրոցի բոլոր ծախքերը, այլև անոր համար որ Կովկասցիք Ռուսաստան գալով՝ կ'իշխան կլիմայական տարրեր պայմաններու մէջ և կը հիանկանան (թարախտը աւերներ կը գործէր):

Իմ ճառէն ետք, նախագահը առաջարկեց ներկաներուն յայտնել իրենց նախարարութիւններու տեսակետը: Առաջին խօսքն առաւ ներքին գործոց նախարարութեան ներկայացուցիչը՝ ոստիկանութեան զեպարտամենտի պետ՝ Չուկը: Ներքին գործոց նախարարը ինքը Ստոլիպինն էր, որ միևնոյն ժամանակ նախարարներու խորհուրդի նախագահն էր: Չուկը խնդրին մօտեցաւ ոստիկանական և երկրի ապահովութեան տեսակետէն: Ան ըսաւ, որ վիճակագրութիւնը ցոյց կու տայ, թէ ամբողջ Ռուսաստանի մէջ յեղափոխական ուսանողութեան մեծ մասը կը կազմեն Կովկասցիները: Այսպիսի պարագաներուն, Կովկասի մէջ յատուկ զպրոց բանայր պիտի ծառայէր յեղափոխական նպատակներու և պիտի զժուարացնէր երկրի ապահովութեան գործը: «Ներ-

ֆին գործոց նախարարութիւնը, վերջացուց ան, դէմ է Քիֆլիսի մէջ բարձրագոյն դպրոց բանալու ծրագրին»:

Միս նախարարութիւններու ներկայացուցիչներն այ ստանց պատճառարանելու գլխ արտայայտուեցան: Միայն կոմս Իգնատեւր՝ հողագործութեան նախարարութեան ներկայացուցիչը՝ ի նպաստ կովկասի խօսեցաւ: Ան ստաջ բերաւ կովկասի հողագործական իւրայատուկ պայմանները, ուր կը բուսնին բրինձ, բամպակ, թուխուն եւ պողատու ծառեր: Մեր խնդիրը մերժուեցաւ:

Վերադարձայ Քիֆլիս, Փեթերպուրգի մէջ կարգադրելէ ետք տնտեսական քանի մը աննշան խնդիրներ:

Զեկուցեցի Քաղաքային Խորհրդին՝ Փեթերպուրգի մէջ կատարած աշխատանքներու մասին: Զեկուցեցի եւ Փոխարքային: Կոմս Վորոնցով-Դաշկովը ըսաւ. «Կասսոն մեծ նամբու վրայի աշխատողներէն է»:

Ինչ պէտք է բնել: Երկար մտածելէ ետք, վճուեցի նորէն դիմել Փոխարքային: Իրեն ըսի, որ կովկասի ժողովուրդը գիտէ, թէ Փոխարքան կողմնակից է պոլիտեխնիկոս մի բացման եւ որպէս իշխանութեան վարկը չիմայ ժողովուրդի աչքին, պէտք է որ Փոխարքան անձամբ դիմէ ցարին եւ ստանայ անոր ինչպէս աս թիւնը: Փոխարքան համաձայնեցաւ ինձ հետ: Խոստացաւ Վրիմի մէջ հանդիպել ցարին եւ անձամբ խնդրել անոր համաձայնութիւնը:

Այդպէս այ եկաւ... 1913 Անպատեւրեմին, Փոխարքան Վրիմէն բերաւ պոլիտեխնիկոս մի բացման իրա-

ւունքը: Քիֆլիսը հանդիսաւոր բնդունելութիւն բրաւ Փոխարքային: Ես ձառ մը խօսեցայ՝ բարի գալուստ բակով: Սրբ սարսակելի անձրեւային էր: Ամբողջ վեց ժամ սպասեցինք իր գալուն: Մրսեցի եւ կէս ասորի շարու նակ հիւանդ եկայ:

Շէնքը սկսաւ կառուցուիլ: Բայց մէկ տարի ետք, փրթաւ մեծ պատերազմը եւ շինութիւնը յետաձգուեցաւ:

Յետոյ տեղի ունեցաւ յեղափոխութիւնը. կազմուեցան կովկասեան հանրապետութիւնները եւ Քիֆլիսի մէջ բացուեցան երկու համալսարան եւ մէկ պոլիտեխնիկոս:

Բագուի մէջ նոյնպէս բացուեցաւ մէկ համալսարան. իսկ Հայաստանի Այլբտանդրապոլ քաղաքի մէջ բացուեցաւ հայ անդրանիկ համալսարանը, որուն վարիչը դարձաւ իմ ժօրեղբայրս՝ փրոֆ. Ղամբարեանը: Ես ներկայ էի այդ համալսարանի բացման, որդէն որպէս ներկայացուցիչ Հայաստանի հանրապետութեան:

Երգուեալ դատաւորներու խնդիրն այ իրականացաւ կովկասեան ժողովուրդներու անկախութեան օրերուն: Իսկ երկաթուղագիծի հարցը դեռ մինչեւ այսօր այ կը մնայ շուրճուած:

Այնուհետեւ, քանի մը անգամներ պայքի փեթերպուրգ, բայց բոլորովին ուրիշ խնդիրներու համար: Նոր հարցեր էին տապաւրկ նետուել. բնդ հանուար պետական նշանակութիւն ունեցող հարցեր, բայց սերտօրէն կապուած կովկասի իրականութեան հետ: Այդ հարցերը այնքան կարեւոր են, որ կ'անդրադառնամ անոնց առանձին-առանձին:

Այսօր կը յիշատակեմ երկու ճամբորդութիւններս միայն զԼպի Փեթերպուրգ: Մէկը 1913ին, երբ Ռուսաստանը Հանդիսաւորապէս կը տօնէր Ռոմանովների տան 300ամեակը. իսկ միւսը՝ քաղաքային գործերով, որու բնթացքին կ'աշխատէի ներքին գործոց նախարարի միջոցով Հաստատել տալ կաթողիկոսի բնտրութիւնը:

300ամեակի տօնակատարութեան ասթիւ ևս Եղայ պալատի մէջ, ուր 2000 բարձրաստիճան պաշտօնեաներու Համար պատրաստուած էր ճաշասեղան, որուն կը մասնակցէր ևս ցարի ամբողջ բնտանիքը: Նստած էի Բաթումի քաղաքապետի՝ Իշխան Անդրոնիկովի կողքին: Ճաշէն Լոք, որպէս քաղցրեղէն բերին զԵղձեր: Իշխանը, նախքան իր բաժինը վերցնելը, գննական աչքերով նայեց զԵղձերուն: Պայատական սպասաւորը կարծելով, թէ Իշխանը իր կեանքի մէջ զԵղձ չէ տեսած, բտաւ. «Սա զեմուսխնձոր չէ, սա զԵղձ է»:

Երկրորդ անգամ, ինչպէս բսի, Փեթերպուրգ գնացեր էի ի միջի այլոց Հաստատել տալու Համար կաթողիկոս Սուրենեանի բնտրութիւնը: Որպէս պատգամաւոր, իմ ձայնը տուած էի Գլորգ Սուրենեանին: Կաթողիկոսական թեկնածու էր Ե՛ր Պայտի պատրիարք Օրմանեանը:

Էջմիածին՝ բնտրութիւններուն մասնակցելու Համար մեկնելէս ատաճ՝ Եղայ Փոխարքայի մօտ, որ ինձ խնդրեց յայտնել, Եթէ պաղտնիք չէ, թէ ո՞րն է երկու բէն իմ թեկնածուն: Ես ևս իմ բնկերներս այդ ասթիւ գաղտնիք չունէինք ևս պարզօրէն պաշտպանեցինք Սուրենեանի թեկնածութիւնը: Յայտնեցի Փո-

խարքային իմ որոշումը: Ան իր Հաւանութիւնը տուաւ: Այն ժամանակ, Հարցուցի, թէ ինչո՞ւ է կոմսը զԷ՛մ Օրմանեանի թեկնածութեան: Փոխարքան պատասխանեց, որ Սուրենեանը ոտուսահայ է, կը ճանչնայ մեզ, մեր լեզուն, զաշխակցականներու թեկնածուն է, որոնց կը ճանչնանք. իսկ Օրմանեանը Քրքական տիպի խորամանկ դիւանագէտ մըն է, որմէ կարելի է յրջօրէն վախնայ:

Ընտրուեցաւ Սուրենեանը: Բայց Փեթերպուրգի Իշխանութիւնը կը տատանէր Հաստատել այդ բնտրութիւնը, որովհետեւ Սուրենեանը անցած էր զաշխակցականներու ձայներով և կարող էր գործի մէջ զառնայ զաշխակցականներու քաղաքականութեան ջահակիրը:

Սուրենեան զարձաւ Հաստատրիմ կաթողիկոս: Կանգնած մնաց իր բարձրութեան վրայ մեր անկախութեան օրերուն և բոլշևիկեան Իշխանութեան Հայածանքներու ժամանակ:

ԿՈՎԿԱՍԱՐ՝ ՄԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԻ  
ՆԱԽՕՐԵԱԿԻՆ՝\*

Կովկասի ժողովուրդները, մասնաւորապէս ստաճաւոր ստարբերը, յանձին մտաւորականութեան և կուսակցական գործիչներու, կ'ապրէին երկու ձեւի գաղափարներով: Ոմանք, որպէս Ռուսաստանի բաղաբայցիներ, կապուած էին սուս մշակոյթին և մտաւորականութեան, ինչպէս որ կապուած էին և իրենց ազգային գաղափարներուն: Ոմանք այ կ'ապրէին միւսայն իրենց ազգային իտելայնեայ, ի նկատի չունենալով պետական ընդհանուր շահերը: Իմ գործունէութեան ընթացքին, ևս պատկանած եմ ասալին կարգի գործիչներուն:

Ռուս մշակոյթի ազդեցութիւնը, սուսական մեծ քաղաքներու՝ Փեթերպուրգի, Օդեսայի, Մոսկուայի, Կիևի, Խարկովի մէջ անեցած կապը սուս մտաւորականութեան հետ, վերջապէս, չփութ կովկասեան և սուսական քաղաքական կուսակցութիւններու հետ՝ կապուած էին կովկասի երիտասարդութիւնը սուսական ազատ միտքին և կեանքին:

Եթէ մեր տաճկահայ եղբայրները իրենց կրթու-

\* Այս գլուխը իբրև անունին բաժին չէ կատարուած յուշագրութեան մէջ, այլ նկատի առնուած է իբրև ինքնորոգ գլուխին երկրորդ մասը:

եմք

թիւնը կը ստանային հայկական կամ Ֆրանսական դպրոցներու մէջ, անոնք կ'ունենային հայկական կամ Եւրոպական մշակոյթ: Տաճկական մշակոյթ գոյութիւն չունէր: Ահա թէ ինչո՞ւ տաճկահայ գործիչները և մտաւորականները կտրուած էին թրքական կեանքէն: Հայ ժողովուրդը, թուրքոյ մէջ, բացի քանի մը բարձրատիճան պաշտօնեաները և վաճառականները, ևնթակայ էր անասելի բռնութեան թէ՛ բարոյապէս, թէ՛ տնտեսապէս և թէ՛ Ֆիզիքապէս:

Ոչ մէկ համեմատութիւն կարելի է ընել թուրք և սուս բռնութիւններու միջև: Ռուս կառավարութիւնը կանգնած էր միայն հայ ժողովուրդի ազգային մշակոյթի ճամբաներուն վրայ և կ'ապրէր անոր բնական զարգացումը: մինչդէռ թուրքերը կը սպառնային հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութեան: Բուսկան և մասնաձեւայն փաստը, որ ոչ մէկ սուսահայ կը ցանկար ապրիլ թրքական իշխանութեան տակ, իսկ իւրաքանչիւր տաճկահայ կը ձգտէր զկարծիք սուսաստան և այնտեղ կը գտնէր աշխատանքի խաղաղ պայմանները:

Արդար իննչու համար պետք է բանք, թէ սուսական բարձր մշակոյթը, լեզուն, սուս կնոջ հմայքը կը տարածէին սուսական ազդեցութիւնը հայ քաղքենի և մտաւորական զանաբուն մէջ. հանգամանք մը, որ կը վախցնէր մեր տաճկահայ եղբայրները, որոնք այդ երևոյթին մէջ կը տեսնէին ապագայնացման յուրջ նշաններ: Դեռ 1914ին, թրքահայ յայտնի գրագետ Զոհրապը ինձ իր վախը յայտնեց այդ առթիւ:

Հայ և վրացի երիտասարդութիւնը հազարներով

կր սովորել ուստական համայնարաններու և ճարտարագիտական դպրոցներու մէջ: Լաւագոյն տարիքը, երբ կր կազմուի մարդուս հոգեկան աշխարհը, երբ քաղաքական աշխարհահայեցողութեան առաջին հիմքերը կը դրուին, մեր երիտասարդութիւնը կ'անցնէր ուստական քաղաքներու մէջ, կը շփուէր ուստ յեղափոխական միտքի ներկայացուցիչներու հետ և, բնականաբար, մեծապէս կ'ազդուէր ուստական գաղափարներէն: Եթէ կանգ առնենք մեր կուսակցութիւններու կազմաւորման պատմութեան վրայ, կր տեսնենք, որ շ. Ե. Դաշնակցութիւնը ծրարապէս բոլորովին մօտիկ է ուստ սոցիալիստ-յեղափոխականներու կուսակցութեան: Եւ կային նոյնիսկ մարդիկ, որոնք միաժամանակ կ'անդամակցէին երկու կուսակցութիւններուն ալ:

Վրացական սոցիալ-դեմոկրատները 20 տարի շարունակ եղան ուստ սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան մէկ մասը և միայն 1918ին բաժնուեցան անկէ՝ պատմաբան վրացական սոցիալ-դեմոկրատական առանձին կուսակցութիւն:

Նոյնը կարելի է բռնաբերել հայ և վրացի սոցիալիստ-յեղափոխականներու մասին, որոնք սուրբաբարձ չէին ցարիզմը տապալելու և ուստական ընդհանուր ուստակալար կարգեր մտցնելու գաղափարներով: Մինչև 1917 թուականը, անոնք չէին մտածել նոյնիսկ բաժնուելու Ռուսաստանէն և կազմելու անկախ պետութիւններ: 1917ի Փետրուարեան և Հոկտեմբերեան յեղափոխութիւններն էին, որ իրենց ազգային սահմաններու մէջ մտցրին այդ խմբակցութիւնները:

Ընթերցողը ինչպէս կր տեսնէ, կոմկառի կուսակցութիւններու ծրարային փոփոխութիւնները արդիւնք էին առարկայական պայմաններու զարգացման և ժողովուրդի մշակութային վերելքին:

Անկախ պետութիւններու կազմաւորման գլուխին մէջ, մենք դեռ կ'անդրադառնանք այն հարցին, թէ ինչպէս բուլղարիկեան կուսակցութիւնը ծանր հարուած մը իջեցուց անկախ պետութիւններու գլխուն: Այստեղ կարելի է շեշտել այն հարցը, թէ ինչպէ՞ս վրաց սոցիալ-դեմոկրատները, որ կուսմտակից էին մէկ կեղծոնածից իշխանութեան, որ լսել իսկ չէին ուզեր անջատման մասին, որ կը մեղադրէին շ. Ե. Դաշնակցութիւնը ազգայնականներ և հանդիսացան իրենց ժողովուրդի ազատագրման ու անջատման սահմիրաները:

Շ. Ե. Դաշնակցութեան քաղաքական միտքի փոփոխումը տրամաբանական հետեւանքն էր իր իսկ ծրարի բնական գարգացման: Սակայն, ինչո՞ւ այսքան հակասութիւն վրաց սոցիալ-դեմոկրատներու մէջ: Պարզ էր մէկ բան. ա՛յն՝ որ տուեալ պայմաններու մէջ, երկու կուսակցութիւններն ալ լուսաւոյն միջոցը կը խորհէին ստեղծելու տանելի կացութիւն՝ ժողովրդական հանճարի ազատ զարգացման համար:

\* \* \*

Շ. Ե. Դաշնակցութիւնը, որպէս ժողովրդապետական բնկերվարական կուսակցութիւն, կը թուէր, թէ առաջին հերթին պիտի պայքարէր ուստ միապետ-

տականութեան զէմ՝ տապալելու համար ցարական գերիշխանութիւնը: Սակայն, կուսակցութեան առաջ զրուած էր ազգային, կարևոր ուրիշ հարց մը. այն է՝ Տաճկահայաստանի ազատագրութեան հարցը: Ռուս պետութիւնը, որպէս ղեկի հարաւ, ղեկի Սև ծովը ձգտող ու մը կը նկատուէր զաշնակից հայ ձգտումներուն եւ հայկական շահերուն: Զէ՞ որ երկու հարիւր տարի շարունակ Ռուսաստանը պատերազմած էր տաճիկներու զէմ՝ միշտ յառաջանալով ղեկի հարաւ. չէ՞ որ ուսնները իրենք զիրենք միշտ համարած են «թուրքերու գարևոր թշնամին»:

Հայ քաղաքական միտքը ապրած է շարունակ երկրնորանքներու մէջ թէ՛ ցարիզմի, թէ՛ ժամանակաւոր կառավարութեան եւ թէ՛ այսօր խորհրդային իշխանութեան օրերուն: Քաղաքական այդ երկընտրանքը եղած է մեզ համար ճակատագրական, ողորկ-պական:

Թէ՛ մեծ պատերազմի նախօրեակին, թէ՛ Բալկանեան պատերազմի ընթացքին, երբ Տաճկաստանը կ'ենթարկուէր յուրջ հարուածներու, հայերը, յանձինս իրենց հոգևորականութեան եւ մտաւորական շրջանակներու, գիմեցին Եւրոպային եւ Ռուսաստանին՝ խնդրելով բարելաւել տաճկահայ ժողովուրդի կեանքի պայմանները: Այդ տրամադրութիւնները որոշեցին կովկասահայերու գործելակերպը մեծ պատերազմի ընթացքին, երբ 1914 Հոկտեմբերին, թուրքերը նախադրձակ եղան ուսններու վրայ:

Վրաց ժողովուրդը ուրիշ հոգեբանութիւն ունէր: Ան կապուած չէր Տաճկաստանի հետ որևէ խնդրով: Իր ներքին քաղաքական կեանքը կ'ընթա-

նար երկու ուղղութեամբ: Յեղափոխական միտքը կապուած էր սուս յեղափոխական շարժումներուն հետ, իսկ ազնուական դասը իր բախտը կապած էր սուս ազնուականութեան եւ թագաւորական գահի բախտին: Երկու տարրերն այ անտարրեր էին ղեկի Բարկանեան պատերազմը, իսկ մեծ պատերազմի ժամանակ՝ իրենց տրամադրութիւնները չէր կարելի տարրերէ իրենց սուս բախտակիցներու տրամադրութիւններէն:

Կովկասի երրորդ տարրին՝ թաթարներուն համար, կեանքը լիովին տաճիկներու կողմն էր: Թրքական լեզուն, մշակոյթը, կրօնը եւ ցեղային ընդհանուր կապերը քաղաքականօրէն կը միացնէին թաթարները տաճիկներու հետ: Թաթար փոքրաթիւ մտաւորականութիւնը հոգեպէս կապուած էր տաճկական մշակոյթին, շնայած որ իր կրթութիւնը ստացած էր սուսական համալսարաններու մէջ: Ռուսական ազդեցութիւնը անոր մէջ կ'երևար միայն արտաքինապէս: Թաթար մտաւորականութիւնը ոչ մէկ ազդեցութիւն ունէր իր ժողովուրդի վրայ: Թաթար ժողովուրդը կը գտնուէր հոգևորականութեան, խաներու եւ բեկերու ազդեցութեան ներքեւ: Տաճիկ քաղաքական շահերը յայն արձագանդ կը գտնէին թաթար ժողովուրդին մէջ: Բայց, ըստ իրենց սովորութեան, թաթարները երբեք չէին արտայայտել իրենց միտքերը. մանաւանդ կը պատշաճային բողոքի բնոյթ կրող քայլերէ:

Ռուսական մամուլը գրեթէ չէր զբաղել իրենց մով, իսկ կովկասի միւս տարրերը տեղեակ չէին անոնց իսկական ձգտումներուն:

Պաշտօնիս բերու մով, առիթ կ'ունենայի յաճախ չիտելու թիֆլիսի թաթար սպրահալչու թեան հետ, որուն թիւը կը հասնէր հինգ հազարի: Կը հանդիպէի թուրք մտաւորականներու եւ Շէյխ Իւլ-Իսլամի հետ: Պէտք է բռնեմ, որ անոնք կ'ընդունէին պիս մեծ յարգանքներով եւ պատիւներով: Այդ վերաբերմունքը դէպի ինձ երբեք չփոխեցին, գոնէ իրենց արտաքին արտայայտութիւններու մէջ:

Չնայած որ միեւնոյն թիֆլիս քաղաքի մէջ կ'ապրէին կողք կողքի երեք ժողովուրդներ, երեքն ալ բաշտած էին իրենց սպրահալչու պատեւաններու մէջ եւ միայն առեւտրական որոշ գործերն առիթ կու տային արտաքին յարաբերութիւններ պահպանելու միմեանց հետ: Որեւէ յորժմ գործ չէր ձեւարկուեր երեք տարրերու նախաձեռնութեամբ կամ մասնակցութեամբ: Օրինակ. դրամատունները կա՛մ գուտ հայկական էին, կա՛մ գուտ վրացական: Հայերը չէին կարողար վրացական թերթեր. վրացիները չէին կարողար հայկական թերթեր. իսկ թուրքերը կ'անտեսէին երկուքն ալ: Հայերը շատեր կը խօսէին վրացերէն, իսկ վրացիները չգիտէին հայերէն:

Ռուս ազգարնակչութիւնը բաղկացած էր պաշտօնեայ գասէն: Ռուսական հաստատութիւնները՝ թերթերը, ակումբները, դպրոցները՝ հասաստարապէս կը բաշխէին ե՛ւ հայերը, ե՛ւ վրացիները, ե՛ւ թուրքերը:

Ռուս եկեղեցիին պետական հաստատութիւն մըն էր, որմէ կը խորչէին վրացիները: Հայ եկեղեցիին ազգային հիմնարկութիւն մըն էր, անկախ ոռուս պետական եկեղեցիէն: Այդ իսկ պատճառով, հայ գործիչները, կուսակցականները, մտաւորականութիւնը

ազգային-հասարակական խնդիրներով կը դիմէին Առաջնորդարան կամ թեմական Առաջնորդին:

\* \* \*

Այսպէս. կեանքը կ'ընթանար տարրեր հունկով: Իւրաքանչիւր ժողովուրդ ունէր իր հոգերը, մտածումները եւ ծրագիրները, երբ հարցը կը վերաբերէր իր սպրահալչու գասին: Սակայն, սրպէս ընդ հանուր երկրի քաղաքացիներ, բոլորն ալ մէկ տրամադրութիւն ունէին, բոլորն ալ կը սպասէին մեծ փոփոխութիւններու: «Տխուր է այլիւս այսպէս ապրիլ»: այս էր բոլոր տրամադրութիւններու ընդ հանուր յայտարարութիւնը:

1905 թուականը ատեն մը թույլացուց ոռուս միակտականութեան երկաթեայ կապանքները: Բայց, այնու հետեւ, նորէն վերակազմուեցան յետադէմ ուժերը եւ կապանքները նորէն ամբացան: «Նսիլ» անդորրութիւն, ապա՝ բարեփոխումներ», — կ'ըսէին ոռուս վարչակազմները: Բայց տարիները կ'անցնէին. 1914ի Օգոստոսը կը մօտենար եւ անդորրութիւն չկար տակաւին:

Ծանր էին այդ տարիները: Ժողովուրդը կը տեսնէր, որ օրինական ճամբաները անգոր են իրեն բարարութիւն տալու: Յեղափոխական թափն ու եռանդը սպառած էին 1905-7 թուականներու ապրտամբութիւններու ընթացքին: Ժողովուրդը կ'ապրէր գորշ կեանքի անիմաստ առօրեայով. եւ այդ՝ ոչ միայն կովկասի, այլեւ ամբողջ Ռուսաստանի մէջ:

Հայերն էին միայն, որ բացառութիւն կը կազմէին, որովհետեւ իրենց առաջ գրուած էր տաճկահայ բարեկարգութեան մեծութիւնը ինչպէս: Արդէն յիշեցի նախապէս, որ Բայկանեան պատերազմը ասպարէզ կը նետէր հարցեր, որոնք կապուած էին Տաճկաստանի հետ: Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ր՝ 1912 Հոկտ. 2ին՝ Փոխարքայի միջոցով դիմեց «ամենագոթ կայսրին, որ իր բարձր միջամտութեամբ թեթևացնէ իր բարձր պայմանները»: Որքան ցնդ իր բարձր կեանքի ծանր պայմանները»: Որքան պատասխան իր այդ դիմումին, ինչպէս կը գրէր ինք՝ կաթողիկոսը, ստացած էր կայսերական կառավարութեան հաստատագրութեանը, թէ հայկական զաւար պիտի առնուի լուրջ ուշադրութեան և թէ՛ կառավարութիւնը պիտի գրադի հայ ժողովուրդի բախտով:

Ինչպէս յայտնի է, կաթողիկոսի դիմումէն ետք, տեղի ունեցաւ դեպքաններու ժողովը Պոլսոյ մէջ, ուր որոշուեցաւ հայկական վիլայէթներու համար նշանակել երկու ընդհանուր տեսուչներ: 1914 Յունուար 26ին, այդ պաշտօնին կանչուեցան Հոֆ և Վեստենենկ:

Ես ձօտիկ մասնակցութիւն ցոյց տուի կաթողիկոսի դիմումի կազմութեան մէջ և կարող եմ ըսել, որ այդ դիմումը համապատասխան էր հայ ժողովուրդի, մտաւորականութեան և կուսակցական շրջանակներու ձգտումներուն: Թէ՛ կաթողիկոսը, թէ՛ ևս գիտէինք, որ բաւարար չէ միայն դիմել կայսրին, այլ պէտք էր դիմել նաեւ Երուսական պետութիւններուն, որոնք նոյնպէս պիտի մասնակցէին Բայկանեան պատերազմէն ետք գումարակիր ժողովներու:

րուն: Այդ իսկ պատճառով, կաթողիկոսը կոնդակ մը ուղարկեց Պոլսոյ նուպար փառային՝ նշանակելով զայն իր ներկայացուցիչը Երուսական պետութիւններու ձօտ: Ահա այդ կոնդակը:

«Մենք, որպէս ծայրագոյն պատրիարք եւ կաթողիկոս ամենայն հայոց եւ պետ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, կարգենք զձեր վեմափայտութիւնը ներկայացուցիչ մեր ընդ հոգեւորական եւ աշխարհական անձանց եւ խնդրենք ի ձեռք յանձն առնուի երթալ ի վեհաժողով եւ առաջի առնել պատգամաւորաց Երուսական պետութեանց բոլորիքի հայոց գտեղեկագիր մեր, հայցելով զմիջնորդութիւն և ցնց առ ողբալի կացութիւն հայ ժողովուրդի Տաճկաստանի, թերեւս մարդասէր եւ հօր միջնորդութեամբ ի հովանաւորութեամբ և ցնց վերացին կամայականութիւնք, աւերք եւ սրածութիւնք եւ հաստատեցի խաղաղութիւն եւ բարեկարգութիւն երկրին հայոց եւ թեթևացումը շարատանց վիճակի գաւակաց մերոց»:

Այս դիմումը ուղարկուեցաւ նոյն թուի նոյեմբեր 10ին:

Կը յիշեմ, երբ Առաջնորդարանին մէջ կը պատրաստէինք դիմումին ծրագիրը, որ առանձին յանձնախումբի մը հետ ուղարկուեցաւ կաթողիկոսին ի հաստատութիւն, ոգեւորուած էինք այն միտքով, թէ Տաճկաստանը ստիպուած կը լինի ընդունիլ հայկական պահանջները, թէկուզ Երուսական պետութիւններու ճնշումին տակ:

Նուպար փառային ընդունեց կաթողիկոսի առաջարկը և 1913 Յունուար 27ի գրութեամբ տեղեկա-



ցուց ամբողջ Հայութեան, թէ ինք ստանձնած է իրեն ատաջարկուած պաշտօնը: Որպէս օգնականներ, Պօղոս Նուպարը հրաւիրեց Իթիւնեան Եպիսկոպոսը, Եագոր Արթին փաշան, Յարութիւն Մալիմեանը եւ Մինաս Չերպը: Հայ բովանդակ մամուլը պաշտպանեց Պօղոս Նուպար փաշայի նշանակումը:

Այսպիսով, մեծ պատերազմի նախօրեակին, Հայ քաղաքական միտքը ձեւակերպուած էր արդէն. զի՛մու՛մ՝ ո՞ւս բարձրագոյն իշխանութեան ու Երուսաղեան պետութիւններուն եւ ճնշումի քաղաքականութիւն՝ Տաճկաստանի վրայ:

Սակայն, ոչ ոք կը զգար որ շուտով պիտի ծագի Համաշխարհային մեծ փոթորիկը...

\* \* \*

Պատմութեան մէջ հետեւողական լինելու համար բւեմ, որ 1913 Հոկտեմբերին, ժողովրդական ցոյցի մը ընթացքին, Եւ ծանրօրէն հիւանդացայ եւ վեց ամիս շարունակ կապուած մնացի մահճակային: Ապաքինու մէն Եւք, վճնեցի մեկնելի Գերմանիա՝ վերջնականապէս բժշկուելու համար: Պիտի անցնելի Պոլսի եւ Վրեննայի վրայով: 1914 Ապրիլին, Բաթում մէն նաւ առի զԼպի Պոլսի:

Պոլսոյ մէջ տեսնուեցայ Խաթալի հետ, որ ինձ տարաւ Թրքական պարլամենտ ու ծանօթացուց Չոհրապի եւ Հայ միւս պատգամաւորներու հետ:

Նստած բաց լուսամտի առաջ, ուրկէ հրաշալի տեսարան մը կը բացուէր ծովուն վրայ, կը գրուցէինք պանպան հարցերու մասին: Ոչ ոք կը մտածէր, որ կը

ժօռենար համաշխարհային մեծ փոթորիկը:

Հայկական վիլայէթներու համար նշանակուած Երուսաղեան տեսուչները Պոլսի էին հասած արդէն Եւ կը պատրաստուէին անցնելի իրենց պարտականութիւններուն: Խաթալը եւ Չոհրապը առանձնապէս սպեւորուած շէն անոնց պայուսով: Անոնք կ'ըսէին, թէ թուրք կառավարութիւնը միշտ կարող է միջոցներ ստեղծել՝ կատեցնելու համար օտար տեսուչներու գործունէութիւնը:

Չոհրապը վստահութիւն չուէր Եւ ուսանելու վրայ: Չէր հաւատար, որ ուս կառավարութիւնը պիտի գրապի տաճկահայկական դատով. իսկ յաւագոյն պարագային կը կարծէր, որ Եթէ Հայկական վիլայէթները իշնային ուս բարոյական կամ քաղաքական ազդեցութեան տակ, ան կը վախնար Հայերու ուսացման վտանգէն:

Խաթալը կը հաւատար Հայ ժողովուրդի ստեղծագործ ուրիւն: Կ'ուզէր, որ Հայ ժողովուրդին տրուին խաղաղ զարգանալու անհրաժեշտ պայմաններ. այնուհետեւ, Լ. Յ. Իշնակցութեան հակողութեան տակ, ժողովուրդը պիտի կարողանար պարգացնել իր լեզուն ու մշակոյթը:

Երկու օր յետոյ, մեկնեցի Պոլսն Եւ միայն 1918ին, շորս աճաւ որ տարինը Եւք, կրկին այցելեցի Պոլսի, այս անգամ որպէս անդամ խաղաղութեան պատուիրակութեան, լինելով Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերու նախարար:

Սերպիոյ մէջ, Երբ պնացքի մէջ էի, զգացի որ անսովոր բան մը կը գառնար: Սերպերը անհանգիստ հայեացքներ ունէին: Հետպիւր յանկարծ հագորդեց,

որ Սարայելոյի մէջ սերպի մը ձեռքով սպաննուած է Աւստրիա հուղարիոյ Թագածառանգ Ծրանց Ծեր-դիմանար: Կայարաններու մէջ կը տեսնէի վրդով-ւած ղէմքեր: Ինձ կը թուէր, թէ այդ ղէպքը մեզ՝ չա-յերիս չի վերարձրէր:

Հասայ Elster, ուր մնացի ամբողջ ամիս մը:

Յուլիս 19ին յայտնի եղաւ, որ Աւստրիան պա-տերազմ է յայտարարած Աերպիոյ: Փոքրիկ Elsterը նոյնպէս վրդովեցաւ: Բոլորը մեկնեցան այնտեղէն: Խանութները, հիւրանոցները կողպուեցան: Պէտք էր վերադառնալ Քիֆիս:

Երկար պատահարներէ ու բարդութիւններէ ետք, որոնց մասին կարելի էր առանձին գիրք մը գրել, Օգոստոսի վերջերք Ռուսականի վրայով Հասայ Քիֆիս:

Մեծ պետութիւնները կիսապատերազմական վիճակի մէջ կը գտնուէին: Մեր աչքերու առաջ, գեր-ման նաւերը՝ Գլօրենն ու Բրեսլաուսն՝ մտան Սև ծա-վը:

Կովկասի մէջ գտայ բոլորովին այլ տրամադրու-թիւններ եւ այլ կացութիւն: Ժողովուրդը զուրս էր եկած ինքնու վիճակէն: Կը տիրէր եռու գետ: Երիտա-սարդութիւնը ճակատ կը մեկնէր: Զօրագունդերը կ'ուղարկուէին Արեւմտեան սպամազաւ: Ամէն տեղ կը գզացուէր հայրենասիրական բարձր խանդա-վառութիւն, իսկ այդ հայրենասիրութիւնը կեղծ չէր, իշխանութեան կողմէ թելադրուած չէր:

Ժողովուրդի այդ պիտի տրամադրութիւնները բացատրող պատճառները շատ էին:

Նախ՝ ամէնքը կը կարծէին, որ ազատասէր

Ծրանսան եւ Անզլիան, որպէս դաշնակիցներ ուս կառավարութեան, իրենց հետ պիտի բերեն իրաւունք եւ ազատութիւն եւ պաշտպանութիւն փոքր ժողովուրդներուն: Չէ՞ որ անոնք զուրս էին եկած պաշտ-պանելու փոքրիկ Աերպիոյ եւ Պելճիքայի ոտնահար-ւած իրաւունքները:

Յետոյ՝ բոլորը կը կարծէին, որ այս պատերազմը կարճատեւ պիտի լինի, որմէ յետոյ պիտի սկսին կեանքի սանելի պայմաններ:

Երրորդ՝ այն կարծիքը կը տիրէր, որ ինչպէս սո-փորաբար պատերազմներէն ետք, Ռուսաստանը կը բռնէ բարենորոգումներու ճամբան: Օրինակ՝ Ղրիմի պատերազմէն ետք տեղի ունեցան 60ական թուա-կաններու ազատական բարենորոգումները, ճափո-նական պատերազմէն յետոյ արուեցաւ Սահմանադ-րութիւն: Եւ բոլորը կը սպասէին, որ մեծ պատերազ-մէն ետքն այ Ռուսաստանի մէջ նոր կեանքի նոր դա-րապլախ մը պիտի բացուի:

Չորրորդ՝ բոլորի համար պարզ էր, որ պատե-րազմը պիտի բարձրացնէ երկրի տնտեսական ար-տադրողական վիճակը:

Հայերու առջեւ պատերազմը կը բանար քաղա-քական լայն հորիզոններ: Գաղտնիք չէր, որ Տաճկաս-տանը պիտի մասնակցի պատերազմին՝ Ռուսաստա-նին հակառակ բանակի մէջ: Ընդհանուր հաւատք կար, որ ան պիտի պարտուի եւ հայերը իրենց հարցի լուծումը վերջնապէս պիտի ստանային չնորհի Ռու-սաստանի ու Երուսական պետութիւններու միջա-մրտութեան:

Այս տրամադրութիւններու լուսադոյն ապա-

ցոյցը հայոց կաթողիկոսի զիմումն էր, որ 1914 Օգոստոս 5ին վեհափառը յանձնեց կոմս Վորոն-ցով-Դաշկովին: Իր զիմումին մէջ, կաթողիկոսը կը յիշէր, որ 1912ին ինք խնդրած էր ոուս միապետէն, որ իր հովանաւորութեան տակ առնէ հայ ժողովուրդի շահերը Տաճկաստանի մէջ, որ՝ 1912-14 թուականներու ընթացքին մշակուած էր բարենորոգումներու ծրագիրը, որու ճակատագիրը խիստ հարցական էր շնորհիւ պատերազմական գրութեան: Կաթողիկոսը կը շարունակէր.

«Պատերազմը նոր մեծ փորձանքներու կը մատնէ բարեկրօնումները եւ նոյնիսկ հայ ժողովուրդի ապահովութեան խնդիրը: Այսօր, երբ ոուս պետութեան կը պահանջուի ուժերու եւ կամֆի ծայրայեղ լարում, ես երջանիկ եմ յայտարարելու Ձերդ Պայծառփայլութեան, թէ հայ ժողովուրդը՝ լոեցնելով իր մէջ ցաւի կակիծը, իր ամբողջ կարողութիւնը ի սպաս կը դնէ մեծ հայրենիքի պաշտպանութեան գործին եւ թէ արդէն հայ ժողովուրդը՝ հաւատարիմ քագաւորի հրամանին՝ պատրաստ է իր պարտքը կատարելու հայրենիքի հանդէպ»:

Կաթողիկոսը կը մատնանշէր այն փաստը, որ Բարձր Դուսը, շնորհիւ սիրող կացութեան, բնական շէրթար բարենորոգումներուն, որ՝ հայ ժողովուրդի գոյութեանն անզամ այսօր փտանդ կը սպասուայ եւ որ՝ անհրաժեշտ է ձեռք առնել յատուկ միջոցներ հայ ժողովուրդի պաշտպանութեան համար:

«Քանի որ հայկական վիլայէթները — կը գրէր

կաթողիկոսը — կը գտնուին տանիկներու գերիշխանութեան ներքոյ, իմ եւ իմ ժողովուրդի խորին համոզումն է, որ հայկական ցաւոտ հարցի վերջնական լուծման համար անհրաժեշտ են հետեւեալ պայմանները.

«Ա. Անատոլուի հայ գաւառներէն ստեղծել անբաժանելի մէկ շրջան:

«Բ. Որպէս այդ շրջանի կառավարիչ նշանակել բարձրաստիճան կամ մեծանուն ֆրիստոնեայ մը, որ անկախ լինի Բարձր Դուսէն:

«Գ. Շրջանին շնորհել յայն ինքնավարութիւն, ֆրիստոնեայ տարրերու հաւասար ձայներով:

«Դ. Որպէսզի հայ ժողովուրդը վստահ լինի նորաստեղծ վարչութեան յարատեւութեան, այդ շրջանի բարեփոխումներու հսկողութեան իրաւունքը վերապահել միայն Ռուսաստանին»:

Ի վերջոյ, կաթողիկոսը կը խնդրէր ձեռք առնել իրական միջոցներ հայկական շահերը պաշտպանելու համար եւ արագացնել տեսուչներու հաստատումը վիլայէթներու մէջ: Կաթողիկոսը կը խնդրէր այս զիմումը ուղղել թալուարին եւ խնդրել անոր բարձր աջակցութիւնն ու հովանաւորութիւնը:

Ես զիտմամբ երկար մէջբերումներ բրի կաթողիկոսի գրութեանն սրովհետեւ այդ կը բացձանքը եւ ամբողջ հայ ժողովուրդին, որ ոուս-տաճկական պատերազմի պարագային յորժ յոյսեր կը գրած ցարի միջամտութեան ու բարեացակամութեան վրայ:

Փեթերպուրցէն պատասխանը չուշացաւ:

Կաթողիկոսին կը վստահեցնէին, որ հայկական պատր յորժ ուշադրութեան է անուամ կատարու-

բութեան կողմէ: Կ'առաջարկէին Հայերուն զգուշանայ թուրքիոյ մէջ ապստամբական շարժումներ առաջ բերելէ՝ շրարդացնելու համար առանց այն ալ ծանր քաղաքական կացութիւնը: Հայերու վրայ պարտականութիւն կը դնէին գործով ապացուցանելու իրենց հաստատման թիւնը կայսրին եւ օգնելու ռուս բանակին՝ եթէ Ռուսաստանի եւ թուրքիոյ միջեւ պատերազմական գործողութիւններ սկսէին:

Այս պատասխանը ստացուած կը գրեթէ միաժամանակ իմ կովկաս հասնելուս հետ:

Պաշտօնիս անցնելով, անմիջական մասնակցութիւն ունեցայ հայ կեանքին վերաբերող բոլոր խնդիրներուն:

«Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը» գիրքին մէջ, մանրամասն կանչ եմ առած այս խնդիրներէն շատերուն վրայ: Բայց միայն հայկական եւ հայ ժողովուրդի հետ կապ ունեցող հարցերն են գրուած այնակի իմ ուշադրութիւնս:

Այսօր, ես գրի կ'առնեմ իմ յուշերը որպէս քաղաքագլուխ՝ մօտենայով հարցերուն կովկասեան եւ ռուսական չափանիշով:

Կաթողիկոսի դիմումին պատասխանը յայտնի դարձաւ հայ լայն զանգուածներուն: Ամէնքն ալ կը փափաքէին, որ Տաճկաստանը պատերազմի ռուսներու դէմ եւ այդպիսով լուծուի տաճկահայ ցառոս խնդիրը:

Պատերազմի յայտարարութեան հետեւեցաւ ընդհանուր զօրակոչը, որով 200 հազար հայ զինուորներ մտան ռուսական բանակին մէջ: Հայերու մէջ դատալիքներ չկային: Արեւմտեան ճակատի վրայ,

գերմանացիներու եւ աւստրիացիներու դէմ կոտուելու առեւ, հայ զինուորը կը յայանաբերէր նոյն քաղութիւնն ու կորովը, ինչ որ ռուս զինուորը: Մեծ էր եւ վրացիներու թիւը բանակի մէջ, ինչպէս զինուորներու՝ այնպէս ալ սպաներու, որոնք նոյնպէս ուղարկուած էին արեւմտեան ճակատ:

Պատերազմը զօրակոչի ենթարկեց նաեւ հանգրստի կոչուած զօրավար նազարբեկեանը, որ յետոյ դարձաւ հայկական բանակի հրամանատարը անկախութեան օրերուն:

Հայ ժողովուրդը իր պարտքը կատարեց մտնելով ռուսական բանակի մէջ՝ արեւմտեան ճակատին վրայ կոտուելով: Սակայն, խնդիրը աւելի բարդացաւ Տաճկաստանի էլյոթով: Այս անգամ, կը պահանջուէր հայ ժողովուրդի աջակցութիւնը: Հայ զինուորը պարտաւոր էր կոտուելու. այստեղ զոհարեցութիւն չկար: Ինչ պէտք էր ընել:

Կային հոգեբանական լուրջ պայմաններ եւ հիմունքներ, որոնք տարիներու ընթացքին պատարաստած էին հայ ժողովուրդը պատերազմին մասնակցելու համար: Պատերազմէն առաջ, Քիֆլիս հրաւիրած էի յայտնի քաղաքագէտ եւ պատմաբան Միլիկովին՝ դասախօսութիւն մը կարգալու հայկական հարցի մասին: Միլիկովը խօսեցաւ Ռուսաստանի մերձաւոր արեւելեան քաղաքականութեան մասին եւ շեշտեց այն հանգամանքը, որ հայերը եւ ռուսները չեն կրնար տարբեր սենեակներ են մէկ կտուրի տակ տեղաւորուած»: Երկու տարբեր սենեակներ...: Այսինքն՝ հաշտի կ'առնուէին հայ ժողովուրդի յատուկ պահանջները ընդհանուր կտուրի տակ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Վրացիները և թաթարները ղեմ էին պատերազմ-  
մին: Վրացիները սպասելիքներ չունէին Քուրքիոյ  
ղեմ մղուելիք պատերազմէն: Ընդհակառակը, կը  
վախնային աջարացիներէն, որոնք վրացի լինելով  
հանդերձ՝ մահաճետական են և տաճկասէր: Թաթար-  
ները կը վախնային, որ պատերազմը կարող է թուր-  
ցընել Քուրքիոյ ազդեցութիւնը: Հայերն էին միայն,  
որ կ'ուզէին պատերազմ:

Իմ կայսութիւնը բաւական ծանր էր: Որպէս հայ,  
ես կը բաժնէի հայ ժողովուրդի սպասելիքները, իսկ  
որպէս քաղաքագլուխ՝ Վրաստանի մայրաքաղաքի՝  
պարտաւոր էի սուսական շրջանակներու մէջ, Փո-  
խարքայի և իշխանութեան առաջ արտայայտել ամ-  
բողջ ժողովուրդի ցանկութիւնները:

Դէպքերը պարզացան այնպէս, որ ես ստանց  
քաշուելու կանգնեցայ հայկական տեսակէտներու  
վրայ և չորս տարի շարունակ, մասնակցութիւն ցոյց  
տալի հայկական բոլոր հարցերուն, ինչպէս նաև  
կովկասին վերաբերող բոլոր խնդիրներուն: Պէտք է  
բւեմ, որ երբեք չեմ գղջար վարածս քաղաքականու-  
թեան համար:

Կովկաս հասնելուս պէս, անմիջապէս գրադեցայ  
երեք գլխաւոր խնդիրներով: Պէտք էր նախ՝ կազմա-  
կերպել հակառի զորաբանակի օժանդակութեան  
հարցը երկրորդ՝ մասնակցել պատերազմի հետ կապ-  
ւած հայկական գործերուն և երրորդ՝ ստեղծել հայ  
քաղաքական կեդրոն մը:

Հետեւեալ գլուխներու մէջ պիտի խօսիմ այս մա-  
սին:

1914 Հոկտեմբեր 19ին, պատերազմի յայտարա-  
րութենէն ճիշդ երեք ամիս ետք, Քուրքիա նախայար-  
ձակ եղաւ Ռուսաստանի վրայ՝ ոմրակոծելով ուսա-  
կան ծովեզերեայ քաղաքները:

Հայ ժողովուրդը իր ընելիքը պիտի արդէն: Նա-  
խօրօք պատրաստուած էին միտքերը՝ Դաշնակից պե-  
տութիւններու կողմն անցնելու: Հայերը պիտիւն, որ  
պատերազմէն յաղթող պիտի դուրս գային Դաշնա-  
կիցները և այդ պատճառով այ գիտակցօրէն հայ  
Դատը կապեցին Դաշնակիցներու պատին:

Քուրքիոյ յարձակման առաջին յուրը ինձ բերաւ  
բժիշկ Յակոբ Զաւրեանը: Երեք ժամ ետք, զիս կանչե-  
ցին պայտաւ, որ Փոխարքայի օչնականը ցոյց տուաւ  
ինձ մատիտով գծուած թղթի կտոր մը, թէ «թուր-  
քերը յարձակեցան մեր վրայ և Փոխարքան հրա-  
մայեց մեր բանակներուն շարժիլ դէպի հակառակ  
և գարնել թուրքերուն»:

Զինուորական-վարչական մեքենան անմիջա-  
պէս շարժման մէջ գրուեցաւ: Սկսաւ տեղոսս պոր-  
ծունելութիւն մը: Բանակը, քաղաքային ինքնավա-  
րութիւնը, համարաբանային վարչութիւնը, մամուլը,  
բոլորը գրապեցան պատերազմով և անոր անմիջա-  
կան կարիքներով:

Նախքան տաճկական պատերազմի հռչակումը,  
սուս իշխանութեան և հայ ժողովրդի միջև տեղի

կ'ուսննային բանակցութիւններ: Յայտնի են այդ մասին Փոխարքայի եւ Կաթողիկոսի նամակները: Խնդիրը կը վերաբերէր Հայ կամաւորական շարժման:

Այդ շարժման փաստական կողմը ծանօթ է արդէն: Կան Փրանսացի Պապղեպարի գիրքը այդ մասին, ժեներայ Ղորղանեանի գիրքը, Գրիգոր Զախուշեանի «Կարմիր Գիրքը», Սիմոն Վրացեանի «Հայաստանի Հանրապետութիւն» հատորը եւ Անդրանիկի, Սեպուհի եւ ուրիշ շատերու յուշերը:

Ես կանգ պիտէ և առնեմ կամաւորական շարժման քաղաքական եւ հոգեբանական կողմերու վրայ եւ պիտի մատնանշեմ այն վերաբերմունքը, որ ունէին ոուս հրամանատարները եւ իշխանութիւնը դէպի այդ շարժումը:

Անձամբ տեսածս ու լսածս միայն պիտի պատմեմ որովհետեւ, որպէս Ազգային Բիւրոյի ներկայացուցիչ, որ կը վարէր կամաւորական գործերը, անձամբ կը բանակցէի ոուս իշխանութեան ձօտ, կամաւորական խումբերուն վերաբերող բոլոր խնդիրներու մասին:

Պէտք է ըսեմ, որ Ռուսաստանը՝ կլանուած լինելով արեւմտեան ճակատով՝ չէր ցանկանար բարդութիւններ ստեղծել հարաւային ճակատի վրայ եւ կը խուսափէր թրքական պատերազմէն: Սակայն, հաշտի առնելով այդ պիտի պատերազմի մը հաւանականութիւնները, ոուս կառավարութիւնը կը պատրաստուէր այդ ուղղութեամբ: Իր առաջ գրուած շարք մը հարցերէն մէկը՝ Հայ ժողովուրդի մասնակցութիւնն էր թրքական պատերազմին: Ռուս կառավարութիւնը կ'ուզէր մեր մասնակցութիւնը. հանգամանք մը, որ

մեծապէս ազդեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան քաղաքականութեան վրայ:

1914 Յուլիսին, կուսակցութեան Ընդհանուր Ժողովը էրզրումի մէջ որոշած էր պատերազմի պարագային կողմ չհանդիսանայ որեւէ պետութեան եւ կը հրաւիրէր Հայութիւնը իր պարտքը կատարել Ռուսաստանի եւ Քուրդիոյ մէջ՝ որպէս հաւատարիմ քաղաքացիներ: Չնայած որ, Իթթիհատի ներկայացուցիչներ՝ Բեալգին Շաքիրը եւ Նահիպ բէյը՝ յատուկ առաքելութեամբ էրզրում ինչ գացած բանակցելու դաշնակցական գործիչներու հետ, առաջարկելով անոնց պատերազմի ընթացքին թուրքերու կողմնանցնել: Չնայած որ, Թալաթ փաշան Պոլսոյ մէջ կ'աշխատէր նոյն ուղղութեամբ, Զ. Յ. Դաշնակցութիւնը մնաց անյուզուող իր որոշումներու մէջ եւ մերժեց մասնակցել թրքական որեւէ ծրագրի իրականացման:

Ընդհանուր Ժողովն ետք, պատգամաւորները եկան Կովկաս, բայց չկարողացան դիմադրել ընդհանուր արմատադրութիւններուն եւ անցան կամաւորական բանակներու կազմակերպման գործին գլուխը: Կուսակցութեան պարագլուխներէն կազմուեցաւ կոմիտէ մը, որուն անգամակցեցան Արմէն Գարօ, Սիմոն Վրացեան, ղոկտոր Զաւրեան, Իշխան Արզութեան, Գիւլիանդանեան եւ Նիկոլ Աղբալեան:

Հետագային, Հայ մամուլը շատ քննադատեց ու յարձակեցաւ այս փաստի վրայ: Սակայն, մէկ հանգամանք պարզ էր, որ կամաւորական շարժումը համահայկակաւ էր եւ կը բխէր Հայ ժողովուրդի հոգե-

բանութենէն ու ցանկութիւններէն: Հայ ժողովուրդը Դաշնակիցներու հետ էր եւ Դաշնակիցներու կողքին: Հարիւր տարիներու ընթացքին ոուս բանակի յաղթական յառաջխաղացումը գէպի հարաւ, գէպի հայկական հողամասերը, նոյնպէս գրաւական էին մեր քաղաքական ուղեգծի ճշդութեան:

Մէկ հարց կար միայն, որ կարող էր հիմնովին փոխել մեր քաղաքական համոզումը: կարող էր արդեօք համաձայնութիւն կայանալ հայերու եւ թուրքերու միջեւ: Եթէ այո, ուրեմն պէտք էր որ մենք՝ հայերս՝ թուրքերուն կողմը բռնէինք: Բայց բովանդակ հայ ժողովուրդի մէջ չկար այն հաւատը, որ կարելի է համաձայնութեամբ կարգադրել հայկական խնդիրը՝ առանց գլնքի միջամտութեան: Մեզ կը մնար միակ ուղին՝ ձգտիլ տաճիկներու պարտութեան:

Թիֆլիսի մէջ կազմուեցաւ Ազգային Բիւրոն, որ իր կողմէն նշանակեց երեք ներկայացուցիչներ՝ Փոխարքայի հետ բանակցելու համար կամաւորական բանակի հետ կապուած բոլոր խնդիրներու շուրջ: Ներկայացուցիչներն էին՝ մէկը թեմական առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոսը, միւսը Սամսոն Յարութիւնեանը եւ եւ: Մենք մեր վրայ ատինք այդ պարտականութիւնը եւ մինչեւ վերջը մնացինք մեր պաշտօններու վրայ:

Չիս նշանակեցին ներկայացուցիչ զինուորական իշխանութիւններու մօտ: Այդ պարտականութիւնն այ կատարեցի սկիզբի օրերէն մինչեւ կամաւորական խումբերու վերջնական լուծումը:

Սկիզբէն իսկ յայտնի եղաւ, որ ոուս կառավար-

ութիւնը կը մտածէ յայնօրէն օգտագործել հայ ժողովուրդի ուժերը՝ թուրքերու դէմ պատերազմելու համար: Ինձ առաջարկեցին կազմել ցանկ մը քարտրի եւ բանտերու մէջ գտնուող այն բոլոր հայ յեղափոխականներուն, որոնք կարող էին օգտակար լինել կամաւորական շարժման: Կազմեցինք այդ պիսի ցանկ մը եւ յանձնեցինք կառավարութեան:

Երբ ծովի վրայով Մուրատը թուրքիայէն Բաթում էր հասեր, ձերբակալած էին զինք որպէս թրքահայատակի: Ըսինք, որ Մուրատը մեր մարդն է եւ Մուրատը պատիւներով արձակուեցաւ բանտէն:

Մեզ կ'առաջարկէին նոյնպէս գտնել Հ. Յ. Դաշնակցութեան մէջէն հմուտ ահաբեկիչներ, որոնք անցնելով թուրքիա՝ կարողանային սպաննել Էնվեր փաշան: Ժանտարմներու պետը մինչեւ անգամ կուտար մեզ այն մարդու անունը, որ կարող էր իր վրայ վերցնել այդ համարձակ գործը: Մենք մերժեցինք այդ ծրագիրը:

Ռուս բանակին մեծ աջակցութիւն ցոյց տուաւ խմբապետ Համապասպը, որ հովիւ ձեւանայով՝ կարողացաւ մտնել Վան եւ բերել կարեւոր տեղեկութիւններ տաճիկական բանակի մասին: Մեր Վանի բնակիչները, որպէս ապացոյց, որ Համապասպը եղել է Վանի մէջ, քիմիական թանաքով իր շապիկի վրայ հաստատած էին այդ փաստը:

Փոխարքան առաջարկեց ինձ իր զինուորական մասի օգնական՝ զօր. Միչլայիսկիի հետ պայմանաւորուիլ խստն նիստ մը գուժարելու սպայակոյտի եւ Ազգային Բիւրոյի ներկայացուցիչներու մասնակցութեամբ: Պայմանաւորուեցանք եւ առաջին նիստը

գումարուեցաւ Անպտեմբերի մէջ: Որոշուեցաւ խումբերու թիւը, քանակը եւ մեր ընկիւղը: Կազմուեցաւ նախահաշիւ: Որպէս առաջին վճարում, ըստ պայակոյտէն ստացայ 245 հազար ուրբի, որ եւ մաս-մաս կը վճարէի Ազգային Բիւրոյին՝ կամաւորներուն հօշիկներ եւ հազուատեղէն հայթայթելու համար: Ստացականները կը յանձնէի սպայակոյտին:

Առաջին հերթին որոշուեցաւ կազմել չորս խումբեր՝ Անդրանիկի, Դրոյշի, Համազասպի եւ Քեռիի զեկավարութեան ներքոյ: Այս խումբերը ճակատ մեկնեցին Նոյեմբեր 24ին, Եոյնեմբեր 3ին եւ 6ին: Այնուհետեւ, 1915 Ապրիլին, կազմուեցաւ 5րդ խումբը՝ վարզամի զեկավարութեամբ, ապա վեցերորդ եւ եօթներորդ խումբերը՝ Աւշարեանի եւ Իշխան Արդուիսեանի հրամանատարութեան տակ:

Սպայակոյտի եւ մեր խմբապետներու միջեւ գրեթէ ամբողջ պրպարութիւնը կը կատարէի ես:

Կովկասի մէջ թէ Պարսկաստան, ամէնուրեք, տաք կոխներու ընթացքին ամենայաւ կարծիքները կը լսէի մեր կամաւորներու հասցէին: Եոյնը եւ Վանի ու Բայազետի շրջանին մէջ:

Զօր. Միչլայեւիկիի համաձայնութեամբ, ես առաջնորդեցի Անդրանիկը իր ծօտ եւ երեք ժամուան խորհրդակցութենէ մը ետք, որոշուեցաւ հայ խումբերն ուղարկել չորս գլխաւոր ուղղութիւններով՝ Օլթիի, Սարիղամիշի, Իզդիբի եւ ապա՝ Պարսկաստանի գիծերով:

Ռուս զօրավարը շատ գոճ մնաց Անդրանիկի տուած տեղեկութիւններէն եւ ուղղադաշտի իր ծա-

նօթութենէն: Ես ներկայ էի այդ խորհրդակցութեան որպէս թարգման:

Կանգ պիտի չառնեմ կամաւորական խումբերու հերոսական կոխներու պատմութեան վրայ: Ինչպէս ըսի նախապէս, այդ մասին գիրքեր կան, որոնցմէ կարելի է ծանօթանալ թէ ինչպիսի գովեստներով կը խօսին մեր զինուորներու եւ հրամանատարներու մասին զօրավարներ Տրուխինը, Կալիտինը, Քարատովը, Օզանովսկին, Չերնոպուրովը եւ Նիկոլայելը: Բանակին ուղղուած իրենց հրամաններու մէջ, անոնք կը մատնանշէին հայ կամաւորներու քաջութիւնը՝ կը մատնանշէին այդ է՛ր Կաթողիկոսին է՛ր սպայակոյտին ուղղուած իրենց գրութիւններու մէջ:

Այժմ պիտի անցնիմ մեր կամաւորական բանակի պործունէութեան երկրորդ շրջանին, երբ 1915ին կոմս Վորոնցով-Դաշկովը թողուց Կովկասը եւ ընդհանուր կացութիւնը փոխուեցաւ: Բայց մինչ այդ, կարեւոր կը համարեմ յուսարանել մէկ փաստ:

Յայտնի է, որ տեղի ունեցան պարտութիւններ եւ հայկական ջարդեր: Եւ որովհետեւ կամաւորական խումբերը կազմել էին սուսահայերը եւ գլխաւոր մասնակցութիւնը բերած էր Հ. Յ. Դաշնակցութիւնը, սկսաւ մեծ պայքար մը սուսահայութեան եւ Հ. Յ. Դաշնակցութեան դէմ՝ մեղադրելով մեզ հայկական ջարդերուն մէջ: Մայր տունին անողոք քննադատութիւններ եւ կամաւորական բանակի գոյութիւն իսկ համարուեցաւ փտանկաւոր:

Սակայն, պէտք է ըսեմ, որ բացի սուսահայերէն, որոնք կամաւոր կերպով պայքարի մտան տաճիկներու դէմ Կովկասի ճակատին վրայ, թրքահայերը եւս



կամաւորական բանակներ կազմեցին տաճիկներու դէմ՝ Սուրիոյ և Պաղեստինի ճակատներուն վրայ: Եւ յետոյ, մի՞թէ միայն Հ. Յ. Դաշնակցութիւնն էր, որ պաշտպան կանգնեցաւ կամաւորական բանակ ըստեղծելու գաղափարին: Մի՞թէ ժողովրդական կուսակցութիւնը և հնչակեանները նոյն գաղափարի պաշտպանները չեղան: Նոյնը կարելի է ըսել անկուսակցականներու մասին: Հայ ժողովուրդի բոլոր խաւերը համաձայն էին այդ խնդրի մէջ:

Որ թրքահայ ջարդերու մէջ մեղաւոր չէր կոչուած սահայութիւնը, ատոր լաւ սպացոյցը 1896ի, 1910ի ջարդերն են, որոնց Լեւթարկուեցան Քուրքիոյ ոչ-թուրք ժողովուրդները: Այն ժամանակ, չօ կամաւորական շարժումներ չկային: Քուրքը գիտէր, որ հայկական հարցի լուծման արժատական ձեւը հայտարարի փաստական ոչնչացումն էր. հետեւողական ծրագիր մը, գորան գործադրեց հայերու նկատմամբ՝ պատերազմի ատեն: Այսօր այն նոյն ծրագիրը նոյն ձեւերով Քուրքիա կը գործադրէ քիւրտերու նկատմամբ:

Որոչ է, որ լինէր թէ շիւնը հայ կամաւորական շարժումը, թուրքերը պիտի կատարէին իրենց ոճիբը, որովհետեւ հայկական հարցը փտանդաւոր կը համարէին թրքական կայսրութեան ամբողջութեան տեսակէտէն: Անոնք իրենց առջեւ ունէին բուլղարներու, սերբերու, յոյներու օրինակը:

Թէ թուրքը ինչպիսի հասարակ աչքով կը նայէր հայկական ջարդերու վրայ՝ համարելով գանոնք բարձր հայրենասիրական արարքներ, կարող են

սպացուցանել էնովը փաշայի անձամբ ինձ ուղղած հետեւեալ խօսքերը.

«Ձիս կ'անուանէիմ հայ ժողովուրդի քարդարար: Ես անարդար կը գտնեմ այդ որակումը: Երբ զօրքերու հրամանատարը յաղթականօրէն կը քարդէ թշնամին եւ կ'ոչնչացնէ՝ միեւնոյն ժամանակ գոհաբերելով եւ իր զինուորները, գայն պատուով կ'ընդունեն եւ յուշարձան կը կանգնեցրնեն անոր համար: Բայց երբ առանց մի թուրք զինուորի կորստի, ես ոչնչացուցի իր քուրտերէն թշնամի հայերը, զիս քարդարար կ'անուանեն»:

Այս խօսքերու մէջ աւելի սարսափ կայ, քան ցած շնականութիւն: Էնովըր աչքի ինկոյ թուրք մըն էր, իսկական թուրք մը, որ կոտի դաշտին մէջ կատարած սպանութիւնը կը նոյնացնէ անզէն ժողովուրդի մը տմարդի ջարդին հետ: Այսպիսի հոգեբանութիւնն ունեցող զեկապարներու համար միեւնոյն էր թէ կամաւորները կը մասնակցէին կոտիին, թէ ոչ:

Որիչ խնդիր է, թէ կամաւորական շարժումը նպաստեց արդեօք մեր վերածնութեան գործին: Այս հարցին պետք է, որ մենք պատասխանենք, թէկուց հենց անոր համար, որ պարզեւք սպապոյ քաղաքական մեր ուղեգիրը: Բայց այստեղ կանգ առնենք որիչ կարելի որ հարցի մը վրայ:

Սխալ է Հայաստանի Հանրապետութեան կազմութիւնը միանգամայն վերադրել պատմական մեծ դէպքերու գաւառորումին, ինչպիսին են յեղափոխութիւնը, պատերազմը, կոմկուսեան ճակատի լքումը, թուրքերու առաջխաղացումը և վերջապէս թուրքերու պահանջը անջատուից Ռուսաստանէն և

ապա կազմել անկախ Հանրապետութիւններ՝ Վրաստան, Հայաստան եւ Ատրրեջան: Ճիշդ է, որ այս դէպքերը մեծ դեր կատարեցին, բայց պէտք չէ մոռնալ եւ ժողովուրդի հոգեբանական վիճակը, որ պատրաստուած էր դարերու ընթացքին եւ պիտի ժայթքէր քաղաքական նպաստաւոր պայմաններու մէջ: Չեխիան եւ Լեհաստանը մինչեւ այսօր ալ չկին լինի ազատագրուած՝ եթէ Ռուսաստանը, Աւստրիան եւ Գերմանիան չպարտուէին: Հայերը նոյն վիճակի մէջ էին եւ գուցէ աւելի վատ:

14րդ դարու վերջերը, Կիլիկիոյ մէջ վերջ դրուեցաւ Հայկական վերջին անկախութեան ու Հայ ժողովուրդը 500 տարիներու ընթացքին ինկաւ օտար պետութիւններու լուծի տակ: 500 երկար տարիներ...: Հայ ժողովուրդը չկորսնցուց իր ազգային դիմագիծը եւ ազատատենչ ուզին: Անոր տիրեցին թոյլ մշակոյթի տէր ազգեր՝ տաճիկներն ու պարսիկները: Միայն 19րդ դարու մէջ ռուսական տիրապետութիւնը Հայկական մէկ մասին ներչնչեց նոր գաղափարներ եւ կապեց ռուսական ու եւրոպական ժողովրդապետութեան հետ: Թուրք իրականութիւնը կը ճնշէր Հայ ստեղծագործ ուղին, որու զարգացման համար չկային նպաստաւոր պայմաններ:

Ահա թէ ինչո՞ւ, երբ Հայ ժողովուրդը կանգնած եղաւ անկախ պետութիւն ստեղծելու անհրաժեշտութեան առաջ, իր առջեւ ցցուեցան պետական լուրջ նշանակութիւն ունեցող եւ անմիջապէս լուծուած պահանջող զժուարին հարցեր: Նախ՝ պէտք էր կազմակերպել պետական միութիւնը երկու հատուածներու, որոնք տարբեր կեանքէ ելած՝ տարբեր հո-

գեբանութիւններ ունէին: Պէտք էր կազմակերպել սեփական բանակ, որմէ զրկուած էինք դարեր շարունակ: Պէտք էր գտնել պետականօրէն մտածող մարդիկ, որ կապուած լինէին Հայ պետականութեան հետ: Մենք ունեցած էինք պետական բարձր պաշտօնեաներ Թուրքիոյ, Ռուսաստանի, Պարսկաստանի, Ռումանիոյ, Հունգարիոյ եւ Լեհաստանի մէջ, բայց անոնք աշխատած էին օտար երկիրներու եւ օտար շահերու համար:

Երբ այս տեսակետներն ձգտենայու լինէինք խնդիրներու լուսարանման, կը տեսնէինք, որ ութ հազար հոգինոց Հայկական բանակ մը, Հայ հրամանատարներով, Հայ հոգեբանութեամբ, պատրաստ մէկն ըրոպէ պաշտպանելու Հայկական շահերը, պատմական եւ քաղաքական մեծ նշանակութիւն ունեցաւ: Հայաստանի Հանրապետութեան կազմութեան գործին մէջ: Ճիշդ է, 1914 թուին, մեզմէ ոչ ոք գիտէր, որ 1918ին մենք պիտի կազմենք անկախ պետութիւն: Հետագայ դէպքերը զարգացան այդ ուղղութեամբ: Եւ մեծ պատերազմի հովերը պէտք է փչէին, որ սթափէր դարերով ներհամ, բայց չմեռած Հայ ստեղծագործ ուղին: Հայ ժողովուրդը անհատապաշտ էր տակաւին եւ անընդունակ՝ ընդհանրական աշխատանքներու:

Վրացիները ունէին ընդհանրական ուղի, որ կը դիրացնէր անոնց պետական շինարարական գործը:

Այս տեսակետն այ, Հայ կամաւորական շարժումը, որպէս բնօրինակաւ գործ, կ'ամրապնդէր մեր պետականութեան հիմքերը: Կամաւորական շարժումը աչքի կ'իյնար է՝ իր ռամկավարութեամբ:

Փերիշտոյ տարրը այնտեղ հայ գիւղացիին էր, հայ սամիկը, որ լայնօրէն իր աջակցութիւնը կը բերէր կամաւորական բանակին: Անկախութեան օրերուն, հայ բանակն այնչէս յատկութիւնն ունէր:

Իրամատերական դասը մեզ հետ չէր: Ծանր օրերուն ան կը փախչէր ժողովուրդէն եւ անոր մօտ կուգար հրճուանքի եւ ուրախութեան պահերուն: Յաճախ ստիպուած կը լինէինք բանտարկել հայ վաճառականը, որ կը մերժէր վճարել իր տուրքը հայ բանակի կազմութեան համար:

Քէ որքա՞ն մեծ էր ժողովուրդի գոհարելութիւնը, կարող էն ապացուցել հետեւեալ թիւերը: Ամբողջ հայութիւնը կամաւորներու օգտին հանգանակեց 1,444,000 ոտուրի, որմէ 1,021,000ը տուած էն ուսասանայերը: Եւրօպան տուած է 423,000 ոտուրի, որմէ 342 հազարը՝ Ամերիկան: Եգիպտոսը հանգանակած է 55 հազար ոտուրի: Ռուս պանծարկող յատկացուցած է 4,000,000 ոտուրի:

\*\*\*

Առաջին ձմեռը կարելի է համարել ուս բանակի ստամբխաղացման եւ հայ կամաւորական բանակի փայլուն յաղթանակներու շրջան:

Միւս գլուխի մէջ, մանրամասն կանց պիտի առնեմ 1914ի զեկտեմբերեան զէպերու, Նիկոլայ Բ-ի Թիֆլիս ժամանման եւ Սարիզամիշի կոտորելու վրայ:

Այսօր, պիտի բաւականանամ միայն նկարագրելով այն փաստը, որ Նիկոլայ Բ. ցարը կը շրջէր

Թիֆլիս քաղաքի հիւանդանոցները, իսկ եւ կ'ուղեկցէին անոր՝ որպէս քաղաքապետի: Յարը այցելութիւն տուաւ նաեւ կամաւորական բանակի հրամանատարներէն Դրոյին, որ վերաւորուած պառկած էր հիւանդանոցին մէջ: Ես պատմեցի ցարին հայ կամաւորներու քաջագործութիւններու մասին. նոյնը հաստատեցին եւ ցարին շրջապատող ուս զօրավարները եւ ցարը Դրոյին շնորհեց Փէորգեան պիւնտրական խաչը իր քաջութեան համար:

1915ին, ուս բանակը մտաւ Քուրքիոյ խորերը: Հայ կամաւորները, միշտ որպէս յատաճապահներ, քաջօրէն կը կատարէին պիւնտրական բոլոր աշխատանքները՝ որպէս կոտորուներ, հետախոյզներ եւ պաշտպաններ հայ պաղթականութեան:

Կովկասի մէջ կատարուեցաւ վարչական մեծ փոփոխութիւն: Հրամարեցուեցաւ Փոխարքայ Վորոնցով-Իաչկովը: Անոր փոխարինեց զօրքերու պիւստոր հրամանատար՝ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեիշը, որու մասին դեռ պէտք է խօսիմ:

Ահաւ նոր քաղաքականութիւն մը, նոր շրջան մը: Փոխուեցաւ է՛ վերաբերմունքը զէպի հայ կամաւորները: Նիկոլայ Նիկոլայեիշի նշանակումը անձնաւորութիւններու փոփոխութիւն չէր միայն: Թրքահայաստանը պրաւուած էր. պէտք էր ուսացնել այդ հողամասը:

Ես, որպէս ներկայացուցիչ հայ կամաւորական բանակի, իսկոյն զպացի վերաբերմունքի փոփոխութիւնը, որու զիստաւոր պատճառները հետեւեալն էին.

Ամէնէն ստաջ, ուս կատարութիւնը կը վախճար, որ հայ կամաւորական բանակը, լին համ

չեմ յեզկոններու նման, կարող էր խոչընդոտ հանդի-  
սանալ շրջանի ուսացման:

**Երկրորդ.** Ճանկահայաստանը պրակելն ետք,  
կամաւորներու դերը կը համարուէր վերջացած:

**Երրորդ.** Քրքահայաստանի մէջ այլևս հայեր  
չկային: Մնացած էին քիւրտեր, որոնց ուսու կառա-  
վարու թիւնը կ'ուզէր սիրաշահիլ եւ այդ նպատակով  
ուզարկած էր յատուկ գործակալ իշխան Շախաւրս-  
կոյը:

**Չորրորդ.** մթերքի եւ հրացաններու պակասը  
արեւմտեան հակառի վրայ կը ստիպէր յետ առնել  
հայ կամաւորներու երեքզմեան հրացանները եւ փո-  
խարինել զանոնք բերտաններով:

Հայ կամաւորներու կացութիւնը սղերկզական  
էր: Իշխանութիւնը, արդարացնելու համար իր վերա-  
բերմունքը, բարդեց կամաւորներու վրայ ծանր յան-  
ցանքներ. մեղադրեց զանոնք զասալքութեան, քիւր-  
տերու վրայ բռնութիւն գործ դնելու մէջ. մինչև  
անգամ մեղադրեց հայ կամաւորները կոզակներու  
վրայ կրակելու մէջ:

Ես պահանջեցի քննութիւն կատարել, որ եւ ցոյց  
տուաւ յուրերու անհիմն լինելը:

Փոխարքայի օգնական գոր. Եանուշկելի ժօտ  
խորհրդակցութիւն մը կար, որուն կը մասնակցէին  
վեց գորավարներ: Ես հրաւիրուած էի լսելու հայերու  
դէմ եղած ամբաստանութիւնները: Փաստերով աչ-  
խատեցայ հերքել մեղադրանքները:

Ազգային Բիւրոն, յանձինս բանաստեղծ Յ. Քու-  
մանեանի եւ իրաւարան Պուստունցի, նշանակեց

յանձնաժողով՝ պաշտօն տալով անոնց տեղին վրայ  
քննելու խնդիրը:

Արդէն վերը բտի, որ այդ բոլոր պրպարտութիւն-  
ները մէկ նպատակ ունէին. գինաթափ ընել կամաւո-  
րական խումբերը:

Անցեալ զարու մէջ, Հիւսիսային Կովկասի  
պրաման ժամանակ, ուսու կառավարութիւնը նոյն  
քաղաքականութիւնը վարած էր: Չեչեներու, լեռ-  
նականներու եւ ներկիզներու պարտութենէն ետք,  
ուզարկուած էին կոզակներ, որոնց յատկացուցած  
էին լաւագոյն հողերը եւ ստեղծած բնիկներու եւ  
եկուորներու միջև. հակամարտութիւն:

Ահա թէ ինչ կը գրէ գոր. Իւղենիչը Փոխարքային՝  
իր թիւ 1482, 5 Ապրիլ 1915 թուակիր նամակով.

«Մեզ պէտք է հերկել Ալաշկերտի հովիտի  
գաշտերը եւ ես կը կարծեմ, որ լաւագոյնը կը լինի  
այստեղ ուզարկել ռուս տարրեր՝ թուրքերու եւ  
ֆիւրտերու քողուցած հողերը մշակելու համար:  
Հայերն այստեղ գրազած են այդ գործով, բայց մեզ  
համար ցանկալի չէ այդ, որովհետեւ ապագային  
դժուար կը լինի անոնց ձեռքէն խլել այդ հողերը:  
Ինձ կը թուի, թէ նպատակայարմար է Գոնէն եւ  
Կուբանէն տեղափոխել կոզակներ՝ սահմանակից  
չրքաններու համար եւ այդպիսով ստեղծել Ալաշ-  
կերտի կամ Եփրատի կոզակային նոր գորամաս:  
Անոնց պէտք է միայն գէնֆ տալ եւ պարտաւորեցր-  
նել գալ այստեղ իրենց անասուններով եւ ձիե-  
րով»:

Փոխարքան հաստատեց այս ծրագիրը: Սակայն,  
ուստական յեղափոխութիւնը իր յորձանքներու մէջ

խնդրեց ոչ միայն այս ծրագիրը, այլև՝ ոռու քանակի յադթութիւններու բոլոր պտուղները:

Ռուս կառավարութիւնը միանգամայն անտես կ'ատնէր հայ կամաւորներու ռազմական քաջագործութիւնները: Եւ գանգատեցայ այդ մասին բարձր իշխանութեան եւ 1915 Մարտ 18ին, գլխաւոր սպայակոյտի պետէն ստացայ նամակ մը, որով կը հաղորդուէր ինձ, թէ կարգադրութիւն եղած է թերթերու մէջ արձանագրել նաև հայ գինու որներու քաջութիւնները:

Նամակը, սակայն, առանձին հետեւանք չունեցաւ: Ընչը նոյն ժամանակներուն, կառավարութիւնը սկսաւ սիրաշահիլ թիրառերը՝ անոնց մէջ տեսնելով իրեն հաւատարիմ գործակիցներ:

Վանի նահանգապետ Արամը յատուկ գրութեամբ դիմեց զօր. նիկոլայեիին՝ զգուշացնելով գայն, որ թիրառերը խարդախ են եւ վատութեամբ կը փոխարինեն սուսներու լատութիւնները: Քիրառերը այդպէս ալ բրին ոռուս զօրքերու նահանջի ժամանակ: Արամը այդ մասին գրած էր ե՛լ ինձ ու ես անմիջապէս գլխակի իշխանութեան՝ ցոյց տալով այն վտանգը, որ կը սպառնար հայերուն՝ թիրառերու իրենց լքած գիղերը վերադառնալու պատճառով:

Մէկ խօսքով, ինչպէս կը տեսնէ ընթերցողը, ամէն կողմէն հայերուն համար ստեղծուած էր աննպաստ կացութիւն մը: Արեւմտեան ճակատի վրայ, Դաշնակիցներու գրութիւնը նոյնպէս լատ չէր եւ գժուար էր արդէն նախատեսել պատերազմի իսկական վախճանը:

Կոստանթնուպոլիսի իսկական իշխան-

մանքով կը վերաբերէին ղեկի մեզ, մանաւանդ ղեկի մեր կամաւորները, որոնց շուրջ կը կուտակուէին թշնամական տրամադրութիւններ:

Տեսնելով այդ բոլորը՝ մենք անկարող էինք սակայն, ինչպէս անկարող ենք եւ այսօր, մեր յարաբերութիւնները խզել Ռուսաստանի հետ: Ձե՞ս որ մեր քաղաքական բախտը անոր ձեռքն էր լիովին: Մեզ կը մնար համաձայնուել, համակերպիլ, խնդրել, որովհետեւ ուժ չունէինք մեր կամքը պարտապարտութիւնը կը զգանք մեր դատի արդարութիւնը, բայց թոյլ ենք երկուսն ալ:

Անձամբ, ամենէն աւելի ենթակայ էի բարոյական ճշուններու եւ ուրախ եմ, որ իմ շրջապատը միշտ հասկցաւ իմ կացութեան ծանրութիւնը: Յաճախ խօսած եւ բանակցած այնպիսի մարդոց հետ, զորս ատած եմ եւ արհամարհած եմ, բայց ստիպուած եմ եղեր համակերպիլ, որովհետեւ այդ մարդոցմէն էր կախուած հայ ժողովուրդի բախտը: Մանր է միշտ բանակցիլ մէկու մը հետ, երբ ան տեղեակ է, որ դու թոյլ ես եւ անզօր: Հոգեբանական այդ ծանր վիճակը ապրած եմ ե՛ւ ոռուս իշխանութեան մօտ, ե՛ւ թուրքերու հետ բանակցելու ատեն, ե՛ւ Եւրոպայի մէջ ունեցած դիմումներու ու ժամանակ:

Մենք ընդդիմադիր կուտակութիւն չէինք, որուն գործը դիրքին է՝ եւ անպատասխանատու: Մենք պործող տարր մըն էինք, պատրաստ՝ ենթարկուելու ամենախիստ քննադատութիւններու. որոնք մենք կուտայինք եւ մեզ վրայ կ'ատնէինք համակերպութիւն ծանր պատասխանատուութիւնը:

Մենք գիտեինք, որ բացի գինու որական գործողութիւններէն, նայ կամաւորներու վրայ դրամ էր ուրիշ ծանր պարտականութիւն մը եւս. հսկել նայ պաղթականներուն եւ ապահովել անոնց նահանջը՝ դէպի կովկաս եւ կամ՝ ընդհակառակը: Ստիպուած՝ համակերպուածի եւ գիջումներու ճամբան կինք բռնած՝ պահպանելու համար կամաւորներու պոյու-թիւնը: Պէտք է ըսել, որ հարիւր հազարաւոր մարդիկ, շնորհիւ կամաւորներու, փրկեցին իրենց կեանքը:

Հայերու մէջ ալ կային մարդիկ, որ կը քննադատէին կամաւորական շարժումը: Հայ սոցիալ-դեմոկրատները կը գտնէին, որ առանց շօշափելի օգուտի՝ կամաւորական շարժումը կը նեւտ մեկ Ռուսաստանի գիրկը, այսինքն՝ Դաշնակիցներու գիրկը, որով մեր հարեան թուրքերն ու վրացիները թշնամանքով կը վերաբերէին մեզ:

Որոշ ճշմարտութիւն կար այս քննադատութեանց մէջ: Սակայն, պէտք էր ընդհանրապէս փոխել նայ քաղաքականութիւնը տաճիկներու հանդէպ: Վրաց սոցիալ-դեմոկրատ ականաւոր պորթլինըն մէկը, զրոյցի մը մէջ, ինձ բացաւ, թէ իրենք յսել անգամ չեն ուզեր կամաւորական բանակի մասին. «Բաւական է, որ 200 հազար վրացիներ կը կոուիմ ռուսական ճակատներու վրայ»: Ընդհակառակը, վրացիները մէկ կամաւորական խումբ կոուիմ ռուսական թուրքերու կողքին՝ ռուսներու դէմ:

Երկրորդի այս քաղաքականութիւնը չմասնակց վրացիներուն: Այսօր, անոնք իրաւապէս ճանչցուած պետութիւն են եւ Փարիզի մէջ ունին իրենց ղեկավար, որ անգամ է գիւանադիտական մարմին: Վրացիներու յաջողութեան պիտի որ պատճառը սակայն այն էր, որ խնդիրներ չուէին Տաճկաստանի հետ:

Վորոնցով-Դաշակովի մեկնումը մէն էտք, ռուսները առին իրարմը մը եւ կը պատրաստուէին գրաւել Պոլիսը: Վրաց իշխանը կ'ըսէր ինձ, թէ ինք կը պատրաստուէր Այա-Սոփիան նորէն օծելու որպէս քրիստոնէական սաճար:

Կամաւորական խումբերու անհրաժեշտութիւնը կը դառնար աւելորդ: Սկսաւ հաշուեյարդարը: Նախ՝ ապառ արձակուեցան անոնք, որ կը կամենային հանգիստի կոչուիլ: Մնացած մասերը վերածուեցան ռուսական գունդերու, որոնց գլխաւորեցին ռուս կամ նայ գինու որականներ: Արձակուեցան նայ հրամանատարները: Եւ 1919ի գարնան վերջացաւ կամաւորական բանակներու վերակազմութիւնը, որով ան ունեցաւ երկու տարուան պոյութիւն, 1914ի ամառէն սկսած մինչեւ 1916ի ամառը:

Այդ շարժումը, անկասկած, խոր հետքեր թողցուց նայ ժողովուրդի քաղաքական ինքնապիտակցութեան մէջ. ան մեր քաղաքական անկախութեան կորիզը դարձաւ:

Ի հարկէ, կարելի չէ ըսել, թէ այդ շարժումը չուէր եւ իր բացասական կողմերը, որոնք յատուկ են ոչ կանոնաւոր զօրքերուն: Զէ՞ որ անոնք կազմուած էին պատահական կերպով, առանց գինու որական գարնցի եւ կարգապահութեան: Ժամանակ չկար իսկ վարժութիւններու համար: Հայ հրամանատարները խնդրած էին ինձ դիմել իշխանութեան, որ թոյլ տայ նայ կամաւորներուն վարժութիւններ ընել: Բայց կառավարութիւնը կը մերժէր եւ կը շտապեցներ՝ ժա-

ժանակ շունենալու պատճառով:

Հայ հրամանատարները, անցած լինելով յեղափոխական-հայդուկային դպրոցը, յաճախ չէին կարողանար կազմակերպուիլ կանոնաւոր զօրքերով կոուկուռ ձեւերուն: Հանդամանք մը, որ յաճախ անհամաձայնութիւններու առիթ կու տար ուս զօրավարներու և Անդրանիկի միջև:

Ռուս զօրավարները չէին հաշտուեր այն միտքի հետ, որ հրամանատարները կարելի է անուանել Դրօ, Քեոփ, Անդրանիկ և կը պահանջէին զանոնք անուանել իրենց ազգանուններով:

Հայ կամաւորները, վրէժով լցուած, թուրք եւ քիւրտ պիղաքներու վրայ կը նայէին որպէս թշնամի: Ինչ որ նոյնպէս դիւր չէր զարուս զօրավարներուն: Վրացի և թուրք զօրավարները թշնամանքով կը վերարեւելին Հայ կամաւորներուն:

Հայ կամաւորական խումբերու լուծումէն ետք, մնաց անոնց հիմնական կորիզը: 1917ին, երբ կը կազմուէր հայկական զօրամարմինը և 1918ին, երբ կը ստեղծուէր հայկական բանակը, Հայ կամաւորները մտան բանակի մէջ և, կարելի է բուհ, գինուորական այդ փոքրիկ ըջիջէն կազմուեցաւ: Հայաստանի Հանրապետական բանակը:

Ինչպէս Ազգային Խորհուրդը զարձաւ Հայաստանի կառավարութիւն և կամաւորական խումբերը զարձան հայկական բանակ, այնպէս ալ Թրքահայաստանի բարենորոգումներու զազափարը զարձաւ Անկախ Պետութեան զազափար:

Այս բոլորը հարկաւ մէկ օրու ան մէջ չէին, որ տեղի ունեցան: Սերմերը ծլեցան, ծաղկեցան և տուին

հրաշալի պտուղներ: Բայց ոչնչացան Քեմալի և բոլշեիկներու հարուածներուն տակ: Այդ հարուածներուն տակ, սակայն, մեռան մեր անկախութեան արտաքին ձեւերը միայն: Լուծուիւնք մնաց զեռ: Լուծուիւնք Հայ Ժողովուրդի ոգին է, պետականութեան զազափարը, մեր մշակոյթը, մեր գրականութիւնը, մեր յեղափոխական կորովը և շ. Յ. Դաշնակցութեան գոյութիւնը:

Կամաւորական շարժումը նոյն հիմունքներու ներքին, ինչ որ մեր քաղաքական մտածելակերպը: Չէ՞ որ կամաւորական խումբերու մէջ ի սկիզբի, իրարմէ հետու, իրարմէ բաժնուած տաճկահայ և ուսահայ հատուածները, շփուեցան իրարու հետ՝ զնելով մեր ապագայ պետականութեան հիմնաքարը:

Այսօր, այս բոլորը պատմութեան գիրկն են անցած: Չկան կամաւորական խումբերը: չկայ և Հայկական յեղէնը, որ նոյն դասի՝ Հայ Ժողովուրդի վերածնութեան համար կու ելայ: Սուրբոյ, Պաղեստինի և Կիլիկիոյ ճակատներուն վրայ: Անոնց շարքերուն մէջ ևս ինկան բազմաթիւ հերոսներ: Ետերը ընդմիշտ հաշմանդամ դարձան: շատերը հիասթափուեցան:

Ոտնարհենք մեր գլուխները անթաղ հերոսներու առջև: Իսկ անոնք, որ կ'ապրին դեռ Ֆիդիքական և բարոյական տանջանքներու մէջ, բռնեք, թէ ապագայ սերունդները աւելի երջանիկ պիտի լինին քան մենք, պիտի տեսնեն մեր վերածնութեան արշալոյսը, որուն համար պայքարեցան և տառապեցան անոնք:

Ժողովուրդի մը ազատագրութիւնը միշտ շափուած է արիւնով:

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆ

(Հասարակութիւնը, գաղթականութիւնը  
և Քաղաքներու Միութիւնը)

Պատերազմի առաջին իսկ օրէն, և մանաւանդ երբ Թուրքիան անցաւ Ռուսաստանի թշնամիներու կողմը, ամբողջ Կովկասը անձնատուր եղաւ պատերազմական գործերու միւս բոլոր գործերը անցան երկրորդական գիծի վրայ: Այս իսկ պատճառով, կովկասեան և մասնաւորապէս Հայկական խնդիրներու մասին խօսելու ատեն, մենք ի նկատի պէտք է առնենք պատերազմական գործողութիւններու ընդհանուր գարգացումը և քաղաքական այն վիճակը, որ գոյութիւն ունէր Ռուսաստանի մայրաքաղաքին՝ Պետերբուրգի մէջ:

Ինչպէս ըսի, ժողովուրդը մեծ խանդավառութեամբ ընդունեց պատերազմի լուրը: Որքան աւելի թեմք բարդանային պատերազմական գործերը ճակատին վրայ, որքան աւելի կը խճողուէր քաղաքական փոփոխութիւնը Պետերբուրգի մէջ, այնքան աւելի փոփոխութեան կ'ենթարկուէին Կովկասի գործերը՝ իրենց նութեամբ: Մշակութային խնդիրները տեղի կու տային քաղաքական լուրջ խնդիրներուն: Բոլորը այն կարծիքէն էին, որ պատերազմը, չը-

նորհիւ տեխնիկայի զարգացման, չուտով պիտի վերջանայ: Ասոր համար վեցամսեայ ժամանակամիջոց մը կը նշանակէին, որուն համար այ պատրաստութիւններ կը տեսնէին:

Երբ յայտարարուեցաւ թուրքոսական պատերազմը, ուսական զօրքերը երեք զլխաւոր ուղղութեամբ խուժեցին Թուրքիոյ սահմաններէն ներս՝ Օլթիէն, Սարիգամիշէն և Իզդիրէն: Հայ կամաւորները առաջին շարքերու մէջ էին: Երևացին առաջին վիրաւորները: Կովկաս հասան առաջին փախտականները: Եւ հայրենասէր ժողովուրդի ջանքերը ուղղւեցան երկու խնդիրներու վրայ. օգնել վիրաւորներուն և կազմակերպել գաղթականներու օգնութեան գործը:

Տեսանք արդէն, որ ամբողջ Ռուսաստանի մէջ ժողովուրդը խանդավառուած էր պատերազմով ուրովհետեւ պիտէր, թէ այդ պատերազմը կը բխէր Գերմանիոյ վերին խաւերու յարձակողական ծրագիրներէն:

Ժողովուրդը պատերազմի մէջ պատասխանատու չէր նկատեր ցարական կառավարութիւնը, ինչպէս որ կ'ընէր ճափոնական պատերազմի ժամանակ, 1905ին: Այն ժամանակ, ուս ժողովուրդի մեծ մասը կ'ուզէր Ռուսաստանի պարտութիւնը՝ կարծելով, թէ այդ միջոցով դիւրին պիտի լինէր ձեռք բերել քաղաքական որոշ ազատութիւններ:

Այս անգամ, այդպիսի տրամադրութիւններ չըկային: Բացի Թուրքերէն, բոլորն ալ կը ցանկային Թուրքիոյ և Գերմանիոյ պարտութիւնը: Այս անգամ ինք՝ կառավարութիւնը՝ համաձայնութեան եկաւ



բաղաբներու եւ գաւառներու ինքնավարութիւններու հետ, թոյլ տալով վերջիններուն առաջ բերել հսկայական կազմակերպութիւններ, ոոս բանակի վիրաւորներուն ժանդակութիւն ցոյց տալու համար:

Իսկոյն կազմուեցան երեք մեծ միութիւններ: Քաղաքներու Միութիւնը, որ պարփակեց իր մէջ Թուսաստանի բոլոր քաղաքները, բացի Կովկասէն. Գաւառական Ինքնավարութիւններու Միութիւնը եւ, ի վերջոյ, այդ երկու կազմակերպութիւններու միութիւնը, որ Ձեւգոր անունը կը կրէր:

Այս միութիւններու գործունէութիւնը չէր սահմանափակուեր միայն հիւանդանոցներ բանալով եւ բժշկական օգնութիւն ցոյց տալով ճակատէն եկած վիրաւորներուն: Անոնց հովանաւորութեան տակ չուտով սկսան բացուիլ սննդակայաններ, թէյաւուաններ, վիրարութարաններ եւ փոխադրական միջոցներու կայաններ:

Միութիւններու մէջ կ'աշխատէր քաղաքի եւ գիւղի լաւագոյն մտաւորականութիւնը, որուն վիճակուած էր քաղաքական կարեւոր դեր կատարել հետագային:

Քաղաքներու Միութեան գլուխը կանգնած էր Մոսկուայի քաղաքագլուխ՝ Չելնսկովը, իսկ Գաւառական Ինքնավարութիւններու Միութեան գլուխը անցած էր իշխան Գեորգիէ Լկովը:

Միութիւններու գործունէութիւնը գնալով կը ծաւալէր. հարիւրաւոր միլիոններ ծախսեցին անոնք: Իրամը կը հոսէր ոոսս պանձարանէն:

Թուս-Քրքական պատերազմը մեր առաջ ալ դը-

բաւ նոյնանման միութիւններու կազմութեան խնդիրը: Երբ Քրքական առաջին թնդանօթները պայթեցին, անմիջապէս տեսնուեցայ զինուորական իշխանութիւններու հետ: Հրահանգ ստացայ առաջ բերելու Կովկասեան Քաղաքներու Միութիւնը:

Կովկասի մէջ կային մեծ եւ փոքր 44 քաղաքներ, որոնցմէ աչքի կը զարնէին Թիֆլիսը, Բաթումը, Բապուսն, Գեանջան, Երևանը, Կարսը, Ալեքսանդրապոլը, Քութայիսը եւ այլն: Որպէս Թիֆլիսի քաղաքագլուխ, ինձ վրայ էր դրուած միութիւնը կազմակերպելու գործը: Եւ ինձ վրայ առնելով նախաձեռնութիւնը՝ կազմակերպեցի միութիւնն ու սկիզբի օրէն մինչև պատերազմի վերջը աշխատեցի այդ միութեան մէջ:

Պէտք էր անմիջապէս հիմնել հիւանդանոցներ 10 հազար մահճակայներով՝ դպրոցական շէնքերու եւ բնդհանրապէս Կովկասեան քաղաքներու մեծ տուններու մէջ: Այդ նպատակին համար, Թիֆլիսի, Երևանի եւ Ալեքսանդրապոլի մէջ կառուցուեցան յատուկ շէնքեր: Չինուորական սպայակոյտէն նախնական ծախքերու համար, ստացայ մէկ միլիոն ոոս բլի:

Աշխատանքը կ'ընար: Գործի էին կանչուած հազարաւոր մարդիկ: Հրաւիրեցի Կովկասի 44 քաղաքներու ներկայացուցիչները բնդհանուր համագումարի մը, որ տեղի ունեցաւ Հսկաեմրեքի վերջը: Համագումարի մէջ նկատուի չէր ազգային հակամարտութիւն: Բոլորն ալ մեծ պատրաստակամութեամբ կ'ուզէին օգնել վիրաւոր զինուորներուն: Ընարուեցաւ վարչական մարմին մը Թիֆլիսի, Բապուսի, Երևանի, Ալեքսանդրապոլի, Քութայիսի եւ Վլադիկա-

կասի ներկայացուցիչներէն: Նախապահեցի ես եւ այդ պաշտօնին մէջ մնացի մինչեւ պատերազմին վերջը:

Այս նոր կազմակերպութեան մէջ ալ հայերը առաջնակարգ դեր կը խաղային:

Չինուորական գործողութիւններու լայնացման պատճառով, Քաղաքներու Միութիւնը իր գործունէութեան սահմանները տարածեց մինչեւ Թրքահայաստանի գրաւուած վայրերը եւ մինչեւ Պարսկաստան: Ծառայողներու թիւը կը հասնէր 10,000-ի՝ մէջը հաշուած բժիշկներ, սանիտարներ, գիւթեան քույրեր եւ զբաւենեակային պաշտօնեաներ:

Որպէս օգնականներ, ինձ մօտ կ'աշխատէին աչքի ինկոյ հասարակական գործիչներ՝ Իշխան Արզումանը, Թամազեւը, բժիշկ Մարգարեանը եւ Յ. Խոնուցը: Հետագային, երբ Թրքահայաստանի գրաւումով ալ աւելի տարածուեցաւ մեր հիմնարկութիւններու ցանցը, մեր պաշտօնէութեան թիւը բարձրացաւ եւ Քաղաքներու Միութեան մէջ մտան աշխատելու՝ բժիշկ Համօ Օհանջանեանը (Հայաստանի Հանրապետութեան ապագայ վարչապետը), բժիշկ Բարայեանը եւ Ռուբէն Տէր Մինասեանը (ապագայ նախարարներ Հայաստանի Հանրապետութեան):

Այն ժամանակուան պայմաններու մէջ, Քաղաքներու Միութիւնը միակ տեղն էր, ուր լաւագոյն կերպով կարող էին իրենց ու մերը օգտագործել հայ գործիչները. մանաւանդ, որ Քաղաքներու Միութիւնը գրադած էր եւ զաղթականական գործերով:

Կովկասեան Քաղաքներու Միութիւնը գործեց մէկ ամիս միայն, որպէս անկախ կազմակերպութիւն:

Ռուսական Քաղաքներու Միութեան նախապահ՝ Մոսկուայի քաղաքագլուխ Չելնսկովը իր օգնական Կիշկինի հետ Թիֆլիս ժամանեց՝ առաջարկելով ինձ միանալ ռուսական քաղաքներու ընդհանուր միութեան: Մեր կողմէն առարկութիւն չեղաւ: Տուիք մեր համաձայնութիւնը մտնելու ընդհանուր միութեան մէջ՝ պահելով միաժամանակ մեր ներքին անկախութիւնը տեղական խնդիրներու վերաբերմամբ:

Չելնսկովի հետ այցելեցինք Փոխարքային, որուն Չելնսկովը տուաւ մէկ միջին ուսուցիչ չէք մը, Կովկասի կարիքներուն համար: Պէտք է ըսեմ, որ մենք՝ հայերս՝ առանձնապէս օգտուեցանք այդ միացումէն որովհետեւ 1915ին, երբ սկսաւ զաղթականական հոսանքը, Մոսկուան մեծապէս օժանդակեց մեզ՝ մեր զաղթականներու օգնութեան գործին մէջ:

\* \* \*

Ժամանակագրական կարգը չկորցնելու համար, այստեղ պիտի պատմեմ Նիկողայ Բիթիֆլիս ժամանման մասին, որ տեղի ունեցաւ Նոյեմբեր 26ին:

Ցարը կ'ուզէր տեսնել Կովկասը, Թիֆլիսը իր հիւանդանոցներով եւ ապա կ'ուզէր այցելել Կովկասեան ճակատի զօրամասերը:

Ցարի ժամանումէն քանի մը օր առաջ, Փոխարքայի օգնականը իր մօտ հրաւիրեց զիս եւ վրաց պետականութեան պետ՝ Իշխան Արխագին: Յայտնեց ցարի Կովկաս այցելելու մտադրութեան մասին եւ հետաքրքրուեցաւ, թէ ինչ շահով կարելի է ցարի կեանքը ապահով համարել Կովկասի մէջ:

Ըստի, որ ժողովուրդի ընդհանուր արամադրու-  
թիւնը թոյլ կու տայ ինձ մտածելու, թէ ոչ մէկ յեղա-  
փոխական կազմակերպութիւն նպատակ ունի ցարի  
դէմ մահափորձ կազմակերպելու: Այդ իսկ պատճա-  
ռով, ցարի կեանքը միանգամայն ապահով կարելի է  
համարել: Նոյնը յայտարարեց ե՛ւ ազնուականու-  
թեան պարագլուխը:

«Սակայն, — աւելցուցի ես — որպէսզի միանգա-  
մայն վստահ լինիմ իմ կարծիքիս մէջ, յամձն  
կ'առնեմ խօսիլ այդ մասին յեղափոխական կազ-  
մակերպութիւններու հետ»:

Ես կատարեցի յանձնառութիւնս եւ այս անգամ  
աւելի վստահ՝ յայտնեցի կարծիքս Փոխարքայի օգ-  
նականին:

Քաղաւորը ընդունեցինք թիֆլիսի մէջ: Ես ու-  
ղեկեցեցի իրեն քաղաքային շէնքերն ու հիւանդանոց-  
ները այցելելու ատեն: Հիւանդանոցներէն մէկուն  
մէջ պտտեցաւ կր Քայազատի տակ վիրաւորուած Դրոն:  
Յարին ներկայացրի Դրոն:

Ի պատիւ ցարի, Քաղաքային վարչութիւնը  
սարքեց ընդունելութիւն մը, ուր հրաւիրուեցան 600  
քաղաքացիներ: Յարի շուրջը մթնոլորտ մը ստեղ-  
ծուեցաւ. ոչ ոք կ'առարկէր, ոչ ոք կը բողբոջէր իրեն  
ցոյց տուած այդ վերաբերմունքին համար: Ժամա-  
նակը այդպէս էր: Բոլորը մէկ կողմ էին դրած վէճերն  
ու բողբոջները:

Սակայն, ցարը չկարողացաւ օգտուիլ ժողո-  
վուրդի արամադրութիւններէն, չկարողացաւ օր  
սուսման հաշտութիւն կնքել իր ժողովուրդի հետ:

Երբ իրեն կը ներկայացնէի քաղաքային ինքնա-

վարութեան ծառայողները, ճառ մը արտասանեցի՝  
չեչակեցի Կովկասի պահանջներն ու կարիքները: Ու-  
սեցի այն բոլոր խնդիրներու վերաբերեալ, որոնց  
անդրադարձայ նախորդ գլուխներու մէջ, այսինքն՝  
բարձրագոյն ղարոցի, Երզուէայ ղատաւորներու եւ  
զաւառական ինքնավարութիւններու խնդիրնե-  
րուն:

Յարը ինձ պատասխանեց ճառով մը՝ խնդակ-  
ցութիւն յայտնելով այն մասին, որ ինք եկած է Կով-  
կաս, զոր անուանեց «նուսական թագի ամենայաւ  
գոհարը», բայց ըստ էութեամբ ան չձօնեցաւ իմ շօ-  
շափած հարցերուն:

Հայկական պատուիրակութիւնը եւս այցելեց  
ցարին: Ես անգամ չի եւ այդ պատուիրակութեան:  
Սամսոն Յարութիւնեանը, Հայ Բարեգործական եւ  
կրթական հիմնարկութիւններու կողմէ այն միտքը  
յայտնեց ցարին, որ պատերազմը եւ յաղթութիւնը  
վերջապէս բաւարարութիւն պիտի տան Հայ ժողո-  
վուրդի ազգային պահանջներուն: Նոյնը ըսած էր  
ցարին ե՛ւ կաթողիկոսը. Երկուսին ալ ցարը պատաս-  
խանեց, թէ Հայ ժողովուրդին կը սպասէ փայլուն  
սպազայ մը:

Փոխարքայն իմացայ, որ ցարը շատ գոհ էր  
մնացած իր Կովկաս այցելութենէն: Գոհ էր եւ ժողո-  
վուրդը, որ զանազան երթեր կազմակերպելով՝ կ'ու-  
զեր որ ցարը պիտի տեսնէր ձօնակէն:

Քաղաքի մէջ, առանձին միջոցներ ձեռք չէին  
առնուած ցարի ապահովութեան համար: Յաճախ  
ցարի կառքը կ'անցնէր նեղիկ փողոցներէն եւ դի-  
րին էր ոտ մեր հարուածով մը վերջ տալ իր կեանքին:

Բայց ժողովուրդի տրամադրութիւնները այլ էին այն ժամանակ ցարի հանդէպ:

Յարը Թիֆլիսի մէջ երեք օր մնալէ ետք, մեկնեցաւ Կարս, ապա՝ Սարիղամիշ և ամէնուրեք մնաց զո՛հ իր տեսածէն:

Վերադարձին, երբ ցարը պիտի մեկնէր Պետերբուրգ, զիս կանչեց պալատական նախարար Բեկկենդորֆը և ըսաւ. թէ ցարը կ'ուզէ ինձ պարգևել աստիճան մը կամ չքանչան մը: Նախարարը կ'ուզէր իմանալ, թէ այդ երկու պարգևներէն ո՞րն է նախընտրելին ինձ համար:

Ես խօսեցի այդ մասին Փոխարքայի հետ, որ խորհուրդ տուաւ ինձ չընդունել որեւէ պարգև: Փոխարքայի խորհուրդը խելօք էր և տրամարանական: Ան ըսաւ, որ ինձ համար բաւական է միապետի բարձր ցանկութիւնը ինձ պարգևելու, թէ չքանչանը կամ աստիճանը ոչինչ պիտի աւելցնէ այն վերարեւմուտքին վրայ, որ ունին զէպի ինձ ուս իշխանաւորները: Ընդհակառակը, ցարի պարգևով ես պիտի դառնամ բիրտկրատ աստիճանաւոր մը և կորսնցընեմ ժողովուրդի ինձի հանդէպ ունեցած հաւատն ու վստահութիւնը: Փոխարքան ըսաւ նաև, որ իմ արձէքս հենց այդ վստահութեան մէջ է, առանց որուն հենց իրենց՝ իշխանաւորներու աչքին իսկ անարժէք մէկը պիտի դառնամ:

Փոխարքան իրաւացի էր: Ես հրաժարեցայ ցարի պարգևէն:

Յարի գալուստը ապացոյց մըն էր, որ զեռ ուշ չէր ժողովուրդի հետ համաձայնութեան կըր մը գտնել: Բայց ցարը մնաց խուլ և կոյր ժողովուրդի պահանջը:

Ներու՛ն հանդէպ և զրդու՛ած Թագու՛ հիէն անտես ա՛ռաւ իր ժողովուրդի ամէնակական կարիքները: Իր կարճատես քաղաքականութիւնը յանգեցաւ մարդկային ամենասարսափելի ողբերգութեան, որուն գոհը դարձաւ նաև ինք՝ ցարը՝ ամբողջ ընտանիքի հետ միասին:

Յօսակցութեան մէջ ցարը իր գոհունակութիւնը յայտնեց ինձ, որ Կովկասի ժողովուրդը այսպիսի եռանդով կ'աշխատի ճակատի և վիրաւոր զինուորներու համար: Ըսաւ նոյնպէս, որ միւս տարի նորէն Կովկաս պիտի գայ, այս անգամ Թալուհու հետ միասին:

Դեկտեմբեր 1ին ցարը մեկնեցաւ:

Մէկ շաբաթ շանցած՝ յուր տարածուեցաւ, որ թրքական զօրքերը ձմրան այդ սառնամանիքին, և՛ բեւայեր են սահմանին մօտ, Սարիղամիշի տակ:

Թուսական բանակը, որ փոքրաթիւ էր թրքական ճակատի վրայ, ընդամէնը մէկ կանոնաւոր զօրամարտին (կորպուս) և քանի մը երկրորդական զօրամասեր (դիվիզիա), երեք կողմէն չըջապատուած էր թրքական երրորդ բանակէն, որ կազմուած էր 60 բաւալայիտներէ և որուն զլուխը անցած էր Էնփէր փաշան:

Կարս և Թիֆլիս տանող միակ երկաթուղազիծը և խճուղին թուրքերը զրաւած էին: Թրքական բանակը յառաջացած էր մինչև Արղահան և անցած էր մեր զօրքերու և Կարսի բերդի թիկունքը:

Օրէնքի համաձայն, Կովկասեան ճակատի հրամանատարը ինք՝ Փոխարքան է: Բայց ի նկատի ունենալով, որ Վորոնցով-Դաշկովը տկար էր և ծեր, զին-

տորական բոլոր գործերը յանձնած էր իր օգնական՝  
գոր. Միշլայեւսկիին, որ այդ ժամանակ Սարիգամիշ  
էր: Զօրավարը, տեսնելով որ ոուս բանակը չըջա-  
պատուած է, հրաման կու տայ զօրքին նահանջել և  
ինքը ձիով կը փախչի Թիֆլիս, ուր գեկուցում կու  
տայ Փոխարքային ոուս զօրքի անել կացութեան մա-  
սին:

Չեկուցումը առաջ բերաւ կատարեալ խուճապ  
և առաջին ձերթին վարչական ու գինուորական իշ-  
խանութիւններու մէջ: Որոշուեցաւ անմիջապէս գա-  
տարկել Թիֆլիսը և վարչական մեքենան տեղափո-  
խել Հիստային կովկաս:

Այդ նպատակին համար յատկացուեցաւ ինը մի-  
լիոն սուրբի, զոր անմիջապէս իրենց մէջ բաժնեցին  
պաշտօնեաները և «գործերով» լիքը սնտուկներ  
պատրաստեցին մեկնելու համար: Մեկնեցին պետա-  
կան քանի մը հիմնարկութիւններ, լուսաւորութեան  
վարչութիւնը և ուրիշ հաստատութիւններ:

Ուշ երեկոյ էր, երբ գիս կանչեցին գինուորական  
չտարը: Գլխաւոր հրամանատարի օգնականը ինձ  
յայտնեց, թէ Թիֆլիսը քանի մը օրէն կարող է անցնել  
թշնամու ձեռքը և թէ պետք է քաղաքի շուրջը խրա-  
մատներ փորել, որուն համար հարկաւոր կը լինին  
10,000 բանուորներ:

Անմիջապէս վերադարձայ քաղաքապետարան.  
կանչեցի քաղաքի գլխաւոր գործակալ Շավերդեա-  
նին, որ իր տրամադրութեան տակ ունէր 40 գործա-  
կալներ և պատուիրեցի քաղաքէն գտնել 10,000  
բանուորներ:

Առաւօտեան, գիս հրաւիրեցին զօր. Միշլայեւս-

կիի մօտ՝ խորհրդակցութեան: Զօրավարը կը պատ-  
րաստէր տեղահանութեան ծրագիրը, ինչպէս նաեւ  
նոր բանակ՝ Թիֆլիսը և Բագուն պաշտպանելու:  
Գլուխը կորսնցուցած կ'երեւեր ան:

Իսկ ինչ կ'ընէր այդ նոյն ժամանակ ոուս բա-  
նակը Սարիգամիշի և հայ ազգարնակչութիւնը՝  
Թիֆլիսի մէջ: Ինչ զեր ունէր խաղալու Թիֆլիսի քա-  
ղաքային վարչութիւնը: Դէպքերը պիտի նկարագրեմ  
միանգամայն առարկայօրէն:

Զօրավարներէն ստանալով խուճապային հրա-  
մաններ և զգալով իմ ծայր աստիճանի պատասխա-  
նատու վիճակը որպէս քաղաքագլուխի, որոշեցի  
հարցնել Փոխարքայի կարծիքը: Պետք է լսեմ, որ Փո-  
խարքան գտայ արտաքենապէս շատ հանգիստ: Ան ևս  
կը գտնէր կացութիւնը ծանր, բայց ոչ խուճապային:  
Փոխարքան մերժած էր որեւէ պատրուակի տակ թո-  
ղուլ Թիֆլիսը վտանգի պահուն: Ան կը հաւատար  
ուսս բանակի ուժին:

Զօր. Միշլայեւսկիին, փախչելով ճակատէն, հա-  
կառակ գինուորական բոլոր օրէնքներուն, չէր նշա-  
նակած իրեն փոխանորդ մը, այլ հրամայած էր զօրա-  
պետներուն «նահանջել» իրար հետ համաձայնու-  
թեան գալով: Զօրքերու շտաբի պետ՝ գոր. Իւզենի-  
չը, խուզարկու աչքով քննելով կացութիւնը, կ'որոշէ  
չենթարկուիլ Միշլայեւսկիի հրամանին և նահանջի  
փոխարէն կը հրամայէ կոուի մտնել թշնամիին հետ:

\* \* \*

Զօր. Իւզենիչի անձի վրայ պետք է կանգ առնեմ,

որովհետեւ անոր անուան հետ են կապուած ոուս  
բանակի փայլուն յաղթութիւնները կովկասեան ճա-  
կատին վրայ, ինչպէս էրգրուածի, Տրապիզոնի եւ  
Թրքահայաստանի հերոսական գրաւումները:

Զօր. Իւզենիչին հանդիպած եմ շատ անգամներ,  
որովհետեւ ան էր կովկասեան ճակատի փաստական  
հրամանատարը: Մայրայեղ միապետական մըն էր իր  
համոզումներով: Իրեն կը պատկանի Թրքահայաս-  
տանը կողակներով բնակեցնելու գաղափարը: Կրո-  
ւելով թուրքերու դէմ՝ ան կը մտածէր ոչ այն մասին,  
թէ այդ երկիրը կը պատկանի հայերուն, այլ կը ձգտէր  
ստեղծել այդ հողամասերէն ոուսական երկիր մը  
ոուս ազգարնակչութեամբ:

Որպէս զինուորական, զօրավարը տաղանդաւոր  
էր եւ յանդուգն: Եթէ չլինէր բուլշեւիկեան շարժումը,  
մինչեւ այսօր այ հայկական հողամասերը ազատ կը  
լինէին Թրքական գերիշխանութենէն:

Ենորհիւ իր պահանջողական բմբռնումներուն,  
Իւզենիչը ժողովրդականութիւն չէր վայելեր Կովկա-  
սի ազգարնակչութեան ու մանաւանդ հայերու մէջ:  
Ան կը համարուէր հակառակորդ հայերուն եւ հայ-  
կական ազգային պահանջներուն: Ինչպի հայ կամա-  
ւորները Իւզենիչի վերաբերմունքը սառը քաղաքա-  
վարական էր, մինչդեռ միւս զօրավարները՝ Բարա-  
տովը, որ վերջերս մեռաւ Փարիզի մէջ, Օզանովսկին  
եւ Զերնոզուրովը համակրական վերաբերմունք ու-  
նէին:

\* \* \*

Իւզենիչը, ինչպէս ըսինք, տեսնելով անեկ կա-

ցութիւնը՝ կ'որոշէ անցնիլ յարձակման եւ հեռագրով  
այդ մասին կը հաղորդէ Փոխարքային: Կը խնդրէ  
միաժամանակ Կարսէն ուղարկել երրորդ դիվիզիան,  
Սարիղամիշի բանակին օգնութեան հասնելու հա-  
մար:

Այս հեռագիրը հանգստացուց զուրբ կորսն-  
ցուցած թիկունքը եւ բարձրացուց զօրքերու տրա-  
մաղրութիւնը:

Իւզենիչը կը հրահանգէ զօրքերուն շնահանջի  
ոչ մէկ քայլ եւ արչաւել թուրքերու վրայ: Էնվեր փա-  
շան, նոյնպէս գիտակցելով ծանր կացութիւնը, իր  
զօրքերուն ուղղուած հրամանի մէջ կ'ըսէ. «Եթէ  
նուսները նահանջեն, անոնք ջարդուած են ու կո-  
քած եւ թիֆլիսի նամբան բաց է մեզ համար: Բայց  
եթէ մենք չյաջողուինք զանոնք հշիլ դիրքերէն, այն  
ժամանակ մեր զօրամասերը ենթակայ կը լինին  
լուրջ վտանգի»:

Այդպէս այ եղաւ: Դեկտեմբեր 11-22ի կռիւնե-  
րուն մէջ, թուրքերը ամբողջապէս ջարդուեցան: Էն-  
վերը գնաց Գոլխ. Թրքական մէկ ամբողջ զօրամար-  
մին գերի առնուեցաւ իր սպայակոյտին եւ հրամա-  
նատարներուն հետ միասին: Կովկասը փրկուեցաւ:

Ես տեսայ Թիֆլիսէն անցնող թուրք գերի զին-  
ւորները: Առանց կօշիկի, պատառոտած շորերով,  
քանի մը բուռ ցորեն զրպաններու մէջ որպէս սը-  
նունդ, ոմանք կ'անցնէին փակ զնայքներով: Բըժա-  
ւոր թիֆոյէն մեռածները զուրս կը բերէին գնացք-  
ներէն: Համաճարակը մեծ էր անոնց մէջ:

Մինչդեռ իշխանութիւնը մատնուած էր խուճա-  
պի, եւ նիստի հրաւիրեցի Քաղաքային Խորհուրդը: Ի

պատիւ անոնց պիտի ըսեմ, թէ բոլորն ալ, մէջն առած ե՛ւ Քաղաքի պաշտօնեաները, պահեցին կատարեալ պաղարի նութիւն և ստոնասրտութիւն, գիտակցելով հանդերձ փտանդի ամբողջ մեծութիւնը: Բոլորս ալ մեր գիրքերու վրայ կիւք, պատարաստ կատարելու մեր պարտքը և ոչ ոք մտածեց այդ ծանր օրերու ն թողուլ Թիֆլիսը և Հեռանալ:

Հայ ազգարնակչութեան մէջ ալ խուճապը բաւական ծաւալ ստացաւ: Ետտեքը փախան Թիֆլիսէն: Կառքերը շափազանց սուղ գիններով դէպի հիւսիս կը տանէին ահարեկուած ամբոյր:

Յաղթութեան լուրը ցնծութեամբ լեցուց ժողովուրդի ոգին: Տրամադրութիւնները բարձրացան: Տխրեցին միայն թուրքերը, որոնք Կարսի շրջանին մէջ հացի հսկայական պաշար կին պատրաստած թուրք բանակի համար: Իշխանութիւնը գիտէր այդ պարագան և այդ պատճառով ալ պատերազմական վայրերու մէջ գտնուող թուրք ազգարնակչութիւնը տեղահան կ'ընէր և կ'ուղարկէր երկրի ներսերը:

Վրացիները Հեռու կին դէպքերու անցուղարձէն և կ'աշխատէին շարտայայտուիլ:

1915ի սկիզբներու, թուրքերը յետ կին չարտուած երկրի խորքերը: Բայց Յուլիսին, Էնվէր փաշան, հաւաքելով 90 նոր բատալիոններ, թնդանօթների և հեծելազօրքի օգնութեամբ, արշաւեց կովկասեան չորրորդ զօրամարմնի վրայ և յաղթութիւն տարաւ: Զօր. Ի. դենիչը 20 բատալիոններով դիմեց հակայարձակման և կարողացաւ նորէն վերականգնել կացութիւնը:

Ռուսական զօրքի նահանջներն ու առաջախա-

ղացուճը անել վիճակ կը ստեղծէին հայ ժողովուրդին համար, որ Տաճկահայաստանի մէջ գրկարաց կ'ընդունէր ուսական զօրքերը և անոնց հետ ալ միասին կը բռնէր նահանջի ճամբան դէպի Կովկաս... դէպի Երեւանի նահանգը:

\* \* \*

Դեռ 1914ի աշնան ու ձմեռան, էջմիածին և Երեւան հասան զաղթականութեան առաջին հոսանքները:

Առաջին օրէն իսկ, հասարակական կազմակերպութիւնները գործի լծուեցան՝ զաղթականներուն օգնելու համար: Մոսկուայի մէջ կազմուեցաւ հայկական կոմիտէն, որու նախաձեռնողն էր յայտնի իրաւարան և հասարակական գործիչ Ս. Մամիկոնեանը: Էջմիածնի մէջ սկսեց գործել Եղբայրական Օգնութեան կոմիտէն: Հայ Բարեգործական ընկերութիւնը և ուրիշ շատ կազմակերպութիւններ միաժամանակ լծուեցին օգնութեան գործին: Բայց յետ չմնաց և Քաղաքներու Միութիւնը:

Համառու սական Քաղաքներու Միութեան փոխ նախագահ Կիշկիներ Կովկաս ժամանեց և Հեռագրով Մոսկուայէն թոյլտուութիւն խնդրեց, որպէսզի Քաղաքներու Միութեան գործունէութիւնը տարածուի նաեւ զաղթականներու վրայ: Պատասխանը չուացաւ, որ թոյլտուութիւն կու տար և մենք անմիջապէս անցանք գործի:

Ես մեկնեցի Էջմիածին և այն՝ ինչ տեսայ այնտեղ, երբեք պիտի չմոռնամ: Սառնամանիք ձմեռան օ-

րերուն, անօթի եւ մերկ հայ գաղթականներ, առանց օթեւանի, գետնի վրայ նստած էին: Կը յիշեմ՝ ցուրտ երեկոյ մըն էր: Իմ օգնական Սեւանգուլեանի հետ, որ յետոյ դարձաւ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչը Վրաստանի մէջ, գնացինք գաղթականներու մօտ: Հետուն հազիւ կը նշմարուէր Մասիսը: Էջմիածնի անտառը կը տնքար կարծես գաղթականներու ցաւով ու կը հեծկըլտար անոնց արցունքով:

Սոսկալի գիշեր: Ինչպիսի յուզմունքի ժամեր ապրեցի:

Առաւօտեան, արշալոյսի առաջին ճառագայթները ողողեցին Մասիսի միւնապատ գագաթը եւ թանձր կապոյտը վեհօրէն փոուեցաւ անոր փէշերուն: Ինչպէս աններդաշնակ էր բնութեան այդ վեհ տեսարանը՝ մարդկային ծով թշուառութեան ու տանջանքի հետ: Քաղցէն, ցրտէն ու համաճարակներէն կը մեռնէին հազարներ, կը մեռնէին երեխաներ եւ կանայք:

Մենք ըրինք, ինչ որ կարողացանք: Բժշկական օգնութիւնը կը հասցնէին բժիշկներ՝ Համօ Օհանջանեան եւ Բարայեան, Քաղաքներու Միութեան պաշտօնականներ, որոնք ապագային դարձան Հայաստանի Հանրապետութեան նախարարներ:

Մանօթանալով գաղթականութեան կարիքներուն հետ, մենք վերադարձանք Թիֆլիս եւ անմիջապէս անցանք գործի: Փոխարքայի կինը հիմնեց կոմիթարներու ներկայացուցիչները ղիմեցին կոմսութուն, խնդրելով կոմիտէի աջակցութիւնը կարսի թա-

թար գաղթականներուն համար, բայց կոմսութիւն ստոր պատասխանեց.

«Ես չեմ ճանչնար թաթար գաղթականներ, կը ճանչնամ միայն թաթար դաւաճաններ»:

Թաթարներու ղիմուժը մերժուեցաւ: Կոմսութիւն չէր բարեւեր անգամ Բագուի թաթար Բարեկործական Միութեան ներկայացուցիչներուն: Այս հանգամանքը անշուշտ կ'ազդէր հայ-թրքական յարաբերութիւններու վրայ, որովհետեւ Փոխարքայի պալատի մէջ անոնք կը տեսնէին, որ հայ գաղթականներուն ամենալայն շափով կը յատկացուէին ալիւր եւ հագուստեղէն: Թաթարները, որպէս լաւ զիւանազաններ, լռեցին այն ժամանակ, բայց իրենց պատասխանը տուին հայերուն մէկ ուրիշ տեղ եւ ուրիշ ժամանակ:

Մանր էր եւ վրացի պնտուականութեան պարագլուխ՝ Արիազգիի կացութիւնը: Ան կը ցանկար, որ օժանդակութիւն տրուի եւ թուրք փախստականներուն, բայց չէր ուզեր կոմսութիւն հետ ընդհարիլ. իսկ լոտութիւնը կը նշանակէր զրգուել իր ղեմ թաթարները: Արիազգին խորհրդակցեց ինձ հետ այդ մասին: Ըսի իրեն, որ կոմսութիւն չիտակ է եւ կտրուի իր որոշումներուն մէջ: Ան ինձ հետ համաձայնեցաւ:

Ընդամենը կովկաս մտան 300,000 հայ գաղթականներ, որոնք մինչեւ այսօր այ կը կազմեն Հայաստանի ազգաբնակչութեան մէկ մասը: Այդ գաղթականներէն մաս մըն այ կ'ապրին Վրաստանի եւ Հիսիսային կովկասի մէջ:

Հակայական զուժարներ ծախսուեցան հայ գաղթականութեան վրայ: Ռուսահայութիւնը տուաւ՝



4,580,000 ոսկի ուժը, գաղութահայութիւնը՝ 620,000 ուժը, ռուս կառավարութիւնը՝ 1,700,000 ուժը և քաղաքագլուխի անգլիական ֆոնար՝ 670,000 ուժը, բացի հազուատեղէնէ, որ բոլոր կողմերէն կը ստացուէր որպէս նուէր:

Այս բոլոր գումարները ծախսուեցան զանազան կազմակերպութիւններու միջոցով մինչև 1917ի յեղափոխութիւնը:

Անդրկովկասեան յատուկ իշխանութեան կազմումով, նորէն յատկացուեցաւ 10,252,000 ուժը զուժար մը, նոյն կարիքներուն համար:

Քաղաքներու Միութիւնը մեծապէս բերաւ իր մասնակցութիւնը գաղթականներու օգնութեան գործին: Քայց շուտով լսուեցան տրտու նջքի և բողոքի ձայներ: Ռուս բարձրաստիճան գիւնու որականները կը բողոքէին, որ Քաղաքներու Միութիւնը ամբողջապէս կրանուած գաղթականական գործերով՝ անտես կ'առնէ վիրաւոր գիւնու որներու խնամքի գործը: Այդ մասին տեղի ունեցան որոշակի պանդատներ:

Ես կ'աշխատէի ապացուցել, որ այդ բոլոր բողոքներն ու զանգատները անհիմն են և միտումնաւոր:

Քաղաքներու Միութեան պաշտօնեաններու բացարձակ մեծամասնութիւնը կը կազմէին հայերը: Հանգամանք մը, որ նոյնպէս տեղի կու տար ղեկավարութիւններու: Մեր գործունէութեան առաջին տարիէն իսկ, մեր ղեկ ունեցած հազիւ նշմարելի ղեկավարութիւնները պատերազմի վերջին տարիներուն փոխուեցան բացայայտ սառն վերաբերմունքի:

\* \* \*

Պատերազմի առաջին տարին ոչ մէկ անհամաձայնութիւն պատահեցաւ կեղրանական և կովկասեան իշխանութիւններու միջև: Բոլորը կ'աշխատէին պատերազմի համար, «պատերազմը մինչև յաղթական վախճան և ամէն ինչ պատերազմի համար» նրշանարաններով:

Ճիշդ է, կեանքի մակերեսէն դուրս, մութ անկիւններու մէջ, աննկատելի կերպով կ'աշխատէին բոլշեիկները, բայց այդ աշխատանքը այն ժամանակուան պայմաններու մէջ անարժէք էր և ապարդիւն: Քաղաքներու Միութեան մէջ նոյնպէս կ'աշխատէին բոլշեիկները, ինչպէս Աթաբեկեանը, Նագարեթեանը, Գանդուրեանը և Էլիաւան, որոնք խորհրդային իշխանութեան օրով գրաւեցին առաջնակարգ դիրքեր, բայց այն ժամանակ, անոնք ոչինչով չէին արտայայտեր իրենք գիրենք:

Այդ ժամանակ, բոլշեիկները կ'աշխատէին ժրնեւի մէջ, ուր կը բնակէին լեւին և ուրիշ կարևոր բոլշեիկներ: Երկրի մէջ անոնց աշխատանքը ապարդիւն կ'անցնէր:

Ով ուսերէն գիտէ, թող կարգայ գոր. Սպիրիդոֆիչի «Ռուս բոլշեիկների գարգացման պատմութեան» վերատուրութիւն կրող գիրքը, ուր հեղինակը մանրամասնօրէն կանգ կ'առնէ բոլշեիկներու գործունէութեան վրայ և կ'ապացուցանէ, թէ ինչպէս անոնց բարոյիչները ոչ մէկ յաջողութիւն ունէին գործի և ժողովուրդի մէջ:

Արդէն խօսեցանք այն մասին, թէ կովկասեան

գործերը մեծապես կախուած կին Պետերբուրգէն, ցարի պալատէն եւ զլիսաւոր շտաբէն, ուր կը գտնուէր մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը: Այդ իսկ պատճառով, կարելի որ է իմանալ, թէ ի՞նչ կը կատարուէր իշխանական բարձր շրջանակներու մէջ, այդ նոյն ժամանակ:

1915 Օգոստոսին, շնորհիւ թագուհու միջամտութիւններուն եւ շնորհիւ այն հանգամանքին, որ ռուս իշխանական շրջանակներու մէջ հանդէս էր եկած կիսազրազկտ մուծիկ մը՝ Գրիգորի Ռասպուտին, որ ամբողջ Ռուսաստանի ներքին եւ արտաքին գործերու զլիսաւոր տէրն էր դարձած, Կովկասի մէջ տեղի ունեցան մեծ փոփոխութիւններ: Հետագուեցաւ պաշտօնէն կոմս Վորոնցով-Դաշկովը, որու փոխարէն փոխարքայութեան կանչուեցաւ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը:

Այդ փոփոխութիւնը մեծ նշանակութիւն ունեցաւ Կովկասի եւ հայերու համար, բայց Ռուսաստանի համար ունեցաւ աւելի մեծ եւ կարեւոր հետեւանքներ:

Այս փոփոխութիւններու իմաստը բժրոնելու համար, պետք է կանգ առնել Ռասպուտինի անձին վրայ: Սիրերիոյ խորքերէն, պատերազմէն քանի մը տարի առաջ, Պետերբուրգ էր եկած կիսազրազկտ ծերունի մը, որ շուտով «Սուրբ եւ Աստուծոյ մարդու» համբաւ հանեց: Ռասպուտինը, իր աչքերու ուծին շնորհիւ, կարողացաւ իրեն ենթարկել շատ բարձր շրջանակներուն պատկանող կիներ:

Սուրբ մարդու լուրը հասած էր ցարին եւ թագուհիին: Ասոնք Ռասպուտինի «աստուածային գո-

րութեան» մէջ կը տեսնէին միակ դարձանք իրենց թագաժառանգի համար, որ կը տառապէր «հեմոֆիլիա» կոչուած հիւանդութեամբ: Այդ հիւանդութիւնը կ'արտայայտուէր երկարատեւ արիւնահոսութեամբ: Եւ ահա Ռասպուտինը կը դառնայ պալատի ամենօրեայ հիւրը եւ շուտով մեծ ազդեցութիւն ձեռք կը բերէ ցարի եւ թագուհիի վրայ: Ծարր եւ ցարուհին կը համբուրեն Ռասպուտինի ձեռքը՝ ամէն անգամ, երբ նա ներս կը մտնի: Ռասպուտինը իր ձեռքը կ'առնէ կառավարական գործերը եւ այլեւս առանց անոր չեն կատարուէր պետական այնպիսի կարեւոր գործեր, ինչպէս նախարարներու նշանակումը, Պետական Խորհրդի բացումը, զատական խնդիրները: Այլ խօսքով, Ռասպուտինի կամքը կը դառնայ օրէնք ցարի եւ ցարուհու համար:

Ծարր տկար կամքի տէր մարդ էր եւ Ռասպուտինը գտած էր ճամբան... ազդել ցարի վրայ, աւելի ուժեղ կամքով ցարուհու միջոցով:

Պալատի մէջ, Ռասպուտինը կ'ընէր այն, ինչ որ կը ցանկար: Շրջապատած էր ինքզինք Պետերբուրգի ամենազեղեցիկ եւ ամենաազդեցիկ կիներով եւ կը ներշնչէր նրանց այն միտքը, թէ միայն իրեն յանձնուող կիները կարող են ազատագրուիլ իրենց վրան ծանրացած մեղքերէն:

Հետագայ պատմութեամբ, մենք կու տանք այդ մարդու վախճանը եւ կը բացատրենք, թէ ի՞նչ դեր խաղաց այդ՝ միապետութեան եւ գահին անկման մէջ: Հիմա շեշտենք միայն, որ շնորհիւ Ռասպուտինի, միայն Կովկասն ունեցաւ նոր Փոխարքայ մը:

Շատերու համար անհասկնալի կը մնայ միան-

զամայն, թէ ինչպէ՞ս կիսագրագէտ մուծիկ մը՝ միապետական Երկրի մը մէջ՝ կարող է այնպիսի ազդեցութիւն ձեռք բերել, որ առանց իր հաւանութեան ոչ մէկ նախարար կրնար իր պաշտօնին վրայ մնայ կամ պաշտօնի կանչուիլ:

Այս հարցի մասին մեծ գրականութիւն կայ՝ ոուսերէն լեզուով: Հայերէն շատ քիչ բան է գրուած այս մասին: Ով կարող է կարգալ ոուսերէն, թո՛ղ թղթատէ «Պատկերագարդ Ռուսաստան» շարաթաթերթի 1931ի ձմրան եւ 1932ի գարնան համարները, ուր մանրամասն պատմուած են այդ արատաւ որ ձերու նիի գործերն ու արարքները: Այդ յօդուածներէն կ'երևայ, որ Ռասպուտինը, վախնալով մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչի ցարի վրայ ունեցած ազդեցութենէն, թագուհու միջոցով ցարին կը ներշնչէ այն միտքը, թէ Նիկոլայ Նիկոլայեւիչը կը պատրաստէ լմբոսատութիւն մը ցարի դէմ եւ պետք է օր առաջ հեռացնել զայն ընդհանուր հրամանատարի պաշտօնէն եւ ուղարկել Կովկաս: Թագուհին յամառ աշխատանքով կը կարողանայ համոզել ցարը եւ Նիկոլայ Նիկոլայեւիչը կը հեռացուի հրամանատարի պաշտօնէն՝ նշանակուելով Կովկաս, որպէս Փոխարքայ:

Մինչ այդ՝ Կովկասը կ'ապրէր նոր յաղթութիւններու եւ նոր յոյսերու երազներով: Մեր քաղաքական երկիրներ անամպ էր: Ապրիլեան սոսկալի Եղեռնը մեզ չէր հասած դեռ: Մենք դեռ չգիտէինք թուրքի այն սոսկալի լեզուն, որ այնքան յուսալքեց մեզ:

Պատերազմի պատճառով տեղեկութիւնները կ'ուշանային եւ հատ ու կտոր լուրեր միայն կը հասնէին մեզ: Ազգաբնակչական պատկերը չգիտէինք եւ

մեր տրամադրութիւնները թունաւորուած չէին դեռ: Գիտէինք միայն, թէ ի՞նչ կը կատարուի Կովկասեան ճակատին վրայ մինչեւ վառ եւ էրզրում:

Բայց անցնինք մեր պատմութեան եւ տեսնենք, թէ ի՞նչ դէպքեր տեղի ունեցան թագաւորական պալատին մէջ, որոնք մեզ տուին նոր Փոխարքայ մը եւ բացին քաղաքական նոր դարաշրջուի մը Կովկասի համար:

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԴԵՊՔԵՐԸ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ  
ՊԱԼԱՏԻՆ ՄԷՋ\*

1915 Օգոստոսին, Նիկոլայ Բ-ը որոշեց անցնիլ  
գորքերու հրամանատարութեան գլուխը:

Իր այդ որոշումը իրագործելու համար, պետք էր  
հետացնել մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայի իշր գլխա-  
ւոր հրամանատարի պաշտօնէն: Բայց որպէսզի այդ  
հետացումը կրէր պատուաւ որ բնոյթ, Նիկոլայ Բ-ը  
կոմիկասի Փոխարքայ եւ կոմիկասեան բանակի գլխա-  
ւոր հրամանատար նշանակեց մեծ իշխան Նիկոլայ  
Նիկոլայի իշր: Կոմիկասի Փոխարքայ՝ կոմս Վորոն-  
ցով-Դաշկովը իր հրամարականը սուսա եւ մեկնեց  
Թիֆլիսէն:

Ինչ բանը ստիպեց ցարը տալու այդ որոշումը,  
որ այն ժամանակ զժպոհութիւն պատճառեց ոչ մի-  
այն ոտս առաջաւոր տարրերուն, այլեւ կառավա-  
րութեան, մեծ իշխաններուն, բանակին եւ մինչեւ  
անկամ թագաւորական բնտանիքին: Յարուհու նա-  
մակները ուղղուած ցարին, թագաւորի եւ մեծ իշխա-  
նի մօտ կանգնած մարդոց վկայութիւնները եւ իմ

(\*) Այս եւ յաջորդ գլուխին (ԺԳ-Ե) ենթախորագիրները աւել-  
ցուած են մեր կողմէ:

ԽՄԲ.

տպաւորութիւնները՝ ստացած կոմս Վորոնցով  
-Դաշկովէն եւ իր շրջապատէն՝ կասկած չէին ձգեր,  
թէ տիրահոշակ Գրիգորի Ռասպուտինը բախտորոշ  
ղեր մը կատարած էր այդ փոփոխութեանց մէջ:

Յարին զգոյշ կերպով նախազգուշացու մներ կ'ը-  
նէր իր շրջապատը, որպէսզի ցարը հրաժարի իր միտ-  
քէն: Կ'ըսեն, թէ մեծ իշխաններէն մէկը նոյնիսկ կը  
թողու ճակատը եւ կը շտապէ Պետերբուրգ՝ համոզե-  
լու համար թագաւորը, որ ետ կանգնի իր որոշումէն:  
Պետական Դումայի նախագահը, յատուկ նամակով,  
կը խնդրէ ցարէն վտանգի չենթարկել ցարական  
բարձր հեղինակութիւնը եւ յետ կանգնի իր որոշու-  
մէն:

Բոլորի համար պարզ էր, որ թուլեկամ ցարը չու-  
նէր ո՛չ գրինու որական պատրաստութիւն եւ ոչ ալ ան-  
հրաժեշտ գիտութիւն՝ բանակի հրամանատարու-  
թիւնը անձամբ ստանձնելու համար: Եւրոպական եւ  
նոյնիսկ գերմանական զիւանագիտական եւ քաղա-  
քական գործիչները նոյն կարծիքն ունէին, որ ցարի  
որոշումը կարող է կորստարէր ըլլալ ոտս ժողո-  
վորդի եւ պետութեան համար: Մինչեւ անգամ, ցա-  
րի հրամաններուն անխօս կերպով ենթարկուող նա-  
խարարները արտաքին գործերու նախարարութեան  
մէջ հաւաքուելով կ'որոշէն զիմէլ ցարին հետեւեալ  
նամակով.

«Ամէնաողորմած տէր. մի՛ մեղադրէ՛ք մեզ.  
մեր անկեղծ եւ համարձակ այս դիմում մի՛ն համար:  
Մենք ստիպուած ենք այդպէս վարուիլ, որովհե-  
տեւ այդ կը պահանջէ մեզմէ մեր հաւատարիմ հը-

պատակի ոգին, մեր հայրենասիրութիւնը եւ գիտակցութիւնը, որ այսօր կանգնած ենք ահաւոր դէպքերու առջեւ: Երէկ, նախարարներու ժողովին մէջ, ուր դուք կը նախագահէիք, մենք համարձակեցանք ձեզ յայտնել մեր բնօրինակի խնդիրը՝ չհեռացնել մեծ իշխան նիկոլայ նիկոլայեւիչը հրամանատարութեան պաշտօնէն: Եւ այսօր գիտակցելով Տէր, որ Դուք չէք համիր մեր խնդիրը յարգել, կը համարձակինք նամակով Ձեզ յայտնել, թէ Ձեր որոշումը կը սպառնայ Ռուսաստանին, Ձեզ եւ Ձեր քաղաքական բնութեան՝ ծանր հետեւանքով: Երէկուան ժողովին մէջ պարզութեամբ եւ ուրիշ հանգամանք մը, այն՝ որ նախարարներու խորհրդի նախագահին եւ մեր միջեւ կամ լուրջ տարակարծութիւններ երկրի ներքին կացութեան գնահատման մասին: Որեւէ ժամանակ անբոյլատրելի այս երեւոյթը կորստաբեր է պատերազմի բնօրինակին: Ստեղծուած այս կացութեան մէջ, մենք կը կորսնցնենք մեր հաւատարմութեան գիտակցութիւնը աշխատելու յօգուտ Ձեզ եւ հայրենիքի»:

Նամակը մնաց անպատասխան եւ չուտով զայն ստորագրող ու թ նախարարները հեռացուեցան իրենց պաշտօններէն:

Աւետարաններն, ցարը մեկնեց ռազմաճակատ եւ բնօրինակը գործերու գլխաւոր հրամանատարութիւնը:

Թերեւս ցարը շատ պատճառներ ունէր այդպէս վարուելու: Բայց կանգ առնենք ցարու հու նամակներու վրայ, որոնք գրուած են ցարին՝ Ռուսաստանին:

տինի գրողու մով: Ամբողջ մէկ տարի, պատերազմի սկիզբէն մինչեւ 1915 Օգոստոսը, երբ ցարը տուաւ այդ որոշումը, ցարու հին անբնական կը գրէր այդ մասին թագաւորին եւ կ'ըսէր, թէ Ռուսաստանին խնդրանքն է այդ:

Ռուսաստանին խորհուրդները ցարու հու համար երկինքէն եկած ցուցմունքներ էին եւ աստուածային պատգամներ: Այդ խորհուրդներուն ցարու հին կ'ենթարկուէր անխօս եւ կոյր կերպով:

Յայտնի էր, որ շատերը կ'աշխատէին հեռացնել Ռուսաստանին ցարի պալատէն: Բայց այդ ուղղութեամբ կատարուած բոլոր փորձերը ապարդիւն կ'անցնէին: Թագու հու կոյր, միսթիք հաստը ղեկավար Ռուսաստանին՝ առաջ կու գար այն համոզումէն, որ Ռուսաստանին կը պաշտպանէ թագաժառանգի առողջութիւնը եւ զայն կը փրկէ մահուանէ, որ ամէնօր, ամէն ժամ, կարող է առաջ գալ անոր հիւանդութենէն՝ անդադար արին նահասութենէն:

Կոմս Վորոնցով-Դաշկովը կը պատմէր ինձ այն մասին, որ հանգուցեալ թագու հի Մարիա Յեղորդովնան, նիկոլայ Բ-ի մայրը, անգամ մը յաջողած էր համոզել որդին՝ հեռացնելու պալատէն Ռուսաստանին: Ցարը հեռացուցած էր Ռուսաստանին Պետերբուրգէն եւ ան զացած էր Սիբերիա՝ իր հայրենիքը: Բայց հագի մեկնած մայրաքաղաքէն, թագաժառանգը կը հիւանդանայ եւ բժիշկները կացութիւնը կը գտնեն անյոյս: Ցարու հին յուսահատ վիճակի մէջ կը հեռացրէ Ռուսաստանին եւ կը ստանայ անոր պատասխանը. «Մի՛ վախճաք, թագաժառանգը պիտի առողջանայ»:

Թագաժառանգը կ'առողջանայ և թագուհու հաւատքը դէպի Ռասայութիւնի սուրբ գորութիւնը աւելի կ'ամրանայ: Ռասայութիւնը նորէն կը կանչուի Պետերբուրգ:

Բայց թագաժառանգը նորէն կը հիւանդանայ: Փրոֆեսոր Չեոգորովը երկու ժամ անընդհատ կ'աշխատի կանգնեցնել արիւնահոսութիւնը, բայց ի խափ կանգնեցնել Ռասայութիւնը, որ դնելով ձեռքը հիւանդի ճակատին՝ կը զաղրեցնէ արիւնահոսութիւնը:

Բժշկապետ Չեոգորովը պատժած էր Փոխարքային, որ ինք ականատես եղած էր այդ զէպէին:

Ինչն էր արդեօք պատճառը Ռասայութիւնի գորութեան: Ինչքը, թէ՛ իր ձեռք ատած միջոցները:

Արտաքնապէս, Ռասայութիւնի միջամտութիւնը այնպէս ցնցած էր բոլորը, որ ամէնքն ալ անոր կը վերագրէին արիւնահոսութեան դաղարուժը:

Զարուհին սկսած էր ջերմեռանդ օրէն հաւատայ, որ Ռասայութիւնը օժտուած է երկնային գորութեամբ և հրաշագործ ազդեցութիւն ունի մարդոց վրայ:

Այդ զէպէն յետոյ, թագուհի մայրը այլևս չկարողացաւ ազդել իր որդու վրայ և Ռասայութիւնը դարձաւ պալատի մշտական յանախորդը:

Պարզ է, որ այսպիսի պարագաներու մէջ, Ռասայութիւնի յորդորները՝ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեիչի դէմ ուղղուած, ցարուհու համար ունէին վճռական նշանակութիւն: Եւ եթէ ի նկատի առնենք այն հանգամանքը, որ ցարուհին չէր սիրեր մեծ իշխանը և իր քոյր Միլիցիան, հասկնալի կը դատնայ,

որ Ռասայութիւնի խորհուրդներուն ան կը միացնէր և իր անձնական կիրքերն ու անվստահութիւնը:

\* \* \*

Դառնանք ցարուհու նամակներուն:

1914 Սեպտեմբերէն սկսած մինչև 1916 Դեկտեմբեր, երկու տարի շարունակ, ցարուհին 27 անգամ կը գրուի շացնէլ ցարը մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեիչի դաւաճանական միտումներու մասին: Առաջին նամակի մէջ ան կը գրէ.

«Գրիգորիին (Ռասայութիւնը) քեզ շատ կը սիրէ եւ չ'ուզեր, որ Նիկոլայը (մեծ իշխանի արհամարհական անունը) որեւէ դեր խաղայ»:

Ժամանակագրական կարգով մէջբերումներունը այդ նամակներէն, որոնք գլխաւորապէս ուղղուած էին Նիկոլայ Նիկոլայեիչի և իր շրջապատին դէմ:

«Շատ վատ է, կը գրէ ցարուհին, որ Նիկոլայը, ուրիշներու դրդմամբ, կը խառնուի այնպիսի հարցերու, որոնք քեզ կը վերաբերին միայն: Աստուծոյ եւ ժողովուրդի առջեւ դու ես միակ ընտրեալը եւ ոչ ոք իրաւունք ունի բռնադատելու քո իրաւունքները: Կը վախճամ, որ Նիկոլայը այնպիսի շարիքներ ստեղծէ, որ դժուար լինի քեզ շտկել ապագային»:

Ուրիշ նամակի մը մէջ, ան կը գրէ.

«Զնայած որ Նիկոլայը բարձր պաշտօնի մը վրայ կը գտնուի, բայց գիտցիր, որ իրմէ բարձր

կանգնած ես դու: Ձիս եւ մեր բարեկամը (Ռասպուտինը) շատ կը գայրացնէ այն հանգամանքը, որ Նիկոլաշը քո ռեճով հեռագիրներ կու տայ նահանգապետներուն եւ կարգադրութիւններ կ'ընէ»:

*Կ'երեւի, որ Ռասպուտինը յաջողած էր կասկածի որոշ սերմեր ցանել ցարուհու մէջ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչի հաստատութեան մասին եւ այդ սերմերը ժամանակին տուին շատ առատ բերքեր: Երբ 1915 Ապրիլին ցարը պիտի մեկնէր Լվով, ցարուհին կը գրէր.*

«Ես պիտի խնդրեմ մեր բարեկամէն, որ առանձնապէս ազօրէ քեզ համար, երբ դու լինիս այնտեղ: Նիկոլաշը չէ, որ պիտի քեզ ուղեկից լինի: Դուն պէտք է չբաժնես հեղինակութիւնդ եւ լինիս այնտեղ առաջին տեղին վրայ: Ռասպուտինը չ'ուզեր, որ Նիկոլաշը քեզ ուղեկցի, որովհետեւ լաւ է որ դուն միմակ լինիս: Յիշիր, որ դուն երկար ես թագաւորած եւ աւելի փորձառու ես, քան անոնք: Եթէ Նիկոլաշը սխալներ կը գործէ, թոյլ տուր. պատերազմէն ետք ան փոշի կը դառնայ եւ դուն պիտի ուղղես անոր սխալները: Հաւատա՛ եւ յի՛ր մեր բարեկամին. անոր խորհուրդները քո եւ Ռուսիոյ օգտին համար են: Զէ՞ որ Աստուած գուր չէ, որ զրկած է գայն մեզ: Իսկ մենք պէտք է աւելի մտիկ ընենք իր խորհուրդներուն: Ի՞նչ լաւ է, որ մենք ունինք ոչ միայն իր ազօրքները, այլեւ իր խորհուրդները»:

*Յարուհին լրջօրէն կը վախնար մեծ իշխան Նի-*

*կոլայ Նիկոլայեւիչի միջամտութենէն պետական գործերուն: Ան խորհուրդ կու տար ցարին զլիաւոր ռազմակայանի մէջ շարադիւ կրթեք լուրջ հարցերով:*

«Ոչ ոք գիտէ, — գայրացած կը գրէր ցարուհին — թէ ո՞վ է կայսրը: Դուն ստիպուած ռազմակայան կ'երթաս, այնտեղ կը հաւաքես քո նախարարները, կարծես թէ այստեղ՝ Պետերբուրգի մէջ անկարող ես այդ ընել: Այնպէս կ'երեւի, որ Նիկոլաշն է գործ տեսնողը. ան է, որ պաշտօնեաներ կը նշանակէ, կը հեռացնէ, որոշումներ կու տայ: Ես յուսահատած եմ սաստիկ: Դուն նորէն երկարօրէն կը բացակայիս: Ռասպուտինը կ'ըսէ, թէ այդպէս պէտք չէ վարուիս: Ամէն ինչ կը կատարուի իր կամքին հակառակ: Սիրտս լեցուն է արիւնով: Ախ. իմ Նիկա. գործերը սխալ ընթացք կը ստանան: Նիկոլաշը քեզ իր մօտ կը պահէ, որպէսզի քեզ ստիպէ ենթարկուել իր կամքին եւ վատ խորհուրդներուն: Մի՞թէ դուն չես հասկնար, թէ այն մարդը, որ կը դաւանանէ Աստուծոյ բնութեային, բնդունելի չէ իրեն՝ Աստուծոյ համար եւ իր գործերը երբեք լաւ չեն կարող լինել»:

*Բանի մը օր ետք, ցարուհին նորէն կը գրէ.*

«Հանրութեան մէջ ոչ ոք գիտէ Նիկոլայ Նիկոլայեւիչի իսկական դերը, տեսակ մը երկրորդ կայսր լինի կարծես»:

*Յարուհու թախանձանքները վերջապէս արգիւնք կու տան: Օգոստոս 20ին, ցարը զինուորական նախարար Պոլեփանովի հետ նամակ մը կ'ուղարկէ մեծ իշխանին՝ յայտնելով անոր, թէ ինք որոշած է իր վրայ առնել հրամանատարի պաշտօնը եւ Նիկոլայ*

Նիկոլայեիչը կ'ուղարկէ կովկաս՝ Փոխարքայի և կովկասեան բանակի շրամանատարի պաշտօնով: Օգոստոս 23ին, ցարը նամակ մը կ'ուղարկէ նաև Վրոնցով-Իաչկովին, որուն կը դառնանք մեր պատմութեան հետազայ ընթացքին:

Մեծ իշխանը թողուց ռազմակայանը և մեկնեցաւ կովկաս:

Օգոստոս 22ին, ցարու հին խանդավառ նամակ մը կ'ուղղէ ցարին.

«Ես չեմ գտներ խօսքեր՝ գոհունակութիւնս քեզ յայտնելու համար: Դու ապացուցեցիր, որ դու ինքնիշխան միապետ ես, առանց որու մուսիան չի կրնար ապրիլ»:

Այս նամակին մէջ, ցարու հին քանի մը տաք տողեր նուիրելով իր սիրելի ամուսնուն՝ կ'աւելցնէ, որ քանի դեռ Նիկոլայը մեկնած չէ ռազմակայանէն, ինք միշտ անհանգիստ պիտի մնայ:

Ռասպուտինը արդէն առանց քաշուելու կը մեղադրէ Նիկոլայ Նիկոլայեիչը դաւաճանութեան մէջ՝ վերագրելով անոր ցարը գահընկէց ընելու և վանքի մը մէջ նետելու միտումները:

Ցարու հին ռազմակայանէն կը հեռացնէ մեծ իշխանի բոլոր կողմնակիցները, ինչպէս և իշխան Օրլովը, որ օգտուելով իր մտերմութենէն ցարի հետ, կը գգուչացնէ զայն՝ Ռասպուտինի շարագործ ցանցին մէջ ինչպիսի: Բայց ցարը զրական պատասխանի փոխարէն կ'ըսէ Օրլովին.

«Դուն կ'երբքաս կովկաս, որպէս օգնական Փոխարքայի»:

«Բայց ես պատրաստ չեմ այդ պաշտօնին», կը պատասխանէ Օրլովը:

«Ոչինչ, այնտեղ կը սորվիս», - կ'աւելցնէ ցարը:

Եւ Օրլովը կը մեկնէ կովկաս:

Օրլովն Լաթ, պաշտօնէն հեռացուցաւ ներքին գործերու նախարարի օգնական՝ գօր. Չունկովսկին, որ Ռասպուտինի մասին ներկայացուցած էր մանրամասն զեկոյց մը: Պաշտօնանկ Լգաւ և Սինոդի դատախազ Իստոմիրը, որ Ռասպուտինի հակառակորդներէն էր. ան ուղարկուեցաւ կովկաս, որպէս Փոխարքայի զիւանապետ:

Ռասպուտինը այսպիսով հասաւ իր նպատակին: Իր զիւս որ թշնամիները հեռացուած էին Պետերբուրգէն և իրենց պաշտօններէն: Նախարարներու աթոռները գրաւած էին անկամ և Ռասպուտինի հաւատարիմ մարդիկ:

Բայց հետո որ կովկասէն անգամ Նիկոլայ Նիկոլայեիչը հանգիստ չէր տար ցարու հուն: Սեպտեմբեր 10ին, վերջինս նորէն կը գրէ ցարին.

«Երբ պահի երեք օրերուն եկեղեցիին մէջ ազօրքներ կ'ընէին քեզ համար, դուրսը կը տարածէին Նիկոլայի նկարները հազարաւոր օրինակներով: Ի՞նչ է այս: Անոնք խաղ մը կ'ուզէին խաղալ: Մեր բարեկամը (Ռասպուտինը) ժամանակին բացաւ անոնց քարտերը եւ այժմ կը խնդրէ քեզմէ հեռացնել Նիկոլայը բոլորովին: Միլիցան եւ ըստանան (մեծ իշխանի կիներ) ամէն տեսակի լուրեր կը տարածեն իմ մասին եւ կ'ուզեն զիս արգելա-



փակել վանքի մը մէջ, եթէ յաջողի իրենց դիւային ծրագիրը»:

\* \* \*

Եթէ ուշադրութեամբ կարդայու ըլլանք ցարու-  
նու նամակները, կը տեսնենք, որ Ռասայու տինի խոր-  
նուրդները մեծ իշխանի եւ իր շրջապատի մասին կը  
հասնէին ցարին՝ ցարունու միջոցով: Ինք՝ Ռասայու-  
տինը՝ կը մնար միշտ շուքի մէջ:

Անձնաւորութիւն մը, որ մօտիկ կանգնած էր  
Քաղաւորական բնտանիքին եւ պայատին, կը պատ-  
մէր, որ Ռասայու տինը, հազիւ քանի մը անգամ  
միայն, հանդիպած է խօսած է ցարին հետ: Իր խոր-  
նուրդներն ու ցանկութիւնները ան կը փոխանցէր  
ցարին՝ Քալունու կամ տիկին Վիրուրովայի միջո-  
ցով, որ ցարունու ամէնէն մօտիկ բարեկամուհին էր:

Ցարին մօտիկ անձեր կը կարծեն, թէ երկու կա-  
րեւոր հանգամանքներ զէր խաղացած են ցարի  
պատմական որոշման մէջ. նախ, այն յոյսը, թէ  
գլխաւորելով բանակը՝ աւելի պիտի յաջողի պատե-  
րագմական գործողութիւններու մէջ: Երկրորդ՝ այն  
վախը, թէ բանակի յաղթանակը մեծ իշխան Նիկոլայ  
Նիկոլայեւիչը կրնար օգտագործել՝ իր հեղինակու-  
թիւնը բարձրացնելու եւ գահին սպառնալու համար:

Ոստիկանական բաժանմունքի նախկին պետ՝  
Բելեցկին՝ իր յուշերուն մէջ կը գրէ, թէ Ռասայու տինը  
կը պնդէր, որ Նիկոլայ Նիկոլայեւիչը կ'երազէր գահ  
բարձրանալու մասին: Իսկ Նիկոլայ Նիկոլայեւիչի

օգնական՝ գորավար Դանիլովը կ'ըսէ, թէ մեծ իշխա-  
նի համար միանգամայն անսպասելի է անհասկնալի  
էր ցարի որոշումը այն ժամանակ, երբ Ռուսաստանը  
կը գտնուէր ծանր ճգնաժամի մէջ: Ռուսիան եւ բա-  
նակը այդ ծանր օրերուն գրկուեցան իրենց ամենա-  
լու եւ կարող հրամանատարին:

Ցարուհին հանգիստ չէր, քանի մեծ իշխանը չէր  
մեկնած ռազմակայանէն:

«Հոգեակս. - կը գրէ ցարուհին - անմիջապէս  
ճանապարհիւր Նիկոլայը դէպի հարաւ: Անգամ մը  
ես ցոյց տուր կամֆոյ եւ ուժոյ»:

Բայց երբ մեծ իշխանը հասաւ Քիֆլիս, Ռասայու-  
տինը նորէն գոհ չմնաց: Ցարուհին նորէն կը զգու-  
շացնէ ցարը հսկել Նիկոլայի վրայ կովկասի մէջ, որ-  
պէս յայնակէ կացութիւնը շրարդանայ:

«Պէտք է երբեմն-երբեմն մարդիկ ուզարկել  
կովկաս, - կը գրէ ցարուհին - իմանալու համար,  
թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ: Ընդ բարեկամն է, որ  
այս խորհուրդը կու տայ քեզի: Գիտցիր, որ շատե-  
րը կը յանդգնին անուանել զայն Նիկոլայ Գ.»:

Ցարունու կասկածները գնալով կ'ուժեղանան:  
Անոր կը թուի, թէ մեծ իշխանը, իր կինը եւ շրջապա-  
տը, գաւազրութիւն կը պատրաստեն ցարի դէմ:  
1916 Նոյեմբեր 5ին, ցարուհին հետեւեալ տողերը կը  
գրէ ցարին.

«Հոգեակս, զոյ՞ց եւ զոյ՞ց եղիր: Աւելորդ  
խոստումներ չընես Նիկոլային: Յիշիր, որ Ռաս-  
պուտինը փրկեց քեզ այդ շար մարդէն: Պէտք չէ, որ  
դուն բարի ըլլաս Նիկոլայի, ճանուշկեւիչի եւ

Օրլովի հանդէպ: Յիշիր, քէ ի՞նչ չարիք կ'ուզէին գործել անոնք քո եւ Ռուսաստանի գլխուն: Անոնք կ'ուզէին գահընկէց բնել քեզ, իսկ զիս՝ արգելափակել վանքի մը մէջ: Օրլովի մօտ կը գտնուէին բոլոր թուզթերը՝ կնքուած ու պատրաստ»:

Մինչ այդ, Ռուսաստանի մէջ տեղի կ'ունենային շարագուշակ դէպքեր:

Պետական Գուժան, փորձելով բոլոր խաղաղ միջոցները, բնորաւ կը յեղափոխու թեան ճամբան: Գաւառային եւ քաղաքային համաժողովները բացարձակ կը պահանջէին պատասխանատու կառավարութիւն: Ռասայութիւնի ազդեցութիւնը եւ միջամտութիւնը պետական գործերուն՝ ծայր աստիճանի խախտած կը պետական մեքենան: Միջոցաւ ելեկտրականացած կը: Իշխան իւսուպով մութին մէջ կը պատրաստէր Ռասայութիւնի սպանութիւնը:

Իեկտեմբեր 9ին, Ռասայութիւնի սպանութեան մէկ շարաթ առաջ, ցարուհին կը գրէ ցարին.

«Մեր բարեկամը կ'ըսէ, որ Ռուսաստանի համար սկսած են ահաւոր օրեր եւ եթէ դուն հեռացուցած շիկէիր նիկոլաշը, այսօր քո գահը պիտի փլէր վերջնականապէս»:

Իեկտեմբեր 16ին, Ռասայութիւնը սպաննուեցաւ, իսկ երեք ամիս ետք, նիկոլայ Բ-ը հրաժարեցաւ գահէն: Նոր դարապալտի մը բացուեցաւ սոսկ պատմութեան համար:

Այն ժամանակ, երբ Ռասայութիւնը իր ցանցերը կը լարէր, երբ գահին շուրջ տեղի կ'ունենային էնրփիկներ՝ բարձր պաշտօններ ստանալու համար, երբ

արեւմտեան ճակատի անյաջողութիւնները հարիւր հազարներ տեղահան կ'ընէին՝ իրենց Տեա բերելով մահ ու կոտորած, կովկասը կ'ապրէր իր ինքնուրոյն կեանքով:

Եթէ ի նկատի առնենք այն հանգամանքը, որ կովկասը ունէր իր առանձին վարչական կազմը, կեդրոնացած Փոխարքայի ձեռքերուն մէջ, որ Փոխարքայ Վորոնցով-Դաշկովը եղած կը պայտասի նախարար Երկու ցարերու ժամանակ եւ նիկոլայ Բ. մեծցած կը իր ծունկերուն վրայ, կը տեսնենք, որ կովկասը տեսակ մը անկախ երկիր կը, որ կ'ապրէր իր ուրոյն հոգերով եւ շահերով:

Այդ երկրին մէջ, կը բնակէին շորս աշխոյժ եւ ժրջան ժողովուրդներ՝ հայերը, վրացիները, թաթարները եւ լեռնականները, ունենալով իրենց մշտաւորական ուժերը, մամուլը, դպրոցները, հանրային հաստատութիւնները եւ քաղաքական կազմակերպութիւնները: Այդ ժողովուրդները, որ կորսընցուցած էին իրենց անկախութիւնը, կ'ապրէին իրենց ազգային կեանքով՝ աշխատելով պահպանել իրենց ազգային ինքնուրոյնութիւնը, ապա նաեւ ձեռք բերել անկախութիւն:

Ռասայութիւնի լարած ցանցին թելերը չէին հասներ կովկաս: Այդ մասին կը խօսէին բոլորը, որպէս վտանգաւոր, բայց շատ հեռաւոր երեւոյթի մը մասին: Սակայն, կովկասի մտաւորականութիւնը կը բաժնէր ոոսւ մտաւորականութեան վախերը՝ ճակատի անկազմակերպ վիճակի, պետական մեքենայի վերակազմութիւն եւ ուժի մի փոփոխութեան մասին:

կոուոզ բանակի անասկի զրկանքները, իշխանութեան ոճրագործ թերութիւնները եւ դաւադրութիւններու լուրերը կը հասնէին Կովկաս եւ կը զբրջուէին ժողովուրդը:

Անձամբ լսած եմ մեծ իշխան Նիկոլայ Միխայլովիչէն, որ կեղբոսն էր Լեւ թագին շուրջ տեղի ունեցող զէպքերը դատապարտելի են ամէն տեսակէտով:

Կովկասը հետո կը Ռասայուտինի ազդեցութեանն: Այժմ կ'ուսուցանուին թեկնածու շէր զբաւած Կովկասի վարչական պաշտօններէն որեւէ մէկը: Բայց տեղի կը ունեցած հակառակը: Ռասայուտինի հակառակորդները բարձր պաշտօններով աքսորուած կ'են Կովկաս:

1915 Օգոստոս 23ին, Շերեմետեւի միջոցով, ցարը նամակ մը կ'ուղարկէ Փոխարքային՝ հետեւեալ բովանդակութեամբ.

«Պարտք կը համարիմ գգուշացնել ձեզ, որ ես որոշած եմ անցնիլ գործերու գլուխը, որպէս բնդհանուր հրամանատար: Այդ իսկ պատճառով, Նիկոլայ Նիկոլայեւիչը ազատ կ'արձակուի իր պաշտօնէն եւ կը նշանակուի ձեր պաշտօնին: Յոյս ունիմ, թէ դուք կ'ըմբռնէք իրերու լրջութիւնը, որ կը ստիպէ զիս կատարել այս փոփոխութիւնները»:

Օգոստոսի վերջը, Փոխարքայի զիս անապուստ Պետրոսնը, հրաւիրեց զիս Բորժոմ, ուր այն ժամանակ կը բնակէր Փոխարքան՝ մեծ իշխան Նիկոլայ Միխայլովիչի կայրածին մէջ: Ես անմիջապէս մեկնեցի այնտեղ: Փոխարքան զիս բնդուեց եւ ըսաւ.

«Տարտարուան իմ գործունէութիւնը կա-

պեց զիս Կովկասի եւ իր ժողովուրդին հետ: Այսօր, մեծ վիշտ մը կը զգամ թողելով Կովկասը: Կ'ուզեմ ձեր միջոցով իմ շնորհակալութիւնս յայտնել թիֆլիսի քաղաքային վարչութեան եւ ժողովուրդին այն ընդունելութեան եւ վերաբերմունքին համար, որ ցոյց տուին իմ եւ տիկնոջս հանդէպ: Կ'ուզեմ յայտնել ե՛ւ այն պատճառները, որ կը ստիպեն զիս թողուլ Կովկասը»:

Կոմսը ցոյց տուաւ ինձ ցարի նամակը եւ ըսաւ, թէ մեծ իշխանը նոյնպէս կը սիրէ Կովկասը: Ըսաւ, թէ ճամբու վրայ ինք պիտի հանդիպի մեծ իշխանին եւ պիտի ըսէ անոր, թէ վստահութեան արժանի եմ ես եւ թիֆլիսի քաղաքային վարչութիւնը:

Կոմսը իր խոստումը կատարեց:

Սոսակցութեան ընթացքին, ան ըսաւ, թէ ցարի որոշումը վախ կ'առաջացնէ իր մէջ, թէ Ռուսաստանին հարկաւ որ են այսօր այլ պայմաններ, թէ պէտք է հաւատալ ժողովուրդի ընտրեալներուն եւ գործի կանչել ժողովուրդի լաւագոյն տարրերը, թէ պէտք է ստեղծել պատասխանատու կառավարութիւն:

Կոմսը ցոյց տուաւ նաեւ իր պատասխանը ցարին.

«Ձերդ մեծութիւնը որոշած է անցնիլ գործին գլուխը: Բայց պէտք է, որ Ձեր հրամանատարութեան ներքոյ գործը յաղթական լինի: Այլապէս վրտանց կը սպառնայ Ձեր հեղինակութեան եւ թագաւորութեան: Ես կը հաւատամ մեր գործի յաղթական ուժին, բայց կը կասկածիմ այժմեան կառութեան շուտափոյթ փոխուելուն»:

Կոմսը կը վախնար ճակատի կացութենէն եւ

վատ տրամադրութիւններով թողուց կովկասը: Վեց  
ամիս ետք, ան մեռաւ Արիմի իր կալուածին մէջ:

Փետրուարեան Յեղափոխութիւնը և մահը  
կեանքի բեմէն քշեցին այն բոլոր անձերը, որ Ռաս-  
պուտինի գոհերը դարձան կամ անոր պաշտպանու-  
թիւնը վայելեցին: Ո՞վ անոր ձեռքին խաղալիկ եղաւ  
կամ որո՞՞ ձեռքին ևր ինք խաղալիկ, թողունք ան-  
կողմնակալ պատմութեան: Մեր նպատակն է այսօր  
մատնանշել փաստերը միայն, որոնք 15 երկար տա-  
րիներ ետք անգամ կը թուին ղեռ նոր կատարուած  
ղեկերը:

Մեկնելէն առաջ, Փոխարքան քանի մը օր մնաց  
Թիֆլիս, ուր գանազան հաստատութիւններ և մար-  
դիկ կու գային իրեն մնաս բարեւի: Վրացիները սա-  
որ վերաբերում ցոյց տուին անոր մեկնումին հան-  
դէպ: Վրաց ազնուականութիւնը, որ կը սիրէր շա-  
րունակ պալատին մէջ լինել, չեկաւ անգամ երթաւ  
բարեւի: Թուրքերը բացարձակապէս անտես առին իր  
մեկնումը, իսկ հայերը կը ցաւէին, որ կը զրկուէին  
հայ ժողովուրդին հանդէպ բարեացակամ վերաբեր-  
մունք ունեցող կարեւոր մարդէ մը:

Վորոնցով-Դաշկովի օրով, վերադարձուեցան  
մեր եկեղեցական կալուածները. կազմուեցան կա-  
մաւորական խումբերը. իշխանութեան կողմէ լուրջ  
քայլեր եղան կովկասի բարձրագոյն դպրոցի բացման  
համար: Քաղաքային վարչութիւնը ամէն հիմ ունէր  
ցաւելու կոմսի մեկնումին համար: Ես զգացուած  
ճառ մը խօսեցի՝ բարի երթ մաղթելով անոր: Քաղա-  
քային վարչութեան որոշմամբ, կոմսին տուինք  
Թիֆլիսի պատուաւոր քաղաքացու տիտղոսը: Կոմսը

յուրուած էր, կը զգար, որ կը փակուի իր պաշտօնա-  
վարութեան և իր կեանքի վերջին շրջանը: Կոմսը  
հիւանդ էր, գրեթէ անկողինի մէջ:

Գնացքը կամաց-կամաց շարժեցաւ: Կոմսը  
կանգնած էր լուսամտուտի մօտ և կոմսուհու հետ  
ձեռքով շարժումներ կ'ընէր:

Տուն վերադառնալու ատեն, կը մտածէի.  
«Իժմախտ ժողովուրդ եմք մեմք. անկարող տնօ-  
րիներու մեր բախտը ինքններս: Այսօր կը մեկնի մէ-  
կը, վաղը պիտի գայ նոր ուրիշ մը: Ի՞նչ պիտի տայ  
ան երկրիմ»:

Ու ղեռ պատերազմը կար, գաղթականութիւնը  
կար և կային շարագուշակ յուրերը Թուրքիայէն:

## ԳԼՈՒԽ ԺԴ.

### ԴԵՊՔԵՐԸ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԻՆ ՄԷՋ (ՇԱՐ.)

ՄԵձ իշխան Նիկոլայ Նիկոլայևի իշի Կովկաս հաստատուելէն յետոյ, սկսաւ պատերազմական գործողութիւններու նոր շրջան մը:

1915ի աշունը սաստիկ անձրևային էր հարաւային ճակատին վրայ, իսկ հիւսիսային ճակատի վրայ սկսած էին արդէն ցուրտերն ու սառնամանիքները, ձիւնն ու փոթորիկները: Ու այս բոլորի հետ մէկտեղ՝ աւելի զգալի էր զառնային պետական մեքենայի պակասութիւնները եւ երկրի տնտեսական կեանքի քայքայումը վիճակը:

Վերը յիշած էինք արդէն, որ ռուսական պատմութեան մէջ յեղափոխութիւնը կապուած է եղեր միշտ պատերազմներու հետ, որոնք բնթացքին զգալի կերպով երևան են եկած երկրի բոլոր թերութիւնները եւ հնացած պետական մեքենայի անպէտքութիւնը: Այսպէս, Ղրիմի պատերազմէն ետք, տեղի ունեցան որոշ բարեփոխումներ: 1905ի ռուս-ճափոնական պատերազմէն յետոյ, տեղի ունեցան յեղափոխական ծանօթ շարժումները: Նոյնը եւ 1917ի յեղափոխութիւնը, որ հետեւանքը եղաւ համաշխարհային պատերազմի:

Այս գլուխին մէջ, մենք պիտի կանգ առնենք մէկ կողմէն՝ պատերազմէն առաջ եկած վերքերուն վրայ,

միւս կողմէն՝ այն վտանգաւոր հոգեբանութեան վերայ, որ համակած էր ամբողջ Ռուսաստանի եւ Կովկասի ժողովուրդները, որովհետեւ այդ երկու երկու յոյժներով է, որ կը պայմանաւորուէր պատմական դէպքերու հետագայ զարգացումը: Ռուսական Յեղափոխութիւնը բախումն էր այդ երկու ուժերուն: Այդ բախումէն էր, որ առաջ եկաւ նախ՝ Կովկասի անջատումը Ռուսաստանէն, ապա եւ հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը:

Որպէս այդ շրջանի աքտի գործիչ մը՝ ես վճռական կերպով կարող եմ բնել, թէ առանց ուսումնասիրելու ռուսական պատմութեան այդ շրջանը, ռեւէ մէկը չի կարող հաշիւ տալ իրեն, թէ ինչո՞ւ հայ քաղաքական գործիչները մէկէն ի մէկ որոշեցին անկախ հռչակել հայաստանը:

Այսպէս, երբ աշնան եղանակն սկսաւ, ռազմականատը եւ ամբողջ ժողովուրդը տնտեսապէս ահաւոր վիճակ մը կը ներկայացնէր: Ռուս յայտնի պատմարան եւ քաղաքագէտ Միլիկովը, որ այսօր կը զլիսաւորէ Փարիզի մէջ հրատարակուող ռուսական օրաթերթ մը, իր երեք մեծ հատորնոց աշխատութեան մէջ, կը նկարագրէ, թէ ինչ ողբալի կացութիւն կը ներկայացնէր բանակի մատակարարման գործը: Ռուսաստանը ի վիճակի չէր պատերազմելու տարիէ մը աւելի: Չունէր գինու որական մթերքներու բաւարար պաշար: Թնդանօթները շունէին ռուսերը: Յամախ գունդերը ճակատ կը մեկնէին առանց հրացանի: Եւ արեւմտեան ճակատի հակայական տարածութիւններու վրայ կոտոր բանակները խուճապահար կը նահանջէին՝ ձգելով այն բոլորը, ինչ որ ունէին:

Նոյնը կարելի է բան է հազուստեղների վերաբերմամբ: Կոչիկներ և վերարկուներ չկային: Հրամայում էր հանել սպաննուածներու կոչիկներն ու վերարկուները: Ես ականատես եմ եղած, թէ ինչպէս պահեստատեղերէն արիւնաթաթախ վերարկուներն ու կոչիկները կը բաժնուէին հապճեպ կերպով՝ նոր կազմուած գունդերուն:

Կացու թիւը աւելի կը ծանրանար հազորդակցական միջոցներու բացակայութեան պատճառով: Փճացած շոգեկառքերը և վագոնները դժուարութեամբ ու դանդաղ կը վերանորոգուէին: Կաշառակերութիւնը չափազանց տարածուած էր ճանապարհներու ծառայողներուն մէջ: Յաճախ կ'ուշացուէին գինուորական մթերքները՝ մասնաւոր ապրանքներ տեղափոխելու համար:

Ստեղծուած էր երկիշխանութիւն՝ գինուորական և քաղաքացիական իշխանութիւններու միջև: Ամէնքը կ'աշխատէին առաջին հերթին արժեցնել իրենց կարգադրութիւնները: Փոքր պաշտօնեաները կը տարակուսէին, թէ որո՞ւ պէտք է հպատակիլ: Իշխանութիւնը չէր վստահեր երկրի հանրային ուժերուն, յանձինս գաւառական և քաղաքային կազմակերպութիւններու: Ծանապարհները փճացեր էին. սայլերը կը դժուարանային անցնիլ, իսկ ձիերը առանց կերի մնացած ըլլալով՝ ուժասպառ կ'իյնային:

Պատերազմի առաջին տարուան խանդավառութիւնը չբացած էր արդէն: Միլիտնաւոր հրանդնուրու, մեռածներու և վիրաւորներու ցաւը ծանրացած էր շատ ընտանիքներու վրայ:

Այս բոլորի հետ մէկտեղ՝ քայքայուած ջիգեր և ծայր աստիճան աղքատութիւն: Բոլորն ալ կ'ուզէին հանգիստ և հանգիստ:

Զօրքի գլխաւոր հրամանատարութիւնն ալ կանգնած չէր իր բարձրութեան վրայ: Որպէսզի լրիւ կերպով պատկերացնեմ ճակատի քառասային վիճակը, այստեղ պիտի մէջբերեմ ցարի հօրեղբօր մէծ իշխան Նիկոլայ Միխայլովիչի կարծիքը, իր յուշատետրին մէջ գրուած, որ վերջերս բոլշեիկները հրատարակեցին «Կարմիր Արիսի», թիւ 47-48, գիրքերուն մէջ:

Նիկոլայ Միխայլովիչը մեծ իշխաններէն ամէնէն ազատամտն էր և յայտնի էր որպէս պատմաբան: 1918ին, բոլշեիկները հրացանագարկ բրին գայն իր եզրայրներուն հետ միասին:

Պատերազմի սկսելէն յետոյ, Նիկոլայ Միխայլովիչը իր իսկ ցանկութեամբ կը զրկուի հարաւարեւմտեան բանակը և կը գրուի գորավար Իվանովի տրամադրութեան ներքոյ:

«Ընտրեցի գորավար Իվանովը, — կը գրէ մեծ իշխանը — որպէս ամէնէն յար վատերէն: Ռուսատանի մէջ դեռ կը տիրէր խանգավառ տրամադրութիւն: Բայց արդեօք երկա՞ր պիտի տեւեր այդ: Երեւի ֆրանսական զօրքերու վիճակը թեթեւցնելու համար էր, որ մենք կ'ոգեւորուէինք արեւելեան Պրուսիայի մէջ եղած յառաջխաղացումով: Զինուորական այդ գործողութիւնները կը կատարուէին արդեօք նախապատրաստուած ծրագրով մը, թէ՞ հմարաւոր էին դժբախտ անակնկալներ: Ռեճեմկամպօի անձը ինձ չէր ներշնչեր ոչ մէկ վստահութիւն: Ժիլիսկիին խելօք էր, բայց գրա-

սենեակային աշխատող, քէորիի մարդ մը: Սամ-  
սոնովը համակրելի էր. բայց շուտ խանդավառ-  
ուող: Ու այս բոլորը միասին առած՝ շատ քիչ յոյս  
կը ներշնչէր յաղթական էլնելու պատերազմէն»:

*Ինչպէս գիտենք, արեւելեան Պրուսիա մասած  
ուսական ամբողջ բանակը ջարդուեցաւ:*

«Իմ առջին տպաւորութիւնները կիսեւէն. -  
Անհամակրելի էին գորավար-նահանգապետ Տրե-  
պովը եւ իր ամբողջ շրջապատը. քաղաքը լիքն էր  
իրար հակառակ իշխանութիւններով. հիւանդա-  
նոցները անկանոն վիճակի մէջ կը գտնուէին:  
Կարդացի լեհերուն ուղղուած հրովարտակը: Ի՞նչ  
տարօրինակ փաստաբույժք եւ, որ գլխաւորն է,  
այդ հրովարտակը ստորագրած է Նիկոլայ Նիկո-  
լայեիչը: Երեւի, ստիպմամբ են առել ցարի հա-  
մաձայնութիւնը, որովհետեւ այդպիսի գրութիւն  
մը պէտք էր, որ ստորագրուած ըլլար միայն ցա-  
րին կողմէ: Միամիտ լեհերը կը հաւատան խոս-  
տումներուն եւ այսօր վայրենի հրճուանքի մը  
օրեր կ'ապրին»:

*Մեծ իշխանի յոռետեսութիւնը գնալով աւելի կը  
սաստկանայ: Իր ցանկութիւնն է հեռու մնալ եւ չը-  
խառնուիլ գործին: Բայց ան շատ բան կը տեսնէ, շատ  
բան կ'իմանայ:*

«Ինք՝ գլխաւոր հրամանատարը (Նիկոլայ Նի-  
կոլայեիչը)՝ անզոյն մէկն է, ինչպէս միշտ: Իր  
շարժումները եւ կեցումներն է, որ կ'ենթարկեն իրեն  
գործերը: Ուղեգային խորշերը կը բացակային ո-  
գելորդելու համար»:

*Սեպտեմբերի սկիզբներուն, Նիկոլայ Միխայլո-*

*վիչը գոր. Ալեքսեւեւն կը ստանայ իր կարծիքներու  
հաստատումը:*

«Ալեքսեւեւը ըսաւ, որ գլխաւոր ռազմականացի  
մէջ կը տիրէ կատարեալ քառս եւ խառնաշփոթու-  
թիւն: Նիկոլայ Նիկոլայեիչը եւ Եանուշկեիչը  
կորսնցուցած են իրենց գլուխները: Մեծ իշխանի  
ուժերէն վեր է ընդհանուր հրամանատարութեան  
պաշտօնը, մանաւանդ այդպիսի շրջապատով»:

*Նիկոլայ Նիկոլայեիչը իր մօտ կը կանչէ մեծ իշ-  
խան Նիկոլայ Միխայլովիչը:*

«Ես նստեցայ այնտեղ բաւական երկար - կը  
գրէ մեծ իշխանը - եւ կը լսէի Նիկոլայ Նիկոլայեի-  
չի՝ այդ անհաւասարակ շիտ մարդու խօսքերը: Ան  
կը ճառէր անվերջ, ռոտերով, ձեռքերով շարժում-  
ներ կ'ընէր, կը խփէր սեղանին: Տեսարանը անհա-  
մակրելի էր: Խօսելով գոր. Ժիլիսկիի մասին՝ ան  
ըսաւ, քէ գայն պէտք է յանձնել զինուորական գե-  
րագոյն ատենին: Անվերջ կը գանգատէր իր թիկ-  
նապահէն, որ ենթարկուեցաւ ամենատղեղ հայ-  
հոյանքներու՝ ուշանալուն համար: Ստացուեցաւ  
հեռագիր մը, որ Եարոսլաւը գրաւուած էր մեր  
գործերու կողմէ: Տրամադրութիւնները անմիջա-  
պէս փոխուեցան: Բոլորը սկսան համբուրել իրար:  
Նիկոլայ Նիկոլայեիչը անմիջապէս հեռագրեց  
ցարին եւ իր կնոջը: Վերջապէս, մեծ իշխանը ա-  
գատ արձակեց զիս՝ մտերմօրէն սեղմելով ձեռքս:  
Օ՛հ, որքան լաւ է հեռու ըլլալ այդ պատիւներէն»:

*Բանի մը օր ետք, Նիկոլայ Նիկոլայեիչը նորէն  
կու գայ խորհրդակցութեան գոր. Իվանովի մօտ:  
Վախ կար, որ զերմանական զօրքերը կարող էին*

անցնիլ Եարոսլաւի տակ, ուս յաղթական բանակի  
թիկունքը: Եորհրդակցութենէն ետք, գոր. Ալեքսէւեր  
գայրացած էր:

«Ինչպիսի անտազանդ օգնականներ կը շրջա-  
պատեն մեծ իշխանը – ըսաւ Ալեքսէւեր: – Անոնք  
կ'առաջարկեն առանց կոուի պարպել վարչաւան՝  
նակատին գիծը ուզողնու համար: Ես կը պնդէի, որ  
այդ ծրագիրը ոճրագործ ծրագիր մըն է: Ու այս-  
պիսի ձեռքերու մէջ կը գտնուի ուս գործին բախ-  
տը: Ամէն ինչ կը կատարուի ըստ պէտքի ազդեցութեան  
տակ: Չկայ ուժեղ կամք մը, զեկավար միտք մը:  
Չկայ, ի հարկէ, եւ նախապատրաստուած ծրագիր:  
Գերմանացիք այս բոլորը գիտեն եւ պիտի ջանան  
օգտագործել կացութիւնը, առանձին-առանձին  
ջարդելով մեր բանակները»:

*Մեծ Իշխանը չի բաւարարուիր միայն ճակատին  
պատկերը տալով: Բացի այն, որ ճակատին վրայ ան  
տեսած էր արհամարհանք դէպի գիւնու որը, «պետերու  
անպէտքութիւնը», «բանակը կուրօրէն առաջ նետե-  
լը» եւ այլն եւ այլն, մեծ Իշխանը գրադած էր եւ թի-  
կունքի խնդիրներով:*

«Վերջերս գրեցի մայր թագուհի՝ Մարիա  
Ֆեոդորովնային այն մասին, թէ պէտք է զգուշա-  
նալ գերմանական ազդեցութիւններէն, որ ուժեղ  
էին մեր մեծ պատերազմի սկիզբներուն եւ որ աւ-  
ելի կ'ուժեղնար պատերազմի ընթացքին: Շատ են  
այդ ազդեցութիւնները՝ հետեւեան, պրուսական.  
միկլեյնրուրգեան, օրտելրուրգեան: Բայց ամե-  
նավտանգաւորը հետեւեան ազդեցութիւնն է, որ  
իր վրայ կը կրէ թագուհի Ալեքսանդրա Ֆեոդո-

րովնան, որ հոգով մնացել է գերմանուհի եւ որ  
մինչեւ վերջին ըստէն դէմ էր պատերազմին եւ  
ամէն կերպ կ'աշխատէր ձգձգել անոր յայտարար-  
ութիւնը: Այդ մասին ինձ պատմած է արտաքին  
գործերու նախարար Սագոնովը, որ ժամանակին  
ամէն կերպ աշխատեցաւ գործել թագուհու տրա-  
մադրութիւններուն հակառակ»:

*Մեծ Իշխանը կը գրէ Լ. Ռասպուտինի մասին:*

«Ամբողջ այդ զինուորականութիւնը ես կ'ա-  
տեմ: Կր տեսնեմ, որ ընկերվարութեան սազմերը  
կ'անին ու կ'անին: Իսկ ի՞նչ կը կատարուի պալա-  
տին մէջ՝ Ռասպուտիններ, գերմանացիներ եւ ա-  
նոնց ծափահարող ուսներ: Անկեղծութեան պահե-  
րուն, միտքը կ'աշխատի անվերջ: Ինչո՞ւ այս պա-  
տերազմը, ի՞նչ վախճան մեզ կը սպասէ: Բան մը  
պարզ է ինձ համար. այն, որ պատերազմէն յետոյ  
տեղի պիտի ունենան մեծ փոփոխութիւններ: Ես  
կը կարծեմ, որ շատ միապետութիւններ վար պի-  
տի գլորին եւ պիտի յազդէ ընկերվարութիւնը, որ  
դէմ է ամէն տեսակի պատերազմներուն: Մեզ մօտ,  
Ռուսաստանի մէջ, տեղի պիտի ունենան լուրջ վե-  
րիվայրումներ, մանաւանդ եթէ կառավարու-  
թիւնը շարունակէ անմիտ կերպով ձգտիլ դէպի  
աջ, դէպի բռնութիւն եւ անօրէնութիւն»:

*Ընթերցողը կը տեսնէ, թէ ի՞նչ ծանր ջննադա-  
տութեան կ'ենթարկուի կացութիւնը նոյնիսկ թա-  
գաւորական ընտանիքի անդամ Նիկոլայ Միխայլո-  
վիչի կողմէն: Կացութեան ծանրութիւնը կը զգար եւ  
առաջաւոր ուս մտաւորականութիւնը ու կը ցաւեր  
իր հայրենիքի քայքայման համար:*



1915ի աշնանը քաղաքներու մէջ արդէն իսկ կը պակսէին ապրանքներ՝ հաց, շաքար, սապոն և հացուստեղէն: Ծանր էր աղքատ ժողովուրդի վիճակը:

Ական ցոյցեր:

Կառավարութիւնը, փոխանակ զիրացնելու փոխադրական միջոցները, սկսաւ մեղադրել վաճառականները և ժողովուրդի գայրոյթը ու զոռուեցաւ բոլորովին ուրիշ կողմ: Կը մեղադրէին վաճառականները, որոնք իբր թէ իրենց անձնական շահուն համար կը պահէին ապրանքները՝ առաջ բերելով ապրանքային սով երկրին մէջ: Նախապատրաստուած ծրագրով մը, Պետերբուրգէն եկած յատուկ հրամանի մը հիման վրայ, ոստիկանութիւնը սկսաւ հալածել վաճառականները:

Աշնանային առաւօտ մը, ինձ յայտնեցին, որ ռուս կիներ յարձակած են քաղաքի մեծ խանութներուն վրայ, որոնք կը պատկանէին հայերուն, ջարդ ու փշուր ըրած են դռները և թալանած ամէն ինչ՝ որ գտած են այդ խանութներու մէջ: Իշխանութենէն ոչ ոք միջամտած էր ռուս կիներու ամբոխը կեցնելու համար: Ուրիշ խումբ մը գրազած էր թալանով քաղաքի ուրիշ մասերու մէջ:

Պետք է ըսել, որ Թիֆլիսի մէջ և ոչ մէկ հայ կամ վրացի կին չէր մասնակցած թալանին: Ռուս կիներն էին միայն, որ քաղաքի ծայրերէն հաւաքուած՝ աւարի կը մատնէին քաղաքի հարուստ վաճառականները:

Ես փորձեցի համոզել թալանող կիները, որ յետ կանգնին իրենց արարքներէն, բայց լսող չեղաւ: Անմիջապէս գացի նահանգապետի մօտ: Բայց ան յայտնեց, թէ ինք անկարող է որեւէ բան ընել, որովհետեւ

ոստիկանութիւնը համակրական վերաբերում ունի ղեկի այդ անկարգութիւնները: Այսու հանգերձ, նահանգապետը հրահանգեց զօրքերուն զուրա ելնել փողոց, բայց երբք շխտոնուել թալանահիներու գործին: Ու ծիծաղող զինուորներու աչքերուն առջև, ռուս կիներ՝ բռնուորուած թալանած ապրանքներով՝ տուն կը գտնային:

Ես մօտեցայ զինուորներուն և հարցուցի, թէ ինչո՞ւ չեն միջամտեր՝ թալանի առաջն առնելու համար: Ստացայ հետեւեալ պատասխանը.

«Անոնց ամուսինները կը կոռուին ճակատին վրայ, իսկ երեխաները քաղցած են այստեղ: Թո՛ղ բուրժուաները քիչ մը վնասուին»:

Կառավարութիւնը կ'ուզէր ժողովուրդի գայրոյթը ուղղել վաճառականներուն վրայ: Թիֆլիսի ոստիկանութեան պետ՝ Չոնոմսկին՝ կամենալով վարկարկել Թիֆլիսի ականաւոր հայ վաճառականները՝ բանտարկեց Արշակ Միլեանը, Աղիլխանեանը, Սերբրեակեանը: Կը մեղադրէր զանոնք զինուորական կերպասները թաքցնելու մէջ:

Ես քանի մը անգամ ցուցմունքներ ըրի իշխանութեան, որ տազնապին ղեմ կոռուելու լաւագոյն միջոցը երկաթուղային հաղորդակցութեան վիճակի բարելաւումն է, բայց բութ նահանգապետը չէր ուզեր բժրոնել այդ: Ան ժողով մը գումարեց իր մօտ, որուն կը մասնակցէին քաղաքային վարչութիւնը և վաճառականութեան ներկայացուցիչները: Դիմելով ժողովականներուն՝ ըսաւ, թէ ժողովուրդը զրգրուած է և թէ ինք կը մեղադրէ վաճառականները որովհետեւ եթէ շաքարը և կերպասները կը սղին,

այդ հասկնալի է, բայց երբ կը սգին ձմերուկը եւ վա-  
րունգը, տեղական արտադրութեան պտուղները,  
այդ արդէն անհասկնալի է եւ միանգամայն անթոյ-  
լատրելի:

Նահանգապետը չէր ուզեր հասկնալ տնտեսա-  
կան փոխանակութեան տարրական օրէնքները: Հայ  
կամ վրացի գիւղացին՝ ծախելով իր ձմերուկն ու վա-  
րունգը՝ կ'ուզէր գնել կերպաս եւ շաքար, ուստի  
ստիպուած էր բարձր գնով վաճառել իր աշխատանքի  
արդիւնքները, որպէսզի կարողանար գնել իրեն ան-  
հրաժեշտ ապրանքները:

Իմ կացութիւնը այստեղ այ ծանր էր: Որպէս քա-  
ղաքագլուխ, ես պէտք է պաշտպանէի ազատ առե-  
տուրի սկզբունքը, բայց միւս կողմէն՝ կը հասկնայի  
նաեւ անօթի կիներու եւ երեխաներու գայրոյթը:

Ռուսական միւս քաղաքներու մէջ այ տեղի կ'ու-  
նենար նոյն պատկերը: Ստեղծուած էին երկու բա-  
նակներ՝ Իշխանութիւնը եւ Ժողովուրդը:

Չօրքի թիկունքը, քաղաքներու մէջ՝ թալան,  
բանտարկութիւններ, մատնութիւններ, սով եւ ան-  
վերջ պոչեր խանութներու առջեւ: Իսկ ճակատի վրայ՝  
հազարաւոր սպաննուածներ եւ վիրաւորներ: Մթնո-  
լորտը ծայր աստիճան ելեկտրականացած էր:

Կը յիշեմ, թէ ինչպէս ալիւրով բեռնաւորուած  
գնացքները կ'ուշանային եւ պոչերը խանութներու  
առջեւ գնալով կը շատնային: Հիւսիսային կողմատէն  
ալիւրը կը ստացուէր հայկական եւ վրացական շր-  
ջաններու համար: Ալիւրէն բացի, կը պահստէին ան-  
հրաժեշտ միւս պիտոյքներն ալ:

Միեթարական չէին եւ ճակատէն եկած նամակ-

ները: Չինու որները կը գանգատէին, որ չունին ու-  
տելիք եւ հագնելիք, որ իրենց հրամանատարները  
անպէտք են եւ անչնորհ: Թէեւ այս կարգի նամակ-  
ները կ'ենթարկուէին գրաքննութեան, այնուամե-  
նայնիս անոնք կը տարածուէին Ժողովուրդի մէջ՝  
լեցնելով առանց այն ալ գայրացած Ժողովուրդի  
դառնութեան բաժակը:

Հանրային հիմնարկութիւններու գլուխ կանգ-  
նած մտաւորականութիւնը կը տեսնէր ու կը զգար  
այս բոլորը եւ միջոցներ կը խորհէր ծանր կացութե-  
նէն դուրս գալու համար: Ժողովուրդի լայն խաւերը  
կը մեղադրէին ցարը: Անոնց կարծիքով, ցարի պար-  
տականութիւնն էր պահանջուած տալ Ժողովուրդի բո-  
լոր կարիքներուն եւ պատժել շարագործները:

Մտաւորականութիւնը կ'ըմբռնէր, որ միակ էլքը  
Ժողովուրդի մասնակցութիւնն է պետական գործե-  
րուն եւ նախարարներու խորհրդի պատասխանա-  
տրութիւնը Պետական Դումայի առջեւ: Բայց ի՞նչ  
ընել:

Ընդդիմադիր մտաւորականութիւնը կը գի-  
տակցէր, որ Ժամանակը չէ վճռական քայլերու դիմել:  
Տեղի կ'ունենար աննախընթաց պատերազմ մը, որ կը  
պահանջէր ուժերու ծայրայեղ լարում եւ կեղբոնա-  
ցում: Իշխանութեան ուշադրութիւնը պէտք է կեղ-  
բոնացած ըլլար պատերազմի վրայ: Կարելի չէր նոր  
խոչընդոտներ ստեղծել ներքին ճակատներու վրայ:

Բայց, միւս կողմէն, ցարը գնալով աւելի կ'են-  
թարկուէր ցարուհու եւ Ռասպուտինի աղիտալի ազ-  
դեցութիւններուն, որոնք կը ներշնչէին իրեն, թէ ինք  
սուրբ է, օժտուած երկնային կարողութիւններով եւ

թէ պետք չէ որ զիջումներ ընել ունի մէկուն: Հագարաւ որ դիմումներու, խնդրանքներու եւ բանաձեւերու պատասխանը անխուսափելիօրէն նոյնն էր: Ոչ եւ ոչ:

\* \* \*

Ահա այսպիսի պարագաներու մէջ էր, որ 1916ին տեղի ունեցաւ քաղաքային եւ գաւառական գործիչներու համառուսական համագումարը, Մոսկուայի մէջ:

Ես մեկնեցի Մոսկուա երկու ատաքելութեամբ: Նախ՝ պետք է ներկայացնել համագումարին Կովկասի անտեսական կեանքը, հիւանդանոցներու եւ գաղթականներու վիճակը եւ ապա՝ պիտի նկարագրէի երկրի քաղաքական կացութիւնը:

Թող ներք ինձ բնթերցողը, որ այստեղ պիտի վերջիչեմ իմ արտասանած ճառը, որ այն ժամանակուան Ռուսաստանի մէջ մեծ ազմուկ հանեց եւ գոմասանքով արտատպուեցաւ բոլոր թերթերու մէջ:

Մոսկուա հասայ համագումարի բացման օրը, որ յատկացուած էր բնդ հանուր գեկուցումներուն շորս պիտաւ որ ճակատներու մասին: Ժամը Զին ժտերը, երբ նիստը պիտի փակուէր՝ չերթը հասաւ ինձ: Իւրաքանչիւր հոկտորի յատկացուած էր 15 վայրկեան: Նախագահը ինձ խնդրեց կրճատել այդ ժամանակամիջոցը 10 վայրկեանով: Ես համաձայնեցի:

Իմ առաջ կը գտնուէր 800 հոգիէ բաղկացած յարան մը, ուր հաւաքուած էր երկրի լաւագոյն մտաւորականութիւնը, բոլոր քաղաքազուխները,

գաւառական վարչութիւններու նախագահները, Պետական Դումայի անդամները եւ բազմաթիւ լրագրողներ:

Դիտմամբ կանգ կ'առնեմ ժանրամասնութիւններու վրայ, որովհետեւ իմ բաժնեկր կը համապատասխանէին իրականութեան: Բոլորը կը գիտակցէին, որ այս վայրկեանը ունէր պատմական եւ կարեւոր նշանակութիւն ամբողջ Ռուսաստանի համար: Ես կը հասկնայի, թէ ինչ ծանր պարտականութիւն կար դրուած իմ ուսերուս վրայ, որպէս հայի, Ազգային Բիւրոյի ներկայացուցիչ եւ Քիֆիսի քաղաքապետ խի զերիս մէջ, նաեւ որպէս Կովկասի բոլոր ժողովուրդներու պատգամաւորի:

Ես շօշափեցի հիմնական երեք խնդիրներ: Նախ, որ Կովկասը եւ Ռուսաստանը բարոյապէս եւ քաղաքականապէս կապուած են իրարու հետ անքակտելի կապերով, որ Կովկասը հաւատարիմ է ուսու բանակին, եւ որ, վերջապէս, Կովկասի բոլոր ժողովուրդները հոգեկան ամուր կապերով կապուած են ուս բարձր միտքին ու մշակոյթին:

Ճառիս ամենապատասխանատու մասը առջինն էր, քաղաքականը: Բայց ինչ կարելի է ըսել 10 վայրկեանին մէջ: Այսօր, երբ տասնեւչորս տարի է անցել Հայաստանի Հանրապետութեան հռչակումէն, որու մէջ եւս ամենէն գործօն մասնակցութիւնն եմ ունեցած, պետք է ըսեմ, որ Մոսկուայի մէջ արտասանած իմ ճառը այն ժամանակ, միանգամայն անկեղծ էր եւ համապատասխան հայ գանգուածներու եւ մտաւորականութեան ձգտումներուն:

Ի նկատի ունենալով ժամանակի սղութիւնը,

խօսքս ուղղեցի սրահը լեցուած պատգամաւորնե-  
րուն։

«Պարունայք պատգամաւորներ, ես կու գամ  
հեռաւոր կովկասէն, կու գամ անոր մայրաքաղա-  
քէն, կու գամ արիւնոտ ճակատէն, կու գամ Տաճ-  
կահայաստանի սարերէն ու ձորերէն, ուր այն-  
քա՛ն արիւն հոսեցաւ, այնքա՛ն գոհեր ինկան։ Կու  
գամ այստեղ, Ռուսաստանի սիրտը՝ Մոսկուա՝  
ըսելու ձեզի, որ մեր ժողովուրդներու սիրտերը կը  
բարախեն ձեր սիրտին հետ մէկտեղ, որ ձեր դատը  
մեր ընդհանուր դատն է եւ որ ձեր ձգտումներն ու  
ցանկութիւնները հարագատ են ու թանկագին մեզ  
համար։ Կու գամ ըսելու, որ մենք կը սիրենք ռուս  
բանակը եւ կը գուրգուրանք ամէն մէկ զինուորին  
վրայ։ Այն քանի մը վայրկեանը, որ շնորհած էք  
ի՛նձ, պիտի օգտագործեմ ձեզ ըսելու, որ կովկասի  
ժողովուրդները իմ բերանով կը յայտարարեն ձեզ,  
որ իրենց եղբայրական օգնութիւնը կը բերեն ընդ-  
հանուր մեծ գործին եւ իրենց ողջոյնը կու տան  
ռուս մեծ ժողովուրդին»։

Այս խօսքերը արտասանեցի բարձր ձայնով եւ  
ոգևորուած։ Սրահը թնդաց ծափահարութիւննե-  
րով։

«Շարունակեցէք, շարունակեցէք», - կը պո-  
ռային բոլոր անկիւններէ։ Ես շարունակեցի աւելի հա-  
մարձակ։

«Եթէ կովկասը բաժանելու ըլլանք Ռուսաս-  
տանէն, պիտի գոյանայ անբուժելի վերք մը, որ  
արիւնաքան պիտի բնէ մեր ժողովուրդներն ու  
մեր բարձր մշակոյթը»։

Ու նորէն ծափեր ու ծափեր։ Մինչև այսօր ալ կը  
յիշեմ պատգամաւորներու աննախընթաց խանդա-  
վառութիւնը։

Թող չզարմանայ ընթերցողս, որ 1918ին, Էրբ  
Հայաստանի Հանրապետութեան վարչապետ էի, եւ  
նոյն խանդավառութեամբ եւ նոյնպէս կրակոտ կեր-  
պով կը բացատրէի Ռուս Կաճաւորական Բանակի  
ներկայացուցիչ՝ գոր. Չղանեւիչին, թէ ինչո՞ւ մենք  
պէտք է բաժանուենք Ռուսաստանին։ Եւ Էրկու ան-  
գամին ալ, թէ՛ ես եւ թէ՛ քաղաքական բոլոր գործիչ-  
ները անկեղծ լինք մեր յայտարարութիւններուն եւ  
ձգտումներուն մէջ։

Մենք անցանք ղէպերով լեցուն պատմական  
ճամբու մը վրայով եւ իմ նպատակն է պարզարանել  
այդ ճամբու բոլոր փոշիքը, որոնք սերտ աւորնչու-  
թիւն ունէին Ռուսաստանի եւ կովկասի մէջ տեղի ու-  
նեցող ղէպերուն նկատմամբ։

Զգացի, որ սրահը պատրաստ է ինձ լսելու եւ շա-  
րունակեցի՝ առանց նկատի ունենալու ժամանակը։

«Եւ երբ կը մտածեմ, որ գուցէ մենք, այստեղ,  
նակատէն հեռու, անմասն կը մնանք մեր գործի  
հերոսական գոհաբերումներուն, որ մենք չենք  
ընքր ամէնը ինչ որ պէտք է ընէինք, իմ հայեացքս  
ակամայօրէն կը դառնայ դէպի Պետերպուրգ, դէ-  
պի իշխանութեան վերերը եւ ես կ'ըսեմ. «Առէք մեր  
ուժերը, օգտագործեցէք մեր գիտութիւնը, մեր  
կամքն ու աշխատանքը եւ վստահելով մեզ՝ հան-  
րային գործիչներուս՝ բաժնեցէք մեզ հետ իշխա-  
նութեան ծանր բեռը»։

Նորէն անասելի ծափահարութիւններ։ Վաղուց

ժողովուրդը 10 վայրկեանը: Կը շարունակէի:

Ես պատկերացուցի Համագումարին առջև Հե-  
ռուսիոյ Կովկասի պատերազմական ամբողջ կացու-  
թիւնը. ցոյց տուի զիստաւոր ուղղութիւնները, որոնց-  
մով կ'ընթանային մեր զորքերը. պատմեցի մեր զաղ-  
թականներու անասելի կացութեան մասին եւ նկա-  
րագրեցի այն աշխատանքները, որ իր վրայ էր առած  
Կովկասի Քաղաքներու Միութիւնը:

Իմ ճառս տեսց երկու ժամ, որմէ ետք նախապա-  
շը՝ Մոսկուայի քաղաքագլուխ Զելնսկովը՝ շնորհա-  
կայութիւն յայտնեց ինձ, առաջարկեց Համագումա-  
րին եղբայրական ողջոյն ուղարկել Կովկասին եւ  
շնորհակայութիւն յայտնել Կովկասի Քաղաքներու  
Միութեան՝ իր գործունէութեան Համար: Պատգա-  
մաւորները կանգնած կը ծափահարէին:

Թերթերը գրեցին, թէ առաջին անգամն էր, որ  
Ռուսաստանը բուռն խանդավառութեամբ կը ծա-  
փահարէր Կովկասը: Միւս օրը, ճաշկերոյթ մը ունե-  
ցանք «Պրագա» ճաշարանին մէջ, ուր ներկայ էին  
Համագումարի բոլոր անդամները: «Պրագա»ն ազա-  
տասէր ոտսներու Հաւաքատեղին էր: Յայտնի պատ-  
մազէտ եւ Պետական Դումայի անդամ Միլիկովը  
առաջարկեց զիս ընտրել Քամաղա, այսինքն՝ սեզանի  
վարիչ, բւելով, որ ինք տեսած է զիս այդ գերին մէջ  
Կովկաս եւ կ'ուզէ որ Մոսկուան այտեսնի:

Ճաշկերոյթը անցաւ բաւական աշխոյժ: Ճառեր  
արտասանուեցան ի նպաստ Կովկասի եւ Հայ ժողո-  
վուրդի: Ճաշկերոյթէն ետք, մենք քանի մը անգամ  
առանձնացանք սենեակ մը, ուր խօսեցանք քաղա-  
քական ընդհանուր կացութեան մասին:

Մեզ կը թուէր, թէ մենք մինակ էինք եւ կրնայինք  
ազատ գրուցել բոլոր խնդիրներու մասին: Բայց մեծ  
եղաւ պարմանքս, երբ 10 տարի ետք, կարդացի բոլ-  
շեիկներու մէկ հրատարակութիւնը, որ «Ռուս-  
ժուազիան Փետրուարեան Յեղափոխութեան Եւ-  
խօրեակիմ» վերտառութիւնը կը կրէր: Հոգ ամփոփ-  
ած էին ցարի ոստիկանութեան փաստաթուղթերը  
Մոսկուայի Համագումարի մասին եւ լրի տեղեկու-  
թիւններ կային մեր ունեցած խօսակցութիւններու  
մասին: Պարզ է, որ մեր մէջ լրտեսներ կային:

Մոսկուայի Գրական Ընկերութիւնը խնդրեց ինձ  
կրկնել ճառս, որպէս դասախօսութիւն: Ես Համա-  
ձայնեցի եւ մեծ բազմութեան մը առջև նորէն պատ-  
կերացուցի Կովկասը եւ իր կարիքները: Դասախօսու-  
թեանէն ետք, ի պատիւ ինձ ճաշկերոյթ մը տրուեցաւ:

Այսպիսի պատիւներով ընդունեց Մոսկուան  
Կովկասեան Քաղաքներու Միութեան ներկայացու-  
ցիչը:

\* \* \*

Երկրորդ օրը Համագումարը գրադեցաւ ճակատի  
Հոգեւրդով: Կարդացուեցան զեկրոյցներ, ուր նկարա-  
գրուած էին այն բոլոր հարցերը, որոնց մասին ես  
խօսած եմ արդէն յուշերուս նախորդ գլուխներուն  
մէջ: Որոշուեցաւ կազմել գործնական կոմիտէներ,  
որոնք պիտի գրադէին նոր գործարաններ բանալով՝  
գարկ տալու Համար գինուորական պիստոյներու  
արտադրութեան:

Կառավարութիւնը ընդունեց մեր այդ որոշումը

և, կովկասի մէջ ալ հիմնուեցաւ պինտ սրաւ-արդի-նարերական կոմիտէ մը, վրաց ազնուականութեան պարագլուխ՝ Արխագիի նախագահութեամբ, որ յետոյ սպաննուեցաւ բոլշևիկներու կողմէ՝ վրացական վերջին ապստամբութեան ժամանակ: Այդ կոմիտէին ես կը մասնակցէի որպէս փոխ-նախագահ:

Երրորդ օրը ամէնէն կարևորն էր համապումա-րին համար: Օրակարգին վրայ զրուած էր քաղաքա-կան խնդիրը:

Այս խնդիրը պարզ էր բոլորի համար, այսինքն՝ որ իշխանութիւնը անզօր է ապահովելու յաղթու-թեան գործը: Ամբողջ Ռուսաստանը այդ կարծիքն ունէր:

Ինչպէս 1905-07 թուականներուն ամէնքը մէկ-տեղ կը պահանջէին Սահմանադրութիւն, այսօր ալ կը պահանջէին Դումայի առջև պատասխանատու նախարարութիւն: Նիկոլայ Բ.ի առում Սահմանադ-րութիւնը կրճատուած էր, աղաւաղուած. եւ ահա մեծ բաց մը լեցնելու համար կը պահանջուէր, որ նա-խարարութիւնը պատասխանատու ըլլայ ոչ թէ ցարի, այլ Պետական Դումայի առջև:

Ստեղծուած էր պատմական ծանր վայրկեան մը ոչ միայն Ռուսաստանի, այլև կովկասի եւ հայ ժողո-վուրդի համար: Մէկ կողմէն՝ այն համոզու մը կար, որ իշխանութիւնը պէտք է ըլլայ ուժեղ, որ պէտք չէ խանդարել պայն, որ ամէն ջանք պէտք է գործադրել ճակատին համար. իսկ միւս կողմէն՝ խոր համոզում կար, որ առանց պատասխանատու նախարարու-թեան՝ անհնար է յաղթանակը:

Եթէ ցարը տեսներ եւ բմբոններ ժողովուրդի կա-

րիքներն ու բաղձանքները, այսօր չէր լինի ո՛չ յեղա-փոխութիւն, ո՛չ բոլշևիզմ, ո՛չ տաճիկներու վերա-դարձը ղէպի հայկական վիլայէթները եւ ոչ ալ կար-սի, Սուրմայուի եւ Արղահանի կորուստը: Բայց ցարը կոյր էր ժողովուրդի պահանջներուն հանդէպ. ոչ մի-այն կոյր, այլև անկամ մէկը, ինկամ Սիրիբէն եկած մուծիկի մը ապկեցութեան տակ:

Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը հեռացնելէն ետք, Ռասայու տինը ինք կը նշանակէր նախարարները եւ ինք կը հեռացնէր գանոնք՝ զրդուած պալատին մէջ գտնուող գանազան բախտախնդիրներէն, որոնք օգտուելով կացութենէն, անձնական բարօրութեան մասին կը մտածէին միայն: Շտիբմեր, Գորեմիկին եւ Պրոտոպոպով՝ Ռասայու տինի թեկնածուներն էին, որ անկման հասցուցին մեծ Ռուսաստանը:

Իշխան Անդրոնիկովը, Մանուիլսկին, զոկտօր Բագմաւելը եւ նման մութ անձնաւորութիւններ Ռասայու տինի միջոցով եւ զբաժական կաշառքներով, նախարարներու եւ ցարի մօտ անձնական խնդիրներ կը կարգադրէին: Այդ մասին գիտէր ամբողջ Ռու-սաստանը:

Միւս կողմէն՝ Ռասայու տինը քէֆեր կը սարքէր կիրքերով եւ վաւաշոտութեամբ լեցուն: Իր նկարնե-րը, մերկ կիներու հետ միասին, որոնք բարձր հասա-րակութեան կը պատկանէին, ձեռք ձեռք կ'անցնէին Ռուսաստանի մէջ: Ան կը հաւատացնէր կիներուն, որ ինք սուրբ է եւ իրեն անձնատուր ըլլալով միայն կին մը կարող է ապատուել իր մեղքերէն:

Ոստիկանութեան նախարարը ցարի ուշադրու-թիւնը հրաւիրեց այս խնդրի վրայ՝ ցոյց տալով, որ

ԵՐԵՐՈՂ ԳԱՀԻՆ ՄՕՏ

Մեքենան Ռուսաստանն էր, խելացնոր վարիչը ցարը և իր նախարարները, իսկ հմուտ վարիչը՝ ապատակը ռուս մտաւորականութիւնը:

Ես վերադարձայ Թիֆլիս՝ ծանր մտահոգութիւններով: Այլևս կոպկասին յատուկ հոգսերը չէին, որ կը զբաղեցնէին զիս: Վտանգի տակ էր ամբողջ Ռուսաստանը իր միլիոնաւոր բանակով և հսկայական հարստութիւններով: Ռուսաստանի պարտուկան հարստութիւններով: Ռուսաստանի պարտութիւնը վատ պիտի անդրադառնար Դաշնակիցներու վրայ, որոնց հետ մենք՝ հայերս՝ կապած էինք մեր քաղաքական բախտը: Պարտուած Թուրքիան միայն պիտի գիջէր հայկական հարցին մէջ:

Ռուս բանակի յաղթութիւնը և պահպանումը մեր ծրագիրներու մասը կը կազմէր: Մեր յեղափոխական կազմակերպութիւնները զգոյշ էին յարձակումներու մէջ իշխանութեան հասցէին: Բոլորն ալ կը սպասէին և կը հետեւէին ճակատի գէպերուն: Կոպկասը ժամանակաւորապէս մէկ կողմ նետած էր ներքին վեճերը: Բայց միևնույն ատեն մէկ կը զգացուէին մօտեցող փոթորիկին առաջին որոտները:

Շուտով կոպկասի մէջ ալ, ինչպէս ամբողջ Ռուսաստանի, սկսեց զգացուել պետական մեքենայի թուլութիւնն ու քայքայումը:

Ապրանքներու, գլխաւորապէս ալիւրի, շաքարի և փայտի պակասը ստեղծած էր ջղային միջոցառումներ: Գլխաւոր պատճառը, ի հարկէ, երկաթուղային երթևեկութեան անկանոնութիւնն էր: Գնացքները կը հասնէին մեծ ուշացումներով: Խանութներու առջև պոչերը գնալով կը շատնային: Ապրանքները կը չբանային շուկայէն: Մարդիկ կը պահէին իրենց ապրանքները՝ աւելի սուղ վաճառելու շահամոլութեամբ. ահա թէ ինչու գիները անասելիօրէն կը բարձրանային:

Ճակատին վրայ կը կոուէին գինուորները՝ միշտ մահուան սպառնալիքին տակ. իսկ այստեղ՝ իրենց ընտանիքները ենթարկուած էին սովի:

Փողովուրդը միշտ կ'աշխատէր մեղաւորներ փնտնել իր շուրջ, իրեն մօտիկ, առանց թափանցելու պատճառներու խորքը: Սպառնական կերպով կը խօսէին արդէն ռատիկանութեան և նահանգապետի հասցէին: Ուրախ եմ յիշատակելու հոս, որ ոչ մէկ պանկատ կամ բողոք եղաւ քաղաքային վարչութեան և մասնաւորապէս իմ հասցէին: Բոլորն ալ կը գիտակցէին, որ անպատասխանատու կերպով երկիրը

կառավարելու եղանակը յդի է ամէն տեսակի  
դժբախտութիւններով՝ ժողովուրդին համար:

Միւս կողմէն՝ պատերազմը կը շարունակուէր:  
Ոչ ոք կը սպասէր, որ պատերազմը այնքան երկար  
տևէր: Պէտք է ըսել, որ կովկասեան ճակատի կացու-  
թիւնն այ միութարական չէր: Ճիշդ է, ամբողջ Թրքա-  
հայաստանը գրաւուած էր ուսրանակի կողմէ, բայց  
Թրքահայութիւնը քանի մը անգամ գաղթած էր կով-  
կաս եւ յետ դարձած երկիր՝ ուսրանակի շարժում-  
ներուն համեմատ:

Այս հանգամանքը կը ջղայնացնէր հայ ժողո-  
վուրդը, որ առանց քաշուելու կը մեղադրէր ուս-  
ները հայաջինջ քաղաքականութեան մէջ, որ իբր թէ  
ուսրանակին յառաջիկա կացումներն ու նահանջ-  
ները արդիւնք էին նախորդուած ծրագրի՝ ոչնչացնել  
եւ թուլացնել հայ տարրը, իր հայրենիքին մէջ:

Այդ մեղադրանքները սակայն ճիշդ չէին:  
Հսկայական ճակատը կը պահանջէր զօրքի ազատ  
շարժումներ եւ բանակի թեւերու միջեւ կապը պահ-  
լու անհրաժեշտութիւնը յաճախ պատճառ կը դառ-  
նար նահանջներու: Փաղթականական հոսանքը  
կ'արգիլէր ուսրանակի ազատ շարժումները: Մայր  
կու տային հակահայկական տրամադրութիւններ:  
Հայերու մէջ այ գնալով ու ժեղացաւ անբաւարարու-  
թիւնը ուսր քաղաքականութենէն, Տաճկահայաս-  
տանի եւ կովկասի մէջ:

Այսպէս էին տրամադրութիւնները, երբ 1916  
նոյեմբերին, եւ հրաւիր ստացայ Մոսկուայէն՝ մաս-  
նակցելու քաղաքներու ընդհանուր համագումարին:

Քաղաքական կացութիւնը շատ ծանր էր եւ կարելի որ:  
Ես մեկնեցի Մոսկուա:

Արդէն իսկ 1916ի վերջերը, Ռուսաստանի քա-  
ղաքական երկիրները պատած էր շարագուշակ ամպե-  
րով: Ըսկատի անյաջողութիւնները, ներքին խլր-  
տումները, Պետական Դումայի սպառնալի տրա-  
մազրութիւնները, մթնոլորտը էյեկտրականացու-  
ցած էին: Ամէն կողմէ կը լսուէին բողոքներ եւ պա-  
հանջ՝ պատասխանատու նախարարութիւն կազմե-  
լու: Կը խօսուէին Ռուսպուտինի ազգեցութեան մասին  
Թագաւորի վրայ:

1916 Դեկտեմբերի սկիզբները, պիտի բացուէր  
քաղաքներու եւ գաւառական գործիչներու համա-  
գումարը: Ռուսաստանի բոլոր անկիւններէն Մոս-  
կուա կը հաւաքուէին ներկայացուցիչներ: Համա-  
գումարը պիտի ըլլար բազմամարդ: Իշխան Լվովը  
նշանակուած էր վարելու ժողովը: Ան կեկրոնական  
անձնաւորութիւն մը դարձած էր, որու շուրջ կը հա-  
մախմբուէին պատգամաւորները:

Պարզ էր, որ համագումարը պէտք է պահանջէր  
պատասխանատու նախարարութիւն եւ պիտի բա-  
նար տիրող ռեժիմին ցաւոտ բոլոր կողմերը:

Նախապահական գանկը հնչեց եւ պատգամա-  
ւորները գրաւեցին իրենց տեղերը: Բայց նոյն վայր-  
կեանին սրահ խուժեցին ուստիկանները, Մոսկուայի  
ուստիկանապետի գլխաւորութեամբ, որ եւ յայտարա-  
րեց.

«Ներքին գործերու նախարարի հրահանգով  
կ'արգիլուի համագումարի բացումը: Ուստի, կը



խնդրեմ պարոն նախագահէն ազատ արձակել ժողովը»:

Բոլորը ոտքի ելան: Լսուեցան բողոքի ձայներ: Նախագահը փակեց ժողովը: Բայց նոյն օրը, իր բնակարանը հրաւիրեց հինգ պատգամաւորներ, Մոսկուայէն եւ Պետերպուրգէն, ի թիւս որոնց եւ զիս, կարեւոր խորհրդակցութեան մը համար:

Երեկոյեան ժամը 9ին, ես արդէն իշխանին բնակարանը կը գտնուէի: Շուտով եկան եւ միւս հրաւիրեալները:

Իշխանը գողգոթուն ձայնով բացաւ ժողովը: Ան պատմեց մեզ այն բոլոր փաստերը ինչ որ ունէր իր ձեռքին տակ՝ ճակատի, թիկունքի եւ իշխանութեան վերաբերեալ: Ըսաւ, որ կացութիւնը ծանր է, որ երկիրը զկպի անդունդ կը գահավիժէ, որ ի նկատի ունենալով բոլոր քաղաքազուխներու եւ գաւառական վարչութիւններու նախագահներու գրաւոր զեկուցումներն ու կարծիքները, իր վրայ կը վերցնէ գործելու պատասխանատուութիւնը: Ըսաւ, որ լաւ տեղեակ էր գործի տրամադրութեան, աւելցնելով որ ամբողջ բանակը ղէմ է այս ոեմիմին եւ պատրաստ գործելու:

«Յարը անկամ է եւ անպէտք – Երաւեացուց Լվովը: – Պէտք է գործել այնպէս, որ պատերազմի այս ծանր օրերուն չտուժէ հայրենիքը: Միակ մարդը, որ կրնայ փոխարինել ցարը՝ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեիչն է, կովկասի Փոխարքան, որմէ պէտք է խնդրենք իր ձեռքն առնել իշխանութիւնը եւ փրկել երկիրը այս ծանր կացութենէն»:

Պարզուեցաւ, որ մեծ իշխաններէն շատերը ըզ-

գուշացուցած էին ցարը երկրի բառային վիճակի մասին եւ մատնանշած կովկասի Փոխարքան, որպէս կարող մէկը փրկելու կացութիւնը:

Իշխան Լվովը աւելցուց, որ իր ծրագիրը կը բաժնեն երկրի բոլոր խաւերը եւ որ ժամանակը հասել է գործելու:

Ներկայ եղողներս հաւանութիւն տուինք ծրագրին: Պէտք էր սակայն, այս մասին յայտնել իրեն՝ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեիչին: Ժողովականները, մտածելէ ետք, որոշեցին այդ նուրբ գործը յանձնել ինձ: Ես ընդունեցի առաջարկը:

Ամբողջ 10 տարի լինելով Թիֆլիսի քաղաքազուլուի եւ շարունակաբար տեսակցութիւններ ունենալով Փոխարքայի հետ, ես կարողացած էի կոմս Վրոնցով–Դաշկովի կատարեալ վստահութիւնը վայելել, խօսելով անոր հետ միանգամայն անկեղծօրէն քաղաքականութեան տեսակի խնդիրներու մասին: Թողելով կովկասը, կոմսը ինձ ըսաւ, որ ճանապարհին պիտի հանդիպի Նիկոլայ Նիկոլայեիչին եւ պիտի խնդրէ անկէ, որ մեծ իշխանն ալ իր հերթին վստահութիւն ունենայ ինձ հանդէպ: Իր այդ որոշումը կոմսը, կատարեց: Նիկոլայ Նիկոլայեիչը, երբ առաջին անգամ ընդունեց զիս իր մօտ, ըսաւ, որ կոմսը խօսած է իրեն իմ մասին: Խնդրեց, որ իր հետ ըլլամ անկեղծ եւ խոստացաւ, որ ինքն ալ նոյնպէս պիտի վստահի ինձ: Հետագային ես համոզուեցայ, որ Նիկոլայ Նիկոլայեիչը անկեղծ էր իր խոստումներուն մէջ:

Ես պայմանաւորուեցի իշխան Լվովի հետ, թէ ինչ

միջոցով պէտք է յայտնեմ իրեն մեծ իշխանի պատասխանը և մեկնեցի Պետերպոլից:

Համապատասխան գրուած մեծ ազդեցութիւն էր գործած մայրաքաղաքի մէջ: Ես տեսակցեցի Պետական Դումայի քանի մը անդամներու հետ և համոզուեցի, որ Ռուսաստանը կը գտնուի կարեւոր գեղարու նախօրեակին:

Երբ Պետերպոլից էի, սպաննուեցաւ Ռասպուտինը: Ժողովուրդի տրամադրութիւնները բարձրացան: Ամէնքը կը հաստատային, թէ փոփոխութիւններ տեղի կ'ունենան: Սակայն, ամէնքն ալ համակուած էին նոյն մտավախութիւններով:

Դումայի ձախակողմեան անդամներէն մէկը այսպէս կը գանգատէր ինծի.

— Կը հասկնա՞ք արդեօք ո՞ւս մարդու հոգեբանութիւնը, որ կը սիրէ իր հայրենիքը: Պատերազմական ազատի այս օրերուն, պէտք է որ թիկունքը խաղաղ ըլլայ: յեղափոխական որեւէ շարժում, պիտի թուլացնէ ճակատի ուժը: Այս պայմաններու մէջ, յաւազոյն կ'ըլլար պայատական յեղաշրջում մը առաջ բերել:

Ձգացի, որ Մոսկուայի մեր տունը որոշումը իրականացի էր:

Կար ուրիշ տեսակէտ մը ևս: Յեղափոխական շարք մը կազմակերպութիւններ կը կարծէին, որ ցարական Ռուսիան զեռ ու մեղ է՝ ճնշելու համար իրենց բնագոյնութիւնը և որ զեռ ժամանակը չէ ուժերը շափելու: Ամէնուրեք կ'արտասանուէին կրակոտ ճառեր, բայց կազմակերպուած շարժումներ չկային: Կարծես թէ յեղափոխութեան հիմերը կը դրուէին

առանց զեկամար ձեռքերու: Միջոցորտը գնալով ա՛յ աւելի կը թանձրանար:

\* \* \*

Դեկտեմբերի վերջերը ևս արդէն ՔիՖլիս կը գտնուէի:

Յունուար 1ին, ըստ սովորութեան, տօնական զգեստներով և քաղաքապետի շղթան վզիս՝ գնացի պալատ, Փոխարքայի Նոր Տարին շնորհաւորելու համար:

Պալատի Սպիտակ սրահին մէջ հասարակած էին երկրի բարձր իշխանութիւնը, գինուորականները, ազնուականութիւնը և պաշտօնէութիւնը: Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը գինուորական տարազով ներս մտաւ սրահ և բարձր ձայնով շնորհաւորեց Նոր Տարին: Յետոյ, մօտեցաւ իւրաքանչիւրին առանձինն: Բոլոր ներկաներս հրաւիրուեցանք սեղանին: Երբ հիւրասիրութիւնը վերջացաւ, հիւրերը սկսան մեկնել պալատէն:

Տեսնելով, որ մեծ իշխանը կ'ուզէ թողուլ սրահը, և մօտեցայ իրեն և խնդրեցի տեսակցութիւն մը նշանակել ինձ՝ կարեւոր խնդրի մը համար: Ան համաձայնեցաւ ընդունիլ զիս անմիջապէս: Բայց որպէսզի կազմածներ չըլլային, դուրս էլայ թիկնապահներու սենեակը և խնդրեցի աւագ թիկնապահին յայտնել մեծ իշխանին, որ կը ցանկամ տեսակցիլ իրեն հետ: Ձիւ ընդունեցին անմիջապէս Նիկոլայ Նիկոլայեւիչի գրասենեակը, ուր մեծ իշխանը նստած էր մինակ: Նստելով իր զէմ, ևս ուղղեցի իրեն հետեւեալ խօսքերը:

– Զերդ Մեծութիւն, այն, որ պիտի ըսեմ Զեզ, իրաւունք չունիմ ըսելու, բայց միշտ կը յիշեմ Զեր թոյլատուութիւնը՝ ազատ եւ անկեղծ խօսելու Զեզ Հետ եւ կ'ուզեմ այսօր, լայնօրէն օգտուիլ Զեր ինձ տուած իրաւունքին:

– Ես նորէն կը կրկնեմ իմ վստահութիւնը դէպի Զեզ եւ կը խնդրեմ խօսիլ միանգամայն ազատ – ըսաւ մեծ իշխանը:

– Զերդ Մեծութիւն, ես կու գամ Մոսկուայէն եւ Պետերպուրգէն: Այս երկու մայրաքաղաքները ամենաճշգրիտ կերպով կը պատկերացնեն երկրի յեղափոխական տրամադրութիւնները: Կացութիւնը վրճոսական է: Երկիրը դէպի անդունդ կը գլորի: Քաղաքային եւ պատական գործիչներու կարծիքն այն է, որ պէտք է գահընկէց ընել Նիկոլայ Բ-ը եւ, որպէսզի այդ գործողութիւնը կատարուի առանց մեծ պատահարներու եւ սարսափներու, Զերդ Մեծութեան բարձր չեղինակութիւնն է միայն, որ պիտի կարողանայ այդ ընել՝ կանգնելով շարժումին գլուխը եւ փոխարինելով գահընկէց ցարը: Զեր որոշումը գաղտնօրէն պիտի հաղորդեմ Մոսկուա իշխան Լվովին, որպէսզի այնտեղ հարկ եղած պատրաստութիւնները տեսնեն: Ես ինձ վրայ առի այս նուրբ առաքելութիւնը՝ յոյս ունենալով, որ Զերդ Մեծութիւնը, ի նկատի առնելով երկրի ծանր վիճակը, միանգամայն կը հասկնայ զիս:

Մեծ իշխանը ամենայն ուշադրութեամբ լսեց ինձ մինչեւ վերջ, ապա հանդարտօրէն ըսաւ, թէ այն ամէնը՝ ինչ որ պատմեցի իրեն՝ չափազանց լո՛ւրջ է եւ ինքն ալ անպատրաստ է որեւէ պատասխան տալու:

Ան խնդրեց երեք օր ժամանակ՝ խնդիրը ուսումնասիրելու համար:

Յետոյ, մեծ իշխանը ամենայն մանրամասնութեամբ հարց ու փորձ ըրաւ Մոսկուայի եւ Պետերբուրգի կացութեան: Ուզեց իմանալ, թէ ի՞նչ ազդեցութիւններ է իր տեղեկութիւնները քաղել իշխան Լվովը՝ զօրքերու տրամադրութիւններու մասին: Հետաքրքրուեցաւ Մոսկուայի համազումարի անցուզարձերով:

Մեր տեսակցութիւնը տւեց ժամէն աւելի:

Մնաս բարեւ ըսի մեծ իշխանին եւ մեկնեցի պալատէն: Իմ այդ տեսակցութեան մասին ես ոչ ոքի պատմեցի:

Երեք օր ետք, ես հրաւիր ստացայ ներկայանալու պալատ: Նոյն առանձնասենեակին մէջ, բայց այս անգամ իր օգնական զօր. Եսանուչկեիշի ներկայութեամբ, մեծ իշխանը ընդունեց զիս:

Սովորական բարեւներէն ետք, Նիկոլայ Նիկոլայեւիչը ըսաւ.

– Զեզ կանչել եմ յայտնելու իմ որոշումը եւ կը խնդրեմ այդ մասին յայտնել իշխան Լվովին: Ծանշնալով ոուս մուսիկը եւ ոուս գինուորը, գիտնալով որ ոուս ժողովուրդը հաւատարիմ է իր ցարին, որ ան չի հաքկնար քաղաքական բարդ ձեւակերպումները, որ ան պիտի չհետեւի եւ ճանչնայ այն մարդը, որ ձեռք բարձրացուցած է իր ցարին դէմ, ես կը մերժեմ ձեր կողմէ ինձ ըրած առաջարկը՝ կանգնելու այդ շարժման գլուխը: Գիտեմ, որ զօրքը իր ամբողջութեամբ պիտի չհետեւի ձեր ծրագիրներուն եւ Ռուսաստանի այս ծանր օրերուն պէտք չէ որ նոր

խորտու մենք ու կոխներ ծագին: Իմ օգնական՝ գործանուչկեւիչը, որ միշտ իմ սպայակոյտին պետն եղած է, գիտէ որ ուս գինու որը պիտի չկուուի ցարին ղէմ: Թող այս մասին ինք՝ գորավարը խօսի:

— Ես արդէն ըսի Ձերդ Մեծութեան, — ըսաւ Եանուչկեւիչը — որ ցարին ղէմ կատարուած դաւադրու—  
թեան մէջ գորջը պիտի չմասնակցի:

Մեր խօսակցութիւնը վերջացաւ: Դուրս գալով պալատէն, իշխան Լվովին՝ Մոսկուա՝ ուղարկեցի պայմանական հետեւեալ հեռագիրը.

«Հիւանդանոցը պէտք չէ բացուի»:

Անցան քանի մը շաբաթներ: Փետրուարի կէսերուն, պալատական պաշտօնեաներէն մէկը ուղեց տեսակցիլ ինձ հետ գաղտնօրէն: Ես ընդունեցի զինք իմ առանձնասենեակին մէջ:

Պաշտօնեան ըսաւ, որ ինք մեծ իշխանի թելադրանքով է, որ կը խօսի ինձ հետ:

— Ոստիկանական բաժանմունքը, — յայտնեց ան—  
իմացած է Ձեր՝ Փոխարքային առաջարկած ծրագիր—  
ներու մասին: Տեղեկութիւն կայ, որ Փոխարքան պի—  
տի նշանակուի նոյն պաշտօնով Սիրիբ, ղէպի հեռա—  
ւոր Արեւելք, սակայն իրեն պիտի առաջարկուի վերցնել Ձեզ իրեն հետ:

Ես շնորհակալութիւն յայտնեցի պաշտօնեային:

Տասը օր ետք, տեղի ունեցաւ Փետրուարեան Յեղափոխութիւնը եւ պատմութեան հակայական անի—  
ւը դարձաւ հակառակ ուղղութեամբ:

Վերջացնելով իմ յուշերս այս մասին, կ'ուզեմ քանի մը խօսք ըսել մեծ իշխան Անդրէյ Վլադիմիրովիչի օրագրի մասին, ուր կը հագորդէ նիկոլայ նիկո—

լայեւիչի՝ ցարի հետ ունեցած խօսակցութիւններու մասին, 1916ին, Ստաւկայի մէջ.

«Չե՛ս տեսներ արդեօք, — կ'ըսէր նիկոլայ նիկո—  
լայեւիչը ցարին — որ կը կորսնցնես գահդ: Ուշիք եկ, քանի ուշ չէ: Տուր երկրին պատասխանատու կա—  
ռավարութիւն: Դեռ Յունիսէն սկսեալ ըսել եմ քեզ այդ մասին: Կը վախճամ, որ յետոյ ուշ լինի»:

\*\*\*

1917ի սկիզբները, իշխանութեան հեղինակու—  
թիւնը բոլորովին խախտած էր արդէն: Արագօրէն կը փոփոխուէին նախարարները ու թէեւ Ռասպուտինը չկար այլեւս, իր հետեւորդները կը լրացնէին երկրի քայքայման գործը:

Քանի մը շաբաթ միայն մեզ կը բաժնէր յեղափո—  
խութենէն: Ռասպուտինի անձը իր շարարաստիկ կը—  
նիքն էր դրած ցարական Ռուսաստանի վերջին տա—  
րիներու պատմութեան վրայ: Ահա թէ ի՞նչ կը գրէ այդ մասին յայտնի իրաւարան Պրեւերգեւ, որ 1917ին, յեղափոխութենէն ետք, դարձաւ արդարա—  
դատութեան նախարար:

«Ռուս մարդիկ տարբեր գնահատումներ ու—  
նին Ռասպուտինի՝ իշխանութեան գործերուն մի—  
ջամտելու խնդրին մասին: Սակայն, ղէպի ան ու—  
նեցած ատելութեան մէջ բոլորն ալ հաւասար են: Բազմաթիւ յուշերու մէջ, որոնք մախայեղափո—  
խական շրջանը կ'ընդգրկեն, գիտակցաբար թէ անգիտակցաբար այն տեսակետերը կը յայտնուին, որ ռուս ճախակողմեան տարբերը ուրախ էին ցա—

րի եւ Ռասպուտինի բարեկամութեան համար, որովհետեւ այդ բարեկամութիւնն իսկ առիթ մըն էր պայքարելու ցարին դէմ: Սակայն, այդ այդպէս չէր: Ձախակոզմեան Ռուսիան աջակոզմեաններու հետ մէկտեղ կը բաժնէր այն վայրը, որ ռասպուտինեան քաղաքականութիւնը մահուան ճիրաններու մէջ կը խեղդէ Ռուսիան, իր պատմական ամէնէն ծանր օրերուն: Ռասպուտինի անձին վրայ կը խաչածեուէին արհամարհանքի բոլոր արտայայտութիւնները՝ երկրի բազմազան կոզմերէն ուղղուած: Ձայն կ'ատէին ոչ միայն քաղաւորի ազգակիցները, բարձր պաշտօնէութիւնը, պալատականները եւ զինուորականները, ոչ միայն Դումայի աջ եւ ձախ հոսանքները, այլեւ անկուսակցականները, ամբողջ ժողովուրդը: Յուզուած էր ժողովուրդի հսկայական ծովը, որու խորքերուն մէջ լսելի էին արդէն մեծ փոքորիկին որոտները»:

**Չարագործ էր արդեօք Ռասպուտինը: Բայց այս հարցին պատասխանելու համար վերջիչենք քանի մը կարեւոր փաստեր:**

Գիտենք, որ գահի մօտէն Ռասպուտինը հեռացնելու համար բազմաթիւ փորձեր կատարուեցան՝ ազգելու ցարի վրայ: Իր մեծ ազգակիցները խորհուրդ տուին իրեն բաժնուելու Ռասպուտինէն, յայտնելով որ այդ է թագաւորական ամբողջ ընտանիքի պահանջն ու ցանկութիւնը: Պետական բարձր պաշտօնեաները ցարի ուշադրութիւնը հրաւիրեցին Ռասպուտինի անբարոյական կենցաղի վրայ՝ շեշտելով որ ձեռուկը զինարրու նքներու մէջ անպատկառ կերպով կը

խօսի թագուհու մասին, եւ որ ցարի բարեկամութիւնը այդ մարդու հետ վարկարեկիչ է եւ կորստաբեր իրեն՝ ցարին համար: Ոստիկանութեան նախարար գօր. Չունկովսկին մանրամասն կերպով ծանօթացուց ցարը Ռասպուտինի կեանքին՝ ցոյց տալով բազմաթիւ վարկարեկիչ նկարներ: Բայց այդ բոլոր փորձերը ապարդիւն անցան եւ ցարի բարկութիւնը սաստկացաւ: Կինք պտուղացնողներու դէմ:

Ռասպուտինի անձով պալատին մէջ մուտք կը գործէր յեղափոխութիւնը, որ անժամանակ էր եւ անցանկալի: Սակայն, միտքերը դեռ հեռու էին բուշուից մէջ եւ ոչ ոք կը կարծէր, թէ Ռուսիան մեծ փլուզումներու նախօրեակը կ'ապրի: Յեղափոխութեան առաջին կարապետն եղաւ Ռասպուտինը, որ պալատի յետին դռներէն ներս սողոսկեց եւ սեւ ճակատազրին պէս կանգնեց գահին քով: Դարաւոր միակետութիւնը, որ ուներ կառավարելու որոշ ձեւեր եւ սկզբունքներ, որ զիտէր յարգել ու լսել շրջապատը, փշրեց դարաւոր սովորութիւնները եւ բոնեց յեղափոխութեան ճամբան՝ կտրելով իր կապերը գահի բարեկամներուն հետ: Միապետը դարձաւ ինքնիշխան. իր որոշումները կը պատրաստուէին գաղտնօրէն ու կը յայտարարուէին ի վարձանս եւ ի յուսախարութիւն անոնց, որոնք կը կարծէին, թէ միակետութիւնը Ռուսիոյ պետութեան հիմքերէն ամէնէն կարեւորն ու անհրաժեշտն է: Իշխանութիւնը դուրս գալով իր բնականոն սահմաններէն, վախ կը ներշնչէր ճշմարիտ բոլոր հայրենասէրներուն, որոնք գիտէին, թէ քաղաքականութեան այդ ուղին զկախ անդունդ կը տանէ ոչ միայն զիրենք, այլեւ պետութիւնն ու հայրենիքը:

Այս տրամադրութիւններէն էր ա՛հա, որ ծագեցաւ Ռասայու տինը սպաննելու զազափարը: «Յարին ծառայել ոչ միայն վախով, այլեւ խիղճով» նշանաբանը հինցած էր արդէն: Պէտք էր պարզապէս անհնազանդ քայլ մը ընել: պէտք էր սահմանափակել միակետին կամքը՝ չարիքին առաջը առնելու համար: Այս միտքը սեփականութիւնը դարձաւ զահի ամենէն հաւատարիմ մարդկանց: անոր մասին սկսան խօսիլ ազատ, թագաւորի շրջապատին պաշտօնական գրութիւններու եւ նախարարական ատանձնասենեակներու մէջ: Ասիկա զաւազրութիւն մը չէր խուժը մը ըմբոստներու կողմէ, այլ ընդհանուր էլոյթ մը, որ դիտակցօրէն կը տանէր մարդիկը դէպի օրինական եւ բարոյական պատենէներու ոչնչացում: Եւ ինչպիսի՛ մարդիկ էին քով քովի եկած՝ ձերու կին սպաննելու համար: Շատերը կը պատկանէին ցարի շրջապատին: Մէկը՝ իշխան Իւսուպովը, գեղեցկատես եւ երիտասարդ միլիոնատէր, ցարի մօտ ազգակիցն էր. միւսը՝ մեծ իշխան Դիմիդրիյ Պալուփիչն էր: Երկուքն ալ այս վայրկեանիս կը բնակին Փարիզի մէջ:

Ռասայու տինի արիւնը առաջ բերաւ մեծ խանդավառութիւն ամբողջ Ռուսաստանի մէջ: Սակայն, այդ սպանութեամբ Ռուսիան չփրկուեցաւ: Կար ուրիշ աշխարհ մը, մութին մէջ գայարուող եւ գեո գօրաւոր, որ իր բիրտ ձեռքերուն մէջ կը պահէր երկրին բախտը: Այդ մութ աշխարհին ուժ ու հաւատ ներշնչողն ինք՝ թագուհին էր:

Կասկածը դուրս է, որ Նիկոլայ Բ-ը զէպի կործանարար քաղաքականութիւն հողը թագուհին էր, որ Ռասայու տինի ազդեցութիւններէն զրոյսած՝ հոգե-

կան նուպաներու եւ երազանքներու մէջ՝ կը կարծէր, թէ աստուածային սկզբունքը պիտի յաղթէ զահի թշնամիներուն եւ ինք յաղթական դուրս պիտի գայ այդ պայքարէն, շնորհիւ երկնային անխախտ կամքի: Ենչազարութեան սեմին վրայ գտնուող թագուհին իր հերթին կ'ազդէր եւ՝ ձերու կին վրայ:

Ռասայու տինը կը սիրէր երկրային կեանքն ու բարօրութիւնը եւ յենկող թագուհու վրայ՝ կ'երազէր ստեղծել իրեն համար անձնական երջանկութիւն: Ան շարունակաբար կը գտնուէր բազմաթիւ գայթակղութիւններու ազդեցութիւններու ներքոյ:

Ռասայու տինը սպաննուեցաւ իշխան Իւսուպովի պալատին մէջ: Խորամանկութեամբ ձերու կը պալատ բերին ու թունաւորեցին խճորեղէններով, բայց թոյնը չազդեց: Իւսուպովը վերջացուց ձերու կին կեանքը ատրճանակով: Օթոմորիլով դիակը տեղափոխեցին քաղաքէն դուրս եւ սառույցը կտրելով նետեցին գետի մէջ:

Յարուհին երկար ողբաց իր մտերիմին կորուստը, թաղեց դիակը պալատին մօտ: Յարը, գոնէ արտաքնապէս, պահեց իր սառնարիւնութիւնը: Գուցէ իր հոգու խորքին մէջ ան ուրախ էր, որ վերջապէս ազատեցաւ շարաքատիկ ձերու կէն, որ իր ընտանիքէն հեռացաւ խորհրդատու մը, որ այնքան ազդեցութիւն ձեռք բերած էր իր եւ թագուհու վրայ: Չենք դիտեր. գիտենք միայն, որ Նիկոլայ Բ-ը չհրժարեցաւ զէպի անդունդը տանող քաղաքականութենէն:

Թող այս մասին ընթերցողը ծանօթանայ ոստիկանական բաժանմունքի կարծիքին հետ: Այդ բա-

ժանտուները, իր գեկոյցներէն մէկուն մէջ կը գրէր Հե-տեւեալը:

«Պատերազմը կը շարունակուի: Հայրենասի-րական ոգին գնալով կը թուլանայ: Նոր տուրքերը կը գայրացնեն ժողովուրդը: Երկաթուղային ան-կանոն հազորդակցութիւնը առաջ կը բերէ տնտե-սական ծանր տագնապ քաղաքներու մէջ, ուր կը պակսին սնունդի անհրաժեշտ պիտոյքները: Ան-վըստահութիւնը դէպի թագաւորական ընտանիքը գնալով կը սաստկանայ: Հանրային կարծիքը լուրջ մտավախութիւն մը կ'ապրի, որ գահի բարձուն-էէն Ռուսաստանը դէպի անդունդ կը գլորի: Բոլո-րը կը պահանջեն պատասխանատու նախարարու-թիւն, բացի Դումայի քանի մը անդամներէն, ո-րոնք նպաստ կը ստանային ցարական կառավա-րութենէն: Ցարը կը մնայ անյոզոզոզ եւ լուռ: Տասնեակներով կը հեռացնէ անհնազանդ նախա-րարները՝ նշանակելով նորերը, որոնք Ռուսալու-տիան կողմնակիցներն էին:

«Եթէ ցարն ու ցարուհին չեն հասկնար, որ իրենց շուրջ կը փակուի նակատագրական շրջա-գիծը, որ իրենք դատապարտուած են մահուան եւ իրենց հետ դատապարտուած է նաեւ ողջ Ռուսաս-տանը, ռուս հանրային կարծիքը աչէն եւ ձախէն կը գտնէ փրկութիւնը ցարի կամքը խորտակելուն մէջ: Յեղափոխական ճամբան կը մնայ շիտակ եւ իսկական միակ ճամբան՝ Ռուսիան վտանգէն փրկելու համար: Այս է ընդհանուրին կարծիքը: Սակայն, ի՞նչ դժուար է այդ ճամբան պատերազմի արհաւիրքի օրերուն, երբ փոքրիկ սայթափում մը

կարող է նակատագրական նշանակութիւն ունե-նալ»:

Եթէ ուստիկանական իշխանութիւնը կը յանդի-այն միտքին, որ Ռուսաստանի փրկութիւնը յեղափո-խութեան մէջ է, ի՞նչ ըսել հապա քայքայուած ժողո-վուրդի մասին, ի՞նչ ըսել յողնած գինուորներու մա-սին, ի՞նչ ըսել մտաւորականութեան մասին, որ ջեր-մօրէն կը սիրէր իր հայրենիքը: Ու պատերազմի ուր-ւականն էր միայն, որ կը կաշկանդէր շատերու ձեռ-քերը: Բայց կարծես թէ ուշ էր արդէն: Ժողովրդական տարերքը կը շարժէր: Յեղափոխութիւնը կը մօտենար իշխանութեան դուռներուն: Ան կը սպասէր առաջին հարուածին:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՑԵՂԱՓՈՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ  
ԱՆՈՐ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԸ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

Ինչպէս ընթերցողը տեսաւ նախորդ գլուխներէն, Ռուսաստանի ծանր կացութիւնը, անյաջողութիւնները ուղղակիապէս վրայ, հացի եւ ուրիշ մթերքներու պակասը տեսնուած է, մտաւորականներու ընդդիմադիր դիրքը կառավարութեան հանդէպ եւ Պետական Դումայի սանձարձակ մեղադրանքները իշխանութեան՝ առաջ բերին 1917 թուի Փետրուարեան Յեղափոխութիւնը:

Այդ օրերուն, եւ թիֆլիսի, իմ պաշտօնիս վրայ: Որպէսզէն թիֆլիսի եւ Կովկասի մէջ տեղի ունեցող ղեկավարը կապեմ ընդհանուր երկրի ղեկավարուն հետ, թոյլ պիտի տամ ինձ, քանի մը խօսքով նկարագրել անցուցարձը, որ տեղի ունեցաւ Փետրուարեան Յեղափոխութեան օրերուն:

Չէր լընէ, որ փետրուարեան շարժումները սկսան յանկարծակի կերպով: Եթէ յեղափոխութիւնը հասկնանք որպէս կազմակերպուած եւ նախօրոք պատրաստուած գործ մը, կը տեսնենք, որ փետրուարեան շարժումները յեղափոխութիւն մը չէին բառիս լայն իմաստով, որովհետեւ այդ շարժումները տեղի ունեցան յանկարծակի կերպով, առանց նախորոշուած ծրագրի եւ կազմակերպութեան: Հրապարակի վրայ չկար գիտնուորական կազմակերպութիւն մը կամ յեղափոխական կուսակցութիւն մը, որ ցան-

կանար իշխանութեան գլուխն անցնել. կար միայն զայրացած ամբիւր, որ կը բնակէր մայրաքաղաքին մէջ եւ կը տեսնէր իշխանութեան բոլոր թերութիւնները:

Կարելի է ըսել, որ ժողովուրդի համբերութեան բաժակը լցուած էր արդէն եւ կաթիլներ էին միայն պէտք, որ բաժակը յորդէր:

Փետրուար 27ին, երբ ուս կիները խանութներէն հաց կ'ուզէին գնել եւ հաց չգտան, բաժակը յորդեցաւ: «Մեր երեխաները քաղցած են» պոռալով՝ կիները թափեցան փողոց: Անցորդները կը միանային աղմկարարներուն: Ամբոխը կը մեծնար, կը շատնար: Ոչ ոք կ'արգիլէր անոնց երթը եւ մարդկային գանգուածը ահաւոր շարժերու հասաւ:

Այդ օրերու մասին գրուած են շատ գիրքեր: Բոլոր գրողները, բոլոր ականատեսները միաբերան կը հաստատեն, որ եթէ ոստիկանութիւնը գլուխը չկորցրնէր եւ գործօն միջամտութիւն ցոյց տար խոտովաբարներու երթը կասեցնելու համար՝ Ռուսաստանի մէջ յեղափոխութիւն պիտի չծագէր: Ոստիկանութեան անգործութիւնը առիթ տուաւ, որ գիւնուորները եւ մինչեւ իսկ կողակները միանան ամբոխին եւ, երեկոյեան, արդէն իսկ պարզ էր, որ մայրաքաղաքի փողոցներու տէրը դարձած էր ամբոխը: Որոշ տեղեր ոստիկանները փորձեր էին առաջն առնել ամբոխին, բայց գիւնուորներն ու կողակները օգնած էին ժողովուրդին եւ յարձակած ոստիկաններու վրայ:

Պարզ էր, որ զօրքը եւս, որ հասարակական իր գիրքով կը բաղկանար գիւղացիներէ եւ բանուորներէ:



բէ, կը բաժնէր ժողովուրդի դժգոհութիւնները կառավարութեան հանդէպ ու կը միանար խռովարարներուն: Կը սկսէր իսկական յեղափոխութիւնը:

Պետերպուրգի շրջանի գինուորական հրամանատար զօր. Պարանովը՝ զգալով իր անգորութիւնը՝ ոչ մէկ միջոցի դիմեց: Իշխանութիւն չկար այլևս: Թագաւորը կը գտնուէր Մոզդիլեւ, իսկ թագուհին՝ երեխաներով՝ Թագաւորական Գիւղ կոչուած վայրին մէջ էր, Պետերպուրգէն ոչ հեռու: Կատաղած ամբոխը կը շարժէր դէպի Պետական Դուռ, ուր այդ վայրկեանին կը գտնուէին Դուռայի նախագահ՝ Ռոճեանկոն և Դուռայի ականաւոր անդամներ՝ Միխիկովը, Ջիւլիձէն, Կերենսկին, Սկորելեւը և ուրիշ շատերը:

Այս անձերը իրենց վրայ առին իշխանութեան կազմութեան գործը՝ հիմնելով կոմիտէ մը, որ կոչուեցաւ «Պետական Դուռայի Անդամներու կոմիտէ»:

Առաջին յեղափոխական իշխանութիւնն էր այդ:

Բայց հին իշխանութիւնը դեռ գոյութիւն ունէր, որ բոլորի աչքին առաջ, փոշու պէս կ'անհետանար քամիներու մէջ: Ոչ ոք, ոչ մէկ մարդ այդ օրերուն պաշտպան կանգնեցաւ հին իշխանութեան: Կամաց-կամաց սկսան ձերբակալել զօրավարներ, նահանգապետներ, ոստիկաններ, նախարարներ, որոնց կ'առաջնորդէին դէպի Պետական Դուռ:

Ցարը դեռ չէր հրաժարած գահէն, բայց իր վրայ ազդեցութիւն գործեցին զօրքերու հրամանատարները: Կովկասի Փոխարքայ՝ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը հեռագրեց ցարին, որ ինք ծնկաչոք կը խնդրէ ցարէն՝ հրաժարիլ գահէն: Ցարը, տեսնելով որ ամէնքը լքած են գինը, հրաժարեցաւ գահէն յօգուտ

իր որդու՝ Ալեքսեյի, բայց յետոյ թողուց այդ միտքը և գահը առաջարկեց իր եղբորը՝ Միխայիլին:

Մեծ իշխան Միխայիլը, որ այդ օրերուն Պետերպուրգ կը գտնուէր, հրաժարեցաւ գահէն, որ կը մնայ թափուր, իսկ Ռուսաստանը՝ առանց ցարի: Միակ իշխանութիւնը, որ կը գործէր, Դուռայի Անդամներու կոմիտէն էր: Ան կ'աշխատէր կապ հաստատել գինուորական և բանուորական պատգամաւորներու խորհրդին հետ: Ջինուորական և բանուորական պատգամաւորները ընտրուած էին զօրանոցներուն և գործարաններուն մէջ: Խորհրդի նախագահը՝ Պետական Դուռայի անդամ վրացի սոցիալ-դեմոկրատ Ջիւլիձէն էր, որ, ինչպէս կը յիշէ ընթերցողը, ընտրուեցաւ Դուռայի անդամ շնորհիւ այն իրողութեան, որ մենք մեր հայկական վեց ձայները տուինք անոր:

Երկու այդ մարմիններու ջանքերով կազմուեցաւ Ժամանակաւոր Կառավարութիւն՝ իշխան Լվովի նախագահութեան ներքոյ:

Դեռ 1916 Դեկտեմբերին, իշխան Լվովի թեկնածութիւնը, որպէս վարչապետի զրուած էր խումբ մը քաղաքային գործիչներու կողմէ, եթէ Ռուսաստանը ունենալու ըլլար պատասխանատու նախարարութիւն:

Ժամանակաւոր Կառավարութեան կազմը բաւական խայտարղէտ էր, սկսած գինուորական նախարար Գուշկովէն, ազատական Միխիկովէն, մինչև աշխատաւորական Կերենսկին, որ աւելի ետք դարձաւ նախարարներու խորհրդի նախագահ: Այս բոլոր անձինք այսօր կը գտնուին Փարիզ, որպէս քաղաքական տարագիրներ:

Նիկիտայ Բ.ի հրատարման գործողութիւններու մասին մանրամասնօրէն կը պատմէ զօր. Դանիլովը, որ այդ պատմական թուղթին կը գտնուէր ցարի ծօտ: Ցարի հրատարումով, ժամանակաւ որ Կառավարութեան կազմումով եւ ամբողջ Ռուսաստանի մէջ վարչական բարձր պաշտօնեաներու փոփոխումով, սկսաւ ռուս պատմութեան նոր դարապարտը՝ յեղափոխութիւնը:

\*\*\*

Սակայն, ինչ ազդեցութիւն ունեցան այդ փոփոխութիւնները ծայրագաւառներու վրայ: Ինչ վերաբերում ունեցան ղէպի այդ փոփոխութիւնները Կովկասի ժողովուրդները եւ մասնաւորապէս Հայերը:

Այսօր, աւելի վստահ կրնանք հաստատել, որ Կովկասի մէջ այնուհետեւ տեղի ունեցած բոլոր ղէպերը, ինչպէս Կովկասի եւ Հայաստանի անկախութիւններու հռչակումը, ճակատի պարպումը ռուս զօրքէն եւ մեր վարած կոտորածները ղէմ, հետեւանք էին այդ յեղափոխութեան: Կովկասը զգաց, որ այսուհետեւ ինք պիտի ապրի իր ուրոյն կեանքով, որ իր կապերը Ռուսաստանի հետ գնալով կը թուանան:

Պօսած եմ արդէն այն տպաւորութիւններու մասին, որ ունեցան Կովկասցիները, երբ Փետրուարեան Յեղափոխութիւնը ծագեց: Պօսած եմ արդէն այն մասին, որ Հայ եւ վրացի քաղաքական գործիչները, յեղափոխութեան նախօրեակին կը տեսնէին իշխա-

նական մեքենայի քայքայումը եւ ճակատին սպառնացող ահաւոր վտանգը, բայց անկարող էին ղէպերու ընթացքին առաջն առնել: Պէտք է ըսել, որ ոչ ոք կը կարծէր, թէ այդքան շուտ կարող է յեղափոխութիւն ծագիլ եւ քանի մը օրուան մէջ կլանել միապետութիւնը:

1917 Յունուարին, եւ Պետերպուրգ էի: Տեսնուեցայ Պետական Դումայի անդամ Չիխիձէի հետ: Նա խնդրեց ինձ յայտնել իր Թիֆլիսի ընկերներուն, որ դրութիւնը շատ ծանր է, որ բոլորը ղժգոհ են տիրող կարգերէն, բայց որ յեղափոխութիւնը ղէտ հետու է եւ անպատրաստ: Պէտք էր զգուշանալ ամէն տեսակ պարտովկասիներէն. ժողովուրդը կրնար խաբուութեամբ փողոց ելնել, բայց չարգուել ռուսիկանութեան կողմէ:

Այս խօսակցութենէն ճիշդ եօթը շաբաթ ետք, Չիխիձէն դարձաւ ռուս յեղափոխական ուժերու պարագլուխը:

Վերադառնալով Թիֆլիս, եւ գտայ քայքայման նոյն պատկերը:

Արտաքուստ, ամէն ինչ Հանգիստ էր: Բայց ներքուստ, վարչական մեքենան կ'աշխատէր անկանոն: Կովկասցիներու ամբողջ ուշադրութիւնը կլանուած էր ճակատի գործերով: Առաջին փլանի վրայ գրուած էին զօրքի մատակարարման եւ օգնութեան խնդիրները: Պէտք էր զբաղիլ հիւանդանոցներով, զաղթականներուն ժանդակելու գործով եւ գրաւուած վայրերու վարչական մեքենայի կազմակերպումով:

Փետրուարի վերջին օրերէն մէկը, կ'աշխատէր իմ առանձնատեսնակին մէջ, քաղաքային ինքնավարու-

Քեան շինքի մէջ, երբ գիտ կանչեցին Տեոախօսով: Սօսողը Փոխարքայի Համհարզն էր, որ կը խնդրէր ինձ անմիջապէս անցնել պալատ՝ կարեւոր գործի մը համար:

Սովորաբար, ես պալատ կը գնայի պաշտօնական զգեստով. ուստի, ժամանակ խնդրեցի տուն գնալու՝ հազնուելու համար: Ինձ խնդրեցին անմիջապէս պալատ գալ այն զգեստով, որ վրաս էր:

Երբ պալատ հասայ, գիտ ընդունեց Նիկոլայ Նիկոլայեւիչը եւ յայտնեց, թէ Պետերպոլրգի մէջ ժողովուրդը ապստամբել է իշխանութեան դէմ եւ թէ զօրքերը միացեր են ապստամբ ամբոխին: Այս մասին իրեն Տեոախօսով յայտնել էին մայրաքաղաքէն: Իշխանութեան զլուխը անցեր է Պետական Գուման:

Նիկոլայ Նիկոլայեւիչը խնդրեց ինձ յայտնել այս մասին կովկասի ժողովուրդին եւ զօրքերուն: Միաժամանակ աւելցուց, որ իր՝ Փոխարքայի Համակրանքը ամբողջովին ապստամբներու կողմն է:

Նիկոլայ Նիկոլայեւիչի համար, կատարուող ղէպքերը տրամաբանական հետեւանքն էին անխելք քաղաքականութեան, որուն հետեւանքով, շնորհիւ Ռասպուտինի զաւերուն, ինք, իր օպնական Օրլովը եւ գիւանապետ Իստոմինը արքայութիւնը կ'ընկալէ:

Որպէսզի օրինաւոր ըլլար իմ մուտքը զօրանոցներու մէջ, ինձ պէտք էր ուղեկցել զօր. Վագնաձէն: Միեւնոյն ժամանակ, Փոխարքան խնդրեց, որ պալատ հրաւիրեմ քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչները:

Ես անմիջապէս կատարեցի Փոխարքայի երեք խնդիրքները. յայտնեցի քաղաքական կուսակցու-

թիւներու ներկայացուցիչներուն Փոխարքայի խնդիրքը, զօրավարի Տեո պատեցի բոլոր զօրանոցները եւ վերջապէս քաղաքային վարչութեան առջեւ, Երեւանեան հրապարակի վրայ, ժողով գումարեցի եւ խօսեցի հոն, ուր 1905ին, Ստալինը, Համօ Տէր Պետրոսեանը եւ Մեխանին յարձակած էին դրամ փոխադրող պետական կառքի վրայ եւ յափշտակած դրամը: Ես յայտնեցի ժողովուրդին Պետերպոլրգի մէջ տեղի ունեցող ղէպքերու մասին: Ըստի, որ Փոխարքան Համակիր է այդ շարժումներուն:

Շուտով հասան նաեւ զօրքերը եւ տիրեց ընդհանուր խանդավառութիւն:

Չօրանոցներու մէջ, խանդավառութիւնը աւելի մեծ եղաւ: Զինուորական գանդուածը իսկոյն ընդունեց եւ հաստատեց ղեռ անյայտ իրերու վիճակը:

Սոցիալ-դեմոկրատ պարագլուխներու Տեո մեկնեցիք պալատ: Փոխարքան պատմեց անոնց իրերի կացութիւնը եւ հարցուց. «Կը վստահի՞ք արդեօք ինձ»: Սոցիալ-դեմոկրատներէն ամէնէն ազդեցիկը պատասխանեց. «Այո՛»:

Երբ սոցիալ-դեմոկրատները մեկնեցին, Փոխարքան ինձ յայտնեց, որ որոշած է հրատարակել Թիֆլիսի ոստիկանապետը, որ չէր վայելեր ժողովուրդի Համակրանքը: Խնդրեց ինձ այնպիսի թեկնածուի մը անունը տալ, որուն ժողովուրդը կը վստահէր: Առանց տատանուելու առաջարկեցի վարչութեան անդամ Աթարեկովի թեկնածութիւնը, որ եւ հաստատուեցաւ անմիջապէս:

Նոյն փոփոխութիւնը տեղի ունեցաւ եւ գինուորական նահանգապետութեան մէջ: Զինուորական

նահանգապետ Վոյսկին Հեռացուեցաւ եւ անոր տեղ  
նշանակուեցաւ գօր. Բարատովը, որ նոյնպէս Հա-  
մակրանք ունէր ժողովուրդի մէջ:

\*\*\*

**Անցան քանի մը օրեր:**

Իւպերը կը զարգանային արագօրէն: Ճարը հը-  
րաժարեցաւ: Կազմուեցաւ ժամանակաւոր Կառա-  
վարութիւնը: Նիկոլայ Նիկոլայեւիչը նորէն նշանակ-  
ուեցաւ գործերու ընդհանուր հրամանատար, որ ըս-  
տիպուած եղաւ Թողուլ Կովկասը, իշխան Օրլովի, Իս-  
տոմիրի եւ գօր. Սանուչկեւիչի Հետ միասին:

Կովկասը մնաց առանց բարձր իշխանութեան:  
Պալատը դատարկուեցաւ: Կովկասեան գործօն ու-  
ժերը սկսան Համախմբուիլ եւ կազմակերպուիլ:  
Կազմուեցաւ երեք հոգուց բաղկացած մարմին մը՝  
ըստ ազգային սկզբունքի: Որպէս Հայերու ներկայա-  
ցուցիչ՝ այդ մարմնի մէջ մտայ ես: Վրացիներու կող-  
մէ նշանակուեցաւ Նոյ ժողովանիան, իսկ գօրքի կողմէ  
ոուս սպայ մը՝ Պոպով:

Պէտք է անկողմնակալ կերպով ըսել, որ նորաս-  
տեղծ իշխանութիւնը կը վայելէր երկրի կատարեալ  
վստահութիւնը: Կամաց-կամաց ան դարձաւ քաղա-  
քական կեդրոն մը: Ոչ ոք մեզմէ կը մտածէր այն ժա-  
մանակ բաժանուել Ռուսաստանէն: Կովկասը կը Հա-  
մարէինք Ռուսաստանի անբաժան մէկ մասը: Յեղա-  
փոխութիւնը գրաւական մըն էր միայն, որ Կովկասի  
ժողովուրդներու իրաւունքները պիտի Հաւասարէին  
փաստօրէն ոուս քաղաքացիներու իրաւունքներուն:

Առաջին օրէն իսկ, անցանք աշխատանքի: Պա-  
լատին մէջ գումարուեցան երկու Համազումարներ,  
մէկը՝ Քիֆլիսի ներկայացուցիչներէն, իսկ միւսը՝  
Համակովկասեան չափանիշով:

Մեր նպատակն էր տեղերու վրայ կազմակերպել  
նոր իշխանութիւններ: Ռուս հին շինովնիկներէն  
կ'առնէինք գործերը: Մենք կը Հեռացնէինք պատաս-  
խանատու պաշտօնեաները միայն. օրինակ՝ նահան-  
գապետը, ժամաարմներու պետը եւ ուրիշ շատ պե-  
տեր, Թողուլով գործի վրայ միջին եւ մանր պաշտօն-  
եաները, որպէսզի պետական մեքենան բոլորովին չը-  
քայքայուէր:

Ջինուորական հրամանատարներուն ձեռք չը-  
տրւինք: Քողիմք, որ ամէն ինչ ընթանայ իր կարգով,  
պայմանով որ անոնք ճանչնան նոր իշխանութիւնը:  
Ջինուորականները, առանց տատանման, ընդունե-  
ցին իրերու նոր կացութիւնը:

Շրջաններու մէջ կազմեցինք զինուորական  
խորհուրդներ, ճիշդ Պետերպուրգի նման: Գլխաւոր  
քաղաքներու մէջ նշանակեցինք մեր լիազօրները:  
Հեռադրեցինք ժամանակաւոր Կառավարութեան, որ  
կ'ընդունինք իրենց Հեղինակաւոր իշխանութիւնը:  
Նոյնանման Հեռադիրեր եղան Կովկասի եւ միւս մա-  
սերէն:

Երկու գլխաւոր հարցեր կը զբաղեցնէին բոլորիս  
միտքերը. նախ՝ կը կարծէինք, որ ազգայնապէս  
զարգանալու աւելի ազատ միջոցներ ունէինք եւ  
այսպէս՝ կը մտածէինք ռազմաճակատի մասին:

Մասնաւորապէս Հայերուս Համար, ճակատազ-

բական էր վերջին խնդիրը: Ճակատի քայքայումը խորտակումն էր մեր յոյսերու: Եւ մեր ազգային պահանջներու: Ճակատի քայքայումով վերջ պիտի տրուէր ուս յազաթական բանակի յատաճիտացման եւ սեւ օրերու նոր դուռներ պիտի բացուէին հայ ժողովուրդի համար:

Պէտք էր ուս գինուորի մէջ վատ պահել այն հաւատը, որ յեղափոխութիւնը իր շահերուն դէմ չէ, եւ որ՝ ընդհակառակը՝ գինուորի կացութիւնը աւելի պիտի բարելաւուի: Իսկապէս կը մտածէինք բարեյաւել գինուորի վիճակը: Անմիջապէս ճակատ ուղարկեցինք լիազօրներ, որոնք պիտի բացատրէին գինուորներուն իրերու դրութիւնը: Ու պէտք է ըսել, որ լիազօրները յաջողութեամբ կատարեցին իրենց վրայ դրուած պարտականութիւնը:

Նորաստեղծ կառավարութեան եւ մասնաւորապէս հայերուս համար կար եւ ուրիշ կարեւոր հարց մը. կազմակերպել Թուրքիայէն գրուած վայրերու վարչութիւնը, համաձայն հայ ժողովուրդի բաղձանքներուն: Չէ՞ որ հին իշխանութեան ժամանակ ծուռ աչքով կը նայէին հայերու վերջնական հաստատուելուն՝ իրենց հարպատ վայրերուն մէջ:

Ռուսական Յեղափոխութիւնը նոր ու լայն հորիզոններ բացաւ մեր քաղաքական երկնակամարին վրայ: Ռուսահայութիւնը հնարաւորութիւն կը ստանար ազատ ապրելու, մտածելու եւ գործելու, իսկ Թրքահայութեան համար կը սպասուէին յաւագոյն պայմաններ՝ անոր բախտը տնօրինելու, առանց Թուրքիայի միջամտութեան:

Խանդավառութիւն կը տիրէր ամէնուրեք: Հայ

պաշտօնեաները, կուսակցութիւնները, քաղաքային վարչութիւնները մէկ խնդրով էին տողորուած միայն՝ տեսնել ազատ պայմաններու մէջ մեր երազած եւ սիրելի հայրենիքը:

Ես ալ, որպէս Թիֆլիսի քաղաքազուխ, որպէս կովկասի իշխանութեան ներկայացուցիչ, որպէս Հ. Յ. Դաշնակցութեան անդամ եւ Ազգային Բիւրոյի նախագահ, կը կարծէի, որ հայկական դատը պատմութեան նոր գլուխ կը բանայ եւ որ մօտ է հայոց ազգային ազատագրման փայլուն արշալոյսը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ  
ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

1917ի Փետրուարեան Յեղափոխութիւնը արձազանդ գտաւ նաեւ Կովկասի մէջ, որուն բազմազան ժողովուրդները եւ քաղաքական կուսակցութիւնները նետուեցան յեղափոխական ալիքներու մէջ, իրենց ամբողջ ուժով եւ կարողութեամբ:

Վերը յիշատակել ենք արդէն, որ զանգուածային դժգոհութիւնը ընդհանուր էր լայնածաւալ Ռուսիոյ բոլոր անկիւններու մէջ: Ուրախ էին բոլորը. անգամ անոնք, որ այսօր մեղադրանք կ'ուզգին այն ժամանակուան յեղափոխականներու եւ ազատամիտներու հասցէին, թէ ժամանակը հասուեցած չէր ցարական վարչաձեւը տապալելու համար, խանդավառութեամբ ընդունեցին ցարի տապալման լուրը:

Շատերը կ'ոգէւորէր այն պարագան, որ յեղափոխութիւնը անցաւ անարիւն, առանց համազարկերու եւ անմեղ զոհերու: Ոչ ոք տապալեց ցարի իշխանութիւնը. ան ինկաւ որովհետեւ խախտու էին իր հիմքերը, որովհետեւ անզօր էր ոտքի կանգնելու: Քաղցած կիներու ցոյց մը բաւարար էր Պետերպուրգի փողոցներուն մէջ, որ բաժակը լեցուէր ու յորդէր:

Ուշադրաւ է այն պարագան, որ ուսական վարչաձեւի փոփոխութիւնը կովկասեան ժողովուրդներու մէջ առաջ չբերաւ անջատողական ձգտումներ:

Ո՛չ հայերը, ո՛չ ալ վրացիներն ու աւստրիականցիները ցանկութիւն յայտնեցին իրենց անկախ պետութիւնն հիմնելու: Ընդհակառակը, բոլորը մէկտեղ ջանացին զարկ տալ եւ ուժեղացնել ժամանակաւոր կառավարութիւնը, որ յեղափոխութեան առաջին օրերուն կազմուեցաւ Պետերպուրգի մէջ: Սակայն, 14 ամիս ետք, նոյն ժողովուրդները անջատուեցան Ռուսաստանէն՝ կազմելով իրենց անկախ պետական կորիզները:

Այսօր, աւելի քան 15 տարիներ են անցել այդ օրէն եւ պէտք է ըսել, որ կովկասեան ժողովուրդներու միտքը աւելի խորացած ու կեդրոնացած է իրենց անկախութիւններու զազափարին վրայ: Պարզ է, որ կովկասեան ժողովուրդները յեղափոխութեան տարիներու ընթացքին ենթարկուեցան հոգեբանական լուրջ փոփոխութիւններու, շնորհիւ քաղաքական առաջնակարգ նշանակութիւն ունեցող դէպքերու, ինչպիսիք են, օրինակ, բոլշեիկեան շարժումը Ռուսիոյ մէջ եւ Թուրքիոյ յարձակումները Կովկասի եւ մասնաւորապէս հայերու վրայ:

Սրբ յեղափոխութեան լուրը Կովկաս հասաւ, մանաւանդ՝ երբ Փոխարքան մեկնեցաւ Կովկասէն, սկսան բանակցութիւններ տեղական իշխանութիւն կազմելու համար: Թիֆլիսի մէջ կազմուեցաւ առաջին մարմինը՝ Ն. Ժորգանիայի, Ալ. Խատիսևանի եւ ուրիշ Պոպովի գլխաւորութեամբ: Այդ մարմինն չեւտագային փոխարինեց յատուկ մարմին մը (Օղակոմ), որ եկած էր Ռուսաստանէն՝ ժամանակաւոր կառավարութեան կարգադրութեամբ:

Առաջին օրէն իսկ, շլտուեցան արտունջներ ազ-

դային Հակամարտութիւններու մասին: Ամէնքը մտած էին, որ ոուսական նոր իշխանութիւնը րաւականութիւն պիտի տայ Կովկասի բոլոր ժողովուրդներուն, պիտի ստեղծուին քաղաքացիական նպաստաւոր պայմաններ եւ որ, զլիսաւորն է, մենք՝ հայերս՝ պիտի կարողանանք լուծել մեր քաղաքական դատը, իսկ վրացիները պիտի ազատին թրքական յառաջխաղացման եւ վրաց հողերու զրաման մտանգէն:

Թիֆլիսի քաղաքային վարչութեան սրահներուն մէջ, խորհրդակցութեան հրաւիրուեցան վարչութեան ներկայացուցիչները, գինու որական իշխանութիւնը եւ քաղաքական կուսակցութիւնները, յանձինս իրենց կեդրոնական կոմիտէներու:

Ժողովը երկու կարեւոր որոշումներ տուաւ.

- 1) Կազմակերպել կեդրոնական վարչութիւն, եւ
- 2) Տեղերու վրայ առաջ բերել գործադիր կոմիտէներ, Թիֆլիսի օրինակով, այսինքն՝ հայերու, վրացիներու, թուրքերու եւ ուսաներու մասնակցութեամբ:

Անմիջապէս հետագիտելու ուղղուեցան Կովկասի բոլոր քաղաքները, ուր եւ կազմուեցան գործադիր կոմիտէներ: Ատկէ ետք, կեանքը շարունակեց իր բնական եւ կանոնաւոր ընթացքը:

Այսպէս շարունակուեցաւ մէկ ամիս:

Մինչ այդ՝ Պետերպուրգի մէջ կազմուած էր Ժամանակաւոր Կառավարութիւն՝ զլիսաւորութեամբ իշխան Լվովի, որ եւ որոշեց Կովկասու զարկել յատուկ մարմին մը Խարմալովի զլիսաւորութեամբ՝ կառավարելու համար Կովկասը: Այդ մարմինին կ'անդա-

մակցէին վրացի Չիսնկելին, Հայ Պապաջանեանը եւ ատրեւջանցի Զապարովը, բոլորն ալ ոուսական Խորհրդարանի անդամներ:

Կովկասցիները այս իշխանութիւնը բնորոշեցին առանց ընդդիմութեան: Ես ողջունեցի անոնց գալուստը եւ կայարանէն առաջնորդեցի գիրենք պալատ, ուր կը սպասէր ժողովուրդի մեծ բազմութիւն մը:

Նոր եկող մարմինի իրաւասութիւնները ժամանակաւոր էին - «մինչեւ Սահմանադիր Ժողով» - եւ այս հանգամանքն էր, որ Կովկասցիները հաշտեցուց շարք մը ժամանակաւոր կարգադրութիւններու հետ:

Բոլորն ալ կը սպասէին, որ Սահմանադիր Ժողովը պիտի գար իր վերջին խօսքը բանու, վճռելու կարեւոր բոլոր խնդիրները, որ տարիներ շարունակ ըզրաղեցուցած էին Ռուսաստանի ժողովուրդներու միտքը, ինչպէս, օրինակ, վարչաձեւի հարցը՝ միապետութիւն, թէ հանրապետութիւն, հողային հարցը եւ վերջապէս ազգութիւններու հարցը:

Հետագայի զէպքերը լաւ ըմբռնելու համար պէտք է շեշտել, որ Ժամանակաւոր Կառավարութիւնը իր իշխանութեամբ չուզեց լուծել այս խնդիրները, այլ յետաձգեց զանոնք:

Առիթ մը ունեցել երկարօրէն խօսելու վրաց այն գործիչներուն հետ, որոնց վիճակուած էր առաջնակարգ դեր կատարել Կովկասի եւ Ռուսաստանի զէպքերու մէջ: Բոլորն ալ միասերան կ'ըսէին, որ Սահմանադիր Ժողովի գումարու մը պէտք է յետաձգել քանի մը ամիս, որպէսզի ոուս ժողովուրդը կարողանայ վերջնականապէս կտրել իր կապերը միապետութեան

հետ եւ մտնայ իր դարաւոր նշանարանը՝ «Յարի եւ Հաւատքի Համար»: Նոյնը կը մտածէին եւ ուս ազատամիտ գործիչները:

Այլ կերպ կը մտածէին միայն բոլշեւիկները: Անոնք կը պահանջէին անմիջապէս ժողովուրդին տակայն՝ ինչի որ ան կը ձգտէր, այսինքն՝ Հոգ եւ խղաղութիւն: Բոլշեւիկները չէր հետաքրքրէր պատերազմի այս կամ այն վախճանը. անոնց միակ մտահոգութիւնն էր միջազգային պատերազմը վերածել դասակարգային կոուր: Անոնց Հոգը չէր, թէ Ռուսիան անասելի զոհեր էր տուած արտաքին ճակատներու վրայ: Անոնց Համար արտաքին սահմանները անկարելի էր: Անոնց պէտք էր քաղաքացիական նոր եւ տեւի զարհուրելի պատերազմ մը:

Մենք՝ Հայերս՝ ուրիշ ձգտումներ ունէինք: Ռուսիոյ պարտութիւնը Թուրքիոյ յաղթանակն էր մեզ Համար, ապա եւ մեր դատի ձախող վախճանը: Այդպէս ալ եղաւ:

Պէտք էր պատրաստուիլ Սահմանադիր Ժողովի ընտրութիւններուն: Քաղաքական կուսակցութիւնները ամբողջովին կլանուած էին այդ աշխատանքներով: Հայերու միտքը զրազած էր եւ մէկ ուրիշ հին ու ցաւոտ հարցով, այն է՝ Կովկասի մէջ ստեղծել միատարր Հայրենիք, վարչական նոր սահմանադրումներ կատարել:

Սահմանադիր Ժողովը պէտք է բացուէր 1918 Յունուարին, այսինքն՝ յեղափոխութենէն 10 ամիս ետք:

Ընտրութիւնները անցան սպասածին պէս: Վրացիները իրենց ձայները տուին սոցիալ-դեմոկ-

րատներուն (մենշեւիկ), Հայերը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, իսկ Թուրքերը Մուսուաթ կուսակցութեան: Ռուսական կուսակցութիւններէն ամէնէն յաղթականը եղաւ Սոցիալիստ-Յեղափոխական կուսակցութիւնը: Ամբողջ Կովկասի մէջ Սոցիալ-դեմոկրատները ստացան 661,934 ձայն, Մուսուաթը ստացաւ 613,816, իսկ Դաշնակցութիւնը՝ 558,400: Սոցիալիստ-Յեղափոխականները ստացան 117,522 ձայն:

Ի նկատի ունենալով, որ իւրաքանչիւր 60,000 ձայն կու տար մէկ պատգամաւոր, վրացիները կարողացան ու զարկել Սահմանադիր Ժողով 11 պատգամաւորներ, Թուրքերը՝ 10, Հայերը՝ 9 եւ Սոցիալիստ-Յեղափոխականները՝ 2:

Բայց Սահմանադիր Ժողովը Հազիւ բացուած՝ բոլշեւիկներու կողմէ ցրուեցաւ: Մինչ այդ՝ անոնք զրաւած էին իշխանութիւնը եւ ուժով ցրուեցին բոլոր պատգամաւորները: Մեծաւ նաեւ այն յոյսը, թէ կարելի էր Սահմանադիր Ժողովի միջոցով կարգադրել մեր ազգային խնդիրները: Այսպիսով, անլուծելի մնացին նաեւ Հոգային ու ազգային կարեւոր խնդիրները:

Հոկտեմբեր 25ին էր, որ տեղի ունեցած էր բոլշեւիկեան յեղաշրջումը եւ Ժամանակաւոր Կառավարութիւնը ինկած եօթնամսեայ կեանքի մը յետոյ:

Մանրամասն կանոց պիտի շտնեմ այն ղէպերու վրայ, որոնց նկարագրութիւնը տուած եմ «Հայրենիք»-ի ջլերուն մէջ, ուրիշ զրուածքով մը, որ «Հայաստանի Հանրապետութեան Ծագումն ու Զարգացումը» վերատառութիւնը կը կրէ: Մանաւանդ որ,



սոյն յուշերու ս այս գլուխը վերջարանն է այն դէպքերու նկարագրութեան, որմէ յետոյ կը սկսի Հայաստանի Հանրապետութեան ծագման պատմութիւնը:

Պէտք է ըսեմ միայն, որ 1917ի և 1918ի սկիզբներուն էր, որ հայ ժողովուրդի, ինչպէս և վրացիներու մէջ տեղի ունեցան հոգեբանական մեծ փոփոխութիւններ: Զ. Յ. Գալստիանցի թիւնը՝ հայ քաղաքական միտքի հաստատրիմ և իրական պաշտպանը՝ իր դրօշակի վրայ գրեց Հայաստանի անկախութեան գաղափարը: Նոյնը ըրին է՝ վրաց սոցիալ-դեմոկրատները, որ երեսուն տարիներ անընդհատ ոչ միայն հակառակ էին Վրաստանի անկախութեան, այլև պարզ ինքնավարութեան՝ ծաղրելով միշտ անկախութեան գաղափարը:

Ինչ էր պատճառը: Հոգեբանութեան այդպիսի փոփոխութիւնը հետևանք չէ՞ր արդեօք քաղաքական գահավէժ դէպքերու: Մէկ պատասխան կայ միայն այդ հարցին: Կովկասեան ժողովուրդները չէին որ գատուեցան Ռուսաստանէն, այլ Ռուսաստանն էր որ գատուեցաւ Կովկասէն: Ռուսիան թողեց Կովկասը. այն Ռուսիան, որու գլուխը արդէն կանգնած էին բոլշևիկները: Կովկասը փաստօրէն կտրուեցաւ հիւսիսէն:

Միւս կողմէն, տաճիկները և ս կը ցանկանային Կովկասի անկախութիւնը, որ կը ստեղծէր պատնէշ մը իրենց և Ռուսիոյ միջև: Անգլիան նոյնպէս կ'ուզէր Կովկասի բաժանումը՝ Ռուսիան թուլացնելու նպատակով:

Ահա այս արտաքին պատճառներն էին, որ առաջ բերին Վրաստանի և Հայաստանի անկախութիւնը:

ներք: Բայց երբ անգամ մը այդ երկու ժողովուրդները ունեցան իրենց անկախ պետութիւնը, իրենց հոգիներու կայծը սկսաւ բորբոքիլ և ամենայն ջերմեռանդութեամբ անոնք կառչեցան իրենց ազատագրման գործին:

Երբ սերմ կ'իյնայ հողի այնպիսի շերտի մը մէջ, որուն կը պակասին անելու արտաքին պայմաններ՝ ջուր, օդ, ան իր մէջ կրելով հանդերձ կենսական բոլոր ուժերը, կը մնայ քնած վիճակի մէջ՝ առանց ծաղկելու և անելու հնարաւորութեան: Բայց երբ արտաքին պայմանները փոխուին, ան պիտի ծաղկի, աճի և ոչ ոք պիտի կարենայ խանգարել անոր հետագայ զարգացումը:

Այդպէս էր և՛ Հայաստանի Հանրապետութեան ծագումը: Արտաքին պայմանները կեանքի կոչեցին հայ ժողովուրդի կենսունակ բոլոր ուժերը, որ դարեր շարունակ ապրելու պայքարի էին կլամ:

\* \* \*

Իմ այս յուշերուս մէջ, որ 13 տարիներու շրջան մը կ'ընդգրկէ, ևս առիթ ունեցայ կանգ առնելու մեր ազգային զարթօնքի տարբեր արտայայտութիւններու վրայ՝ սահմաններու ազգային բաժանում, կամաւորական շարժում, Ազգային Խորհուրդ, Ազգային Բիւրօ և մասնակցութիւն մեծ պատերազմին: Այս բոլոր արտայայտութիւններու վերջարանն էր Հայաստանի Հանրապետութեան հռչակումը, որ կատարուեցաւ արտաքին ազգակիներու շնորհիւ:

Կը մատնանշեմ այս բոլորը անոր համար, որ

փարատեմ անդիտակից մարդոց այն կարծիքը, թէ  
Հայաստանի անկախութիւնը ստեղծեցին տաճիկնե-  
րը եւ ուսաները: Հայ ժողովուրդի անկախութեան  
գաղափարը դարեր ի վեր ապրած է ժողովուրդի հո-  
գիին մէջ եւ առաջին իսկ պատեհ առիթին՝ ժայթքել է  
դուրս եւ կազմել ազատ պետութիւն:

Անկախութեան հետ մէկտեղ ծագած են ի հարկէ  
եւ երկու կարեւոր հարցեր՝ հողամասերու եւ մեր  
իրաւունքներու հարցը: Եւ այս երեք հարցերը մէկ-  
տեղ պատճառ եղած են, որ արիւն հոսի, որ արցունք-  
ներ ցամաքին:

Ողբերգական է ազատագրութեան գործը բոլոր  
ժողովուրդներու համար, բոլոր ժամանակներու մէջ:

Վրացիները մեզմէ քիչ մը աւելի բախտաւոր  
եղան ոչ թէ անոր համար, որ անոնք աւելի հեռաւտես  
եւ խելօք էին, քան մենք՝ հայերս, այլ պարզ անոր հա-  
մար, որ արտաքին պայմանները աւելի նպաստաւոր  
կերպով դասաւորուած էին անոնց համար: Նախ՝  
Վրաստանը բաժնուած չէր մասերու. ամբողջու-  
թեամբ Ռուսիոյ մէջ էր եւ թուրքին հետ վիճելի եւ  
կենսական նշանակութիւն ունեցող խնդիրներ չու-  
նէր: Իր ամբողջ ազգաբնակչութիւնը հաւաքուած էր  
իր երկրին մէջ, մէկ տեղ: Ան ունէր ծով եւ նաւահան-  
գիստներ: Ռուսիան հսկայական հարստութիւն էր  
թողուցած Վրաստանի քաղաքներուն մէջ: Իր եւ  
կովկասի մուսուլմաններու միջեւ չկային վիճելի  
խնդիրներ: Եւ, վերջապէս, Վրաստանը միայն 120  
տարի առաջ էր, որ կորսնցուցած էր իր անկախու-  
թիւնը եւ այդ ժամանակամիջոցը բաւարար չէր, որ  
ժողովուրդի բոլոր խաւերու մէջ մեռցնէր անկախու-

թեան գաղափարը: Վրաստանը չտուժեց նաեւ ար-  
տաքին ճակատներու վրայ: Ժամանակ եւ լայն հնա-  
րաւորութիւն ունեցաւ զբաղելու իր ներքին կեան-  
քով:

Ատրրեջանցիներու վրայ կարիք չկայ կանգ առ-  
նելու: Անոնց անկախութիւնը արդիւնք չէր ժողո-  
վրդական լայն գանկուածներու ցանկութեան:  
Իրերու բերուծով եւ տաճիկ սպաններու զրդուծով՝  
անոնք դարձան անկախ, չժողնայով անշուշտ ամէն  
ջանք գործ դնել խեղդելու համար հայոց անկախ ըզ-  
գացումներն ու արտայայտութիւնները:

1917 թիւր դարձուց պատմութեան լջր եւ ստեղ-  
ծեց նոր դարապլուխ մը՝ աղիտարեր հայերու ս հա-  
մար: Ռուսական բանակը սկսաւ պարտուիլ: Խոր-  
տակուեցան է՛ւ մեր յոյսերը, գորս կապած էինք այդ  
բանակի յաղթութիւններու հետ: Տաճկաստանը նո-  
րէն տէր դրաձաւ: հայկական վիլայէթներուն: Կով-  
կասը լեցուեցաւ հայ գաղթականներով: Մահ, սով,  
համաճարակ, իշխեցին քաղցած ամբոխներու վրայ:  
Ուրիշ ժողովուրդ մը պիտի կարծէր, որ իր վերջին  
օրերը կ'ապրէ: Բայց հայ ժողովուրդը ճակատը դէմ  
տուաւ է՛ւ այս արձաւիրքին, միշտ լաւ օրերու եւ լաւ  
ապագայի հաւատը գուրգուրելով իր մէջ:

Կը վերջացնեմ յուշերուս այս գլուխը ճիշդ այն-  
տեղ, ուր կը սկսի «Հայաստանի Հանրապետութեան  
Ծագումն ու Զարգացումը»:

1918էն սկսած, Կովկասի պատմութիւնը դար-  
ձաւ երեւ անկախ ժողովուրդներու պատմութիւն:  
Կովկասի քաղաքական գործիչները դարձան առան-

ձին—առանձին պետութիւններու գործիչներ՝ ըստ  
իրենց ազգութեան եւ ծննդավայրի:

Եւ թողուցի Թիֆլիսը. կապեցի իմ բախտս Հա-  
յաստանի Հանրապետութեան հետ. գարձայ Ալեք-  
սանդրապոլի քաղաքազուլի, ապա՝ Հայաստանի  
Հանրապետութեան վարչապետ:

Անցած են 18 տարիներ. մարդկային կեանքի  
համար երկար ժամանակաշրջան մը, իսկ պետու-  
թիւններու եւ ժողովուրդներու պատմութեան տե-  
սակէտէն՝ վայրկեան մը զուցէ: Բայց մենք մարդ ենք,  
կ'ապրինք զեռ երկկուան մեր պատմութեան գործող  
անձինքս ու ցաւով պիտի արձանագրենք, որ 15 տա-  
րիներու ընթացքում զեռ չիրականացան մարդկային  
ամենատարրական պահանջները՝ ազատութիւն,  
խօսք, մամուլ. չազատագրուեցան մեր արեւմտահայ  
վիլայէթները. անտեսական կեանքը չբարւոքեցաւ ու  
մեր յարարերութիւնները հարեւաններու հետ մնա-  
ցին թշնամական:

Ի՞նչ ընել: Սպասե՛ր...:

Այո՛, սպասել աւելի լաւ օրերու, մեր յոյսերը կա-  
պել հայ ժողովուրդի ամուր կամքի եւ ղէպի իր ազա-  
տագրութիւնը ունեցած խոր հաւատքին հետ:

## ՇԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1.— ԱԲԴՈՒԼ ԹԱՂԻ ԵՒ ՀԱՃԻ ԶԷՅՅԱԼ: Թաթար  
միլիոնատէր:
- 2.— ԱԲԽԱԶԻ ԿԱՄ ԱԲԽԱԶԻԱ: Սեւ ծովի հիւ-  
սիս-արեւելեան ափի եւ Կովկասեան  
լեռնաշղթայի մէջ գտնուող երկիր: 1810  
թ. Սաֆիր Բէյ յօժարակամ ընդունեց  
ռուսական հպատակութիւն եւ ռուսա-  
դաւանութիւն: Հայոց Բագրատունի  
թագաւորները ստիպուած էին երկար  
կռիւներ մղել Աբխազներուն դէմ: 4  
Մարտ, 1921ին, կազմուեցաւ Աբխազա-  
կան ինքնավար Սովետական Սոցիալիս-  
տական Հանրապետութիւնը:
- 3.— ԱԹԱԲԵԿՈՎ: Թիֆլիսի ոստիկանապե-  
տութեան թեկնածու:
- 4.— ԱԼԵՔՍԷՑ, ԱԼԵՔՍԻՍ ՆԻԿՈՒԱՑԵՒԻՉ  
(1904-1918): Նիկոլա Բ. ցարի միակ  
մանչ զաւակը:
- 5.— ԱԼԵՔՍԷ ԵՒ, ՄԻԽԱԻԼ ՎԱՍԻԼՈՎԻՉ (1857-  
1918): Շրջանաւարտ՝ Նիկոլաս սպայից  
վարժարանէն: Մասնակցած է ռուս-  
թրքական պատերազմին (1877-78):  
Ռուս-ճափոնական պատերազմի ըն-  
թացքին (1904-1905): Երրորդ Բանակի

Գործողութեանց Բաժնի մեծաւորը:  
Հրամանատար՝ 1917ին: Կամաւորական  
Բանակի հիմնադիր (1918):

- 6.— ԱՂԱՄԱԼԵԱՆ (բժ.), ՏԻԳՐԱՆ: Տեսուչ՝  
Երեւանի բեմական դպրոցի: Դաշնակ-  
ցական:
- 7.— ԱՂԲԱԼԵԱՆ, ՆԻԿՈՂ (Թիֆլիս, 1875 —  
Պէրուք, 1947): Հասարակական գործիչ  
եւ խմբագիր՝ Թիֆլիսի «Հորիզոն» թեր-  
թին (1913): Անդամ՝ Կամաւորական  
Գունդերու Կազմակերպիչ Մարմինին  
եւ Ազգային Խորհուրդին (1915): Հայաս-  
տանի Հանրապետութեան շրջանին  
խորհրդարանի անդամ եւ կրթական  
նախարար (1919): «Հայ կրթական եւ Հը-  
րատարակչական Համագգային Ընկե-  
րութեան» հիմնադիրներէն (1929): Նա-  
եւ՝ Պէրուքի Համագգային ձեւարա-  
նին (1934): Իր յուշերը հրատարակուած  
են «Մտածումներ» խորագիրով երեք  
հատորներու մէջ:
- 8.— ԱՂԵՔՍԱՆԴՐ Գ. ՅԱՐ (1845-1894): Ազե-  
սանդր ցարին երկրորդ մանչ գաւազը եւ  
Նիկոլայ Բ. ցարի հայրը: Ռուսիոյ ցարը՝  
1881-1894 թուականներուն:
- 9.— ԱՅՎԱԶԵԱՆ, ԲԱԳՐԱՏ ՅՈՎԱԿԻՄ (1862-  
1934): Պետական Դումայի պատգամա-  
ւոր: Հայ գրող: (Հանրգիտ. Ա. հատոր էջ  
348):

- 10.— ԱՆԱՆՈՒՆ, ԴԱԻԻԹ (ՏԵՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ),  
(Ղարաբաղ 1879 — Աստրախան 1943):  
Պատմաբան, հրապարակախօս եւ հա-  
սարակական գործիչ: Կուսակցական  
պատկանելիութեամբ նախ՝ հնչակեան,  
դաշնակցական, ապա՝ սոցիալ դեմոկ-  
րատ: Աշխատակցած է «Մշակ», «Նոր Հո-  
սանք», «Նորք» եւ այլ թերթերու: Հեղի-  
նակը՝ «Ռուսահայերի Հասարակական  
գարգացումը» երեք հատորնոց ուսում-  
նասիրական երկին (1916-1926):
- 11.— ԱՆԴՐԱՆԻԿ (Օզանեան), (Շապին Գա-  
րահիսար 1866 — Ֆրեզո, 30 Օգոս.,  
1927): Ցեղափոխական ղեկավար եւ ազ-  
գային հերոս: Ղեկավարած է Սասնոյ Բ.  
Ապստամբութիւնը (1904): Մասնակցած  
է Հ.Յ.Դ. 4րդ Ընդհ. ժողովին (1907) եւ  
Պալանեան պատերազմին (1912): Հրա-  
մանատար՝ կամաւորական Ա. Գունդին  
(1914-15): Ղեկավարած է Տիլմանի ճա-  
կատամարտը: Հայկական զօրաբաժինի  
հրամանատար (1917): Անիւնը փոխա-  
դրուած է Ֆրանսա եւ կը հանգչի Պէռ  
Լաշէզի գերեզմանատան մէջ:
- 12.— ԱՆԴՐՈՆԻԿՈՎ (Պաթումի ֆազաֆայետ,  
ազգայնականներու թեկնածու, Վրաս-  
տանի կողմնակից):
- 13.— ԱՌԱՔԵԼԵԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ, (Շուշի

- 1855 — Թիֆլիս Մայիս 1918): Ծածկա-  
նունով՝ Շահրիար: Խմբագիր-հրատա-  
րակագիր՝ «Մշակ» թերթին (1913-1918):  
Ղարաբաղի Հայոց Թեմական դպրոցի  
տեսուչ (1881): «Ժողովրդական» կու-  
սակցութեան առաջնորդներէն: Ընդդի-  
մագիր՝ Հայաստանի անկախացման  
գաղափարին: Իր գործերն են՝ «Ազգայ-  
նութիւն եւ նրա պրինցիպները» (1883),  
«Առողջարանական ընթերցանութիւն»  
(1880), «Հանրագիտական բառարան», Ա.  
հատոր (1915), «La Question Armen-  
ienne», «Les Kards en Presse»:
- 14.— ԱՐԱՄԵԱՆ: Թիֆլիսի հայ մեծահա-  
րուտներէն: Իր անունով շինել տուած է  
Թիֆլիսի Արամեան հիւանդանոցը:
- 15.— ԱՐԱՐԱՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ: (1943): Դաշնակ-  
ցական գործիչ: Հայաստանի Հանրապե-  
տութեան շրջանին զինուորական նա-  
խարար:
- 16.— ԱՐՂՈՒԹԵԱՆ ՅՈՎՍԷՓ (ԻՇԽԱՆ) (Լոռի  
— Սամահին գիւղ — 1865 — Փարիզ —  
Շավիլի մէջ — 15 Նոյ. 1925): Յայտնի  
Դաշնակցական գործիչ եւ ֆետայի: Յե-  
զափոխական եւ պետական դէմք: Խա-  
նասորի Արշաւանքի ղեկավարներէն:  
Կամաւորական Շրջ գունդի հրամանա-  
տար: Հայաստանի Հանրապետութեան  
շրջանին ղեսպան Պարսկաստանի մօտ:
- 17.— ԱԻՇԱՐԵԱՆ ԳՐԻԳՈՐ (1916): Ռուսահայ  
է եւ ծնած Բագու: Աւարտած է Ռուսա-  
կան զիմնագիտն եւ ստացած զինուորա-  
կան կրթութիւն: Իսկական անձնուէր  
հայրենասէր մը՝ օժտուած ռազմագի-  
տական բարձր կարողութիւններով:  
Կամաւորական ճրգ գունդի հրամանա-  
տար: Բասէնի դաշտին մէջ մղուած ճա-  
կատագրական կռիւին ընթացքին հերո-  
սաբար կ'իյնայ՝ ապահովելով իր գուն-  
դին յաղթանակը: Հնչակեանները կը  
փորձեն զինք ներկայացնել հնչակեան  
կուսակցական:
- 18.— ԱՅՐԻԿԵԱՆՆԵՐ: Թիֆլիսի հայ մեծահա-  
րուտ ընտանիքներէն:
- 19.— ՓԱՓԱՋԵԱՆ ԱՐՏԱՇԷՍ (բժ.), (Շուշի, 15  
Նոյ. 1886 — Թեհրան, 1 Օգոս. 1959):  
1915ին, նորաւարտ երիտասարդ բժիշկ:  
Դաշնակցական եւ հասարակական գոր-  
ծիչ: Հայաստանի Հանրապետութեան  
շրջանին վարչապետ Ալ. Խատիսեանի  
դասիլինին անդամ, իբրեւ խնամատա-  
րութեան նախարար: Հայաստանի խոր-  
հրդդայնացման ատեն կը բանտարկուի  
եւ, ապա, ազատ կ'արձակուի եւ կ'անց-  
նի Թեհրան, ուր եւ կը մնայ մինչեւ իր  
մահը: Արտօմատէրը՝ Թեհրանի «Ալիք»  
օրաթերթին: 1 Օգոստոս 1959ին, սրտի

- կարուածի հետեւանքով յանկարծամահ կ'ըլլայ:
- 20.— **ԲԱՐՈՒՇԿԻՆ**, ԻՎԱՆ ՎԱՍԻԼԵՒԻՉ (Լեդե-  
ւսկ, 3 Յունուար, 1873 — Միսոլսկ, 18  
Յունուար 1906): Բոլշեիկ: Կուսակցա-  
կան ծածկանունները՝ Կիկոլայ Կիկո-  
լայեիչ, Բոզդան: Ցարական իշխանու-  
թեան օրով՝ զնդակահարուած, 1906ին:
- 21.— **ԲԱԳՄԱՆԻ**, ՋԱՄՍԱՐԱՆ (կամ Շամսա-  
րան), (Արեւելեան Սիպերիա 1851): Մու-  
զուսով՝ Buriat: Կը մկրտուի ուս լու-  
սաւորչական եկեղեցւոյ կողմէ: Մոսկո-  
ւայի մէջ հանրածանօթ իբրեւ Tribetai  
բժիշկ: Ռասպուտինին ամէնէն մտերիմ-  
ներէն:
- 22.— **ԲԱՐԱՏՈՎ**.— (Իշխան եւ գորավար): Մե-  
ռու ախորական Փարիզի մէջ 1929ին  
կամ 1930ին:
- 23.— **ԲԵԲՈՒԹՈՎ**: (Թաղիւի սանր եւ ճար-  
տարապետ):
- 24.— **ԲԵԼԵՑԿԻ**, ՍՏԵՓԱՆ ՊԵՏՐՈՎԻՉ (1873-  
1918): Շրջանաւարտ՝ Քիեի համալսա-  
րանէն: Պաշտօնեայ՝ Քիեի նահանգա-  
պետութեան մէջ (1894-1899): Նաեւ՝ յա-  
ջորդաբար կովոնյի, Վիլնայի եւ Գրոտ-  
նոյի (1899-1907): Սամարիոյ փոխ-նա-  
հանգապետ (1907-1909): Ոստիկանու-  
թեան բաժանմունքի փոխ-տնօրէն

- (1909-12): Ապա՝ տնօրէն (1912-15):  
Ներքին գործոց նախարարի օգնական  
(1915-16): Համայնավարները կը ըս-  
պանեն զինք:
- 25.— **ԲԵԿԿԻՆԴՐՈՅ**, ՏՐ ԳԱՄ (Cemps) ԳՈՂՔՈՒ  
ՎՈՆ: Նիկոլայ Բ. օրով՝ դատարանի գրի-  
խաւոր դատախազ, միաժամանակ՝ երի-  
տասարդ զնդապետ: Ցարին շատ հաւա-  
տարիմ. գորաւոր հայրական գուրգու-  
րանք ցուցաբերած է ցարին հանդէպ:
- 26.— **ԲԻՉ**: (Բագուի քաղաքապետ):
- 27.— **ԲՈՒԼԻԳԻՆ**, ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ  
(1851-1919): Վարած է բազմաթիւ վար-  
չական պաշտօններ. բաւրով նահանգի  
դատարանի պաշտօնեայ (1871): Կալու-  
գայի (1887) եւ Մոսկուայի (1893) նա-  
հանգապետ: 1 Յունուար 1905ին, կը նը-  
շանակուի state council եւ ներքին գոր-  
ծոց նախարար (1901-1905): chief of the  
4th section of his Majesty's private  
chancellery (1913):
- 28.— **ԳԱՐՕ ԱՐՄԷՆ** (Կարին 1873 — Ժընեւ  
1923): Ուսումով՝ ֆիւիագէտ: Դաշնակ-  
ցական հասարակական գործիչ: Գլխա-  
ւոր դերակատարներէն՝ Օսմանեան դը-  
րամատան գրաման առեւն (14 Օգոս.,  
1896) եւ հայ-բաքարական կոիւներու  
ընթացքին (1905): Անդամ՝ Օսմանեան  
խորհրդարանի (1908էն ետք) եւ Կամա-

ւորական Գունդերու կազմակերպիչ Մարմինին (1914): Հայաստանի Հանրապետութեան շրջանին անդամ՝ Փարիզի Ազգային Պատուիրակութեան եւ դեսպան Մ. Նահանգներու մօտ Ուաշինկթըն մայրաքաղաքի մէջ: «Ապրուած Օրեր» հատորը կը մէկտեղէ իր յուշերը:

- 29.— ԳԵԳԵՉԿՈՐԻ, ԵՎԳԵՆԻ ՊԵՏՐՈՎԻՉ (1880 կամ 1881 — Փարիզ 6 Յունիս 1954): Վրացի Մենշեիկ: Շրջանաւարտ՝ Մոսկրուայի համալսարանէն (1906): Ուսանողական շրջանին անդամ՝ Սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան: Մասնակից՝ Արեւմտեան Վրաստանի յեղափոխական շարժումներուն (1905): Քուրայիսի ներկայացուցիչ անդամ՝ երրորդ Գումայի (Խորհրդատուն): Նախագահ՝ Անդրեկովկասի Սէյմին (1917-1918): Արտաքին գործոց նախարար՝ անկախ վրաստանի: Վրաստանի Խորհրդայնացումէն ետք, կը հաստատուի Փարիզ (Մարտ 1921): Գործօն դերակատարներէն՝ կովկասեան ազգերու հակախորհրդային պայքարին մէջ:
- 30.— ԳԻԻԼԵԱՆ: (ֆազաբային գործիչ):
- 31.— ԳԻԻԼԵԱՆԻՆԵՆԱՆ, ԱՐԲԱՀԱՄ (Էջմիածին 1875 — Փարիզ 1946): Ծածկանունով՝ Ռ. Սեւեան: Դաշնակցական, հա-

սարակական եւ պետական դէմք: Հ.Յ.Գ. Արեւելեան Բիւրոյի անդամ (1908): Մասնակցած է կովկասեան ռաշոնական ժողովներուն, «Փոքորիկ»ի ձեռնարկին, կամաւորական շարժման կազմակերպումին (1914-15), Բագուի ինքնապաշտպանութեան (1918) եւ Ալեքսանդրապոլի դաշնագիրը ստորագրած պատուիրակութեան (1920): Մասնակից՝ Գանձակի հայ-թաթարական կռիւներուն (1905) եւ Բագուի Հայոց Ազգային Խորհուրդին (1917): Հայաստանի Հանրապետութեան շրջանին յաջորդաբար ներքին գործոց նախարար եւ ելեւմտական նախարար: Աշխատակցած է «Հայրենիք» ամսագիրին: Իր գործերն են՝ «Կովկաս», «Հայ-Թաթարական Ընդհարումներ» (2 հատոր), «Յեղափոխական Հայու Հիներ»:

- 32.— ԳՈՂԻՑԻՆ, ՆԻԿՈՂԱՅ ԳԻՄԻՏՐԻԷՎԻՉ (1850-1925): Ներքին գործոց նախարարութեան պաշտօնեայ (1871): Կառավարիչ՝ Արխանգելսկի (1885), Կալուգայի (1893) եւ Թվերի (1897): Կը նշանակուի ծերակուտական (1903): Նախագահ՝ Նախարարաց Խորհուրդին (Գեկտ. 1916 — Փետ. 1917):
- 33.— ԳՈՐԵՄԻԿԻՆ, ԻՎԱՆ ԼՈԳԻՆՈՎԻՉ (1839-1917): Իրաւաբանութեան Հիմնարկէն

շրջանաւարտ: Ծերակոյտի առաջին բա-  
ժանմունքի մէջ պաշտօնեայ (1860-  
1864): Լեհաստանի Գիւղացիական Հար-  
ցերու յանձնակատար (1864): Պլոտսկի  
(1866) եւ Կելեցկի (1869) փոխ-կառավա-  
րիչ: Երբին գործերու նախարարու-  
թեան Գիւղացիական Հարցերու Բա-  
ժանմունքի անդամ (1873): Արդարու-  
թեան նախարարութեան օգնական  
(1891): Ծերակուտական (1894): Օգնա-  
կան, ապա, ներքին գործերու նախարար  
(1894-1899): Պալատական խորհրդատու  
(state Council) (1899): Նախարարաց  
խորհուրդի նախագահ (Մայիս-Յուլիս  
1906 եւ 1914-1916):

34.— ԳՈՒԶԿՈՎ, ԱԼԵՔՍԱՆԴՐ ԻՎԱՆՈՎԻՉ  
(1862-1936): Octobrist — Հոկտեմբեր-  
եան — կուսակցութեան հիմնադիրնե-  
րէն: Երրորդ Դումայի նախագահ  
(Մարտ 1910 — Մարտ 1911): Ա. Աշխար-  
համարտին, Պատերազմական շարտա-  
րարուեստի կեդր. կոմիտէի նախագահ:  
Ճամանակաւոր կառավարութեան մէջ՝  
պատերազմական նախարար (1917): Հա-  
կահամայնավար շարժումի գործունեայ  
տարրերէն (1917-1921): Հոկտեմբերեան  
Յեղափոխութենէն ետք, կ'անցնի ար-  
տասահման:

35.— ԳՎԱԶԱԻԱ (Վրացի փաստաբան):

36.— ԳՐԵԱԶՈՎ, [(Krasnov, Peter?) (1869-  
1947) Սպիտակ ռուսերու ղեկավար-ա-  
ռաջնորդը]: (Շտապի պետ, գոր սպան-  
նեցին սոցիալ-դեմոկրատ փոքրամաս-  
նականները: Մենշեիկ):

37.— ԳՐՈՒԶԵՆՔԵՐԳ: (Իրաւաբան. Դաշնակ-  
ցութեան դատավարութեան պաշտպան  
իրաւաբանը):

38.— ԳՕՏՈՒԱ: (Վրացի «Վերածնունդ» բերթի  
խմբագիր):

39.— ԴԱՆԴՈՒՐԵՐԱՆ: Համայնավար: Աղեք-  
սանդր հատիսեանի հետ Թիֆլիսի Քա-  
ղաքներու Միութեան աշխատակից:

40.— ԴՐՕ — ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԵԱՆ (Իգդիր  
1884 — Մ.Ն. 8 Մարտ 1965): 1904ին, կը  
մտնէ զինուորական ծառայութեան մէջ՝  
պատրաստուելու համար իբրեւ սպայ  
ռուս բանակին: Հանրայայտ են գաւա-  
ռապետ Գալանցիի եւ նահանգապետ  
Նակաշիձէի (Մայիս 1905) իր ահաբե-  
կումները: 1905ին եւ 1906ին, Նիկոլ  
Դումանի եւ Քեռիի հրամանին տակ, կը  
մասնակցի հայկական ինքնապաշտպա-  
նութեան կռիւներուն: 1907ին, կ'ահա-  
բեկէ Ալեքսանդրապոլ շրջանի զինուո-  
րական նահանգապետը՝ Ալիխանով — Ա-  
ւարսկին: Հրամանատար՝ Կամաւորա-



կան Բ. Գունդին (1915): 1918ին, կր պաշտպանէ Արարատեան դաշտի ճակատը: 1918ի Մայիսեան կռիւներուն, կը վարէ Բաշ-Աբարանի յաղթական ճակատամարտը: Հանրապետութեան օրերուն, նախ հայկական բանակի գործակար, ապա, գիմնուորական նախարար: Իբրեւ կառավարութեան ներկայացուցիչ, Հ. Տէրտէրեանի հետ միասին կը բանակցի Մոսկուայի ներկայացուցիչ՝ Լեզրանին հետ: Հայաստանի խորհրդայնացումով՝ իբրեւ ախորական կը մնայ Մոսկուա, շուրջ երկու տարի:

- 41.— ԵԱՆՈՒՇԿԵՒԻՉ. ՆԻԿՈՒԱՅ ՆԻԿՈՒԱՅԵՒԻՉ (1868-1918): Նիկոլաս Սպայից կանառի շրջանաւարտ: Պատերազմական Նախարարութեան Քարտուղարութեան Օրէնքդիր Բաժինի մեծաւորը (1905-1911): ապա՝ օգնական վարիչը (1911-1913): Նիկոլաս Սպայից վարժարանին մէջ փրոֆ. եւ գլխաւոր (1913-1914): Կովկասի փոխ-արքայի օգնական եւ Կովկասի գիմնուորական նահանգի Սպայակոյտի օգնական հրամանատար (1915):
- 42.— ԵՐԱՁԷ: (Անկախ վրաստանի Աշխատանքի նախարար):
- 43.— ԵՐՁՆԿԵԱՆ, ԱՐԱՄԱՅԻՍ (Հազրատ 1878-1937): Ժողովրդական կուսակցութեան

անդամ: Պետական գործիչ եւ լրագրող: Հայաստանի Հանրապետութեան հողագործութեան նախարար: «Կայծ», «Հոսանք», «Կովկասի Լրարեր», «Պայքար» եւ «Գիւղատնտեսական կեանք» քերթերու խմբագրական կազմի անդամ:

- 44.— ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆ: (Թիֆլիս 1843-1901): Թիֆլիսի քաղաքագլուխ (1897): Հրապարակագիր. «Մեզու Հայաստանի» շաբաթապարթի խմբագիրը:
- 45.— ԶԱԻՐԵԱՆ, ՅԱԿՈԲ (20 Փետ. 1920): Ս. Փեթերպուրգի գիմնուորական բժշկական ակադեմիայի շրջանաւարտ: Հասարակական գործիչ (ռուսախօս): Մուշի մէջ կը հիմնէ հիւանդանոց (1905): Թրքահայաստանի ընդհ. կառավարիչի օգնական՝ Ժամանակաւոր կառավարութեան օրով: Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհուրդի պատուիրակը՝ ռուս-յեղափոխական կառավարութեան մօտ (1917): Ա. Աշխարհամարտին, Ամենայն Հայոց կաթողիկոսը զինք կը զրկէ Փարիզ, Ազգային Պատուիրակութեան մօտ՝ հազորդելու համար առաջինին հրահանգները: Կը մեռնի տիֆէ (բժա՞խտ):
- 46.— ԶԴԱՆԵՒԻՉ: (Ռուս կամաւորական բանակի ներկայացուցիչ գործակար):
- 47.— ԶԴՈՂՈՎՍԿԻ: (Թիֆլիսի ռուսկանապետ):

- 48.— ԶՕՀՐԱՊ ԳՐԻԳՈՐ: (Կ. Պոլիս 1860 — Կ. Պոլիս 1915): Մեծ եղեռնի նահատակ մըտաւորական: Փաստաբան, գրագէտ (վիպակագիր), ճառարուստ եւ խմբագիր: Օսմանեան հորհրդարանի անդամ-ընդհանրական (1908): «Հայկական Հարցը» ֆրանսերէն գործին հեղինակը՝ Քիյառ ծածկանունով: «Մասիս» շաբաթաթերթի խմբագիր: Ունի ֆրանսերէն եւ թրքերէն լեզուներով ֆագաֆական եւ օրէնսգիտական կարեւոր գործեր: Իր գրական երկերէն են՝ «Անհետացած սերունդ մը», «Յղճմտանքի ձայներ», «Կեանքը ինչպէս որ է», «Լուր ցաւեր», «Էջեր ուղեորի մը օրագրէն»:
- 49.— ԶՈՒՐԱԴՈՎ, ՍԵՐԳԵՅ ՎԱՍԻԼԵՒԻՉ (1863-1917): Արմատական եւ յեղափոխակա խմբակցութեանց մէջ գործօն անդամ (Մոսկուա): Լրտես: Մոսկուայի գաղտնի ոստիկանութեան փոխ-գլխաւոր եւ, ապա՝ գլխաւոր (1899): «Ռուսիկան րնկերվարութեան» կազմակերպիչը: Մոսկուայի եւ Փեթերպուրգի Աշխատաւորական Միութիւններու յեղափոխական գործունէութիւններու խափանարարը (1902): Փետրուարեան յեղափոխութենէն ետք, անձնասպան կ'ըլլայ (1917):
- 50.— ԶՈՒՆԻ, ՆԻԼ ՊԵՏՐՈՎԻՉ, (1857-1918):

Ցարական Իրաւաբանական վարժարանէն շրջանաւարտ: Կր գործէ Իրաւական հիմնարկներու մէջ (1878-1894): Ռուսիկանական բաժանմունքի օգնական ֆարտուղար (1894-1899) եւ ֆարտուղար (1899-1903): Ապա՝ օգնական տրնօրէն (1903-1909) եւ տնօրէն (1909-1912): Ծերակուտական (1912):

- 51.— ԶՈՒՐԱՔՈՎ, ԱՐՇԱԿ (Զուրաբեան): (1873-1920): «Հայ Սոցիալ-Դեմոկրատներու Միութիւն» կազմակերպութեան հիմնադիրներէն: Նաեւ՝ «Պրոետար» թերթին: «Պրոետարի Կոնուր» թերթի խմբագրական կազմի անդամ (1903):
- 52.— ԵԼԻԱՎԱ, ՇԱՎԱ ԶՈՒՐԱՔՈՎԻՉ: (1885-1937): 1904էն ի վեր համայնավար: Աստրախանի մէջ ախտրական (1912): Այնտեղ մտերմացաւ Ստ. Շահումեանի հետ: Դիւանագիտական տշխատանք կատարեց Պարսկաստանի եւ Թուրքիոյ մէջ (1920): Ս.Ս.Հ.Մ.ի արտաքին առևտուրի ժողկոմի տեղակալ (1931-1937):
- 53.— ԷՆՎԵՐ ՓԱՇԱ: (Կ. Պոլիս 23 Նոյ. 1881 — Դուշէմբա (Թուրքիստան) 4 Օգոս. 1922): Ծագումով՝ ալպանացի: Գերմանաէր: Երիտասարդ Թուրքերու շարժումին առաջնորդներէն՝ Թալաաթի եւ ձեմալ Ազմիի հետ միասին: 1908ին,

ձեռնարկեց պետական հարուածի Սուլ-  
բան Համիտին դէմ եւ ստիպեց, որ այս  
վերջինը գործադրէ 1876ի Սահմանադ-  
րութիւնը եւ գահընկէց ըլլայ (Ապրիլ  
1909): 1909ին, զինուորական ներկայա-  
ցուցիչ՝ Պերլինի մօտ: 1911-12ին, մաս-  
նակցեցաւ թուրք-իտալական պատե-  
րազմին: Նաեւ՝ Պալանեան 2րդ պատե-  
րազմին: 1914ին, պատերազմական նա-  
խարար: Ռմբակոծել տուաւ Օտեսա եւ  
Սեբաստապոլ նաւահանգիստները: Իբ-  
րեւ հրամանատար, պարտուեցաւ կով-  
կասեան ճակատին վրայ: 1917ի յեղա-  
փոխութեան օրերուն, պահանջեց կով-  
կասեան թուրք պետութեան մը կազ-  
մութիւնը եւ վոլկայի եւ Թուրքիստանի  
միջեւ գտնուող թուրք ժողովուրդներու  
ազատութիւնը: 1918 Հոկտեմբերին, վը-  
տարուեցաւ Կ. Պոլսէն եւ անցաւ կով-  
կաս: Համայնավարներու օժանդակու-  
թեամբ՝ անցաւ Թուրքիստան՝ խաղա-  
ղեցնելու համար ապստամբ իսլամները:  
Սակայն, միացաւ ապստամբներուն հա-  
մայնավարներու դէմ: Մեռաւ ռուսա-  
կան բանակին դէմ մղուած կռիւի մը ըն-  
թացքին: (\*)

54.— ԹԱԱԱՔ ՓԱՇԱ: (Անդրիմոպլ 1872 —  
Պերլին 16 Մարտ, 1921): Ծագումով՝

պուլկարացի: Թուրք ֆազաական  
յայտնի դէմքերէն: Սալոնիկի նամակա-  
տան մէջ պաշտօնեայ: միացաւ Երիտա-  
սարդ Թուրքերուն: Էնվեր փաշայի եւ  
ձեմալ փաշայի հետ միասին 1908ի Օս-  
մանեան յեղափոխութեան առաջնորդ-  
ներէն: Ներքին գործոց նախարար  
(1909): Նախարար Մահմուտ Ջիւեթի  
ահաբեկումէն ետք, միացաւ Էնվերի եւ  
ձեմալի (Յունիս 1913): Թուրք-գերմա-  
նական գործակցութեան չատագովմե-  
րէն (1914): Վարչապետ (1917): Հայկա-  
կան Ցեղասպանութեան մեծագոյն պա-  
տասխանատուն (1915): Ապստամբեցաւ  
Գերմանիա, ուր ահաբեկուեցաւ Սոզո-  
մոն Թեհլիրեանի ձեռնով՝ Դաշնակցու-  
թեան որոշումով:

55.— ԹԱՄԱՄՇԵԻ: (Ա. հատիսեանի օգնական  
եւ հասարակական գործիչ):

56.— ԹԱՄԱՆՆԱՆ, Աղբֆսանդր: (Նկատերիմո-  
դար 1878-1936): Հայաստանի անուանի  
նարտարապետ ակադեմիկոս: Հայաս-  
տանի Պատմական Յուշարձաններու  
Պահպանութեան կոմիտէի մեծաւոր  
(1923-36): Կազմեց Երեսանի վերակա-  
ռուցման յատակագիծը: Յ.Ս. Եարալով  
իբ մասին գրած է «Թամանեան» աշխա-  
տասիրութիւնը: Իսկ Հայաստանի Գի-  
տութեանց Ակադեմիայի արուեստի հիմ-

նարկը՝ «Աղեքսանդր Քամանեան» ժողովածուն (1960):

- 57.— ԹԱՅԻՐԵԱՆ. ԱՐՏԵՄ: Դաշնակցական յեզափոխական: Թիֆլիսի «Հեթմէս» տպարանի կառավարիչ (1907): Իբրեւ Դաշնակցական բանտարկուեցաւ եւ ախորւեցաւ Սիպիր (1908-1912): Հ. Հանրապետութեան շրջանին, հնամատարական նախարարութեան մէջ պաշտօնեայ:
- 58.— ԹՈՒՄԱՆԵԱՆ, ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԱԹԷՈՍ: (Դսեզ, 7 Փետ. 1869 — Մոսկուա, 23 Մարտ, 1923): Ամենայն Հայոց Բանաստեղծ: Արձակագիր եւ գրական հասարակական գործիչ (1893էն ետք): Ղ. Ալիշանի եւ Ռ. Պատկանեանի ակնյայտ ազդեցութեան տակ, գրեց ազգային հայրենասիրական բանաստեղծութիւններ: Թումանեանի ողջ ստեղծագործութիւնը կապուեցաւ ժողովրդային բանահիւսութեան հետ: Թումանեան ստեղծեց բազմաթիւ փառեակներ (1916-1922): 20րդ դարու առաջին երկու տասնամեակներուն, հայ գրականութեան կեդրոնական դէմքը: Նախածեռնեց «Վերնատուն» գրական խմբակին (1899): Հայ գրողներու ընկերութեան նախագահ (1912-1921): Թումանեանի աճիւնը ամփոփուեցաւ վրաստանի Թիֆլիս մայ-

րաֆազաֆի հայկական պանթէոնին մէջ: Իր երկերէն են՝ «Անուշ», «Հոռեցի Սաբոն», «Մարոն», «Սասունցի Դաւիթբէ», «Թմրկարբերդի առու մը», «Պոէտն ու Մուսան», «Իչպի անհունը», «Հին կոնիւր» բանաստեղծութիւնները:

59.— ԹՈՒՄԱՆՈՎ.— Հայագրի իշխան: Ռուսական «Նավոյէ Օրոգթէնիէ» թերթի (նոր հանդէս) խմբագիր:

60.— ԹՈՓՉԵԱՆ, ԵՂԻՇԷ: (Ալեքսանդրապոլ, 1870 — Բաբերդի հատրակ գիւղ, 1909): Բուն անունով՝ Երուանդ: Դաշնակցական մտաւորական, ճառախօս եւ խմբագիր: Մասնակցեցաւ Հ.Յ.Դ. 4րդ ընդիժողովին (1907): Բուռն պաշտպան՝ կովկասեան ինքնապաշտպանութեան նախագիծին (1906): Հիմը դրաւ հրիմեան Հայրիկի յիշատակին նուիրուած՝ «Հայրիկեան ֆոնտ»ին, 1908ի վերջերը: Հիմնադիր՝ կարնոյ «Յառաջ» թերթին (1909-1914): Թիֆլիս հրատարակուած «Արշալոյս» թերթի հիմնադիրներէն էր եւ «Յառաջ»ի մնայուն խմբագիրը: Գերմաներէնով հրատարակեց ուսումնասիրութիւն մը կովկասի տնտեսական վիճակին մասին: Աշխատակցեցաւ «Տարագ», «Մուրճ» եւ «Մշակ» թերթերուն: Ան ունէր երկու եզրայր. մէկը՝ կարսի

մէջ գոհ զնաց ումբային պայթումի մը, իսկ միւսը՝ մեռաւ Բագուի հայ-թաթարական կռիւներու ընթացքին: Ինք գոհ զնաց եզրայրասպան դաւադրութեան — սպաննուեցաւ խմբապետ Միհրանի եղբոր՝ Համբիկին կողմէ:

- 61.— ԺեկիՆՍԿԻ, ԻԱԿՈՎ ԳՐԻԳՈՐԻԷՎԻՉ (1853-1919): Ցարական իշխանութեան ատեն գորավար:
- 62.— ԺՈՐԴԱՆԻԱ, ՆՈՅ ՆԻԿՈԼԱՅԵՒԻՉ (1870-1953): Վրացի Սոցիալ Դեմոկրատ: Մեմ-շեիկ կուսակցութեան ղեկավար: Հայաստանի Հանրապետութեան ծնունդի օրերուն, վարեց հակահայ ֆազաֆականութիւն մը:
- 63.— ԻԳՆԱՏՅԻ, ԳՈՆԴ ՆԻԿՈԼԱՅ ՊԱԻԼՈՎԻՉ (1832-1908): Շրջանաւարտ՝ Նիկոլաս Սպայից վարժարանէն (1851): Զինուորական կցորդ՝ Անգլիոյ մօտ (1856-57): Գլխաւորեց զինուորական եւ դիւանագիտական առաքելութիւնը դէպի Խիվա եւ Բոխարա (1858): Տնօրէն՝ Արտաքին Գործոց Նախարարութեան Ասիական Բաժանմունքին (1861-64): Ներքին Գործոց նախարար (1881-82):
- 64.— ԻԶՄԻՐԼԵԱՆ, ԳՐԻԳՈՐ (1819-1894): Հասարակական մշակութային գործիչ: Թիֆլիսի ֆազաֆային խորհրդարանի

անդամ, ապա Թիֆլիսի ֆազաֆայութի: Հիմնադիր՝ արեւելահայ առաջին թատերախումբին (Թիֆլիս 1863):

- 65.— ԻՍՏՈՄԻՆ, ՎԱԼՏՄԻՐ ԻՎԱՆՈՎԻՉ (1809-1855): Ռուսական բանակի ընդհ. Հրամանատար:
- 66.— ԻՎԱՆՈՎ, ՆԻԿՈԼԱՅ ԻՆԻՈՎԻՉ (1851-1919): Իբրեւ փոխ-հրամանատար, քստանձնեց պատասխանատու դիրքեր ռուս-ճափոնական պատերազմի ընթացքին: Հրամանատար՝ Քիւի Ջինուորական Շրջանի գումարտակներու (Դեկտ. 1908): Ա. Աշխարհամարտի առաջին ամիսներու ընթացքին, Հրամանատար՝ Աւստրիոյ դէմ հարաւարեւելեան ճակատի: Փետրուարեան Յեղափոխութեան (1917) նախօրեակին Նիկոլայ Բ. Ցարը հրամայեց իրեն ֆլել փեթերպուրգի վրայ: Չհասաւ սակայն մայրաֆազաֆ՝ երկաթուղագծի աշխատաւորներու ապստամբութեան հետեւանձով:
- 67.— ԻՐՆՑԿԻ: Ռուս: Բագուի ֆազաֆայութի:
- 68.— ԻԻԹԻԻՆՃԵԱՆ ԵՊԻՍ. ԳԷՈՐԳ (Բերա 1851): Հովուական Առաջնորդ Ռումանիոյ (1879-1883), Կարնոյ (1889-1890) եւ Եզիպոսի (1892-1895) մէջ: Հիմնադիր՝ Քէօսքէնճէի, Կ. Պոլսոյ Ս. Գէորգ եւ Փարիզի Ս. Յովնաննու Մկրտիչի եկեղեցի-

- ներուն: Եւրոպայի Հայոց հովիւ (1898): «Հայաստանցի» գրչանունով աշխատակցած՝ շատ մը թերթերու («Մասիս»):
- 69.— ԻԻՍՈՒՊՈՎ, Ֆելիքս Ֆելիքսովիչ (1856): Իշխան: Ներքին Գործոց նախարար (1883-85): Մեծ Իշխան Սերգէյ Ալեքսանդրովիչի օգնական (1886-1904): Հեծելազօրքի հրամանատար (1904-1908): Մոսկուայի Զինուորական Շրջանի մեծաւոր, միեւնոյն ատեն Մոսկուա քաղաքի պետական ներկայացուցիչ (1915): Մեռաւ ակտորի մէջ:
- 70.— ԼԱԳՈՒԱ, Հեւրի (°) (1891-1938): Պաշտօնեայ Դատաստանական Պալատի: Եղած է դաժան):
- 71.— Լեւին, Վլասիմիր Իլիչ (Իլիանով), (Սիմպերսկ, 10 Ապրիլ 1870 — Մոսկուա, 21 Յունուար 1924): Հիմնադիր՝ Խ. Միութեան Համայնավար կուսակցութեան: Ունի շուրջ 170 ծածկանուն: Իր գործերէն են՝ «Ինչ են «ժողովուրդի բարեկամները» եւ ինչպէս անոնք կը մարտնչին սոցիալ-դեմոկրատներուն դէմ», «Ինչ պէտք է ընել մեր շարժման ցաւոտ հարցերը» (1902) աշխատութիւնները:
- 72.— Լիժն, Ն.Ի.: Ունի երկու եղբայր. մէկը՝ համր եւ խուլ, միւսը՝ ալկոհոլէ տառապած: Անդամալոյժ ըլլաւ աստիճան եր-

կար ատեն տառապած է ջղային խանգարումէ:

- 73.— ԼիՏվիՆՈՎ, ՄԱՔՍԻՄ (1876-1951): Խորհրդային դիւանագետ:
- 74.— ԼիՏվիՆՈՎ, ԵԱԿՈՎ ԵԱԿՈՎԼԵՎԻՉ (1852-): Ներքին Գործոց Նախարարութեան Գիւղացիութեան Բաժնի օգնական վարիչ (1901-1906), վարիչ եւ Լեհաստանի Գիւղացիական Հարցերու Յատուկ Մարմնի նախագահ (1906-1907): Մեռակուտական (1915):
- 75.— ԼՎՈՎ, ԳԵՈՐԳԻ ԷՎԳԵՆԵՎԻՉ (1861-1925): Շրջանաւարտ՝ Մոսկուայի համալսարանէն: Ներքին Գործոց Նախարարութեան մէջ պաշտօնեայ (1886): Մոսկուայի եւ Թուլայի Գիւղացիական Հարցերու Յատուկ Մարմնի անդամ: Համառուսական Zemstve Unionի (տեղական) ինքնավարութիւններու Միութեան) վարիչ՝ ռուս-նափոնական պատերազմին: Նոյնպէս՝ Ա. Աշխարհամարտին (1914-17): Նախարարաց Խորհուրդի նախագահ եւ Ժամանակաւոր կառավարութեան ատեն Ներքին Գործոց նախարար (Մարտ-Մայիս 1917): Համայնավարներու յեղաշրջման ատեն կը ձերբակալուի: Կը փախչի Սիպերիա, ուրկէ՝

Փարիզ: Անդամ՝ Ռուս Քաղաքական  
հորհրդածոգովի (1919):

76.— **ԽԱՐԱՆՈՎ, ՍԵՐԳԷՅ** (գոր.) (1858–1924):  
Ընդհանուր հրամանատար՝ Փեքեր-  
պուրգ Մայրաքաղաքի Զինուորական  
Շրջանի (1917):

77.— **ԽԱԺԱԿ, ԳԱՐԵԳԻՆ** (Ալեքսանդրապոլ  
1868 — Կ. Պոլիս 1915): Մեծ Եղեռնի նա-  
հատակ մտաւորականներէն: Կը յաճա-  
խէ էջմիածինի Գէորգեան ձեմարանը՝  
մինչեւ 6րդ դասարան: Ազուլիսի մէջ  
ուսուցիչ՝ Ք. Միքայէլեանի եւ Է. Ակնու-  
նիի հետ: 1893ին, կը մեկնի ժընեւ, ուր  
կ'աւարտէ տեղւոյն համալսարանին  
հասարակագիտական բաժինը: Իբրեւ  
դաշնակցական գործիչ կը շրջի Պալեան-  
եան երկիրները, Պուլկարիա (1895), Ե-  
գիպտոս, Իզմիր եւ Կ. Պոլիս: Յեղափո-  
խական, հռետոր եւ հրապարակագիր:  
Դեռ ուսանող՝ կ'աշխատակցի «Դը-  
րօշակ»ին եւ «Մուրճ»ին: «Յառաջ»ի  
խմբագիրներէն (1905): Աշխատակցած է  
«Մշակ»ին, «Հորիզոն»ին, «Աղբիւր-Տա-  
րազ»ին, «Նոր-դպրոց»ին, «Ազատամար-  
տ»ին: Իր գործերէն են՝ «Մի բարոյական  
այլանդակութիւն յեղափոխական մաքուր  
գործում» (1896), «Ժողովրդի բանաս-  
տեղծը Գամառ-Քաթիպա», «Ռուսական

Զեմստվոն եւ Կովկասի պահանջները»  
(1903), «Հարկերը Տանկահայաստանում»  
(1904), «Հայրենիք եւ Ազգային շարժում-  
ներ» (1904), «Հայկական շարժման պատ-  
ճառները» (1904), «Դէպի Ֆետերացիա»  
(1907), «Ի՞նչ է ազգութիւնը» (1912),  
«Տառապանքի գիշերը» (1912), «Ի՞նչ է  
դասակարգը» (1913), «Հին արեւելքը»  
(1913), «Հայոց պատմութիւն» (1913):

78.— **ԽԱՇՄԱՆԵԱՆ, ԹԱԴԷՈՍ** (Դեւ) (Սեբաս-  
տիա, 1878 կամ 1880 — Կ. Պոլիս 1910):  
Բազուի մէջ լրագիր 24–26 տարեկանին:  
Տանկահայ որբ մը. Բժ. Լօրիս Մելիքեան  
զինք դարձուցած է որդեգիր զուակը:  
Շրջանաւարտ՝ Ներսիսեան դպրոցէն:  
Տարակարծութեան հետեւանձով՝ բաժ-  
նըւած իր հօրմէն: Նախ ռուս Սոցիալ-  
յեղափոխական, ապա՝ Դաշնակցական:  
Թիֆլիսի ամէնէն հեղինակաւոր ամբո-  
խավարը (1905): Խառնուածձով՝ բա-  
փառական: Խմիչֆի մուլի: 1907ին, «ամ-  
ջատական» շարժման օրերուն, երբ մեր  
երիտասարդութեան մէկ խոշոր մասը կը  
պահանջէր թրքահայ եւ կովկասահայ  
դատերու անջատումը: Իբրեւ թրքահայ  
դատի եռանդուն պաշտպան՝ հակառակ  
էր անջատման: Հ.Յ. Դաշնակցութեան  
Կեդրոնական պաշտօնաթերթի կարե-

ւոր աշխատակիցներէն (1907): Յիշեալ քերթի պատասխանատու խմբագիրը (1909): Երիտասարդ Թուրքերու յեղաշրջումէն ետք, կ'անցնի Պոլիս, ուր եւ կը մեռնի բոֆախտի պատճառաւ (1910): Ազգականը՝ Սեբաստացի Մուրատի-Դեւ գիւնֆ «Քեռի» կ'անուանէր: Համբողջած է ընդհանրապէս ոտքով: Ծածկանուններն են՝ «Թ.Խ.», «Դեւ», «Կա-յէն», «Դորիկ»: Իր գրութիւնները միջակութեանէն բարձր էին. երբեմն՝ գոհարներ: Բնածին տաղանդաւոր:

79.— ԽԱՏԻՍԵԱՆ, ԳԷՈՐԳ (Թիֆլիս 1879 — հարկով 1935): Կեղծանունով՝ Գիգա: Իրաւաբան եւ հասարակական գործիչ: Ուրիշներու կողմէն, կատարած է Հ. Յ. Դաշնակցութեան պաշտպանողականը (1912): Թիֆլիսի ֆաղաֆային հորհուրդի (1912), «Հորիզոն»ի խմբագրութեան, Պոլսոյ պատուիրակութեան (1918) եւ Հայաստանի հորհրդարանի անդամ: Մշակողը՝ յատկապէս կովկասեան տեղական ինքնավարութիւններու (Zémstvo) օրէնքի հայկ. նախագիծը եւ աւելի ուշ՝ կովկասի վարչական վերաբաժանման ծրագիրը եւ Հայաստանի հորհրդարանի

հաստատուած շատ մը օրէնքներու նախագիծերը: Վ. Նաւասարդեանի հետ պատրաստած է ռուսերէն լեզուով բացատրական գրքոյկ մը՝ հայ-վրացական բախումի մասին:

80.— ԽԱՏԻՍԵԱՆ, ԿՈՍՏԱՆԴԻՆ ( — 1913): Ալ. հատիսեանի մեծ եղբայրը: Ազգային հասարակական դէմք: Հայ Յեղափոխականների դաշնակցութեան հիմնադիրներէն: Աշխատակից՝ շատ մը քերթերու եւ պարբերականներու: Հիմնադիր՝ Բագուի «Հայոց կուլտուրական Միութիւն»ին:

81.— ԽՈՄԵՐԻԿ.— Համայնավար: Ստալինի բարեկամ:

82.— ԽՈՒՆՈՒՆՑ, ՅՈՎՍԷՓ ( — ): Իրաւաբան եւ հասարակական գործիչ: Ներսիսեան վարժարանի տեսուչ: Ալ. հատիսեանի հետ անդամ՝ Թիֆլիսի Քաղաքներու Միութեան: Նախագահ՝ Քաղաքային Գումայի վերստուգիչ Յանձնաժողովի: Փոխ-նախագահ՝ Ազգային Բիւրոյի: Հանրապետութեան օրերուն, անդամ «Անկախութեան Փախառթեան Փորթիկ Կեդր. Յանձնախումբին» (1920):

83.— ԾԵՐԹԵԼԼԻ, ԻՐԱԿԼԻ ԳԷՈՐԳԻ (1882 — 1959): Վրացի սոցիալ — դեմոկրատ



ռուսական ֆազաֆական գործիչ եւ մեն-  
շեիկ: 1917ի Փետրուարեան Յեղափո-  
խութենէն ետք, մենշեիկներու պարա-  
զուիս: 1921էն ետք, ցմահ աֆտրական:

- 84.— ԿԱԼԻՏԻՆ ՋՕՐ. ( — ): Կոզակ-  
ներու բոնակալ (ataman): Յետադիմա-  
կան եւ հակայեղափոխական դէմք:  
1917ին, ռուսական յեղափոխութեան  
ընթացքին ինքզինք հռչակեց բոնակալ՝  
Դոն ֆազաֆի վրայ:
- 85.— ԿԱՍՍՕ, ԼԵՒ ԱՐԻՍՏԻԴՈՆՎԻԶ (1865 -  
1914): Շրջանաւարտ՝ Փարիզի Իրաւա-  
բանութեան վարժարանէն — Ecole de  
Droit — եւ Պերլինի համալսարանէն:  
Եւրիեւ (Դորպատ) համալսարանի մէջ  
դասախօս (1893 - 1895), իսկ՝ Խարկովի  
մէջ (1895 - 1898): Մոսկուայի Համալը-  
սարանի Փրոֆ. (1898 - 1910): Կրթական  
նախարար (1910 - 14):
- 86.— ԿԵՐԵՆԱԿԻ, ԱԼԵՔՍԱՆԴԻՐ ՖԵԴՈՐՈՎԻԶ  
(1881 - 1970): Սոցիալիստ - յեղափոխա-  
կան: Առաջին անգամ հանրաձանօք կը  
դառնայ իբրեւ իրաւաբան՝ (attorney)  
ֆազաֆական դատերու: Երրորդ եւ Չոր-  
րորդ Դումայի անդամ: Տրուդովիկ  
խմբակցութեան անդամ: Պետրոգը-  
րատ ընկերութեան փոխ - պատասխա-  
նատու (1917): Արդարութեան, Պատե-

րազմական եւ Նաւատորմի դի նախա-  
րար եւ ժամանակաւոր Կառավարու-  
թեան վարչապետ (1917): Հեղինակը՝  
«The Catastrophe» գիրքին (1923):

- 87.— ԿԻՇԿԻՆ, ՆԻԿՈԼԱՅ ՄԻԿԱՅԼՈՎԻԶ (1864 -  
1930): Սահմանադրական - ժողովրդ-  
դավարական (Kadet) կուսակցու-  
թեան ղեկավարներէն: Ժամանակաւոր  
կառավարութեան վերջին դահլիճի  
ընկերային Բարօրութեան (Social  
welfare) նախարար:
- 88.— ԿԻՊՐԻԱՆԻ.— Թիֆլիսի ֆազաֆազուիս:
- 89.— ԿՈԳԴԵԱՆ.— Քաղաքային վարչութեան  
անդամ:
- 90.— ԿՈԳՆՈՎԵՅԿԻ.— Գանձակի ֆազաֆազը-  
լուիս: Ռուս:
- 91.— ԿՈԴՐԵԻԻԶ.— Գանձակի դատախազի  
օգնական:
- 92.— ԿՈԿՈՎՅԵԻ, ՎԼԱՏԻՄԻՐ ՆԻԿՈԼԱՅԵԻԶ  
(1853-1942): Ֆինանսաւորման նախա-  
րար (1903) եւ (1904-14): Premier —  
Առաջին նախարար (1911 - 1914):
- 93.— ԿՈՎԱԼԵՒՍԿԻ, ԷՎԳԵՆ ՊԵՏՐՈՎԻԶ (1865  
- 1911): Պետական Դումայի անդամ:  
Հանրային կամ հասարակական կըր-  
թութեան վերատեսուչ: Տեղական ինք-  
նավարութիւններու կրթական յատ-  
կացումներու բարեփոխութեան ջատա-  
գովներէն:

- 94.— ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ.— Հայ — Թրքական ընդհարումներու շրջանին (1905) Գանձակի հայութեան պատգամաւոր:
- 95.— ԿՈՒԿՈՒՆԵԱՆ ԱՐՇԱԻԱՆՔ:
- 96.— ՀԱՆՎԵՐՏԵԱՆ, — Հայ — քրքական ընդհարումներու շրջանին Զինուորական նախարար:
- 97.— ՀԱՄԱԶԱՍՊ, ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՅ (վան 1873 — Երեւան 1920): Յեղափոխական եւ ժողովրդային հերոս: Մասնակցած Հայ — քաքարական կռիւներուն (1905), հաչէնի եւ Ասկերանի կռիւներուն, Լ.Յ.Գաշնակցութեան ճրդ ընդհ. ժողովին (1914) եւ Բագուի հերոսամարտին (1918): Կամաւորական Յրդ գունդի հրամանատար: Փետրուարեան Ապստամբութեան նախօրեակին, հայ համայնավարները անգթօրէն կացիահարեցին զինք:
- 98.— ՀՈՅ: (Նորվեկիացի) (արդեօք հոլանտացի): Ընդհ. Նահանգապետ Հոլանտական Գոնկոյի վրայ:
- 99.— ԶԻՆՁԱԴԶԷ, Կ.Մ. (1887-1930): Պետական պաշտօնեայ: Համայնավար (1904-1927): Վրաստանի մէջ հորհրդային վարչակարգի հաստատումէն ետք, վրացական Ձեկայի տնօրէն:
- 100.— ՂԱՄԲԱՐԵԱՆ: (Ալ. հատիսեանի մայրը) (1845 — Թիֆլիս 1914): Շրջանաւարտ՝

Թիֆլիսի Ազգական Հիմնարկէն: Ինքնաշխատութեամբ կ'ամբողջացնէ կրթութիւնը: Ծնողքը վրացախօս էր. հայերէն չէին գիտեր: 40 տարեկանին կ'այցելէ Վենետիկի Միֆթարեաններու վանքը, ուր Հայր Անուդ Ալիշան կը յանդիմանէ զինք՝ հասերէն չգիտնալուն համար: Այս յանդիմանութիւնը պատճառ կ'ըլլայ, որ հայերէն սորվի: Կը սկսի հայերէն գրել: Իր երկերէն են՝ «Հեղինէ», «Նոր ճանապարհի վրայ», «Փեսայ որոնողներ», «Դժբախտ կին», եւ այլն: Իսկ «Լուսիկ» անունով վէպը կը մնայ անտիպ: Հիմնադիր՝ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան, որուն նախագահուիին էր տարիներ շարունակ: Կոտորածներու ժամանակ կարեւոր մասնակցութիւն կը բերէ տանկահայութեան օգնութեան համար կատարած հանգանակութեան մէջ: Տասը հարստութի կը կտակէ վերոյիշեալ ընկերութեան, որու քարտուգարն էր Ազեխանդր Քիչմէյեան: Մտերիմ էր Գրիգոր Արծրունիին, որմէ շատ ազդեցութիւն կրած է:

- 101.— ՂՈՐՂԱՆԵԱՆ: Գ. Զօրավար՝ Կամաւորական շարժման մէջ (1915):
- 102.— ՂՈՒԿԱՍՍԵԱՆՆԵՐ (եղբայրք): Թիֆլիսի

հայ մեծահարուստ ընտանիքներէն:  
Նաւթարդիւնաբերութեան մէջ յայտնի:

- 103.— **ՄԱՆԱՐԱԶԷ, ՖԻԼԻՊ ԻՍՍԵՅԵՆԻԶ** (1868-1941): Գրականագէտ եւ վրացի համայնավար (1903): Դեռ ուսանող՝ անդամ վարչաւիոյ Սոցիալ-դեմոկրատ շարժման: Ընդատակեայ եւ դաւադրական աշխատանքներու հեղինակ վրաստանի մէջ (1918-1921): Վրաստանի Յեղկոմի նախագահ (1921): Վրաստանի գերագոյն խորհուրդի նախագահութեան նախագահ (1938):
- 104.— **ՄԱԿԼԱԿՈՎ, ՆԻԿՈՒԱՅ ԱԼԵՔՍԵՎԻԶ:** (1871-1918): Շրջանաւարտ՝ Մոսկուայի համալսարանէն: Մաքսային ֆննիչ՝ Սուզդալ նահանգի (1894-1900): Գլխաւոր՝ Պետական Գանձի Պոլսավիոյ մասնահիւղի (1906): Զերնիգովի կառավարիչ (1909): Առժամեայ (Acting) Ներքին Գործոց նախարար (1912): Ներքին Գործոց նախարար (1913): Պետական խորհուրդի (state council) անդամ (1915): Կը գնդակահարուի համայնավարներու կողմէ:
- 105.— **ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, ՍՏԵՓԱՆ:** (Ախայցիս 1858 — Երեւան 1923): Իրաւագէտ-փաստաբան: Կովկասահայ հասարակական գործիչ: Մոսկուայի Հայկական

Կոմիտէի նախագահ (1915): Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդի անդամ (1917): Ռուսերէն եւ հայերէն թերթերու խմբագիր: Հայաստանի Անդրանիկ խորհրդարանի անդամ:

- 106.— **ՄԱՆՔԱՇԵԱՆ, ԱՂԵՔՍԱՆՆԻՐ** (1849-1911): Թաւրիզցի, ապա, Թիֆլիսաբնակ հայ առեւտրականի (Յովհաննէս) գաւակ: Թիֆլիսի հայ մեծահարուստներէն եւ ազգային բարերար: 1878էն ետք, կը զբաղի նաւթարդիւնաբերութեամբ (Բագու): Բագուի մէջ կը ստանայ Բագուի «նաւթիշխան» մակդիրը: Հիմնադիր՝ «Ազ. Մանթաշեանց եւ րնկ. առեւտրական տուն» բաժնետիրական ընկերութեան: Նախաձեռնարկ՝ բարեգործական նպատակներով աշխատանքներու: Հիմնադիր՝ «Մանթաշեան առեւտրական դպրոց»ի (Թիֆլիս): Կառուցած Ներսիսեան դպրոցի նոր շէնքը եւ վերանորոգած Մայր Եկեղեցին:
- 107.— **ՄԱՆՔԱՇԵԱՆՆԵՐ, ՄԱՆՔԱՇՈՎՆԵՐ:** Խոշոր նաւթարդիւնաբերողներ Անդրկովկասի մէջ 19րդ դարու վերջը եւ 20րդ դարու սկիզբը: Մեծ հայրերնին կը մահանայ 1878ին: Ազ. Մանթաշեանի որդիներէն են՝ Յովհաննէս, Լեւոն, Յովսէփ եւ Գեորգ:

108.— ՄԱՆՈՒԻՍԿԻ, ԴՄԻԴՐԻՅ ԶԱՆԱՐՈՎԻՉ (3 Հուլ. 1883 — Քիել, 22 Փետ. 1959): Համայնավար (1903): Կուսակցական ծածկանու նկերը՝ Մէֆոդիյ, Իօնիչ, Ֆոմա, Իվան Բէզբաբոբայ: Փեքերպուրգի եւ Մոսկուայի մէջ բնոյտակեայ գործիչ (1912-13): Բազմաթիւ գործերու եւ պաշտօններու հեղինակ:

109.— ՄԱՆՈՒԿԵԱՆ, ԱՐԱՄ (Զանգեզուր 1879 — Երեւան 1919): Բուն անունով՝ Սերգէյ Յովհաննիսեան: Ազգային յեղափոխական գործիչ եւ պետական դէմք: Վանի ինֆնապաշտպանութեան ղեկավար (1915): Անկախ վասպուրականի նահանգապետ: Անդամ՝ Հ.Յ.Գ. Բիւրոյի եւ Ազգային հորհուրդի (1916-17): «Տիկտաքէտ» Արարտեան շրջանի (1918): Հ. Հանրապետութեան Ներքին Գործոց ու Պարենաւորման նախարար: Կը նրկատուի Հ. Հանրապետութեան հիմնադիրը:

110.— ՄԱՍԼԻՄԵԱՆ, ՅԱՐՈՒԹԻՒՆ (Պօղոս Նուպար Փաշայի օգնական):

111.— ՄԱՏԻՆԵԱՆ (Թիֆլիսի ֆազաֆազլուիս):

112.— ՄԱՐԳԱՐԵԱՆ (բժիշկ):

113.— ՄԱՐՏԻՆՈՎ, (Թիֆլիսի ոստիկանապետ, սպայ եւ Բազուի ֆազաֆապետ):

114.— ՄԱՐՏՈՎ, Լ. (Կեղծանուն) Tsedeibrum,

Julias [Yali Osipovich], (1873-1923): Մենչեիկ սոցիալ-դեմոկրատներու ֆրակցիայի առաջնորդ: Հեղինակը՝ «Պրոբտարական կոիւր Ռուսաստանում» խորագիրով գիրքին: Աստրական (1920): հորհրդային վարչակարգի բնդդիմադիրներէն:

115.— ՄԴԻԻԱՆԻ, Պ.Գ. (1887-1937): Կուսակցական անունով՝ Բուդու: Համայնավար (1903) եւ պետական պաշտօնեայ: Քարոզիչ Քուքայիսի, Պաթումի, Թիֆլիսի Բազուի եւ Անդրկովկասեան այլ ֆազաներու մէջ: Թուրքիոյ մօտ ուսական հորհրդային ընկերվարական Հանրապետութեան ղիւանագիտական ներկայացուցիչ (1921): Ժընեի խորհրդածոզովի խորհրդային պատուիրակութեան անդամ (1922): Կուսակցութեան կ'արտաֆուի Թրոցիական բնդդիմութեան համախոհութիւն ցուցաբերելու հետեւանֆով (1928): Կը վերբնդունուի (1931): Կրկին կ'արտաֆուի (1936): Վրաստանի Գերազոյն Ատեանր մահւան դատապարտեց զինք (9 Յուլիս 1937): Կը զնդակահարուի (10 Յուլիս 1937):

116.— ՄԵԼԻՔ-ՂԱՐԱԳԷՕՁԵԱՆ, ԳԷՈՐԳ: Թիֆլիսի նախկին ֆազաֆային գործիչ: Հ.

Հանրապետութեան շրջանին Հանրային կրթութեան եւ Արուեստի նախարար: Հիմնադիր՝ «Արշալոյս» թերթի (Թիֆլիս):

- 117.— ՄԵԼԻՔ-ԱԶԱՐԵԱՆ, ԱՂԵՔՍԱՆԴԻՐ (1920-21): Բնիկ Ղարաբաղցի (ծածկանունը՝ Աղեքսանդր Ազաֆոնովիչ): 19րդ դարուն, Թիֆլիսի հայ մեծահարուստներէն: Դերեցի (բժիշկ Շիշմանեան) միակ ազգկան ամուսինը: Վրաստանի մէջ ձիադուրիի կամ Զիատուրիի մականէզի եւ Ղափանի պղինձի հանքերու սեփականատէրը: Նախագահ՝ Հայոց Ազգագրական Ընկերութեան: Համակիր իր բրոջորդիին՝ Աւետիս Նազարբէկեանի հիմնած հնչակեան կուսակցութեան: Աւելի ուշ՝ Հ.Յ.Դաշնակցութեան: 1920-21ին, դարանակալ կերպով կը ըսպանեն գինի իր տան մէջ: Բացի նիւթական օժանդակութենէն (Ս.Դ.Հ.Կ.ին), գործօն մասնակցութիւն բերաւ հայ յեղափոխական շարժման մէջ: Զուտ ընտանեկան պատճառներով հեռացաւ Հնչակեան կուսակցութենէն: 1908 թրին, դաշնակցութեան դէմ հալածանքի ընթացքին ձերբակալուեցաւ: Մէկ միլիոն արժողութեամբ (ոուրի) իր բնակարանը նուիրեց Հ. Հանրապետութեան: Յիշեալ շէնքն ալ, հայ ժողովուրդի միւս

կալուածներուն հետ, գրաւուեցաւ վերացիներու կողմէ: Որոշած էր իր բոլոր նկարները նուիրել Հայաստանի թագարանին. (ճակատագրէն տեղեակ չենք):

- 118.— ՄԵԼԻՔ-ԱԼԼԱՀՎԵՐՏԵԱՆ: (Հայ սպայ եւ մեծահարուստ):
- 119.— ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ: Թիֆլիսի Հայոց Ազգային Բիւրոյի նախագահ: Թիֆլիսի Առաջնորդ:
- 120.— ՄԻԼԵԱՆ, ԱՐՇԱ: (Հայ ականաւոր վաճառական):
- 121.— ՄԻԼԻՑԻԱ: (Կիկոլայ Կիկոլայեւիչ մեծ իշխանի բոյրը):
- 122.— ՄԻԼԻԿՈՎ, ՊԱԻԵԼ ՆԻԿՈԼԱՅԵԻՉ (1859-1943): Պատմաբան: Մոսկուայի համալսարանի մէջ դասախօս: Պատմութեան դասախօս (Սոֆիա, 1879-1898): Դասախօս Ռուսիոյ եւ Հարաւային Սլաւներու մասին (Մ. Նահանգներ, 1902-1905): Ազատագրութեան Միութեան կազմակերպիչներէն (1905): Նախաձեռնողն ու նախագահը Գաղէթ (K.D.) կուսակցութեան: Խմբագիր՝ «Սվորոդ եիէ Նարոդ»ի եւ «Նարոդ նայիա Սվորոդ»ի, որոնք արգիլուեցան: Անդամ՝ Երրորդ եւ Զորորդ Դումայի: Ժամանակաւոր կառավարութեան Արտաքին Գործոց նախա-

րար (Մարտ-Մայիս, 1917): Հակահա-  
մայնավար շարժման գործուն տարբե-  
րէն: Ախորի մէջ «**Պոսթլզնիխ Լոփոս-  
թի**» քերթի խմբագիր: Իր երկերէն են՝  
«**Ռուսական մշակոյթի պատմութեան վր-  
բայ ակնարկներ**», «**Պայքարի Տարին**»:

- 123.— ՄԻԼՈՎՆԵՐ, Ա. (Մեծահարուստ եղբայրք):  
124.— ՄԻԽԱՅԷԼ, ՆԻԿՈԼԱՅԵՒԻԶ: Մեծ իշխան  
(1882-1912): Պետական հորհուրդին  
նախագահ (1881-1906): Կովկասի փոխ-  
արքայ:  
125.— ՄԻԽԱՅԷԼՈՎԻԶ, ՆԻԿՈԼԱՅ: Մեծ իշխան  
(1859-1919):  
126.— ՄԻՇԼԱՅԵՒՍԿԻ, : Զօրավար:  
127.— ՄԻՐԱԿԻ, ՊԵՏՐ ԴՄԻՏՐԻԷՎԻԶ ՍՎԻԱՏՈ-  
ՊՈԼԿ (1857-1914): Դսգումով լեհ: Մաս-  
նակցած է ռուս-քրքական պատերազ-  
մին (1877-78): Կառավարիչ՝ Պէնզէի,  
ապա, Եկատերինոսլաւի: Ներքին Գոր-  
ծոց նախարարի օգնական: Տնօրէն՝ Ոս-  
տիկանութեան Բաժանմունքի (1900-  
1902): Պիվէի սպանութեանէն ետք  
(1904), Ներքին Գործոց նախարար (1904  
— Յունուար, 1905):  
128.— ՄԻՐՍԿԻ (Կեղծանուն է): Տէր Պետրոսեան  
Սիմոն Արշակ: (Գորի, 15 Մայիս 1882 —  
Թիֆլիս, 14 Յուլիս 1922): Համայնավար  
(1901): Կուսակցական անունով՝ Կամօ:

Բանտարկուեցաւ Դեյ. 1903ին: Բանտէն  
փախաւ Սեպտ. 1904ին: Մետեխի բան-  
տին մէջ (1905): Ինք բերաւ Ստեփան  
Շահումեանի Կովկասի ժամանակաւոր  
արտակարգ կոմիսար նշանական որոշ-  
ման լուրք (Յունուար, 1918):

- 129.— ՄԻԻԹԱՐԵԱՆՅ, ԱՐՇԱԼՈՅՍ: Ազգային  
պատուիրակութեան (Աշայ գիւղակին  
կողմէ) ներկայացուցիչ Ազ. հատիսեանի  
մօտ: Աշխատակից՝ «**Մշակ**» քերթին:  
130.— ՄՈՒԽՐԱՍԿԻ (Ազնուականութեան ա-  
ռաջնորդ իշխան: Բագրատիօն «Կով-  
կասեան վէրքեր»էն):  
131.— ՄՈՒՐԱՏ, ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊՈՅԱՃԵԱՆ,  
(Սեբաստիա 1874 — Բագու 1918): Դաշ-  
նակցական անուանի ֆետայի հերոս եւ  
հաւատաւոր յեղափոխական: Ղեկա-  
վար՝ Սասնոյ Բ. Ապստամբութեան  
(1904), Անդրանիկի եւ Հրայր Դժոխփի  
կողմին: Մասնակցած՝ հայ-քաթարա-  
կան կռիւներուն (1905), կամաւորական  
շարժման (Երզնկայի նակատ — 1915) եւ  
Բագուի հերոսամարտին (1918):  
132.— ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, ՍԱՄՍՈՆ: Հակադաշ-  
նակցական: Յայտնի փաստաբան: Հա-  
սարակական եւ կուսակցական գործիչ:  
Կովկասի Հայ Բարեգործական Միու-  
թեան նախագահ: Հիմնադիր՝ Հայ ժողո-  
վրրդական կուսակցութեան:

133.— ՅՈՎՆԱՆՆԱՆ (վրժ.): Մարիամեան-Յով-  
նանեան օրիորդաց դպրոց: Հիմնուած՝  
Նոյ. 1877ին (Թիֆլիս) Անանեանի (Յով-  
նանեանի) նախաձեռնութեամբ եւ մի-  
ջոցներով: Կոչուած է Հայ Օրիորդաց  
Անանեան ուսումնարան: Ընդունուած  
են բացառաբար չֆաւոր ընտանիքներէ  
եւ որբերէ հայ աղջիկներ: 1921ին, երկ-  
րորդ աստիճանի դպրոց: Տարբեր տա-  
րիներու տեսուչ եղած են՝ Տ. Ռաշմաճ-  
եան, Ս. Մալխասեան, Գ. Դեմիրճեան, Ի.  
Յարութիւնեան, Խ. Կանայեան եւ Ն.  
Սարգսեան:

134.— ՆԱԶԱՐԲԷԳԵԱՆ, ԹՈՎՄԱՍ (Զօր.). (Թիֆ-  
լիս, 4 Օգոստոս 1855 — Թիֆլիս, 19 Փե-  
տրբուար 1931): Ամենայն Հայոց Սպա-  
րապետ: Գնդապետ ուսական բանակի  
մէջ: Մասնակցած՝ ուս-ճափոնական  
պատերազմին եւ Տիւմանի ճակատա-  
մարտին իբրեւ գորավար հալիլ փաշայի  
դէմ (1914): Հրամանատար՝ Հայկական  
Ուժերու (1917) եւ սպարապետ Հայկա-  
կան Բանակի (1918): Հայաստանի հոր-  
հրդայնացումէն ետք, 1200 հայ սպա-  
ներու հետ միասին կ'աֆստորուի Սիպիբ  
(1921). ճամբան կը բանտարկուի Բա-  
զուի բանտին մէջ: Ատեն մը կը պաշտօ-  
նավարէ ամերիկեան «Նիք Իսթ Բիլիֆ»

— Near East Relief — բարեսիրական  
հաստատութեան մէջ:

135.— ՆԱԶԱՐԷԹԵԱՆ. (ՀՄԱՅԵԱՍ): Համայնա-  
վար: Կովկասեան երկրային կոմիտէի  
անդամ եւ կովկասեան բիրոյի պա-  
տասխանատու ֆարտուղար (1918):

136.— ՆԱԼԱՆԻՆԱՆ (ճարտարապետ: Կառու-  
ցել տուած է Թիֆլիսի ելեկտրակայանը):

137.— ՆԱԿԱՇԻՁԷ (վրացի: Գանձակի ճահան-  
գապետ):

138.— ՆՆՐՍԻՍԵԱՆ (դպրոց): Ներսէս Աբբ. Աշ-  
տարակեցի կը հիմնէ Թիֆլիսի Ներսիս-  
եան վարժարանը (1824): Ատեն մը փակ-  
ւելէ ետք, կը վերաբացուի Ներսէս Աշ-  
տարակեցիի (կաթողիկոս) ջանքերով:  
Մինչեւ 1852. տեսուչ եղած են՝ Կարա-  
պետ վրդ. Շահնագարեանց, Պետրոս  
Շանչեանց, Գաբրիէլ Քեն. Պատկան-  
եան, Պետրոս Շանչեանց (կրկին): Ունե-  
ցած է մինչեւ 300 աշակերտ:

139.— ՆԻԺԵԳՈՐՈՒՍԿԻ (գունդ): Նահանգ:  
Ռուսաստանի միջին ճահանգներէն՝  
Վոլկա գետափին: Կ'ոռոգուի Վոլկայի  
ջուրով եւ անոր ճիւղերով՝ Վետլուգա,  
Օկա, Սուրա. կէրսէնց:

140.— ՆԻԿՈՂԱՅ Բ. ՅԱՐ (1868-1918): Ազգեսան-  
դրր Գ. ցարի անդրանիկ գաւազը: Ռո-  
մանովներու եւ Յարական Ռուսաս-  
տանի վերջին ցարը (1894-1917):

- 141.— **ՆԻԿՈՒԱՅ, ՆԻԿՈՒԱՅԵՒԻԶ** (Մեծ իշխան 1859 — Փարիզ 1929): Ծանօթ՝ աւելի երիտասարդը (The younger): Նիկոլայ Ա. ցարի թոռնիկը: Ա. Աշխարհամարտին ռուսական բանակներու գերագոյն հրամանատարը: Կովկասեան ճակատի սպայակոյտի հրամանատար (1915): Կր մեռնի Փարիզ, Ֆրանսա:
- 142.— **ՆԻԿՈՒԱՅԵՒ** (Զօր.):
- 143.— **ՆՈՎԻԿՈՎ, ԱԼԵՔՍԱՆԴԻՐ** (Բագուի ֆազա-  
ֆազուլի):
- 144.— **ՆՈՒՊԱՐ, ՊՕՂՈՍ ՓԱՇԱ** (1858-1926):
- 145.— **ՇԱԽԱԻԿՈՑ, ԴՄԻՏՐԻՑ ԻՎԱՆՈՎԻԶ** (1861 — ): Տեղական ինքնավարութիւններու ներկայացուցչական ժողովներու գործօն անդամ (1904-1905): Ազատագրութեան միութեան կազմակերպիչներէն: Զախ-Գաղէտական (1905): Գաղէտ կուսակցութեան կեդր. Կոմիտէի մնա-  
յուն անդամ: Պետական Ա. Դումայի Գաղէտ կուսակցութեան ֆարտուղար: Ընկերային բարօրութեան նախարար (Մայիս-Յուլիս 1917) ժամանակաւոր կառավարութեան մէջ: Խորհրդային Համագործակցութեան մէջ գործօն անդամ (1930):
- 146.— **ՇԱՀԵԱԹՈՒՆԻ, ԱԻԵՏԻՔ** (Իզդիր 1883 —  
Թիֆլիս 1918): Իրաւաբան: Ազգային-  
կուսակցական մտաւորական ղէմֆ:

Մասնակցած՝ Հ.Յ.Դ. 4րդ Ընդհ. ժողովին (1907), իբրեւ պատգամաւոր՝ անջատական տրամադրութիւններով լեցուն երիտասարդ դաշնակցական ուսանողներու պատգամաւոր: Անդամ՝ Հ.Յ.Դ. Բիւրոյին եւ Թիֆլիսի ֆազաֆային կոր-  
հուրդին: Աշխատակցած՝ «Հորիզոն»ին եւ «Մոլոտ»ին (ոուսերէն թերթ): Իր գոր-  
ծերն են՝ «Տեղեւորայիզմ ու ղեմոկրա-  
տիզմ» (1907), «Անդրկովկասի վարչական վերարաժանումը» (ոուսերէն եւ հայե-  
րէն):

- 147.— **ՇԱՀՈՒՄԵԱՆ, ՍՏԵՓԱՆ** (Թիֆլիս 1878 —  
Աշխաբաթ, 20 Սեպտ. 1918): Համայնա-  
վար գործիչ: Բագուի համայնավարնե-  
րու ղեկավար: Սոցիալ-դեմոկրատ (1900): Հիմնադիրը՝ հայ ընկերվար-ժո-  
ղովրդավարներու Միութեան (1902): Սերտ յարաբերութիւն մշակեց Դաշ-  
նակցութեան հետ (Մայիս-Յուլիս 1918, Բագուի կռիւներու ընթացքին):

- 148.— **ՇԱՆՎԵԱՆ,** : (Գաւարապետ):
- 149.— **ՇԱՀՎԵՐԴԵԱՆ,** : (Թիֆլիս ֆազաֆի  
գլխաւոր գործակալ): Շախվերդեան Ա-  
լեֆսա՞նդր (30 Հոկտ. 1872-1937): Հա-  
մայնավար: Խ. Հայաստանի կառավա-  
րութեան կազմի բանուորական-գիւ-  
ղացիական տեսչութեան ժողկոմի ան-  
դամ:



- 150.— ՇԱՔԻՐ, ԲԷԱԷԴԴԻՆ ( — 1922): Արշաիր Շիրակեան եւ Արամ Երկանեան կ'ահարեկեն Շաֆիրը, Պերլինի մէջ (1922):
- 151.— ՇԵՐԵՄԵՏՏԵՒ, ՍԵՐԳԷՅ ԳԻՄԻՏՐԷՎԻՉ (1844 — ): Գիտութեանց կանառի պատուական անդամ: Երկրաշխարհական Յանձնախումբի եւ Հին Ռուսական Նամակներու Սիրահարներու ընկերութեան տնօրէն: Հեղինակն է պատմական եւ երկրաբանական բազմաթիւ գործերու:
- 151.— ՇԵՐՎԱՇԻՉԷ (վրացի նահանգապետ): (Յուլիս 1897ին կը հրաժարի եւ Բրկով կը նշանակուի տեղը):
- 152.— ՇՉԵԳԼՈՎԻՏՈՎ, ԻՎԱՆ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ (1861-1918): Շրջանաւարտ՝ Յարի Օրէնըսդրական վարժարանէն: Արդարադատութեան Նախարարութեան մէջ ստանձնած բազմաթիւ պաշտօններ (1890-1905): Արդարադատութեան օգնական նախարար (Յունուար 1906): Ապա՝ նախարար (1906-15): Անդամ՝ Պետական Խորհուրդի (1907): 1917 Փետրուարեան յեղափոխութենէն ետք, կը բանտարկուի Պօղոս բերդին մէջ: Համայնավարները կը զնդակահարեն զինք Մոսկուայի մէջ (Օգոս. 1918):

- 153.— ՉԱԼԽՈՒՇԵԱՆ, ԳՐԻԳՈՐ ( — ): Հասարակական գործիչ: Յայտնի է իբր ռուսամոլ: 10-13 Մայիս, 1916ին, կազմակերպիչ Մարմինը՝ բաղկացած Մոսկուայի եւ Պետրոգրատի հայ կոմիտէներէ, նախաձեռնեց համագումարի մը, որուն մասնակցած է իբրեւ նոր Նախիչեւանի պատգամաւոր: Հեղինակ՝ «Կարմիր գիրք» երկին:
- 154.— ՉԵԼՆԱԿՈՎ, ՄԻԽԱՅԷԼ ՎԱՍԻԼԷՎԻՉ (1863-1935): Մոսկուա ֆազաֆի կառավարիչ: Ռուսաստանի ֆազաֆներու Միութեան նախագահ (1914-1917):
- 155.— ՉԵՐԱԶ, ՄԻՆԱՍ: (Կ. Պուլիս 1852 — 1929): Հրապարակագիր, ուսուցչապետ եւ ֆազաֆագէտ: Տեսուչ՝ Ղալաթիոյ կեդր. վարժարանի (1886-89): Հիմնադիրներէն՝ «Արարատեան», «Կրթիկեան» եւ «Միացեալ ընկերութիւն»ներուն: Ազգային ժողովի երեսփոխան: Խրիմեան Հայրիկի հետ ներկայացած է Պերլինի համաժողովին: Աշխատակցած հայ թէ օտար մամուլին: Հիմնադիր՝ «L'Armenie» թերթին (1889):
- 156.— ՉԵՐԿԵԶՈՎ, (Թիֆլիսի ֆազաֆալուի): վրացի. բարի ծերունի բայց թուլակամ: Ազեֆ. Խատիսեան երեք տարի օգնականը եղած է իր մօտ:

- 157.— ԶեՐՆՈՋՈՒՔՈՎ (գօր.):
- 158.— ԶԼԻՆԳԱՐԵԱՆՆԵՐ, Թիֆլիսի հայ մեծահարուստ բնտանի բներէն:
- 159.— ԶԵՆՆԿԵԼԻ, ԱԿԱԿԻ ԻՎԱՆՈՎԻՉ (1874-1959): Սոցիալ-Դեմոկրատ, մենչեիկ: Ժամանակաւոր կառավարութեան ներկայացուցիչը՝ Անդրկովկասի մէջ: Անկախ վրաստանի մենչեիկ կառավարութեան արտաքին գործոց նախարար (1918-1921):
- 160.— ԶԵԼԻՉԷ, ՆԻԿՈԼԱՅ ՍԵՄԵՆՈՎԻՉ (1864 — 15 Յունուար, 1926): Սոցիալ-դեմոկրատ: 1907ին կ'ընտրուի Պետական Դումայի անդամ: Վերջին Դումայի մէջ, Սոցիալ-դեմոկրատ հատուածի նախագահ: Ցեղափոխութենէն ետք՝ Պետրոս գետանի բանուորական խորհուրդին: Սէյմի նախագահ՝ սկզբնական շրջանին: Վրաստանի Սահմանադիր Ժողովի նախագահ: Անճնասպան կ'ըլլայ էւ կրթադուի ՊէՆ Լաշէզ գերեզմանատան մէջ: Իր դամբանականին մէջ Քերեմսկի կ'առաջարկէր, որ հետագային Զիւէիճէի անիւնը վրաստան փոխադրուելու ատեն՝ տարուի Ռուսաստանի վրայով:
- 161.— ԶԵԻԿԻՇՎԻԼԻ, (վրացի յեղափոխական: 1920ին, Անկախ վրաստանի քաղաքացուի: 1924ին, գնդակահարուած բուշեիկներու կողմէ):

- 162.— ԶՄԻՇԿԵԱՆ: Թիֆլիսի նախկին քաղաքային գործիչ: Հայաստանի Հանրապետութեան շրջանին կառավարութեան անդամ:
- 163.— ԶՈՒԲԱՐՈՎ: (քաղաքային վարչութեան շինարարական մասի գործավար եւ Պետական Դումայի անդամ իբրեւ սոցիալ-դեմոկրատ):
- 164.— ԶՈՒՆԿՈՎՍԿԻ: (գօր.) (Ներքին Գործոց նախարարի օգնական: Ոստիկանութեան նախարար):
- 165.— ԶՈՒՎՆՈՎՍԿԻ, (հոգեբոյժ):
- 166.— ՊԱՊԱՋԱՆԵԱՆ, ՄԻՔԱՅԷԼ (Երեսան 1868 — Թիֆլիս 1929): Իրաւաբանութեան ուսանող Ռոստով, Օտեսա եւ Սբ. Փեթերպուրգ համալսարաններու մէջ: Շրջանաւարտ 1892ին: Իրաւաբան Բագուի մէջ: Պետական 4րդ Դումայի անդամ (1912): Միլիկով, Պի եւ Գաղէտ կուսակցութեան համակիր: Օգակումի հինգ անդամներէն մէկը (Մարտ 1917): Բանակցած՝ Վեհիպ փաշայի եւ Խալիլ պէյի հետ (Մայիս-Յունիս 1918): Ժողովրդական կուսակցութեան հիմնադիրներէն (1917): Ստորագրած՝ Պաքումի դաշնագիրը: Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան անդամ (Փարիզ, 1918): Հայ գաղթական-

ներու հարցով՝ Մոսկուա (1923): Կ'անդամակցի Ռ.Ա.Կ.ի եւ կ'ընտրուի Կ.Կ.ի անդամ: Ռ.Ա.Կ.ի կողմէ կ'ուղարկուի Խորհրդային Հայաստան՝ (1929) վերահաստատելու համար Սփիւռք-Հայաստան յարաբերութիւնները: Կը մեռնի առանց կարենալ խորհրդակցելու կամ բանակցելու Խ. վարչակարգի դեկավարներուն հետ:

- 167.— **ՊԱՍԻԻՊԱՐ** (Փրանսացի պատմագէտ):
- 168.— **ՊԱԼԼՈՎԻՉ, ԳԻՄԻՏՐԻՑ-ՄԵՇ ԻՇԽԱՆ** (1891-1942): Ասորական Փարիզի մէջ:
- 169.— **ՊԵՏԵՐՍՆ** (Պետերսոն, Բ, Լ, 1874 — ): Հոգատէր եւ Պետական Երկրորդ Դումայի անդամ: Նախագահ՝ վետուգայի տեղական ինքնավարութեան գաւառական վարչութեան: Նախապէս գաղտնական, ապա՝ «*Ժողովրդական սոցիալիստ*» կուսակցութեան անդամ:
- 170.— **ՊԵՏՐՈՍԵԱՆ, (Պետական Դումայի պատգամաւոր):**
- 171.— **ՊԵՐՍԵՐՉԵԻ ՊԱԵԼ ՆԻԿՈԼԱՅԵԻՉ:** (փաստաբան):....., սոցիալ-յեղափոխական: Ժամանակաւոր Կառավարութեան Արդարադատութեան նախարար (24 Ապրիլ — 7 Յուլիս 1917):
- 172.— **ՊԼԵԻԷ, ՎԻԱՉԵՍԼԱՒ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՎԻՉ:** (1846-15 Յուլիս 1904): Լիբուացի ըն-

տանիքէ սերած: Երջանաւարտ՝ Սբ. Փեթերպուրգի օրէնսդրական համալսարանէ: Ծառայած՝ Սբ. Փեթերպուրգ գաւառի դատարանային հիմնարկներու մէջ: Տնօրէն՝ Ներքին Գործոց նախարարական ոստիկանական բաժանմունքի եւ, աւելի ուշ, Ներքին Գործոց օգնական նախարար (1881-1894): Արժուների քարտուղար (1894-1902): Ներքին Գործոց նախարար (1902-1904): Ռուսականացման քաղաքականութեան չատագովներէն. Լեհաստանի, բայց մանաւանդ Ֆինլանտայի մէջ զարշիլի հեղինակութիւն: Պատասխանատու՝ Կիշինի վի ջարդերու: Կը փրկուի մահափորձէ (1904ի սկիզբը): Կ'առաքելուի սոցիալ-յեղափոխական իկոր Սագոնովի կողմէ (15 Յուլիս, 1904):

- 173.— **ՊՈԼԻՎԱՆՈՎ, ԱԼԵՔՍԻՍ** (1855-1922): Պատերազմական նախարար:
- 174.— **ՊՈՊՈՎ, (ռուս սպայ):**
- 175.— **ՊՐՈՏՊՈՊՈՎ, ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳԻՄԻՏՐԻՑԷՎԻՉ** (1866-1918): Հոկտեմբերեանական: Պետական Յրդ եւ 4րդ Դումայի անդամ: Պետական Դումայի փոխ-նախագահ (1914-1916): Ցառաջդիմական խմբակի անդամ: Ներքին Գործոց նախարար (Սեպտ. 1916 — Փետ. 1917):

176.— ԶԱՓԱՐԻՉԷ, Պ.Ա. (1880-1918): Համայնավար: Լրագիր: Բազուի համայնքի ներքին գործերու ժողկոմի անդամ: Պետական շրջ Դումայի մօտ ներկայացուցիչ՝ Թիֆլիս նահանգի կողմէ: Դումայի սոցիալ-դեմոկրատ ֆրակցիայի գործով դատապարտուած 5 տարուան տաժանակրութեան:

177.— ԶԱՊԱՐՈՎ, (ատրպէյնացի):

178.— ՌԱՆԻՍԿԻ, Ն.Վ.: Բազուի ֆազաֆազըլուխ: Նախագահ՝ Կուրուկի Տեղական ինքավարութեան Մարմինին:

179.— ՌԱՄԻՇՎԻԼԻ, ԻՍԻԴՈՐ ԻՎԱՆՈՎԻՉ (1859-1937): Քաղաքագետ: Վրացի մենչեիկ: Ասպարէզով ուսուցիչ: Պետական Ա. Դումայի անդամ (Գութայիսի շրջանէն): Կ'աֆսորուի Աստրախան (1908): Կրկին ձերբակալուելով՝ կ'աֆսորուի Սամարա (1913): Ժամանակաւոր Կառավարութեան Գործադիր Մարմինի անդամ (1917): Անկախ վրաստանի կառավարութեան անդամ (1918-1920):

180.— ՌԱՄԻՇՎԻԼԻ, ՆՈՑ Վ. (1881 — ): Վրացի մենչեիկ զեկավար: Ծածկանուններէն՝ Բորսուով, Պետր, Պետր քիֆլիսիյ: «էրթորա» օրաքերքի խմբագիր: Անկախ վրաստանի ներքին Գործոց նախարար (1918-1920): Ընդ-

դիմադիր՝ Խորհրդային վարչակարգի: Խ. Վրաստանի դէմ ճախող յեղաշրջումի ղեկավար (1923): Անյայտ են մահուան բուականն ու վայրը:

181.— ՌԱՍՊՈՒՏԻՆ, ԳՐԻԳՈՐԻՑ ԷՅԻՄՈՎԻՉ (1872 — 15 Դեկտ. 1916): ..... Սիպերիացի ազատ գիւղացիի զաւակ: Անուս եւ մինչեւ մահը չէր կրնար ճիշդ գրել: Ինֆզինֆ կը նուիրէ կրօնական հարցերու (1904): Կ'որդեգրէ Խլիսքի համայնքի տեսակէտները: Իբրեւ կրօնական ուխտագնաց կ'այցելէ սրբատեղիները: Ատեն մը կը մնայ զանազան վանքերու մէջ, առանց վարդապետ օժտելու: Կը բարեկամանայ Արիսիմանդրայք Ֆէօֆանի հետ, որ ցարուհիին ..... (1907): Ցարուհիին շնորհիւ կը վայելէ մեծ ազդեցութիւն ֆազաֆական կարգադրութիւններու վրայ: Զախող մահափորձի կ'ենթարկուի (1914), Գուսեվայի կողմէ: Մեծն իշխան Դմիդրիյ Պաւլովիչ, իշխան Իսուպով եւ Պուրիշկեվիչ կը սպաննեն զինք (Իսուպովի Պալատը, 15 Դեկտ. 1916):

182.— ՌԵՆԵԿԱՄՊՅ, ՊԱԻԵԼ ԿԱՐԼՈՎԻՉ (1854-1918): Զինուորական սպայակոյտի ընդհ. հրամանատար:

183.— **ՌՈՉԵԱՆԿՕ, ՄԻԽԱԻԼ ՎԱԳԻՄԻՐՈՎԻՉ:**  
(1859-1924): Հոկտեմբերեանական (.....)  
Պետական Դումայի նախագահ:

184.— **ՌՈՄԱՆՈՎՆԵՐ, Ռոմանովները իշխած են**  
Ռուսաստանի վրայ անլի քան 3 դար:  
Խորհին մէջ Ռոմանովի հարստութեան  
անկումը կը սկսի Մեծն Պետրոսի  
դուստրի՝ Էլիզապէթի մահէն ետք  
(1761): Ռոմանովներու վերջին շահաւի-  
զը կը սերի Պօղոս Ա. կայսրէն, որու  
մայրն էր Մեծն Կատարինէ: Այս վերջինը  
ծագումով գերմանացի էր՝ Հոլշթայն  
գերդաստանէն: Մայրը՝ իշխանուհի  
Անհալթ Զերբսթ, իսկ հայրը՝ Գերմանիոյ  
Պետրոս Գ. կայսրը: Արդ, Ռոմանովները  
կը նկատուին Հոլշթայն կամ Անհալթ-  
Զերբսթ, բայց վստահաբար ոչ Ռոմա-  
նովներ:

185.— **ՌՈՍՏՈՄՈՎ, (70 տարեկան ծերունի):**

186.— **ՌՈՒԴՈԼՖ (Ռուս):** Կովկասի կրթական  
գործի պատասխանատու: 1930-31ին,  
Թաւրիզի հայկ. գիմնազիոնի տեսուչ:

187.— **ՍԱԶՈՆՈՎ, ՍԵՐԳԷՅ ԴՄԻՏՐԻԷՎԻՅ (1861-**  
1927): Դատայած՝ Լոնտոնի եւ Հոռմի  
մօտ ռուսական դեսպանատուններու  
մէջ: Հիւրընկալեալ նախարար վատի-  
կանի մէջ (1906): Արտաքին Գործոց նա-  
խարար Իզվոլսկիի օգնական (1909),

ապա, նախարար (1910): Պետական Դու-  
մայի անդամ (1913): Կը նշանակուի  
Լոնտոնի մօտ դեսպան (1916), բայց  
նախքան պաշտօնը ստանձնելը կը ծագի  
Փետրուարեան Յեղափոխութիւնը:  
Ռուսական ֆազական համաժողովի  
անդամ (Փարիզ): Ռուսական ֆազա-  
ցիական կոնիներուն Կոլչակի կառա-  
վարութեան Արտաքին Գործոց նախա-  
րար:

188.— **ՍԱՀԱԿԵԱՆ, ԱԻԵՏԻՔ-ՀԱՅՐ ԱՐՐԱՀԱՄ:**  
(1865 - Պէյրուք 1932-3): Զաւալօղիեցի:  
Յեղափոխական, հասարակական-պե-  
տական դէմք: Անդամ՝ Հ.Յ.Դ. Բիւրոյի:  
Փոխ-նախագահ՝ Էջմիածնի Ազգային  
Ժողովի (1906): Փոխ-նախագահ Հայոց  
Ազգային Խորհուրդի: Խորհրդարանի  
նախագահ՝ Հ. Հանրապետութեան շրջա-  
նին:

189.— **ՍԱՂԱԹԷԼԵԱՆԻ (Սաղաթելով), ՅՈՎՀԱՆ-**  
**ՆԷՍ (1871-1936):** Նախկին Դաշնակցա-  
կան: Ըստ Ռ. Խանգատեանին, ան մաս  
կազմած է Դաշնակցութեան առաջին  
կեդրոնին: Իրաւաբան: Շրջանաւարտ՝  
Մոսկուայի Համալսարանի Բնագիտա-  
կան Բաժանմունքէն: Չրդ Դումայի ներ-  
կայացուցիչ՝ Երեւան նահանգի: Յրդ  
Դումայի՝ Երեւանի, Ելիզապէտլի եւ

Բագուի: Հայաստանի խորհրդայնացումէն ետք, կը հեռանայ Դաշնակցութենէն: 1921էն մինչեւ իր մահը աշխատած՝ Հայաստանի Հողի ժողովուրդի մէջ:

190.— ՍԱՄՍՈՆՈՎ, ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎԱՍԻԼԵՎԻՉ (1859-1914): Երջանաւարտ՝ հեծելակազօրքի վարժարանի (Սբ. Փեթերպուրգ) եւ Նիկոլաս Սպայից վարժարանի: Մասնակցած՝ ռուս-քրքական պատերազմին (1877-78): Բնդի. սպայակոյտի անդամ (1884): Հեծելակազօրքի վարժարանի Հրամանատար-տեսուչ (Էլիզավէթկըդ, 1896-1904): Բնդիանուր հրամանատար (1902): Թուրքեստան գտնուած գունդերու բնդի. կառավարիչ եւ հրամանատար (1909): Երկրորդ Բանակի հրամանատար (Նարէվ, 1914): Սոլդոյի պատերազմին (Գերմանիոյ դէմ) պարտուած (Թաննէնբերկ, 16-30 Օգոստոս 1914): Անկէ ետք, Սամսոնով անձնասպան կ'ըլլայ:

191.— ՍԵՊՈՒՀ (գօր.): (Բաբերդի Թոմնա, 1872 - Մ. Ն. 1940): Երեք տարեկանին կը փոխադրուի վարզահան: Հօր անունը՝ Ներսէս: Մկրտուրեան անունով՝ Արշակ Ներսէսեան: Տասը տարեկանին կը փոխադրուի Տրապիզոն, ուր տեղւոյն լուսաւորչական երկսեռ վարժարանին

մէջ գրել-կարգալ կը սորվի: Հնչակեան Ազարիկ Քալոյեանի կնքահայրութեամբ Սեպուի կ'անդամակցի Հնչակեան կուսակցութեան (1889): Իր առաջին ահաբեկումը կ'ըլլայ մատնիչ Գրիգոր ազան: Մարտիրոս Սեմերեհեանի կնքահայրութեամբ հրիմի Եւլթա ֆազաֆին մէջ կը կազմուի առաջին Դաշնակցական խումբը՝ 10-13 բնկերներով, որոնց կարգին Սեպուի (1891): Կը փոխադրուի Սեւաստապոլ (1893ի վերջերը): Կը ներկայանայ հրիմեան Հայրիկ կաթողիկոսին (1895): 1920 թ. Մայիսեան խռովութիւններուն ընթացքին հրամանատար Սեպուի զսպեց Բոլշեիկեան ապստամբութիւնը: Մասնակցած՝ հայ-քրքական պատերազմին (Ազբաբա, 4 Նոյեմբեր, 1921): Այս կոիւները ծանօթ են «ՋՏիկնբու կոի.» անունով: Հրամանատար՝ Հայ կամաւորական շարժման մէջ: Հ. Հանրապետութեան խորհրդարանի անդամ (1919):

192.— ՍԵՐԵՐԵԱԿԵԱՆ (հայ վաճառական):

193.— ՍԷՅԼԱՆԵԱՆՆԵՐ (մեծահարուստ ընտանիք):

194.— ՍԻՐԱԲԱ: (Թաքար միլիոնատէր):

195.— ԱԿՈՐԵԼԵԻ, ՄԻԿԱԻԼ ԴՄԻՏՐԻՅԵՎԻՉ (1843-1882): Զօրավար: Ճգմած է լեհ

- ապստամբները (1863): Աճկէ ետք, շրջա-  
նաւարտ՝ Նիկոլաս Սպայից վարժարա-  
նի: Մասնակից՝ եիվայի վրայ կատար-  
ւած գորաշարժին (1873): 34 տարեկանին  
հրամանատար: Ռուս-թրքական պատե-  
րազմի ընթացքին (Շիպկա) ինքզինք  
գերազանցեց (1877):
- 196.— ՍՈՒՄԲԱԹՈՎ (իշխան):
- 197.— ՍՈՒՐԷՆԵԱՆ, ԳԷՈՐԳ Ե. կաթողիկոս:  
(Թիֆլիս 1846 — Երեւան 1938): Ղարա-  
բաղի Առաջնորդ (1875), Ալեքսանդրա-  
պոլի (1878): Ծպիսկոպոս Երեւանի  
(1882), Աստրախանի (1886), Թիֆլիսի  
(1894): Սինոդի անդամ (1906): Ամենայն  
Հայոց կաթողիկոս (1912): Խեղդամահ՝  
համայնավարներու կողմէ:
- 198.— ՍՊԱՆԴԱՐԵԱՆ, ՍՈՒՐԷՆ (1882-1916):  
Համայնավար գործիչ: Գրականագէտ:
- 199.— ՍՊԻՐԵԴՈՂՎԻԶ: (Գրագէտ: 1922ին հը-  
րատարակած է 200 էջոց ուսումնասի-  
րութիւն մը «Ռուս Բողեւիզմի զարգաց-  
ման պատմութեան» ռուսերէնով (Փա-  
րիզ)):
- 200.— ՍՊԻՐԻԴՈՎԻԶ (գոր.):
- 201.— ՍՏԱԼԻՆ, ԺՈՋԷՖ ՋՈՒՂԱՇՎԻԼԻ: Տես՝  
Ջուղաշվիլի (1879-1953):
- 202.— ՍՏԱՆԱ: Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլա-  
յեվիչի կինը:

- 203.— ՍՏՈՒԳԻՆ, ՊԵՏՐ ԱՐԿԱԴԵՎԻԶ (1862 —  
Սեպտ. 1911): Ուսողութեան եւ բնագի-  
տութեան մանագէտ՝ Սբ. Փեթերպուրգ  
Համալսարանէն: Արփունիի կարգադիր  
նախարարութեան պաշտօնեայ (1885):  
Գրողնոյի կառավարիչ (1900), Սարա-  
թովի՝ (1903): Հանրաժանօք իբր անգութ  
կառավարիչ: Ներքին Գործոց նախարար  
(1906): Կ'ահաբեկուի Քիեւի մէջ (Սեպտ.  
1911):
- 204.— ՍՏՈՒՐՍԱ (վրացի բանուոր):
- 205.— ՎԱԶՆԱԶԷ.— (գոր.):
- 206.— ՎԱՐԳԱՆ (հանասորի վարդան) — (Ղա-  
րաբաղ — Երեւան 2 Յունուար  
1943): Բուն անունով՝ Սարգիս Մեհրաբ-  
եան: Ռուսական բանակի զինուոր: Կա-  
նուխէն միացած Դաշնակցութեան: Մօ-  
տիկ գործակիցը եւ ընկերը Քրիստափո-  
րի, Ռոստոմի, Ջաւարեանի եւ Յովնան  
Դաւթեանի: Ղեկավարած՝ հանասորի  
Արշաւանքը (25 Յուլիս 1897): Աշխա-  
տակցած՝ Պետոյի, Վազգէնի, Իշխանի,  
Դումանի եւ Սեւ Քարեցի Սաֆոյի հետ:  
Ղեկավարեց նաեւ Ղարաբաղի ինքնա-  
պաշտպանութիւնը (1905-06): Հրամա-  
նատար կամաւորական Արարատեան  
գունդին (1915):
- 207.— ՎԵՍՏՆԵՆԿ, (Դանիացի). գնդապետ:

208.— ՎԵՐՄԻՇԵԱՆ, ՔՐԻՍՏԱՓՈՐ (Վերմիշե): Թիֆլիսի ֆազաֆապետ իշխան Զերկէզովի (վրացի ֆազաֆազլուխ) մահէն ետք: Բագու հրատարակուած «*Բազիսկա Իզվեստիա*» օրաթերթի խմբագիր-հրատարակիչ: Միաժամանակ քերթի սրբագրիչն էր բժ. Համօ Օհանջանեան եւ օգնականը՝ Յովսէփ Թադէոսեան: Ալեքսանդրեան անոթ յաջորդած ֆազաֆապետն է:

209.— ՎԻՏՏԷ, Ս.Յ. (1849-1915): Պետական գործիչ: 1905-07ի ռուսական յեղափոխութիւնը ճնշողներէն: Հաղորդակցութեան եւ փոխադրութեան նախարար (1892-1903): Նախարարներու խորհուրդի նախագահ (Հոկտ. 1905 — Ապրիլ 1906):

210.— ՎԻՐՈՒԲՈՎԱ, ԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՆԱ: (1884 — ): Ալեքսանդրա Ֆեդերովնա ցարուհիի եւ Ռասպուտինի մտերի-

մը:

211.— ՎՈՒՍԿԻ, (գինուորական նահանգապետ):

212.— ՎՈՐՈՆՅՈՎ-ԳԱՇԿՈՎ, ԻԼԼԱՐԻՈՆ ԻՎԱՆՈՎԻԶ: (1837-1916): Բանակային վաստակ վայելող գինուորական, կովկասի եւ Թուրքեստանի մէջ (1865): Տաշկենտի օգնական կառավարիչ (1866): Մասնակից՝ ռուս-թրքական պատերազմին (1877-78): Արժունիքի նախարար (1881-

97): Փոխ-արքայ՝ կովկասի եւ կովկասեան գինուորական շրջանի բանակներու հրամանատար (1905):

213.— ՎՐԱՑԵԱՆ, ՍԻՄՈՆ (Նոր Նախիջեւան 1882 — Պէյրութ 1969): Բուն անունով՝ Սիմոն Գրուզինեան: Յեղափոխական-հասարակական եւ պետական դէմք: Մասնակցած՝ Հ.Յ.Դ. 4րդ Բնդի. Ժողովին (1907) եւ կամուրական շարժման կազմակերպման (1914-15): Հանրապետութեան շրջանին Գիւղատնտեսական եւ Աշխատանքի նախարար, ապա՝ վարչապետ եւ աւելի ուշ՝ Հայրենիքի Փրկութեան կոմիտէի նախագահ: Խմբագիր՝ «*Հայրենիք*» (1911), «*Հորիզոն*» (1917) օրաթերթերուն եւ «*Վէճ*» հանդէսին (1933-39): Իր գործերէն են՝ «*Կեանքի ուղիներով*» (6 հատոր), «*Հայաստանի Հանրապետութիւն*», «*Անձինք նուիրեալք*», «*Հին Բղթեր նոր պատմութեան համար*» (Պէյրութ, 1962): Պէյրութի Համազգայինի ն. Փայաննեան ձեմարանի տնօրէն (1952-1969):

214.— ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ, ՌՈՒԲԷՆ (Ռուբէն փաշա): Ախալալաք 1882 — Փարիզ 1951): Գերագանցապէս զէնքի մարդ. հայդուկապետ, ազգային եւ պետական դէմք: Գէորգեան ձեմարանի ուսանող: Մաս-



նակից՝ Ն.Յ.Դ. ճրդ Ընդի. Ժողովին (1909), Հայոց Ազգային Խորհուրդին (1917-18) եւ ապա՝ Հայաստանի Խորհրդարանին եւ Ն.Յ.Դ. Բիրոյին: Կազմակերպիչ՝ Սասնոյ (1907) եւ Տարօնի (1913-15) շրջաններու: (Հայաստանի Խորհրդայնացումէն ետք, կազմակերպեց Սփիւռքի կարգ մը գաղութները՝ Թեհրան, Փարիզ, Պէրուք): Ն. Հանրապետութեան օրով՝ Զինուորական նախարար: Հայաստանի հայացումը կը պարտինք մեծ մասամբ իրեն: Համայնավարութեան թշնամի էր, բայց ոչ թէ դաւանապաշտական, այլ քաղաքական ակտաւումներով: Ռուրէն դաւանապաշտ եւ պատեհապաշտ չեղաւ երբեք: Իրապաշտ եւ ինքնատիպ իր մտածողութեամբ, ապրելակերպով եւ գործելակերպով: Իր գործերէն են՝ «Հայաստան՝ միջ-ցամաքային ուղիներու վրայ», «Հայ յեղափոխականի մը յիշատակները»: (7 հատոր):

215.— ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ, ՀԱՄՕ: Տե՛ս Կամօ:

216.— ՏԻԳՐԱՆԵԱՆ, ԹԱԴԷՈՍԵԱՆ ՍԻՐԱԿԱՆ: (1868՞-1937-38): Մասնագիտութեամբ՝ իրաւաբան: Կոչումով՝ մանկավարժ: Այնքանադրապոյի (արդի Լեւինական) բարեկեցիկ ընտանիքի գաւաղ: Շրջանա-

ւարտ՝ Փեթերպուրգի Կայսերական համալսարանի իրաւաբանական բաժնէն: Մէկ եղբայրը կոյր էր, բայց Կովկասի յայտնի Դաշնակցականներէն եւ երգահաններէն: Միւս եղբայրը Փարիզի Հայոց Եկեղեցւոյ հիմնադիր բարեգործ Ալ. Մանթաշեանի փեսան էր: Դասուանդած՝ իր կողմէ ուսումնասիրուած Հայոց Եկեղեցական իրաւունքի դասուանիքը: Կը համարուի Հայոց Եկեղեցական իրաւունքի առաջին լուրջ ուսումնասիրողն ու հիմնադիրը: Երկրորդ պետական Դումայի Դաշնակցական պատգամաւոր՝ ընտրուած Երեւան նահանգի կողմէ: (1937-38 թուականներուն, Խ. Հայաստանի մէջ կը բանտարկուի եւ կ'աքսորուի: Ե՞րբ եւ ինչպէ՞ս մահացաւ չենք գիտեր): Հանրապետութեան շրջանին Արտաքին Գործոց եւ Լուսաւորութեան նախարար եւ Խորհրդարանի նախագահ: Մշակող հեղինակ՝ ռուսահայ թեմերու կանոնագրի: Իր գործերէն են՝ «Դաշնակցական Պատգամաւորները Երկրորդ Պետական Դումայում» (Թիֆլիս 1907), «Փիլիսոփայութեան Պատմութիւն» (անտի՞պ) եւ «Հայ Եկեղեցու Իրաւունքը» (անտի՞պ):

217.— ՏՐՈՒԻՆԻՆ (գօր.):

218.— ՅԻՆԱԿԱՅԱ, ՄԻՆԱԻԼ ԳՐԻԳՈՐԻԷՎԻՉ:  
(Գուրթայիս, 4 Մայիս 1865 — Թիֆլիս 19  
Մարտ 1950: Կուսակցական անունները՝  
Միխ, Լեոնով, Գուրգէն): Մետեխի  
բանտին մէջ (1906), ժրնեի մէջ (1907-  
1917): Յունիս 1919ին կրկին կը բան-  
տարկուի եւ Մայիս 1920ին ազատ կ'ար-  
ձակուի:

219.— ՔԵՄԱԼ, ՄՈՒՍԹԱՅԱ-ԱԹԱԹՈՒՐՔ՝  
թուրքերու հայր: (Սելանիկ, 19 Մայիս  
1881 — Կ. Պոլիս, 10 նոյ. 1938): Ծագու-  
մով՝ ալպանացի մաքսատան պաշտօն-  
եայի մը զաւակը: Կ. Պոլսոյ պատե-  
րագմական վարժարանին մէջ այնքան  
յաջող աշակերտ մը եղած է, որ իր ու-  
սուցիչներէն մէկը գինի անուամած է  
«Քեմալ», այսինքն՝ կատարեալ: Կազմեց  
գաղտնի պատիկ կազմակերպութիւն մը  
սպաներու բռնատիրութեան դէմ (1907):  
Սպայակոյտի պետ՝ Մահմուտ Շեվկէթի  
բանակին՝ (1909): Մասնակցած՝ թուրք-  
իտալական պատերազմին եւ հռչակ հա-  
նած (Լիպիա, 1911): Մասնակցած թուրք-  
պալքանեան պատերազմին (1912-13):  
Դէմ էր էնվերի փրօ-Գերման արեւելու-  
մին: Սուլթանին կողմէ կը նշանակուի  
բանակներու ընդհ. վերակացու (1918-  
19): Ամասիոյ շրջաբերականով դատա-

պարտեց թուրք պետութիւնը (22 Յունիս  
1919): Նախածեռնեց եւ կազմակերպեց  
Ազգային Համագումար մը (23 Յունիս  
Էրզրում եւ 4 Սեպտ. Սվազ): Ընտրուե-  
ցաւ նախագահ: Ազգային Ուխտը իր  
օրով կը վաերացուի. անկախ եւ միաց-  
եալ Թուրքիա մը 1918 թ. Հոկտ.ին ճշգր-  
ւած սահմաններով. օսմանեան կառա-  
վարութեան տկարացման պարագային  
կազմել ժամանակաւոր կառավարու-  
թիւն մը: Ֆրանսա կը ճանչնայ Անգա-  
րայի կառավարութիւնը (30 Մայիս  
1920) եւ կը կնքէ զինադադար՝ Կիլիկիոյ  
մէջ կռիւները կեցնելու համար: Կը վարէ  
Սաքարայի կռիւները յոյներու դէմ  
(Օգոս.-Սեպտ. 1921) եւ կը վերագրաւէ  
Իզմիրը: Հանրապետութիւն հռչակեց  
(1922) եւ եզաւ հանրապետական Թուր-  
քիոյ առաջին նախագահը (29 Հոկտ.  
1923): 15 տարի իշխեց իբրեւ մեծատէր:  
Իր «*Ժողովուրդի Կուսակցութիւնը*»  
մնաց միակ քաղաքական կուսակցու-  
թիւնը: Ճգմեց ապստամբ փորտերը  
(1925-29). չէզոքացուց կրօնական ըմ-  
բոստութիւնները: Քեմալ արդի Թուր-  
քիոյ հիմնադիրը կը մնայ:

220.— ՔՆՈՒ. (Գափափեան, Արշակ կամ Գա-  
փաւեան, Արշակ): (Կարին, 1858 — Ռե-

ւանտուգ, 15 Մայիս 1916): Բնիկ էրզր-  
րումցի: Կը կոչուի նաեւ Քաւթար Ար-  
շակ: Անուանի հայդուկապետ եւ ժողո-  
վրրդական հերոս: Մասնակցած՝ էրզր-  
րումի առաջին ցոյցին (1880), Սասնոյ Բ.  
Ապստամբութեան (1904), հայ-թաթա-  
րական կռիւներուն (1905), Եփրեմի  
հետ Պարսկաստանի ազատագրական  
շարժման, Սարրզամիշի եւ Ռեւանտուզի  
կռիւներուն (1916): Գործակցած՝ Արամ  
Արամեանի հետ: Կամաւորական 4րդ  
գունդի հրամանատար (1915): Թագ-  
ւած՝ Թիֆլիս Զաւարեանի եւ Ն. Դու-  
մանի կողմէն:

221.— ՕԳԱՆԻԶՈՎՆԵՐ (մեծահարուստ բնտա-  
նիք):

222.— ՕԳԱՆՈՎՍԿԻ (գօր.):

223.— ՕԶԱՆՋԱՆԵԱՆ (հայ նարտաբապէտ):

224.— ՕԶԱՆՋԱՆԵԱՆ, ՀԱՄՕ (Միեր) (Ախալքալաք  
1873 — Գահիրէ 1947): Ռուսական վար-  
ժարանը աւերտելէ ետք (Թիֆլիս, 1883)  
հետեւած բժշկութեան (Մոսկուա), ապա՝  
Լօզան (1899-1902): Անդամ՝ Հ.Յ.Դ. Արե-  
ւելեան Բիւրոյի (1905): Մասնակցած՝  
Հ.Յ.Դ. 4րդ լնդի ժողովին (1907): Հ.Յ.  
Դաշնակցութեան դատաւարութեան  
գլխաւոր դատապարտեալներէն (1912):  
Ախորական Սիպերիա (1913): Ախորի

մէջ ամուսնացած Ռուբինայի հետ:  
Պատուիրակ՝ Հայաստանի եւ Թուրքիոյ  
միջեւ Գերմանիոյ միջամտութիւնը  
ապահովելու համար (Մայիս 1918):  
Հայ Դատը կը ներկայացնէ Երկրորդ  
Միջազգայնականին (Փետր. 1919): Ալ-  
եատիսեանի կառավարութեան մէջ իբ-  
րեւ Արտաքին Գործոց նախարար (Յուն-  
ւար 1920): Վարչապետ՝ յետ Մայիսեան  
խռովութեան (1920): Կը բանտարկուի  
Հայաստանի խորհրդայնացումով, սա-  
կայն կ'ազատի Փետրուարեան Ապրս-  
տամբութեան շնորհիւ: Երկար ժամա-  
նակ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ:

225.— ՕՐԲԵԼԻ, Վ.Ն. (հոգեբոյժ):

226.— ՕՐԵՆԵԼԱՇՎԻԼԻ, ԻՎԱՆ ԴՄԻՏՐԻՑՆԻԻԶ:  
(Քուրայիս, 29 Մայիս 1881 — Դեկտ.  
1937): Համայնավար (1903): Ուսանող  
հարկով համալսարանի բժշկական բա-  
ժինին մէջ: Աւարտած Սբ. Փեթրպոլուրգի  
Զինուորական բժշկական Ակադեմիան  
(1908): 1905-1907 տարիներուն շատ  
գործօն: Ունի բազմաթիւ գործեր Վրաս-  
տանի եւ Անդրկովկասի ընկերվար սահ-  
մանադրութեան եւ կուսակցութեան  
պատմութեան մասին: Կը գնդակահար-  
ւի (Դեկտ. 1937):

227.— ՕՐԼՈՎ, (Իշխան, ախորեալ՝ կովկաս):

228.— **ՕՐՄԱՆԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԳ:** (Կ. Պոլիս 1841 — Կ. Պոլիս Նոյ. 1918): Կ. Պոլսոյ Պատրիարք (1896-1909): Անդամ՝ Հոռմի Աստուածաբանական Տանարի: Յաջորդած է Մատթէոս Պատրիարք Իգմիլլիեանին: Մասնակցած՝ վատիկանի հորհուրդին (1870): Հեղինակը՝ «Ազգապատում»-ին (3 հատոր): Պահպանողական: Ուսուցիչ, հրապարակագիր: Էրզրումի Առաջնորդ (1880): Եպիսկոպոս (Կ'օծուի էջմիածին, 1886): Տնօրէն՝ Արմաշի ուսումնարանին (1890): Հիմնադիր՝ Պոլսոյ «Մասիս» օրաթերթին (1896): Աշխատակցած է «Մասիս»-ին Տիրայր ծածկանունով: Այցելած Երուսաղէմ (1914): Տեղահան եղած (Դամասկոս, 1917): Պոլիս (Մայիս 1918):

229.— **ՖԵՐԴԻՆԱՆՏ, ՖՐԱՆՑ** (թագաւոր):

230.— **ՖԷՌԴԻՆՐՈՎ** (բժշկապետ):

231.— **ՖԷՌԴԻՆՐՈՎԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐԱ** (1872-1918): Ռուսիոյ վերջին ցարուհին: Մեծն Բրիտանիոյ Վիքտորիա Բազուիիի թոռնիկը: Եկատերինպուրգի մէջ գնդակահարուած՝ համայնավարներու կողմէ:

232.— **ՖԷՌԴԻՆՐՈՎԱՆ, ՄԱՐԻԱ** (1881-1894): Ցարուհի: Նիկոլայ Բ. ցարի մայրը:

233.— **ՖՈՆ ՊՐԱՌԻԵՆՔԵՐԳ, ԿԱՌԻՇ** (Թիֆլիսի նահանգապետ):

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԷԶ

Հրատարակութեան նպատակը .....	5
Ալեքսանդր Խատիսեան (1874-1945) .....	9
Յառաջաբան .....	44

### ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

Թիֆլիս .....	61
Հայ-թրքական ընդհարումները .....	71
Հ.Յ.Դաշնակցութեան դատավարութիւնը ...	82
Հայկական առաջին համագումարը եւ հայկական պահանջները .....	98
Քաղաքական յետադիմութիւնը եւ յեզափոխական ուժերը (1905-1907ին) ....	110
Կուսակցութիւններու նկուզային աշխատանքը եւ իմ կապը անոնց հետ (1907-14) .....	125

Թիֆլիսի ֆաղաֆային ինֆնավարութիւնը	
եւ իր գործունէութիւնը .....	146
Ինֆնավարական հաստատութիւնները եւ	
խորհրդակցութիւնները Կովկասի մէջ ....	159
Կովկասի կարիքները եւ իմ	
նամբորդութիւնները Փեթերպուրգ .....	174
Կովկասը՝ մեծ պատերազմի նախօրեակին .	194
Հայկական կամաւորական շարժումը .....	214
Պատերազմի առաջին տարին	
(հասարակութիւնը, գաղթականութիւնը	
եւ Քաղաքներու Միութիւնը) .....	235
Դէպքերը թագաւորական պալատին մէջ ....	259
Դէպքերը թագաւորական պալատին մէջ (շար.)	277
Երերոզ գահին մօտ .....	300
Ռուսաստանի յեղափոխութիւնը եւ անոր	
արձագանգները Կովկասի մէջ .....	317
Ռուսաստանի ժամանակաւոր	
կառավարութիւնը եւ կացութիւնը	
Կովկասի մէջ .....	329
Ծանօթութիւններ .....	340

**ՅԱՆԿ՝**  
**«ԶԱԻԱՐԵԱՆ» ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ**  
**ՄԱՏԵՆԱՇԱՐԻ**

1. Յեղափոխականի մտքերը.— *Քր. Միքայէլեան*
2. Ի՞նչ է ազգութիւնը.— *Գարեգին Պաժակ*
3. Ազգութիւնը հիմք մարդկային ընկերութեան.— *Լ. Շանթ*
4. Ազգ եւ հայրենիք.— *Յ. Քաջազնունի*
5. Ի՞նչ է դասակարգը.— *Գարեգին Պաժակ*
6. Քաղաքացետի մը յիշատակները.— *Ալեք. Պատիսեան*

Կեդրոնատեղի

HAMASKAÏNE Bookshop  
SHAGHZOYAN Cultural Center  
Bourdj Hammoud — Lebanon

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ  
ՎԱՀԷ ՍԷԹԻԱՆ ՏՊԱՐԱՆ

Պատուեր	754
Պրակ	25 1/2
Տպաքաղաք	2000
Աւարտում	18-6-91



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԻԱՆ ՏՊԱՐԱՆ

Printed in Lebanon by Hamaskaïne W. Sethian Press